



ԱՐԴՅՈՒՆ

ՄԵԽԻԿ

ԵՐԵՐԻ

ԺԱՌԱՎԱՋՈՒ

Բ

ՀԱՏՈՎԱԿ

ՀԱՏՈՎ

Յ

Պ Ա Ե Կ Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆ.. ԳՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Կ Ա Ն 1973

Ap-2
U-41

0 07-4-3 (114) 109, 73 «8»
0 701 (01) 73

Կապմող՝ Ա. Վ. Արիստակեսյան

Խմբագրական կողեզժիա՝

Մ. Հ. Դավթյան

Լ. Վ. Միքայելյան

Վ. Ա. Մկրտչյան

Վ. Ա. Մնացականյան

Հ. Ս. Սահյան

ПАРУЙР РАФАЕЛОВИЧ СЕВАК
СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ
В 6 ТОМАХ

Том III

ПОЭМЫ

(На армянском языке)

Издательство „Айастан“
Ереван, 1973



**ИЗДЕЛІЯ
ІЗ СІРУ ІНДІЙСЬКОГО**



ԳԼՈՒԽ ԱՐԱԶԻՆ

ՊԱԼԱՏԸ

I

Ծիծեռնակների և սարյակների շուտասելուկից
Թորգոմն արթնացավ: Դեռ արև չկար:
Հեռվում երկինքը շառագունել էր արեածագից՝
Գծելով ծանոթ մի բնանկար:

Կաթնագույն մուժը, մացառների մեջ ծվեններ թողած,
Դանդաղ ցրվում էր այգուց ու բակից,
Լայն պատշաճամբում ավելուկների հյուսերը կանաչ
Օրորվում էին մեղմիկ ու հանգիստ:

Բացվում էր օրը: Գյուղն արթնացել էր արևից առաջ:
Նոր թխած հացի բուրմունք էր գալիս:
Պարզուց լսվեց հորթուկին կանչող մի կովի բառաշ,
Մի բահ զրնգաց՝ զարնվելով քարին:

Թորգոմը նստեց: Ինչ-որ ծանրություն ձնշում էր հոգին,
Սանրացած զիխում կարծես թե կար մեզ:
Այդպես է լինում հետելյալ օրը թունդ գինարբուքի:
Իսկ նա չէր խմել: Որտե՞ղ էր երեկ:

Եվ հիշեց հանկարծ, ու քունը փախավ: Վեր թռավ տեղից,
Արևն էր երնում պոնկից լեռան:
Լեռնալանջերին թառած արտերը կանաշաղեղին
Շեղեցին մի պահ մտքերը նրա:

Շուտով դեկերը շուրջպար կրոնեն արձակ կալերում
(Ոսկեվորվում են արտերը արդեն),
Վրա հասնեն բերքահավաքի օրերը եռուն,
Մինչ շենքն ակումբի անավարտ է դեռ:

Եվ մոռանարով այն ծանրությունը, որ մի պահ առաջ
ձնշում էր հոգին, ժպտաց ինքնազո՞ն:
Եքեղ շինովթյան կամարները կոր և թևատարած
Ողորկ սյուները կապույտ երանգով

Վերստին նրա սիրտը լցրեցին խնդությամբ այն տաք,
Որ լավ ծանոթ է սիրահարվածին:
Եվ նախագահի՝ Թորգոմի սրտով անցավ մի խայտանք,
Երբ աշըը լնիկավ շենքի զանգվածին:

Ակումբ էր կոշկում, բայց իրականում պալատ էր շքեղ,
Սյունաշարավոր շրջանը նրա
Գյուղի կենտրոնում բազմել էր խորխտ ու կամարագեղ,
Խնձուս նոր բլուր՝ բլուրի վրա:

...Երբ պատերազմը վերջացավ փառքով, երբ վերադարձան
Հաղթողներն իրենց տները նորից,
Ամեն գյուղի մեջ բարձրացավ մի սեգ Աղբյուր-հուշարձան՝
Սրբատաշ բազալտ և կամ տուֆ քարից:

Թորգոմն էլ հայտնի իր սովորությամբ՝ կառուցել տվեց
Իր լավագույնը լավերի շարքում.
Ուրիշներինը մեկ ծորակ ուներ, իսկ սա ուներ՝ վեց,
Մեկ կամարի տեղ սա ուներ երկու:

Հետո շինության գովելի տենդը գյուղից գյուղ անցավ.
«Նոր ուղին» շինեց նոր գրասենյակ,
Ամբողջ մի տարի խոսք ու զրուցի առարկա դարձավ
«Կարմիր դրոշի» ակումբը մենակ:

Վարդառեցիք ետ չմնացին իրենց դրացուց.
Տանձուտն իր հերթին հետևեց նրան:

Ամեն մի կոլխոզ ճարտարությունն իր գրել էր ի ցուց:
Մրցման մեջ էին գյուղերն հարևան:

Առվետաշխնը դեռ չէր երևում: Զգիտես ինչո՞ւ,
Դեռ դանդաղում էր Թորգոմը, լուս:
Սակայն շրջանում շատ լավ հայտնի էր, որ ամեն ինչում
Նա լավագույնն է լավի մեջ սիրում:

Նա սպասում էր համագյուղացի ճարտարագետին,
Որին և հայտնել բավականությամբ,
Թե կառուցելիք իր նոր ակումբը անպատճառ պիտի
իր ձեռվ անշուշտ, ոչ թե մեծությամբ,

Խիստ նման լինի փառահեղ շենքին այն օպերայի,
Որ կառուցվել է մայրաքաղաքում:
Փոքրիկ մի Մասիս՝ նա պիտի ուղիղ Մասիսին նայի,
Միակը լինի ողջ շրջակայքում:

Նա պիտի բազմի գյուղի կենտրոնում, բլուրի վրա,
Խսկ հետագայում՝ ճառագայթաձև
Լայն փողոցները պիտի գան հեռվից և հասնեն նրան՝
Նոր գյուղին տալով մեծ անիվի ձև:

Գրասենյակը, գպրոցը, շենքը հիվանդանոցի
Ուրվագծում են արդեն հենց հիմա
Մոտավոր տեսքը գյուղի առաջին այն նոր փողոցի,
Որ և կասփալտվի՝ քաղաքի նման:

Նորավարտ հսկա պահեստի շենքով սկիզբ է առնում
Երկրորդ փողոցը, որ արդեն, նայի՛ր,
Էլեկտրաղացով ու գարբնոցով է հիմա վերջանում
Եվ ձգտելու է այս օպերային...

Խսկ բնակելի տների շարքը կձգվի հետո,
Կոլխոզը քիչ էլ երա հարստանա:

Ամեն ինչ կլինի, ամեն ինչ, այո՛, միայն թե հերթով:
Նախ՝ այսպես պարագը պիտի վերջանա:

իսկ այդ պարատը, թեկուզ անցել է մեկ ու կես տարի,
Դեռ նոր է միայն իր ձեն ստանում:
Եխանյութերով ծածկված բրուրի բարձր կատարին
Նրա մի հարկն է միայն բարձրանում:

Դե ստիպված ես բերքահավաքի եռուն շրջանում
Եվ բրիգադից շինարարական
Շատերին վերցնել, որ հնձի գնան, աշխատեն կարում՝
Բրիգադներում դաշտավարական:

Վրա է հասնում ամառը նորից: Պետք է շտապել,
Որ սյունաշարը գոնե վերջանա...
Եվ «բարի լույս»-ը ստիպեց հանկարծ նրան սթափվել,
Աղջիկն էր կանգնած Թորգոմի առաջ:

— Ինչպես ես, հայրիկ, ի՞նչ է պատահել, ինչ շատ ես
քնում,—

Վերհիշել տվեց ձայնը աղջրկա
Անցյալ գիշերվա վարչության նիստը, վեճի առարկան,
Եվ վիրավորված դառը վերհուշից՝
Նա պատասխանեց.

— Ծնորհակալ եմ, ընկեր Երազիկ,
Լավ ծեծից հետո միշտ լավ են քնում:

Եվ երեխայի խոռվկան տեսքով, Թորգոմը դժոխ
Բարձրադիր տնից ցած իջավ արագ:
Անփույթ սովորով անցնում էր հանդարտ շորորվող այգով
Ամառնամուտի զեփյուրը բարակ:

II

Թորգոմն իջավ: Աչքի առաջ
Գյուղն էր փովել թևատարած՝
Մանոթ այնքան և անձանաշ:
...Զկան արդեն տներն այն խեղճ,
Խոնավ, մթին ու ծխախեղդ,

Կրված, թեքված իրար վրա՝
Մեկը վերև, մեկը՝ ցածում,
Մեկը մեկից խարխուլ ու ծուռ...
Հյուղակներն այն, որոնց վրա
Փովում էր մի համատարած,
Խարխուլ կտուր—բարձր մի տեղ,
Մի տեղ ցածր. կտուր, որտեղ
Որ վերևից դիտող մեկին
Պիտի թվար մի անսիստեմ
Ինչ-որ շենքի անկապակից
Զվերծանվող հատակագիծ...
Կտուրներն այն, որոնց վրա
Խոտն էր աճում դեղնականաշ,
Կտուր, որտեղ ծուռտիկ մեջքով,
Իր իսկ տեսքից ինքն էլ դժոխ,
Խոտի դեզն էր թառում, որի
Ավելի խեղճ օրինակը՝
Սուռտիկ դեզը չոր աթարի
Զարդարում էր տան նեղ բակը...
Իսկ ճեղքերից խարխուլ դռան
Ներս էր խուժում մայրամուտին
Հոնդացող քամին լեռան՝
Ստիպելով պառավ տատին
Սունձի տեղ խմոր քսել
Այդ ճեղքերին լայնաթերան
Ու փակցընել նրանց վրա
Ինչ-որ թղթեր դեղնած ու սև
Զիմանապով, որ իր ճեղքին
Էշերն են հին ժամագրքի...

Անց է կացել քանի՝ տարի:
Իսկ հապա դու շուրջդ նայիր,
Նոր քարաշեն տներն ահա
Իրենց արձակ պատշգամբով,
Այգիների սաղարթն ահա՝
Ալիքավոր իրենց թմբով.

Հայն խճուղին, որ գետի պես
Հեռվից եկել ու վարարել,
Նեղ ու ծուստիկ քուշաների
Կերպարանքն է ջնջել տարել,
Եվ դպրոցին հապա նայիր՝
Տուֆաքարե այդ հսկային,
Նայիր կալին կոլխոզային,
Որ այնպես է հարթված ու լայն,
Ասես լինի մեծ քաղաքի
Օդանավի արձակ կայան:
Եզրին նրա, իրար հանդեպ,
Մեծ ու Փոքր Մասիսների
Խստարար հայացքի դեմ,
Բարձրանում են երկու մեծ դեզ,
Ի՞նչ դեզ: Կարծես մեկը դիտմամբ
Մտածել է խոտից սարքել
Մեծ ու Փոքր Մասիսների
Հսկայական երկու մակետ...

III

Իրարանցում է գոմերի առաջ:
Ասես ողջ գյուղը քնից վեր թռած
Ոտքի է ելել, հավաքվել այնտեղ:
Դեռ առավոտը շի բացվել կարգին,
Լոկ հորիզոնն է սփրթնել տեղ-տեղ,
Մինչ քարափմաքում, լանջերում լեռան
Գիշերվա մութն է դեռ նստել հանգիստ:

Վաղ առավոտվա մթնոլորտը ջինջ
Լցված է հիմա հագար ձայներով:
Դոփելով հողը իր սմբակներով՝
Զիլ խրխնջում է հովատակ մի ձի,
Եվ կարծես դաղված այդ հզոր կանչից,
Տրտինգ է տաղիս զամբիկը ջահել՝
Պատրաստ մոտակա սարերն արշավել:

Հարեւան գոմում՝ հորթ, երինջ ու կով,
Եվ փոքր-ինչ այն կողմ՝ հոտը ոչխարի:
Այնտեղ էլ արդեն այծի մկմկոց,
Հորթերի բառալ ու մայում գառի:
Եվ մեծ զարթոնքից այդ աղմբկալի
Նույնիսկ արեն է քնից արթնանում,
Ուր մնաց մարդիկ, որ արդեն վաղուց
Ոտքի են ելել, գնում են գալիս:

— Շուտ արա, այ մարդ, օրը ճաշ շ դառավ,—
Ամբողջ կալով մեկ զիլ ձայնն է թնդում
Նորից Հեղուշի, որ ամեն տարի
Դանդաղելու մեջ մարդուն կշտամբում,
Շտապեցնում է, ինքն էլ շտապում,
Եվ ամեն տարի (դարձել է առած)
Ցայլաղ է հասնում ամենից առաջ:

Իսկ նրա մարդը, հայտնի գառնարած,
Որ հանգերով է շատ հաճախ խոսում,
Եվ այդ պատճառով կոյխոզում նրան
«Առանց քյամանչի աշուղ» են առամ,—
Հենց այդ խոսքին է կարծես սպասում.

— Օրը ճաշ շ դառավ, օրը ճաշ շ դառավ...
Այ դու երեսուն տարեկան պառավ,
Դու էդ քո ստով գլուխս տարար:
Թե ճաշ շի դառել, թող դառնա խաշի՛ւ,
Էլ բավական է, հոգիս մի՛ մաշիր:
Ես չունեմ քեզ հետ էլ ոչ մի հաշիվ:
Ոչ օրն է հինը, և ոչ էլ Արտոն.
Իմ շալակի տեղ՝ ահա ջի՛ ավտոն:
Դե, խնդրեմ նստիր, ուր կուզես քշիր,
Եվ թող, որ Արտոդ իր հոտը քշի...

Պատճառելով ուրախ ծիծաղ՝ իսկույն Արտոն
իր գառների հոտն է քշում սարահարթով:

Ոշարների հոտերն արդեն հավանաբար
Կես են անում յայլաղ տանող սարի ճամփան:
Այգարացին ոչ նախիրն է մնում տեղում,
Ոչ ձիերի երամակը:

Այսպես՝ գյուղում
Երբ արտերում հասկակալած
Եր ճտերով հավն է կորչում,
Երբ դաշտերում ծաղիկ-կանալ
Խոտհնձի են մարդկանց կոչում,
Երբ կարող են նախիր ու հոտ,
Չունենալով արձակ արոտ,
Ամեն վայրկյան տալ մի վնաս,
Բերան զարկել ցորեն-գարուն,—
Ֆերմաները գյուղը թողած
Դեպի յայլաղ են բարձրանում:

Եվ մինչ Արտոն խոսքից հետո իր հանգալից
Անմիջապես հոտն է շարժում ուզ ու գառի,
Մեքենավար Արշավիրը ԶիՍ-ն է իսկույն գործի դնում:
Կթվոր կանայք աղմկում են, կանչում, գոշում՝
Խլացնելով անգամ ձայնը մեքենայի:
Երեխեքը թուլում են ավտոյի շուրջ՝
Խանգարելով սրա-նրա շտապ քայլին:

Կիսով բարձված ԶիՍ մեքենան
Զբաղեցնում է մեն-մենակ
Հեղուշն իր յոթ տղաներով:
Դե ի՞նչ կասես, ո՞ո հասարակ
Կթվոր չէ նա, այլև արդեն
Տե՛ս. «Մայրական փառք» ստացած
Հերոս մի մայր,
Որի համար
ԶիՍ-ն էլ քիչ է, եթե կուզեք,
Դե, ինքներդ ահա տեսեք:

Յոթ երեխա՝ իրար նման,
Ասես երած լոկ մի ձվից,
Նույն մազերը՝ սաթի նման,
Նույն աշքերը՝ ծովից ծավի,
Հագուստներն իսկ իրար նման՝
Նույն կտորից ու նույն ձևի:

Յոթ երեխա՝ յոթն էլ տղա
Եվ յոթի մեջ՝ ոչ մի աղջիկ:
— Դե պատճառը հենց էղ եղավ,—
Հեղինեն է մեկ-մեկ բացվում,—
Ուզում էի ծնվի աղջիկ,
Բայց ծնվում էր նորից տղա,
Նորից էի բախտս փորձում,
Եվ էղպես էլ աղջիկ ցնդավ...

Եվ Հեղինեն շրջապատված
Իր յոթ կայտառ տղաներով,
Գլխին կապած կապույտ լաշակ,
Հագին գոգնոցը սպիտակ,
Իր աշքերով մեծ ու վճիռ
Միծաղում է շարաճճի...

IV

Յայլաղ տանող ճամփան բանուկ
Ասես երկինք է քեզ տանում:
Զգիռում է նա որորվելով,
Մեկ՝ ընկնելով, մեկ ելնելով.
Կախվում է նա կիրճի վրա՝
Ասես նրա խորքն է շափում.
Թառում է նա բանջին լեռան՝
Ասես խաղում «տափուկ-տափուկ».
Հետո կատարն է բարձրանում՝
Ասես մի պահ շունչ է առնում

Այն կալաշափ տափարակին,
Որ երբ արևն է խոնարհվում,
Թվում է, թի ձեռքդ պարզես
Կհասցնես արեգակին:

Եվ չնայած արևն այդքան
Մոտ է թվում այդ կատարին,
Բայց և այնպես բոլոր տարին
Նրա վրա ձյուն կա ու կա:
Սարն էլ հսկա գնդի նման
Կլոր՝ ասես հղկված ձեռով,
Հասկանալի այդ պատճառով
Գնդասար է կոշվում հիմա:

Հեղուշն արդեն տեղ է հասել,
Եվ չուզելով զուր սպասել
Ուշ մնացած լնկերներին,
Կապոցներն է քանդում-հանում,
Իր դույլերն է լավ լվաճում՝
Աչքի տակով հետեւելով
Ճլվացող տղաներին,
Որ աղմուկով, ուրախ ճիշով
Կանաչների, սեղի միջով
Թռչուտում են, ծաղիկ քաղում,
Ընկնում, ելնում, տարված խաղում:

Մկրտիչն է համնում շուտով
Վրնչացող իր աշխատով,
— Թարե՛, Հեղո՞ւշ:
— Հազա՞ր բարի...
— Թարի գալո՞ւտ, լնկեր վարիշ...
— Թարի լո՞ւս ձեզ:
— Թարո՞վ հազար...
— Հազա՞ր բարի...

Ու գեռ չանցած մեկ-երկու ժամ,
Տեղ են հասնում բոլորն արդեն:

Չանցած ևս մեկ-երկու ժամ
Տեղավորվում, հանգստանում
Մա՝ հողիկում, նա՝ վրանում
Ու ելնում են նորից ոտի՝
Սպասելով մեկն իր հոտին,
Մեկը՝ դարձին իր կովերի,
Որ գալիս են, ձգվում վերից:

— Ո՞նց վերջացավ, ընկեր վարիշ...
Թոլորի տեղ հարց է տալիս
Հեղուշը, երբ իրիկնանում
Ու հոտերը դաշտ են գնում:
— Ոնց վերջացա՞վ: Առաջվա պե՞ս...
Մկրտիչն է պատասխանում:—
Թորգոմն էլի չի հասկանում,
Մեղադրում է և՛ ինձ, և՛ քեզ,
Որ մենք կյանքի հետ շենք գնում,
Ետ ենք մնում:

— Թող ի՛ր մասին,
Իր պալատի մասին խոսի:
— Խոսում էլ է, ի՞նչ ես կարծում,
Բա թաքցնել հո չի փորձում:

Եվ զրույցը դառնում է լուրջ՝
Պտտվելով անցյալ օրվա
Կոլվարչության ժողովի շուրջ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄՏԵՐԻՄՆԵՐԸ

Է

Ողջ շրջանը գիտեր նրանց՝
Եվ Մկրտչին, և Թորգոմին,
Իբրև երկու շատ մտերիմ
Ու հինավորց բարեկամի:

Ապրած գյուղում այս միւնուցն
Եզ համարյա հասակակից՝
Մտերիմներ էին նրանք
Պատանության վաղ հասակից:

Սեկանդ տարել բարակության
Սանր ու գվար օրերը հին,
Մեկտեղ էին նրանք հասել
Սովետական մեր օրերին:

Եվ մոռ երկու տասնյակ տարի:
Ընկերները այս մտերիմ
Մեկտեղ էին գործում, բանում.
Մինչ Թորգոմը կոլխոզն էր միշտ
Եվ անընդմեջ նախագահում,
Մկրտիչը նույնքան տարի
Աշխատում էր իբրև վարիչ
Այն ֆերմայի, որի համար այս
Գժուվել էին նրանք հիմա:
Գժուվել էին ոչ թե երեկ,
Այլ գեռես անցյալ տարի:

— Զէ, որ այդպես է, ախակեր ջան, արի
Կոլխոզ վարչության նիստ հրավիրենք,
Այնտեղ դու վեր կաց առաջարկդ արա,
Թե չէ քո տան մեջ և տնավարի
Այս եղանակով... — Թորգոմը մոայլ
Ընդհատեց խոսքը, երբ անցած տարի
Իր միտքը հայտնեց Մկրտիչը նրան:

— Նիստ հրավիրենք, թե ուզում ես դու, —
Ու Մկրտիչը շուտ ոտքի ելավ,
Թորգոմն իր հերթին շփոթվեց.

— Դե լա՛վ,
Դու գոնե, եղայր, թեյդ պրծնեիր:
— Ենորհակա՞լ եմ... Դե՛, ցանություն... Հ


Նոգն միտքը կրկնեց Մկրտիչը նիստում.

— Զեր աշքի առաջ տասնյաթ տարի
Ես աշխատում եմ ֆերմայի վարիչ:
Եա՛տ բան է փոխվել — քայլել ենք առաջ,
Գյուղը գարձել նոր ու անճանաչ:
Շատ բան է փոխվել: Բայց իմ կարծիքավ
Գենք կարող չինել ֆերմայից մենք գտնե
Դեռ աշխատում ենք մենք տնավարի.

Նայում ենք հորթին, ուզին ու գառին
Այնպես՝ մի տեսակ կիսախոսուի աշքավ...
Վեցնենք ոչխարը: Մեր խեղճ ոչխարից

Մենք չո շինք կարող կաթի ծով կթել:
Իսկ բուրդը հապա՝ շորս — հինգ սամաթեզ:
Իսկ բուրդը... Դա էլ գաղոնի՞ք է միթե:
Ցուրաքանչուրը ձեզանից գիտե,
Թե անցյալ տարի բրդի մթերման
Պլանը իմշապես կատարեց: Փերման:
Ի՞նչ պիտի անենք հապա այս տարի,
Եթե կոլխոզը թերակատարի...

— Ի՞նչ է մնում, որ ի՞նչ անենք, —
Ոտքի ելավ նստած տեղից



Դանել քեռին ու ձայն տվեց,—

Ուրիշ հնար ու ճար շունենք:

Մկրտիչը վրա բերեց.

— Անցյալ ձմեռ մեր կարձատև դասընթացում

ես իմացա, որ մի հայտնի պրոֆեսոր

Հայաստանի սովորության մեկում այսօր

Մթերատու մի ոչխար է արդեն բուծում:

Այդ ոչխարը դիմացկուն է ցուրտ ու շոգին

Այնպես, ինչպես մեր տեղական ծանոթ մաքին,

Եվ ամենից գիշավորը՝ տալիս է բուրդ,

Որ և առատ է քանակով, և կիսանուրբ:

— Ո՛չ, դա ճիշտ չէ, ոչխարները լավ բրդատու

Նախ՝ կաթնով չեն, հետո՝ բնավ շոնեն դմակ, —

Բացականչեց իր աթոռից թորգոմն ազդու, —

Մեզ հիմարի տեղ մի զնի, մենք էլ մի քիչ

եելքի կտոր ունենք, այո, ընկեր Միկիչ:

— Դա նոր ցեղ է, ավելի շուտ՝ մի նոր տեսակ

Եվ դիմացկուն, և կրկնակի մթերատու, —

Շարունակեց Մկրտիչը հանգինտ ու սառ,

Նախագահի հուզմունքն ասես չէր նկատում:

Այն ընդգիւտ միտումնավոր սառնությունից

Նախագահը էլ ավելի խիստ տաքացավ,

Եվ Մկրտիչի խոսքը կիսատ՝ թուավ տեղից,

Խոսքի համար թույլտվություն դեռ շատացած.

— Չէ, ընկերներ, ես այս խնդրում...

— Ինչո՞ւ տեղից, —

Պտքի ելավ այդ ժողովում նախագահող

ծլյան կարոն:

— Ներողություն, ձայն եմ խնդրում:

Չէ, ընկերներ, ես այս խնդրում

Համաձայն չեմ մեր վարիչին,

Մեր հարգելի Մկրտիչին:

Ես չեմ ուզում վիրավորել,

Այլ խոսում եմ անկեղծորեն:

Դատում է նա ոչ թե իբրև

Մի զեկավար կոլխոզային,

Այլ լոկ իբրև մենատնտես,

Մի մասնավոր տանտիրոջ պես

Նա վարիչն է մեր ֆերմայի

Եվ ուզում է, ձգտում ֆերման

Ամեն ձեռվ առաջ տանել՝

Մոռանալով հաշվի առնել,

Թե կոլխոզի, գյուղի համար

Որքան էժան-թանկ կնստի:

Նա սխալ է դատում, բայց իստ

— Ինչո՞վ եղավ անօգտակար,

Որ մենք, թորգո՞մ, անցյալ տարի

Հինգ ցեղական ցովեր բերինք, —

Ասաց Մկրտիչն հաշտարար:

— Քո ցովերով գլուխ տարար, —

Փակելով դուռը հաշտության՝

Ասաց թորգոմը բարկությամբ, —

Ցովեր բերինք և դրանով

Քո ֆերմայի հարցը փակվեց:

Ցովեր-ցովեր գլուխ տանում,

Եղայր, արդեն համն ես հանում:

Երեկ՝ ցովեր, այսօր՝ ոչխար

Ինչոր կիսափառուկ բրդով,

Իսկ էգուց էլ մեկ էլ տեսար

Քո սահմանած այդ լավ հերթով

Եկար հասար մինչև անգամ

Ինչոր կիսափառուկ բրդով

Այժի... Եղայր, խնդրեմ ասա,

Կոլխոզային ֆերմա՝ է սա,

Թե՝ տոհմային կայան.

Հետո

Խնդրեմ էղ քո էժերը թող

Եվ մտածիր, ընկեր անգին.

Մեր առաջ կա ավելի մեծ

Եվ լուրջ խնդիր, Հայրենիքին,
 Պետությանը և ամենքիս
 Հա՛ց, հա՛ց է պետք:
 Պետք է երբեք
 Մենք այս բանը շմոռանանք
 Եվ մեկընդմիշտ լավ հասկանանք.
 Գլխավորը հա՛ցն է, հա՛ցը
 Եվ ոչ թե քո գառն ու մաքին:
 Ես այսպես եմ դնում հարցը,—
 Մեր պետությունն ու մեր պարտիան,
 Որ որոշում են ընդունել
 Երկու ու կես ամիս առաջ
 Ո՛չ թե հորթի, ուզի, գառի,
 Այլ ցորենի և հաճարի՝
 Հա՛ցի մասին, հացի։
 Ահա՝
 Ես այսպես եմ նայում հարցին:

— Նայիր, շատ էլ լավ ես անում,
 Մենք էլ այդ լավ ենք հասկանում:
 Իսկ ի՞նչ կասես բրդի մասին,—
 Ասաց Հեղուշը բարձրածայն
 Եվ ձեռք մեկնեց, որ խնդրի ձայն,
 Ոտքի կանգնեց Կարոն սակայն:
 Եվ նա խոսեց կարճ ու հակիրճ:
 Զուր չէ, որ դեռ նրա հաղին
 Համազգեստն է զինվորական:
 Միջադեպից ֆինլանդական
 Մինչև օրը հաղթանակի
 Բացակա է եղել գյուղից,
 Կտրվել է ջրից-հողից,
 Նույն այդ հողի-ջրի համար
 Անցել հազար հող ու ջրից,
 Դաղվել ցրտից, խաշվել հրից,
 Երկրորդ օրը վերաբարձի
 Կարոն իսկույն փոպավ գործի:

Կոլխոզնիկի հոգին նրա
 Կարուտիլ է արտ ու մարդին:
 Նշանակվեց բրիգադավար
 Եվ մեծ սիրով կպավ գործի:
 Ցուցանիշներն անցյալ տարվա
 Ողջ շրջանում դղրդացին.
 Եր մշակած բրիգադի
 Մեկ հեկտարից Կարոն տվեց
 Քսանհինգ ցենտներ հացահատիկ
 (Երբ խոստացել էր տասնըվեց),
 Նա հերոսի կոշման հասավ:
 Ողջ երկիրը նրան տեսավ՝
 «Մովեսական Հայաստան»-ում՝
 Կրծքի վրա—զինվորական
 Շքանշան—մեհալների մյուս կողքին
 Ամրացված Ոսկե Աստղն աշխատանքի

Եղյան Կարոն նույն ժամանակ
 Փարտուղարն էր և պարտկոմի:
 Ու սկսեց երբ նա խոսել,
 Երակների մեջ Թորգոմի
 Արյունն այնպես արտգ հոսեց,
 Որ նա կարմրեց միանգամմից:
 Հավատում էր նա Եղյանին,
 Համոզված էր, որ նա իրեն
 Մկրտչի դեմ կպաշտպանի:

Սակայն Կարոն այլ կերպ խոսեց,
 Խոսեց ազդու, ոգևորված.
 — Այսպիս կոնկրետ հարց է դաշտած,
 Այնինչ ընկեր Թորգոմն ալստեղ
 Իրեն իզուր զցեց դես-քեն:

Գլխավորը հացն է, այո՛,
 Մենք այդ գիտենք և լա՛վ գիտենք,
 Բայց Մկրտիչն այստեղ մի՞ի

Հարցը դրեց նման ձեռվ՝
 Թե արտերը թողնենք անցել,
 Թողնենք խոզան, թողնենք խոպան.
 Ո՞վ է նման հարց հարուցել,
 Ընկեր թորգոմ, ասեք հապա:
 — Դու, սիրելի ընկեր թորգոմ,
 Դու քիչ առաջ Մկրտիշին
 Անվանեցիր մենատնտես,
 Ճիշտ է, ո՞չ լուրջ, այլ հենց այնպես,
 Քարկությունից իսկ ինձ համար
 Միանգամայն պարզ է հիմա,
 Որ քեզ բնավ դուր չի գալիս,
 Երբ բացերդ են քեզ ցույց տալիս:
 Մենատնտես... Զէ՛, այս դեպքում
 Գետք է արդեն քեզ մեծարել
 Հենց այդ խոսքով, քե՛զ, սիրելի՛ս:
 Ենդիրն այստեղ ոչ թե մաքոն,
 Ոչ էլ կոնկրետ մեր կոլխոզի
 Մթերմանն է վերաբերում:
 Գետք է նայել մի քիչ հեռու,
 Աշքը պոկել իր սեփական
 Տան նեղ բակից և պետական
 Վերաբերմունք ցուցաբերել:
 Քիտեք, որ մեր ռեսպուբլիկան
 Արտադրում է արդեն հրեն
 Մետաքս, մահուդ: Ի՞նչ եք կարծում,
 Գործարանը իր սեփական
 Հումքը պիտի ունենա՞՝, թե՞...
 Ես կարծում եմ՝ պարզ է արդեն:
 Հացի հարցը մի կողմն է լոկ:
 Գետք է հարցին նայել խելոք, —
 Թորգոմն էլի ելավ ոտքի:
 Թո՞ւրդը: Շա՛տ լավ, ընկեր անգին,
 Իսկ ի՞նչ կասեք դուք դմակի,
 Իսկ ի՞նչ կասեք հապա մսի,
 Իսկ ի՞նչ կասեք կաթի մասին:

Հ՞ը, Մկրտիչ: Թե՞ միգուցե
 Դու կարող ես մինչև անգամ
 Եվ կաթ և յո՞ւզ բրդից քամել,
 Գուցե միջո՞ց կա գիտական:
 Հապա եղբայր, բարի եղիր,
 Տետրակներդ մի լավ պեղիր,
 Գուցե գտնես:
 Սա, իհա՛րկե,
 Ոչ ծաղրանք է, ոչ հանաք է:
 Բանը այն է.
 Եվ նա ուղիղ
 Դիմեց արդեն ողջ ժողովին,
 Տարակուսանք ու վախ ցանեց, —
 Թե դեռևս կասկած կա մեծ,
 Որ ոչխարից այդ բրդատու
 Իբրը շատ քիչ կաթ են կթում...
 — Զես վախեցնի դու մեզ կաթով, —
 Զայն խնդրելով ցուցամատով,
 Հեղուզն իսկույն ելավ ոտքի՝
 Իր յոթերորդ տղան գրկին:
 Մկրտիչը ճիշտ հարց դրեց,
 Կարոն էլ լավ բացատըրեց:
 Ինչ մնում է կաթ ու յուղին,
 Մենք գտել ենք արդեն ուղին:
 Կաթն ու յուղը իբրև կանոն,
 Կովն է տալու հիմնականում.
 Խնդրեմ հաշվեք՝ ամբողջ տարին
 Նոր տեսակի այդ ոշխարի
 Կաթի պակասն ինչքա՞ն է, ես
 Խոստանում եմ հենց այստեղ ձեզ.
 Իմ կովերի բրիգադից
 Լիտր առ լիտր ձեր այդ կաթի
 Ողջ պակասը լրացընել:
 Եվ ցուցարար եղանակով՝
 Երեխային երկու ձեռքով
 Ամուր գրկած ուղեց նստել...

Սափեր եղան այստեղ-այնտեղ,
Եվ շաղ եկան ձայներ չորս կողմէ:
Իսկ աղմուկը երբ հանդարտեց,
Կարապետի վերջին խոսքով
Վարչության նիստը ավարտվեց:

— Թորգոմ ախպեր,
Դե ձեռքդ բեր,
Ի՞նչ ես թթվել, տո՛, տնաշեն,
Էսպես գնա՝ քեզ կմաշե՞ս.—
Մկրտիչը ասաց նրան՝
Ընկերոջն իր. նիստից հետո:
— Դու լավ կանես, որ ձեռք քաշես
Այդ կատակից Հիշիր հետո՝
Միծաղում է նա լիաթոք.
Ով որ վերջում է ծիծաղում,—
Թորգոմն ասաց կծու-կծու,—
Դեռ կա շրջկոմ, գեռ կա պարտիա,
Միայն այնտեղ պիտի պարզվի
Ով է հաղթող, ով է պարտված:
— Թորգոմ, եթե հույսդ այն է.
Որ մեր պարտիան դեռ այդ մասին
Չունի պլան կամ որոշում,
Միտդ պահիր ինչ եմ ասում.
Դրան երկար չես սպասի:
Հարցը շատ է հասունացել,
Միայն դու ես քնով անցել...
— Դեռ սպասիր, հոգուդ մատաղ,
Երշկոմ գնանք առավոտ վաղ,—
Տեսնենք ով է քնով անցել,—
Քսաց Թորգոմն սպառնական,
Եվ թողնելով անպատճիւն
«Գիշեր բարի», ոցտեսություն»,
Քայլերն ուղղեց դեպ իրենց տուն:

II

Աղմուկ հանած հարցը՝ վեճը հասավ իրոք
Մինչև շրջանային պարտիական բյուրո:
Դեռ հերթական նիստի օրը չէր էլ հասել,
Դեռ մնում էր նրանց մի փոքր էլ սպասել:
Անցան օրեր: Մի օր երբ որ փոստը եկավ,
Ու թերթերը օրվա երբ բացեցին՝ գյուղում
Աշխույժ իրարանցում ու խլրտում ընկալվ:
Մկրտիչի գեմքին մեղմ ժպիտ էր խաղում,
Կարծես նա այդ թերթին սպասում էր վաղուց,
Ինչպես սպասում են բարեկամի թղթին:
Եվ այդ պատճառով էլ, առանց զարմանալու,
Ծարավածի նման վրա ընկավ թերթին:
Մինչդեռ նախագահը՝ թերթը ձեռք վերցնելով,
Խոշոր վերնագիրը անձայն ընթերցելով,
Զարմանքից քար կտրեց, թերթը ձեռքից թողեց,
Կարծես թե մատները լրագիրը դաղեց:
Չէր հավատում աչքին և ընթերցեց նորից:
Պարզ գրված էր սեռվ սպիտակի վրա.
«Եռամյա պլան»...

... Լուրը թռավ,
Լուրը մեկից, միանգամից
Անցկենալով բերնեքերան
Փովեց ամբողջ գյուղի վրա.
— Նոր որոշում կա Կենսկոմից
Ֆերմաների վերաբերյալ:
— Նոր մեծ պլան:
— Երեք տարվա:
Ո՞վ է ասում:
— Թերթը, նայի՞ր:
— Տուր մի նայեմ:
— Ահա՛, նայի՞ր...

Թերթը անցնում է ձեռքեճեռք,
Աշքը անցնում է առղից տող:

— Տեսե՞ք, տղե՞րք, ապա, տեսեք,
Մեր մասին է գրված կարծես,
Հենց մեր գյուղի, մեր կոլխոզի:
— Այ նախագահ, դե եկ խոսիր,
Հը, դու հիմա էլ ի՞նչ կասես:

Թայց շի լսում թորգոմն ասես,
Հափշտակված՝ թերթն է կարդում:
Նույն այդ պահին ներս է մտնում
Մկրտիչը.

— Այ իմաստուն,
Ախար էդ ո՞նց իմացար դու,
Որ նոր պլան է պատրաստում
Պետոթյունը, — այս-այն կողմից
Զայն են տալիս նրան:
Իսկ նա
Ժպտում է և պատասխանում:
— Դուք չէ՞ք ապրում էս աշխարհում,
Թե՞ երկնքից նոր իջաք ցած:
Ինչպե՞ս թե ես ոնց իմացաւ:
Իմաստոթյան ոչինչ չկաւ:
Պետոթյունը սովետական...
Ախար չէ՞ որ նա այլ բան շի,
Քան ես ու դու, ամենքս մենք՝
Սովետական քաղաքացիք:
Որոշումն էլ հո երկնքից,
Օդից հո չենք ներքն բերում:
Այն, ինչ այստեղ ինչ որ Միկիչ,
Ինչ որ Ալի, հվան, Կարո
Մտածում են կամ կամենում,
Աներկույթ ճանապարհով
Հասնում է վեր՝ Մոսկվա, Կրեմլ,
Հասնում է մեր պարտկենտկոմի
Ժողովուրդն ինչ որ խոսում,
Կազմակերպված և ավելի

Հարստացած ետ է գալիս,
Վերադառնում է մեզ նորից:
Եվ ինչ, ահա նոր որոշում:
Թարձր, ինչպես բարձրախոսում
Մեր սեփական ձայնն ենք լսում
Ամեն մի նոր որոշման մեջ,
Ամեն մի նոր պլանի մեջ:
Լսողների դեմքի վրա
Պայծառ ժպիտ է նկատվում:
Մեկն ուսին է խփում նրա,
Մեկը՝ բոթում կամ կսմթում:
Իսկ թորգոմը... շի նկատում,
Իսկ թորգոմը... թերթն է կարդում:
— Պարզ է հիմա, պա՛րզ ու որոշ, —
Ընթերցումը ավարտելով
Նախագահը ելավ ոտքի: —
Ներիր դու ինձ, ախար Միկիչ:
Ներիր, որ ես հիմարացաւ,
Իմ սխալը նոր հասկացա...
Մինչ երկու զույգ ժպտուն աշքեր
Սևովում են իրար վրա,
Մի պահ սուզվում իրար խորքում,
Երկու ձեռքեր սեղմում իրար
Եվ պահ հետո եղբայրաբար
Փաթաթվում են, իրար գրկում:

III

Պարտիական և կոլխոզի ժողովներում
Լուրջ քննարկվեց մեծ պլանը երեք տարվաւ
Իր ելույթում թորգոմն ասաց.

— Ինձ չեմ ներում,
Որ ես հացի բարձր բերքի հարցով տարված,
Ինչպես հարկն է՝ քաղցր աշքով չէի նայում
Մեր կովերին, ուլ ու գառին, մեր ոշխարին...

Ֆերման կիսվեց՝ բաժանվեց կովզ ոչխարից,
ծվ Հեղուշը, Մկրտիչի առաջարկով,
Նոր ֆերմայում առաջ քաշվեց, իբրև վարիչ:
Իսկ Միկիչը խսկույն մեկնեց առհմակայան,
Որ գյուղ քերի ոչխարները այն բրդատու
Այդ ոչխարի հոտը պիտի պահեր Արան,
Մկրտիչը միայն նրան էր հավատում:

ԳԼՈՒԽ ԵՐՐԱՐԴ

«ՔԱՂԱԿԱՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՅԵՐ»

I

Ուշ գիշեր է: Գյուղի վրա արդեն քնած
Տարածվել է հանդարտություն մի անձկալի:
Միայն կալակիչն է աղմըկում, այն մեքենան,
Որի ձայնը անպակաս է ամռան կալից:

Կարոն, նստած սեղանի դեմ,
Ինքնահոսով (թանկ նվերը քեռի Յանի՝
Սլովակյան նախկին խառատ-պարտիզանի,
Որ Կարոյին է ընծայել,
Երբ Սոֆիա են մերոնք մտել),
Նա նամակ է գրում հիմա
Իր ընկերոջը՝ Սերգեյին:

Մի պահ տրվում է մտքերին...
...Անց կենալով կովի դաժան
Անագորույն ճանապարհով
Միշտ միասին և անբաժան՝

Ուսւ Սերգեն ու հայ Կարոն
Մաքառութով ու պայքարով
Պերեկոպից Թեոլին հասան՝
Իրենց սրտում արծարծելով
Խաղաղ կյանքի կրակն այրող:

Հաղթանակով ետ դառնալով
Ամեն մեկը գեպի փր տում,

Նրանք տարան իրենց սրտում
Մի այնպիսի մտերմություն,
Որ ոսկու պես չի ժանգոտում:

Փոստի բանուկ ճանապարհով
Անվերջ եկան ու զնացին
Նամակները հարանման՝
Զինվորական սովորությամբ
Հատուկ ծալված՝ սրտի նման:

Թարևներ ու ցանկություններ
Եվ հարցումներ խիստ գործնական։
— Չեր կոլխոզում ի՞նչն է պակաս...
— Դուք ի՞նչ ունեք և ի՞նչ չունեք...
— Հարցնում է քեզ ինչշան քեռին
Դաշտապաշտպան անտառներից:
Հեզ մոտ ո՞ր ծառն է լավ աճում:
— Ախր չունենք մենք սերմ կեշու...
— Սերմը ոչինչ, մենք կուղարկենք:
Մի դու գրիր՝ ո՞նց եք անում,
Որ այնպես լավ է դիմանում
Չեր պանիրը «Դարալագյազ»
(Որ կերել ենք մենք ֆրոնտում):
Նա շատ շուտ է մեզ մոտ հոտում:
Գրիր տեսնենք ինչն է պակաս:
— Գա հեշտ է շատ: Մի դու ասա.
Մեկ հեկտարից ինչքա՞ն կտաք...
— Կանչում ենք ձեզ սոցմրցության:
Չեր լիազորն եմ ես այստեղ,
Իսկ քեզ այնտեղ՝ ձեզ մոտ, անշուշտ,
Մեր վատահված անձն ենք հաշվում...

Նամակներն են գնում-դառնում,
Եվ հեռակա նամակներով
Երկու մեծ գյուղ, երկու կոլխոզ
Իրար հետ են ծանոթանում:

— Սեզ բարևներ ՚տանել քեռուց,
Նա քեզ շատ է մտաբերում,
Հարցնում է նա՝ մեղվանոցից
Ինչքա՞ն է ձեր բերքը միշին:
— Հա՛, բարեկիր և Մկրտչին,
Հայտնիր նրան, որ փաթեթով
Նա կստանա, և շատ շուտով,
Շատ օգտակար մի բրոցյուր
Ե՞վ ֆերմայի, և՛ իր համար:
Այսպես ահա՝

ամեն նամակ,
Որ գնում է ու ետ դառնում,
Պատկանում է ամբողջ գյուղին,
Ողջ կոլխոզին է պատկանում:

Բանն այս ձեռվ այնտեղ հասավ,
Որ երր Կարոն անցած ձմեռ
Այցի գնաց Բորիսովու,
Ոչ թե միայն Սերգեյը մեր,
Այլ նրա հետ կոլխոզը ողջ
Դիմավորեց Կարապետին,
Որպես մոտիկ հարազատի:

Եվ կատարվեց նույնը նաև
Այս գարնանը: Շրջգործկոմի
Շոփեր Հայկը միտն է պահել
Ու պատմում է սրան-նրան,
Գեռ շասած Սովետաշեն,
Նա կանգնում է շուր վերցնելու
Եվ ուզում է շարժվել առաջ,
Երր մի քանի երեխաներ
Ճանապարհն են կտրում նրանց:
— Այս ի՞նչ գյուղ է, երեխաներ,—
Լսվում է ձայնը Սերգեյի:
— Դե մեր գյուղն է, էջ ո՞մ, քեռի:
— Ա՛յ դու ճստիկ, — և մեղմաձայն

Սիծաղում է ուրախ քեռին:—
Այդ իմացանք, բայց դուք ասեք
Ո՞նց է կոշվում:

— Սովորաշե՞ն:

— Իսկ դուք, քեռի, ո՞վ կլինեք, —
Երեխան է հարցնում հիմա:
Ծիծաղում է քեռին կամաց,
Ուշացնում է պատասխանել:
Երեխները մոտ են գալիս,
Մի պահ նայում, զննում նրան,
Եվ ի՞նչ...

Հանկարծ միանգամից
Եվ համարյա միաբերան
Բղավում են.

— Սերգե՞յ քեռի...

Աղմկում են, ուրախ կանչում.
— Տո, մենք ինչպես չհասկացանք...
Եվ թողնում են ու գյուղ փախչում,
Որ շուտ հայտնեն լուրն ամենքին՝
Սուունալով մանկան նման,
Չհիշելով, որ մեքենան
Երենցից լավ վագել պիտի...

Ահա նորից անասնաբռույթ
Ընկերոշն է գրում Կարոն:
Ե՞վ իր կողմից, և՛ ողջ գյուղի
Նախ հղում է հազար բարով,
Այնուհետև պատմում սիրով,
Իր, կողխողի կյանքից: Կարոն
Նույնիսկ ինքն էլ չի նկատում,
Թե աննկատ խռոքը մեկ էլ
Ինչպես հանկարծ հեռվից եկել
Ֆերմայի շուրջն է պտղտում:
— «Մեր կողմերում հնուց ի վեր
Սաղորույթ է, ամեն ձմեռ»

Զյունն է պատում երբ քար ու սար՝
Խորխորաաներ, ծերպեր, ձորեր
Դարձնելով հարթ հավասար, —
Ուխարների հօտերը հոծ

Միշտ քում են ձմեռանոց:
Լեռներն այնտեղ բուրգերի պես
Բարձրանում են իրար վրա,

Բազմահարկ են կազմում սասես.
Զորերն, ինչպես թրեր հատու
Նրանց լանջերն են կտրատում՝
Բաց անելով լայնաբերան

Քարափներ ու անտակ վիճեր

Այդ ձորերը քարայժերի

Հայրենիքն է: Զորի միշտով

Մեկ էլ տեսար տղացավ վեր

Կամ թե հարյուր մետր վերից՝

Ուղղահայաց քարափներից

Լողորդի պես ներքեւ նետվեց

Ահաբեկված մի խենթ քարայժ՝

Միշտ ընկնելով եղջյուրներին,

Որ նման են զույգ ծառերի

Նրա գիլում արմատ խրած...

Եվ մեր այդ վեհ լեռնաշխարհի

Համարյա թե ամեն սարի,

Ամեն վիճի, քարափի մեզ

Բացվում է մի փոքրիկ կամ մեծ,

Նեղ կամ արձակ

Մութ քարանձավ:

Սովորությամբ մեր պապերի,

Գուցե արդեն երկար գտրեր,

Այս կողմերում կարդ է գառել.

Ամեն ձմեռ, ամեն տարի

Ղշլազ քշված հոտը պահել

Այս այրերում հսկայական:

Ի՞նչ կա այստեղ անքշնական

Փատողաւթյամբ առաջ ու պարզ

Ալ կերպ վարվել չէր կարելի.
 Քարայրը նախ՝ տաք է, ապա՝
 կավ պահում է ու պահպանում
 Հոտը գողից ու գայլերից:
 Այսպես են միշտ ձիգ դարերից
 Մինչև այսօր դատել մերոնք,
 եվ նրանց հետ, Սերգեյ, ես էլք
 հնչպես անցներ մեր մտքերով,
 թե գեղեցիկ մի օր կզա,
 եվ այն, ինչ որ խիստ բնական,
 Պարզ էր թվում մեր բոլորին,
 Կհարուցի կասկած խորին:
 Եվ հարուցեց
 Կասկածն այդ մեծ
 Քեզ քաջ հայտնի Միկիչ քեռին:
 Երեկ եկավ դիմեց նախ ինձ,
 Թե սխալ է — հոտ ու նախիր—
 Տանել պահել քարայրներում:
 Անցած ձմեռ նա կուրսերում
 Սովորել է, թե ուղղակի
 Քարանձավը հոտի համար
 Ոչ թե հարմար կամ անհարմար,
 Ալ մահացու է կրկնակի:
 Մանր հոտը ամոնյակի
 Եվ ծանրածի,
 Եվ ծնվածի,
 Ուի, գառան
 Մահն է միայն:
 Այնուհետև, — ասում է նա, —
 Ամեն անձավ, ամեն քարայր
 Շտեմարան է վարակի:
 Ամեն տեսակ տիգ վարակիչ,
 Ամեն տեսակ միկրոբ, բացի
 Այնտեղ դառնում են ռպահածու,
 Եվ վարակի հարցից բացի՝
 Լուսը... նույնիսկ «լուսն աստծո»

Զի թափանցում այնտեղ բնավ:
 Օղը այնտեղ գաղզ է, խոնավ,
 Ծանր ու հոտած: Երբ այդ օդին
 Վառված մարիսը չի դիմանում,
 Էլ ինչո՞ւ ենք մենք զարմանում,
 Որ ովարի, գառան հոտից
 Ամեն տարի՝ ամեն գարուն
 Մենք տալիս ենք ժանր կորուստ:
 Եվ Միկիչը մի կոշկի մեջ
 Զույգ ոտները դրած ամուր,
 Բարձրացրեց երեկ աղմուկ՝
 Պահանջելով, որ այսուհետ
 Մեր հոտերը ոչ մի դեպքում
 Զմեռանոց էլ չքշենք:
 Իսկ դա ի՞նչ է նշանակում.
 Այն, որ պիտի ձայնը լսենք
 Մենք գիտության. ոչ թե քշենք
 Հոտը լցնենք քարայրի մեջ,
 Այլ հենց գյուղում՝ արձակ ու մեծ
 Զմեռանոց շինենք հիմա
 Ոշխարների հոտի համար՝
 Հստ գիտության պահանջների
 Մեծ, լուսավոր, տաք ու հարմար...»

III

— Զմեռանոց նախ և առաջ...
 Խուսափելով՝ բռընկումից՝
 Մկրտիչը հանգիստ շանաց
 Բացատրել միտքը Թորգոմին:
 — Զմեռանոց..., այն ժամանակ,
 Երբ որ այնտեղ ձրի, անփող
 Քարայրների դրուժինն ամբողջ
 Մեզ է նայո՞ւմ: Տո, ծա՞ղը է սա, —
 Մկրտիչին Թորգոմն ասաց, —

Սա ծա՞ղը է, թե անմիտ հանաք,
Ասա մենք էլ մի հասկանանք:
Այդ դեռ ոչինչ, անգին ընկերու
Խսկ այդ գեպօւմ ես ո՞րտեղից
Ճարիմ նաև անասնակեր:
Եվ զրույցը փոխվեց վեճի:
Արդեն իրար սկսեցին
Կոշել ոչ թե անսաներով,
Այլ դիմեցին ազգանունվ,
Որ լինում էր այն ժամանակ,
Երբ ընկերները հինավուրց
Վիճում էին կրքու ու լուրջ:

— Հնկեր Պալմա՛ն, ես իմ հոգին,
Կրկնվում է նոր տեսակի
Ոշխարների պատմությունը:
Ի՞նչ է, պիտի պետությունը,
Պարտիան նորի՞ց միջամտեն, —
Մկրտիչը նրան խայթեց:

Խսկ Թորգումը նրան խեթեց.
— Դու նազրդ թո՞ղ և ի՞նձ լսիր,
Թե ի՞նչ կասեմ ես քո մասին:
Ի՞նչ շահ գյուղին կամ ի՞նչ օգուտ
Քեզ էսքան է մտահոգում, —
Եվ եղունգն է մեկնում առաջ:
Փող շեմ կարում, որ ձախ ու աջ
Զամշի նման շագ տամ, ցրմաք,
Փայինի տեղ մանեթ փուեմ:
Ես, ախապե՞ս, ժողովրդի
Կոպեկները ծոտի-պոտի
Բանի համար շեմ տա քամտեն,
Թորամանյան, ինձ լավ լսիր,
Եվ նոր միայն քո պետական
Մոտեցումի մասին խոսիր:
— Ես լսում եմ և հասկանում.

Փող շեմ կտրում, գիտեմ, գիտե՞մ,
Թա կտրեիր դու փող եթե
Քո ակումբի՝ այդ պալատի
Շենքի վրա հո շպիտի
Հնդամենը դեռ մեկ միլիոն
Մախս անեիր:
— Մրա՞ն նայիր, —
Մկրտիչը տոնը փոխեց, —
Տեսա՞ր, թե ոնց ժողովրդի
Կոպեկները աշխա կոխեց:
Ախր խեղճը միջո՞ց չունի:
Խսկ ո՞վ ասաց պալատ շինիր,
Եվ միլիոններ հանձնիր քամուն,
Երբ որ կարգին ձմեռանոց
Նույնիսկ չունես, չեմ հասկանում:
Այդ ինչպե՞ս է գրված կամ ո՞ւր,
Ո՞ր օրենքի, որ կետի մեջ:
Խոսիր, տեսնեմ ի՞նչ ես ասում:
— Դու բրդում ես այնպիս մեծ-մեծ,
Որ լսողն էլ պիտի կարծի,
Թե լուրջ բան ես իրոք խոսում, —
Թորգումը խիստ վիրավորվեց
Եվ շփոթվեց նաև մի քիչ, —
Եվ այդ մասին, ընկեր Միկիք,
Լավ կանեիր, որ տանդ գու
Քո ինժեներ Վաշե որդո՞ւմ,
Ոչ թե այստեղ ի՞նձ հարցնեիրը
Նեղը լծեց, սրա՞ն նայիր, —
Ու նա դարձավ դեպի Վաշեն.
— Էհ, ինժեներ, ամոթ քա չէ՞,
Որ բարձրագույն ուսում առած,
Ճարտարապետ արդեն գառած,
Չես զրազվում դու քո հարով:
Հո շպիտի վաթսուն օրովէ
Նրան նորից ուղարկեմ կուրս,
Որ այդքան շատ եռ շմեա

Մեր օրերից: Օրը երկու
 Եվ կամ թեկուզ մի ժամ եթե
 Նրան կարդաս օրվա թերթեր,
 Մեր պետության, մեր պարտիայի
 Վաղոց բռնած կուրսի մասին
 Հետը խոսես, զրույց անես,
 Նման բաներ էլ չի ասի,—
 Եվ ընդգծված նա ծիծաղեց:
 — Աւ կարծում է, թե ինձ դադեց, —
 Միկիչն ասաց: Բայց շթողեց
 Նախագահը, որ ավարտի
 Նա իր խոսքը.

— Անցյալ տարի

Քիչ էր մնում, եղբայր, որ դու
 Համբավ հանես իմաստունի:
 Դուրս էր գալիս, որ դու նույնիսկ
 Որոշումից դեռ շատ առաջ,
 Գլխիս մի նոր գուշակ դառած,
 Մեր վաղն էիր նախանըշում:
 Իմաստունդ թող իմանա,
 Որ միանում գյուղերն իրար
 Ու քաղաք են հիմա դառնում:
 Միտղ պահիր, ընկեր անգին,
 Որ ուղիները մեր կյանքի
 Հենց այնտեղ են հիմա տանում:
 — Դու շատ շուտ ես հիվանդանում
 Քո երազած այդ քաղաքի
 Երազանքով:
 Ընկեր Թորգոմ,
 Ծնորհակալ եմ, քաղաքը քեզ,
 Օպերան ու պալատը քեզ,
 Ինձ հասարակ ձմեռանո՞ց,
 Գոմե՞ր են պետք... Դու ինքնագոհ
 Շատ ես սիրում կրկնել, Թորգոմ,
 Թե ամեն ինչ մենք դեռ կանենք,
 Կանենք, իբր, միայն՝ հերթով:

Համաձայն եմ: Բայց ընդունենք՝
 Ձմեռանոց նախ և առաջ,
 Իսկ պալատը փոքր-ինչ հետո:
 Դու մտածիր գյուղի մասին,
 Քաղաքներն էլ, անհոգ մնա,
 Կարենան յոլա գնալ
 Առանց քեզ էլ: Դու կոլխոզի
 Նախագահն ես, մի՛ մոռանա,
 Ոչ թե արդեն Քաղսովետի, —
 Այս դու միշտ էլ հիշես պիտի:
 Փոթկաց ծիծաղն ու շաղ եկավ,
 Ինչպես հանկարծ պայթած ական՝
 Աներեւոյթ վերքեր տալով
 Նախագահին ու Վաշեին:
 Եվ շվելով գեմքը ձեռով
 Այնպես, կարծես թե այտերով
 Արյան շիթ է հոսում ներքեւ,
 Թորգոմն ասաց վիրավորված.
 — Դեռ Թորգոմին Քաղսովետի
 Նախագահ շեն մականվանելու
 Սակայն քսան տարուց ավել
 Ողջ շրջանը արդեն գիտի
 Եվ կոշում է քեզ «Կապույտ ձի»:
 Խնդրեմ միտքս ճիշտ հասկացիր:
 Քեզ շեմ ուզում վիրավորել,
 Ինչպես որ դու աշխատեցիր:
 Համառ էիր, ինքնասածի,
 Քսան տարի եկավ անցավ
 Էլի դու նույնը մնացիր՝
 Նույն համառը, ինքնասածին,
 Որ եկել է, կրծքիս շոքել,
 Պահանջում է իր Կապույտ ձին,
 Երբ վաղուց է այդ ձին սատկել...

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

~~~~~

## «ԿԱՊՈՒՅՏ ԶԻՈՆ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

I

Վաշեն, Միկիչի անդրանիկ որդին,  
Երբ քիչ էր մնում ուսումն ավարտի,  
Խմացակ՝ գյուղում շինել են ուզում  
Ակումբի նոր շենք, և դրա համար  
Նրա դարձին է Թորգոմն սպասում:  
Ու երբ ավարտեց՝ դիպլոմն ստացավ,  
Նա իր շրջանի ինժեներ դարձավ:  
Նոր շքեղ ակումբ հայրենի գյուղում...  
Այն թանկ, սիրելի ու ծանոթ հողում,  
Ուր մանկությունն է անցկացել նրա,  
Ուր խաղացել է նա պահմռտոցի,  
Եվ ուր քարաշեն դպրոցից բացի  
Քարաշեն ուրիշ ոչ մի տուն չկար,—  
Նրա աշքի դեմ մի գեղանկար  
Պատկեր էր փուլում:  
Արյունն էր նոռում  
Երիտասարդի երակների մեջ  
Ու մղում նրան խիզախումների,  
Որ ձուլվում էին գեղեցիկ ու պարզ  
Նախագծնրում կառուցումների...

Մարմին է առնում ակումբը արդեն:  
Նա բարձրանում է հենց իրենց տան դեմ,  
Այն գյուղամիջյան բլուրի վրա,  
Որ մանկությունից ծանոթ է նրան:  
Ինչքա՞ն է այնտեղ խաղացել Վաշեն:

Քսան տարի է եկել ու անցել,  
Բայց նա ճիշում է այնքան պարզ հիմա,  
Կարծես թե երեկ, հենց երեկ լիներ...

Ահա այստեղ՝ այս քպուրի գանցիք պար  
Խաղում էին նրանք այնժամ «կարմիր-բուրժույց»:  
Այն մեկը աշխատում էր «կարմիր» լինել,  
«Բուրժույց» լինել ոչ մի տղա չէր հանդուրժում:  
Եվ վերջապես, հենց այդ օքք նրանց համար  
Գտնվել էր մի լավ հնար, և ի՞նչ հնար.  
Ով որ դասը պատմում է վարժ,  
Ով որ ճիշտ է խնդիր լուծում,  
Ով ճարպիկ է, արագաշարժ,  
Նա կարմիր է՝ առանց վեճի,  
Ով որ շար է, փնթի ու ծուլ,  
Նա «բուրժույց» է:

Այս լավ վճիռ:  
Երկրորդ օրն էր՝ արդեն նրանք առանց վեճի  
Խաղում էին, ինքն էլ շարքում «կարմիրների»:  
Խաղում էին:

Հանկարծ վերից

Քրտնակալած և հնալով  
Մեշտեղ մտավ թլջիկ Գալոն:  
Եվ ձայն տվից նա կատաղած.  
— Էյ դու, Կապույտ ձիու տղա,  
Խաղի միջից շուտ դուրս արի,  
Մի՛ կեղտոտի «կարմիրներին»:  
— Ո՞վ է Կապույտ ձիու տղան:

Եվ տղաները հարցական  
Լուս նայում են իրար երես:  
— Ո՞վ է, ահա՛, նայե՞ք, հրես,—  
Ցույց է տալիս նա Վաշեին:  
— Ի՞նչ, բատրակի, չքավարի,  
Հարազատի միակ սրցո՞ւն,—

Վաշեն գոռում մեծավարի,  
Թափ է տալիս փայտը օդում,  
Թայց նույն պահին, շնչակտուր,  
Տեղ է հասնում նաև Վանին  
Եվ Գալոյի խոսքն է պնդում:  
Ու Վաշեին այդ օրվանից  
Կաղից հանում են, վռնդում...

Հայրը ուներ կապույտ մի ձի  
Եվ այդ կապույտ ձիուց բացի  
Մի սկ արշառ՝ գնված հերու  
Եվ մի կապոց ջուլ ու փալաս:  
Եվ կոլխոզ էր այդ ձին տարել:  
Ի՞նչ էր եղել—ի՞նչ իմանաս —  
Մրսե՞լ էր ձին, զո՞ւր էր առել,—  
Վեր էր ընկել  
Դոմում սատկել:  
Եվ Միկիչն էլ իմանալով,  
Առաջին պահ խիստ վրդովված,  
Զիու համար սաստիկ ցաված,  
Գնացել էր, գոռգոռացել  
Եվ խոսքի մեջ սպառնացել,  
Թի կոլխոզից դուրս է գալու  
Եվ նրա պես մերկ ու զլուտ  
Բատրակները, որ միասին  
Հենց նրա հետ նոր կոլխոզի  
Հիմքերն էին երեկ դրել,—  
Կատակի են տալիս նրան,  
Հոհում են նրա վրա.  
— Հենց դո՞ւ էիր միայն պակաս...  
— Մի՛ ծիծաղեք, կյա՞նքս վկա,  
Էսպես եթե մենք աշխատենք,  
Մեր կոլխոզից բան դուրս չի՛ գա, —  
Դիրտը ցաված,  
Մկրտիչն է վրա բերել,—

Էղպես լինի՛ կյանքս վկա,  
Դուրս եմ գալիս ես կոլխոզից:  
— Այ մարդ, արի անկեղծ խոսիր, —  
Շարունակել են կատակել  
Ընկերները: — Ասա՛ անկեղծ,  
Չինի՞ թի երազիդ մեջ  
Կուկակներն են փսփսացել:  
Մկրտիչն է խիստ բարկացել:  
— Հիմար-հիմար դուրս մի՛ տվեք,  
Կյա՞նքս վկա, թի չէ, տղերք...  
— Թի չէ իսկույն դո՞ւրս եմ գալիս:  
— Դուրս եմ գալու, բա ի՞նչ, հիմա՞ր,  
Սաղըի բա՞ն եմ ես ձեզ համար:  
— Էլ ինչո՞ւ ես զուր սպասում, —  
Ընկերներն են ծաղրով ասում:

Հայտնի համառ, ինքնասածի՝  
Նա այլս ետ չի դառնում  
Վայրկենական իր ասածից,  
Եվ որպեսզի, բոլոր նրանց  
Սաղըում էին ովքեր նրան  
Բարկացընի, — ինքնասածին  
Բղավում է.  
— Տվե՞ք իմ ձին,  
Սատկել-մատկելն իմ գործը չի,  
Տվե՞ք իմ ձին, դո՞ւրս եմ գալիս:

Այդ թվում է ծիծաղելի,  
Եվ ծիծաղում են բոլորը՝  
— Որ ասում ես՝ կտանք էլի,  
Թայց լոկ կաշին ու ոսկորը...  
Բարկանում է նա ավելի,  
Շուր է գալիս ու տուն դառնում  
Եվ համաձայն իր ասածին  
Կոլխոզ էլ չի վերադառնում:

Այդ օրվանից հենց «Կապույտ ձին»  
Մականուն է նրան դառնում...

## II

Եվ հիշում է Վաշեն կրկին.  
Հայրը օրվա աշխատանքից  
Ետ էր դառնում իրիկվա դեմ՝  
Հին շապիկը խոնավացած տաք քրտինքից,  
Զարդված այնպես ու հոգնադեմ:  
Նստամ էր նա բակում դրված սալաքարին,  
Որ արձակի իր տրեխները կարկատած:  
Նստում էր հետ շնչին իր տան  
Իրրև մարմին առած կարիք,  
Իրրև բախտի դաժան կատակ:

Չուր էր ուզում, խմում տրբում բերանը թաց  
Իր քաթանե հին շապիկի կեղտոտ թնքով՝  
Եվ հանելով տրեխները մի խուզ հեքով,  
Վեր էր կենում ծույլ ու դանդաղ:  
Վեր էր կենում ու լվացվում  
Այնպես անփոյթ և ակամա,  
Կարծես զռով ինչ-որ ծանր պարտք հատուցում  
Եվ ոչ մի կերպ մի հասկանում՝ ինչի համար:  
Հետո նորից նստում էր նա սալաքարին  
Եվ քարի պես համրանում մոր, անշարժանում  
Մինչև կինը բացեր սեղան:  
Եվ այդ պահին  
Փոքրիկ Վաշեն՝ մի քեռևս անքետ մանուկ,  
Հոր մթագնած կերպարանքից խիստ արածելուծ,  
Հազիվհաղ էր քաջը զսպում և ցանկանում  
Ցնցել հորը, որ ապրնամա,  
Կամ բեղերից քաշել նորա,  
Որոնք իրրև փակագծեր

Պահում էին ինչ-որ խնդիր,  
Որ ոչ մի կերպ փաքրիկ որդինե  
Ճանում, բայց չէր կարողանում  
Ռշ բաց անել և ո՛չ լուծել...

Իսկ մինչեւ այդ՝ մայրը ներսում  
Կեղտակորուց սուփրան գցում,  
Դրսից նրանց ներս էր կանչում  
Թանապուրը սուփրի վրա  
Թվում էր մի տաքուկ երագ,  
Որ գողորշու հետ միասին  
Կարծես ինչ-որ հույս էր ցրած,  
Ինչ-որ պատրանք՝ երագավետ  
Եվ ապահով կյանքի մասին:  
Մինչետ կողքից եփած մսի  
Սուր բուրմունքն էր օդը բռնում:  
Դա կոլխոզնիկ հարեանն էր  
Աշխատանքից վերադառնում...

Օրըստօրե պարզ էր դառնում,  
Որ Միկիլը շատ է զղջում  
Համառովյան, իր արածի,  
Իր գործածի համար Սակայն  
Սնված համառ և անզիջում,  
Հայտնի իրրև ինքնասածի, —  
Խոսք չէր անում վերադարձի:  
Խույնիսկ թորգոմն անցյալ անգամ  
Խոսք էր զցել.

— Հը, Կապույտ ձի,  
Զանձրացա՞ր մենակ ման գալ:  
— Եատ և շատ եմ շնորհակալ, —  
Սկրտիչն էր ասել զռով  
Եվ շուր եկել դեպի իր տուն՝  
Երեխայի նման խոռով...

Վերհիշում է՝ Վաշեն կրկին,  
Բարձր ձայնով, եռանդագին

Դաս էր սերտում տաք քուրսու տակ:  
Հայրը՝ օրվա թերթը ձեռքին  
Շուռ էր տալիս աննպատակ:

Դաս էր սերտում.  
— Եվ կոմունան  
Չդիմացավ, ընկավ շուտով,  
Որովհետև...  
Հայրը փութով  
Ընդհատում է.

— Էղ թող մնա,  
Հալա դու մի առ է՞ս կարդա,  
Տեսնենք ի՞նչ կա լրագրում,—  
Եվ հայացքը սուր ու անթարթ  
Լրագրին է երկար հառում:

Եվ անսովոր այդ շրիֆտին՝  
Կակազում է փոքրիկ որդին  
Ու հեգում է՝ «Գըլ-խա-պը-տույտ  
Հա-զու-զու-թյուն-նե-րից»:  
Կարդում,  
Զի հասկանում որդին: Սակայն  
Հայրը աշքերն իսկ չի թարթում,  
Հասկանում է հայրն անկասկած:  
Ու ելնելով տեղից հանկարծ  
Մոտ է գալիս հայրը որդուն  
Ու քիչ հետո նրան դիմում.  
— Վերցրու մի թուզթ, գրիշտ առ  
Վերցրի՞ր արդեն: Գրի՛ր.  
«Դիմում.

Սույնով գալիս եմ հայտնելու,  
Որ ես հերու  
Դուրս եմ եկել կոլեկտիվից»:  
Գրիր պրծա՞ր: Հիմա գրի՛ր.  
«Սույնով գալիս եմ ես առ այն,  
Որ չեմ կարող ապրել առանց

Կոլեկտիվից...  
Պրծա՞ր: Գրի՛ր.  
«Նաև առ այն, որ հավատաք,  
Թե այլևս ոչ մի կատակ  
Անխելքության ինձ չի մղի,  
Չեմ համառի ես անտեղիու:  
Մեկ էլ վերից  
Կարդա նորից:  
Եա՛տ լավ, գրի՛ր.

«Նաև առ այն,  
Որ ես ունեմ մի մեծ խնդիր.  
Այն խոսքը, որ դարձավ առակ,  
Ինձ շինեց խաղք ու խայտառակ,  
Իբրև անուն կպավ անձիս,—  
Հակա խոսք՝ այն ռԿապույտ ձիեա  
Էլ շիշեն և մոռանան:  
Դիմում՝  
Միկիլ թորամանյան»:

### III

Եվ մոռացվեց այդ ռԿապույտ ձիեա  
Նորից կոլխոզ ընդունեցին  
Եվ թորգումի առաջարկով՝  
Թաստիարակման նպատակով,  
Մկրտիշին վստահեցին  
Ամբողջ ֆերման:

— Ուներ մի ձի,  
Հիմա ունի յոթանատուն:  
Տենց դրանով կհասկանա,  
Որ ինքն ունի ոչ թե մի ձի...  
— Միանգամայն ճիշտ ես ասում,  
Եվ, բացի այդ, — վլա բերեց  
Քարտուղարը պարտքիշի,

Այն մարդը, որ աղմուկի պրեց,  
Կովկասի ու Համառեց  
Մի նժուզի, միուս համարո—  
Պետք է կործակ, որ շտառ հարմար  
Վարիչ պիտի դառնա հիմա  
Մեր ֆեռմայի...  
Ու ֆերմայի

Վարիչն է նա մինչև պյուղը:

Եղ արդ Վաշեն ակամայից  
Վերհշում է Հորն այն պահեց  
Մինչև հիմա, երբ թիշ առաջ  
Ուրիշների և իր առաջ  
Նախագահը նրան կզէց  
Այն մոռացված մականունվ:

Եվ առաջին անգամ Վաշեն  
Հանգիստ ու լուրջ միտք անելով՝  
Ինքը իր մեջ խիստ ամաշեց:  
Ախր ինչպես նա շամաշի,  
Երբ որ նրա մեղն էլ քիշ շի:  
Երիտասարդ հոգին նրա,  
Երազներով այնքան լեցուն,  
Պորբորում էր, յուղ էր լցնում  
Այն կրակի, չըի վրա,  
Որ Թորգոնն. էր վառել այսունդ:  
Մինչդեռ պետք էր նրան ստունել,  
Ինքը Վաշեն ամեն անգամ  
Թև էր տալիս նախագահին,  
Նշում գալիքն այն մոտակա,  
Երբ որ կցանքը քաղաքային  
Պիտի իշխան պողոսովներում:  
— Կամունիքմին ենք մոտունամ:  
Պյուղի միջն և քաղաքուի  
Ամեն ահսակ, տարբերություն  
Պիտի շնչըի...  
Ու վերացնելու:

Նուրաքը գայիշ նրան առաջին,  
Որ ամել են գյուղի մարդիկի  
Ահա թեկուզ բրուա Ավոնտ.  
Որուեղ նստի ու վեր կենա,  
Մեռած բան է, բրուս Ավոն  
Աիշտ նույն բանից խոռք կրանա.  
— Գիտե՞ք, մեզ դժու ինչն է պակաս.  
Տներ շունենք կուտուրական,  
Ասենք՝ ունենք, թե ուրանամ  
Զուցք աշքերավ թող կուրանամ:  
Ունենք և լավ — տաշտծ քարով,  
Կահավորված և լուսավոր:  
Բայց կտուրդա.. էլի հղողից:  
Պատենական ծածկը նորից:  
Խսկ դու ապա գնա, որդի՛,  
Էլ շեմ ասում թե Ռուսաստան,  
Գնա լոռի կամ Շամշադին,  
Գնա նայիր ամեն մի տան,  
Հետո արի նստենք խոսենք:  
Էնտեղ, որդի՛, ամոթ ասել,  
Նույնիսկ ոտաց ճանապարհին.  
Դու կտեսնես կարգին «կորչ»,  
Հենց իսկական, քաղաքաձև  
Ք. կարծիքով նրանք տրիշ:  
Խսկ մենք ուրիշ՝ կաթենք ծծեկ:  
Ինչո՞վ ենք մենք ախր պակատ.  
Սովետական՝ սովետական,  
Կոլխո՞զ՝ մենք էլ ևս անհատ շենք:  
Բա էլ ինչո՞ւ մենք ամաշենք  
Ու ես մենակը մեր գրիշոցից,  
Ինքներդ առեր, աբով ինչի՞ն  
Եկ ի՞նչ է պետք, ուկի՞, թե՞ կրտէ  
Կա՞վ, որ տափակ բախի՞ շինես,  
Կրակի մեզ թրժնես մի լովկ:  
Եկ վերցացնելու:

Կովկաս պահանա,

Իսկ մեր սարում ինչքա՞ն կավ կա,  
 էղ հո զիտենք ե՞ս էլ, դո՞ւք էլ,  
 էլ ի՞նչ մնաց: Ախաբեր, եկեք  
 Հենց էս տարի, եկող գարնան  
 Եինենք համեստ մի գործարան  
 Համ մեզ համար, համ մեր խերին,  
 Կօգնենք նաև սրան-նրան՝  
 Մեր հարեան կոլխոզներին...

Եվ խորհում էր հաճախ Վաշեն,  
 Թե հայրը ետ է մնացել,  
 Որովհետև հաճախակի  
 Կշտամբում էր իր զավակին.  
 — Շատ ես; տղա՛ս, առաջ անցելու  
 Դա, սիրելիս, այո, գուցե  
 Նույնիսկ շատ ետ մնալուց էլ  
 Վնասակար է, վտանգավոր:  
 — Ճիշտ ես ասում, ախր, քավոր...  
 Դարբին Գեղամն էր ներս մտնում,  
 Հետո դիմում նախագահին:  
 Բայց Թորգոմը շուտ էր գտնում  
 Պատասխանը.

— Գեղա՛մ ուստա,  
 Գյուղիդ անունն ապա մի տա՞ս:  
 — Զեռ ես առել, ա՛յ հանարջի:  
 Առաջ կոչվում էր Զարոխչի,  
 Իսկ հիմա էլ՝ Սովետաշեն:  
 — Այ օրհնըվա՛ծ, այ տնաշե՞ն...  
 — Լավ, իսկ ի՞նչ է նշանակում,  
 Ուստա Գեղամ, Սովետաշեն,—  
 Մեջ էր մտնում նաև Վաշեն:  
 Սովետաշե՞ն՝ Սովետաշե՞ն,  
 Ուրեմն եկեք անենք այնպես,  
 Որ Զարոխչին հենց իսկապես  
 Աժմ դառնա Սովետաշեն:  
 — Է՛, սանիկիս խելքին աշե,—

Սոր էր տալիս Գեղամ ուստան, —  
 Եթե միայն տաշած քարով,  
 Ասֆալտապատ ճանապարհով  
 Պիտի դառնանք Սովետաշեն,  
 Այն ժամանակ, ա՛յ տնաշեն,  
 Դու իզուր ես քո գրպանում  
 Էղ «Դիպլոմատը» պինդ պահում  
 «Դիպլոմատը» վնաս չունի,  
 Դւու թող մնաւ: Մյուս կողմից՝  
 Բա քո տո՞մսը պարտիական:  
 Թե էդպես ես դատում, սանի՞կ,  
 Այն ժամանակ, աստված շանի,  
 «Դիպլոմատը» ու տոմսը քո  
 Պիտի քաշեն հակառակ կողմ...

Եվ առաջին անգամ Վաշեն  
 Միայն այժմ անդրադարձավ  
 Մերուկ դարբնի ասած ոսկի  
 Կենսափորձից եկած խոսքին:  
 Նրա մտքով այժմ անցավ,  
 Որ իսկապես տվյալ դեպքում  
 Իր պարտումսը, ո՛չ, չի՛ ների  
 Խանդավառված ինժեներին,  
 Որ սանձազերծ ու խենթ վազքում  
 Շեղվել է ճիշտ ճանապարհից:  
 Ճիշտ էր հայրը, ուստան էր ճիշտ,  
 Ճիշտ էր նաև բրուտ Ավոն:  
 Ակղմինդը էր մեզ հարկավոր,  
 Զմեռանոց էր անհրաժեշտ:  
 Կարելի էր անել դա հեշտ:  
 Շենքի վրա մսխած փողով  
 Կարելի էր գյուղում շինել  
 Կղմինդրի շորս գործարան,  
 Մի յոթ-ութ գոմ պլյուս դրան,  
 Պլյուս դրան և մի ակումբ,  
 Սակայն ոչ թե այն «օպերան»՝  
 Վեր բարձրացած բլրի վրա...

# ԳՐԱԴԱՐԱՆ

## ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎՐԱՏ

I

Իշխում է մութիր մեղմուրնեն,  
Լեռան քամին է արթնանում  
Եվ սկսում մեղմ օրորել  
Դեռ նոր բացված այն ժամանեն,  
Որ աճում է այս կողմերում  
Ոչ թե փափուկ լավ հողերում,  
Այլ ժայռեղեն քարափների  
Ու ծերպերի ճշաքներում,  
Կարծեն առանց արժատների,  
Կարծես միայն պինդ սոսնձով  
Ժայռի կողքին կպած մի կերպ:

Մագլցում է նորի միջով  
Մառախուղը շղարշակերդ:  
Մտվերներն են իշնում ծալ-ծալ  
Աւ ինձիներ տալիս առին,  
Եվ պունդից Գնդասարի  
Ռարձրանում է լուսինն արծաթ  
Մառախուղի քողի ներքու

Այդ պահին է, որ սրնզի  
Ռլորուն ու անբառ երգով  
Ետ են գտնին արտաներից  
Գառ ու նժուղից, կոզ ու երինց,  
Ցուլի մզզուն, ձիու խրխինց,  
Ուկի մկնոց, գառան մայուն:

Հորթին կանչող կովի բառաւչ,  
Ծղճղոցը կթվոր կանանց  
Տարածվում է ողջ ֆերմայում  
Եվ բազմաձայն այդ համերգում  
Կաթնազիշ զույգ մեքենան  
Նսկն նզանակն են միշտ երգում  
Նույն երգը խուզ և միայնար,  
Որ ընդհատվում է մերթ ընդ մերթ  
Դույլի, թամի զրնգոցից:

Թողած իրենց պահմառցին՝  
Սրեխաներն արխացի մեջ  
Զրույցի են նստում սիրով:  
Մեկն ուզում է դառնալ հերոս՝  
Մտեփանյան նելսոնի պես.  
Մեկն ուզում է դառնալ վարպետ՝  
Բնշպես քեռին, որ քաղաքում  
Գործարան է մենակ սարքում:  
Մեկը՝ արցեն մի երկրաբան,  
Գնդասարն է ուզում քանդել,  
Որ իմանա ինչ կա այնտեղ.  
Չորրորդը, մի շարաճճի,  
Որ չի ուզում նրանց զիշի,  
Ետ մենա իր ընկերներից, —  
Խոսք է զցում ավտոներից:  
Դեռ մեգանից ո՞ւմ հայտնի չկ  
Պարզությունը նրանց մտքի,  
Երբ էլ չինի՝ մեկի խելքին  
Հանգարծակի եթե փշի  
Ավտոների մասին հիշել, —  
Այստեղ արգեն բոլոր նրանք  
Մոռանալով, որ մի վայրկյան,  
Մի պահ առաջ իրենց վարպետ,  
Ճերտու էին ու երկրաբան, —  
Շոփեր գառնում անմիշապես  
Ու խոսում են, այն էլ ինչպե՞ս:

Ալստեղ արդեն ամեն տղա  
Գիտակ է և լավատեղյակ  
Եվ կարող է խիստ լրջորեն  
Ճույց տալ բացերը «Մոսկվիչի»,  
«Պորեղայիշ» կողմերը լավ,  
Եվ ինչն է նոր «ԶիՍ»-երի մոտ...

Եվ աղմուկը նրանց վեճի  
Հնչեր գուցե մինչ առավոտ,  
Բայց... պահեստի փոքրիկ բակում  
Արան սրինգ է նվագում:  
Կանգ են առողում ղեկ ու մոտոր  
Եվ իշնելով «ավտոներից»  
Երեխաններն արդեն ոտով  
Ինքնամոռաց՝ վազ են տալիս  
Ու նստոտում գետնին, քարին,  
Որտեղ արդեն քույր, մայր ու տատ՝  
Մեկի ձեռքին գովազան կիսատ,  
Մյուսներին՝ գիրք, լրագիր,  
Ունկնդրում են նվագին:  
Գեղգեղում է սրինգն անուշ,  
Մեկ դառնում է թույլ ու անուժ,  
Մեկ հնչում է ուժգնությամբ  
(«Արակ ձայնը դառնում է թավ»).  
Մերթ ճշում է զվարթորեն  
(Պատահել է ասես լավ բան).  
Մերթ ընկնում է սարեր-ձորեր  
(Կորցըրել է ասես ճամփան).  
Մերթ լալիս է, մերթ՝ ծիծաղում,  
Մերթ՝ աղաշում ու մերթ՝ ծաղրում,  
Մերթ գնում է հեռու-հեռու,  
Մերթ էլ հանկարծ գալիս է մոտ...  
Որքա՞ն ցավ կա այս երգերում  
Եվ որքան սե՞ր, որքան կարո՞ւտ...

## II

Դեռ նվագում է սրինգը Արան։  
Ու սարվորները լուս են նրան։  
Հանկարծ հովվական շներն են հաշում  
Եվ միանգամից պոկվելով տեղից՝  
Սուրում են ձորը։ Սրինգն է լուս,  
Հավաքածները ականջը սրում,  
Լսում են։

— Մարդ է, գալիս է գյուղից, —  
Ասում է Արան ու ելնում տեղից։  
Որ գնա զսպի իր գամփոներին։  
Մինչ այդ շները իրենք են լուս,  
Կլանչ են տալիս ու ետ են դառնում։  
Պարզ է՝ ծանոթ է եկվորը նրանց։  
Եվ սպասում են։ Գալիս է քիչ անց  
Երազը՝ ձիով։ Շիկնում է Արան,  
Բայց մթության մեջ չեն տեսնում մարդկան։  
Միրս շիկնանքը երիտասարդի։

... Դասընկերներ էին նրանք  
Եվ միասին էին անցել։  
Թպրոցական տասը տարին։  
Երր գեռ փոքր էր՝ Արան այնպես  
Ամաշկոտ էր։ Առանձնապես  
Քաշվում էր նա աղջիկներից։  
Լուս, ինքնամփուի՝  
Փամեր ամբողջ  
Նա կերագեր ու կխաղար,  
Խսկ երը մեկը աղմբկարար  
Աղջիկներից նրան կպչեր,  
Նա կշիկներ, կկակագեր՝  
Ստիպելով իրեն հազիվ,  
Որ շթողնի ու տուն վազի։

Իսկ տղե՞րքը կատակասեր,  
Իսկ ազդիկնե՞րն աղմկարար...  
Ինչե՞ր ասես որ չի քաշել  
Նրանք ձեռքից մեր խեղճ Արան  
«Սուսափիւթուսիկ» էին կոչում:  
Ընկերները այնժամ նրան,  
Մեկ՝ ձեռք առնում, գալիս կպչում,  
Մեկ՝ ծիծառում նրան վրա,  
Մեկ՝ էլ՝ գիմում սրան-նրան:  
— Տղե՞րք, ապա նայեք սրան...  
— Ոնց որ հիվանդ լինի Արան.  
— Թեզ, ա՞յտղա, ի՞նչ է եղել,—  
Եվ հարցերի մի ողջ հեղեղ  
Ողորդում է նորից նրան:  
— Նա գումառ է:

— Ընկճածէ:

— Գիտե՞ք, ինքըս համոզված եմ:  
Սիրահարված է մեր տղան:  
— Իսկ ո՞ւմ վրա:

— Իսկ ում վրա՞ւ:

Ի՞նչ իմանամ, թող ինքն ասիր  
— Ասա՛, Արա:

— Տո՛, ձե՛ռք քաշի, —

Եփոթվում է, քրտնում Արան,  
Սաղրողներին քաշմշելով  
— Ազադիկն է, ուրիշ էւ ա՞վէ  
— Տեսա՞ք սրան  
— Կեցցի. Արան...

Եվ հրճվելով իրենց գյուտից,  
Իրար բոթում ու կըսմթում,  
Գետնից կարում, օդին են նետում  
Կարմրատակած խեղճ Արային,  
Որ ամոթից,  
Ու զայրույթից,  
Քիչ է մնում իրեն ուսիր:

Բանը գուցի վառ զնորդանուր,  
Բե երազը Ալլորչանար.  
— Դե, ուսք համդոշատ մինչ հանի.  
Զեք թըոցրել ու ձեր խելքը...

Բայց ո՞ն ուշ՝ էր այդ օրվանից  
Չարաձնի այդ խելքները  
Բաց չթողին ու մի առիթ,  
Որ յինդան, չուրախանան:  
Դե ո՞նց երանեք չուրախանան:  
Ամաշկոտ էր որքան Արան,  
Ինքնամֆուի ու սուսիկ-փուսիկ,  
Երազիկը ընդհանիրառում՝  
Նախազահի երես առած  
Մինուճարն էր շարամնի՝  
Գեղեցկուհին ողջ դպրոցին  
Տղաները դասարանի  
(Ամեն մեկը իրեն մտքում,  
Ամեն մեկը մյուսից թաքուն)  
Սիրահարված էին նրան:  
Բացառություն էր լոկ Արան,  
Որին նույնպես այդ օրվանից  
Մեջտեղ բերին:  
Անցավ տարին,  
Իսկ պատանու համար տարին  
Հո տասներկու ամիս չէ լոկ:  
Երեկ՝ մանուկ, արդ՝ պատանի,  
Երեկ՝ անգետ, այսօր՝ խելոք.  
Անցյալ օրվա զնգոցի տեղ  
Մեկ էլ տեսար բասն է թնդում,  
Աղվամազե բարակ մի բեղ  
Վերին շուրթն է շրջապատում.  
Մեկ էլ տեսար արդեն բերնից  
Սիի հու է մայրը առնում.  
Տեսար՝ հանկարծ պիոներից  
Կոմտուու է արդեն դառնում,—

Ու երեկվա սուսիկ-փուսիկ  
Եվ ամազկոտ տղան հաճախ  
Դես ու դեն է գցում աշքը...

Թեպետ և մեր խառնվածքը  
Անհաստատ չէ այդ աստիճան  
Ու դժվար է ելնում հունից,  
Թայց ամեն ինչ իր պահն ունի:  
Անցավ երկու-երեք տարի,  
Եկող տարին իր հետ բերեց  
Փոփոխություն զարմանալի:  
Հանկարծ մեկից փոխվեց տղան.  
Հըրմշտողին ինքն էլ հրեց,  
Կատակներից չկարմրեց,  
Պատասխանեց հանգի՛ստ, խաղա՛դ:  
Արբունքի էր հասել տղան:

Ի՞նչ կարող էր, թվում է թե  
Անմիտ լինել ավելի, քան  
Այն կատակը, որ մի անգամ  
Սորիպել էր նրան քրտնել:  
Ինչպե՞ս եղավ. ի՞նչ պատահեց:  
Իսկ ինչպե՞ս է արմատ գցում  
Մասրի թուփը մեռ քարի մեջ:

Հենց այդպես էլ, հավանաբար,  
Իրեն համար բացեց ճամփա  
Վիրավորանքն այն օրերի:  
Եվ ծաղրանքի պաղ քարերի  
Ինչ-որ ճեղքում աճեց մի ճյուղ  
Եվ աննկատ տվեց ընձյուղ:  
Այդ կատակը իզուր չանցավ:  
Ինչպե՞ս, ինքն էլ չհասկացավ,  
Հետզհետե ահագնացավ  
Ու մի օր էլ միանգամից  
Նրա համար հստակ դարձավ  
Մինչ այդ անհայտ մի գգացում:

Դրսից ոչինչ չէր զգացվում—  
Ողջը հին էր, ինչպես որ կար:  
Դա չէր կարող տեսլ երկար,  
Եվ շատ շատով դասարանցիք  
Զարմանալով նկատեցին,  
Թե ինչպես է Արան՝ Արա՞ն—  
«Սուսիկ-փուսիկը» դպրոցի,  
Երազիկի կողքին բուսնում,  
Ուր նա՞ ինքն էլ այնտեղ հասնում.  
Թե ինչպես է հաճախակի  
Թաքուն նայում Երազիկին,  
Նայում ինչ-որ ուրիշ տեսակ:  
— Այ քեզ հրա՞շք, տղե՞րք, տեսա՞ք:  
Զվարճալի բան է դառնում:  
— Հոնքին էինք նշան բռնում,  
Բանից պարզվեց աշքին կպանք...

Եվ մի քաղցր ու ծանր կապանք  
Մեր Արայի սիրտն է տանջում:  
Երբ որ զանգը վերջին ժամի  
Ղողանջում էր ուրախ, հնչում,  
Այլայլվում էր, տիսրում Արան:  
Մանր էր գառնում նրա համար  
Թպրոցից տուն վերադառնալ:  
Անբնական անհայտ մեկից,  
Անհայտ բանից ինչ-որ դժգոհ՝  
Նա խնդրում էր Երազիկից  
Մերթ տեսրակը ու գիրքը մերթ,  
Մեկ՝ այս, մեկ՝ այն պատրվակով:

Քաղցր էր այնպես, Երազիկից հեռու պահին  
Լինել նրա իրերի հետ, զեթ բաց անել,  
Թերթել նրա գիրքը, տեսրը, սիրով նայել  
Այնտեղ եղած նշումներին:  
Եվ Արային այդ պահերին  
Միշտ թվում էր, թե ուր որ է

Դասագրում կամ տեսրի մեջ պետք է հիմա  
 Գտնի նա մի... սիրո նամակի:  
 Եվ իսկապես նա մի օք էլ,  
 Իր ուզածը գտավ կարծես.  
 Տեսրի վերջին էջի վրա.  
 Արան կարդաց իր աշքերով.  
 Երազիկի աղջրկային ձեռագրով  
 Չորս-հինգ անգամ զգված «Արա»  
 (Վարժություն էր արևէ կարծես  
 Նա և՛ս տառի  
 Մեծատառի)...

Սիրո նամակ չէր այդ, անշուշտ,  
 Թայց պարզ, այդ պարզ զբության մեջ.  
 Արան կարծես լսեց ինչ-որ քաղցր շնուկ.  
 Խայտաց արյունը սրտի մեջ,  
 Եվ որոշեց իր երազին  
 Վազր և եթ խոստովանել  
 Իր տանջանքի, սիրո մասին

### Մյուս օրը...

Ոչ թե սիրո  
 Հրաժեշտի պարզ խոսքերով  
 Նա հանդիպեց երազիկին:  
 Մի գիշերում հանկարծակի.  
 Պատերազմը իրար խառնեց.  
 Ինչ որ բարձր էր ու թանկապին:  
 Ինչպես բախտը հայրենիքի.  
 Այնպիս էլ սեր ու երազանք,  
 Մտադրյալ խոստովանանք  
 Ենթարկվեցին խուզ վտանգի:  
 Արան նույն օր մեկնեց քանակ...

... Յա դառնալով պատերազմից՝  
 Նա չգտավ հին երազին:  
 Աղջիկն արդեն հասունացել,

Էլ ավելի գեղեցկացել,  
 Բայց մի տեսակ այլ հրապարձեց:  
 Զգար էլ հին զարամճին  
 Իր ծիծաղով, կատակներով:  
 Ավելի եր ուսցեց գերոզ,  
 Եվ կախաղողից, և՛ կանացի,  
 Բայց նման չեղ իր պիրածին:  
 Երազիկը մինչ այդ արգեն  
 Աշխատում էր իրու կիմուրու  
 Արան հովիվ դարձավ հնաց ուր  
 Կամաց-կամաց, ճետգհետե  
 Կարծես նորից պերապարձով  
 Հին օրերի իր անուրցին:  
 Երազիկը կրկին դարձավ  
 Հին աղջիկը շարանճի—  
 Նույն աղջերով ջինչ ու վճիռ,  
 Նույն ժիժաղով իր արծաթի:  
 Հին կասկածը նորից պատեց  
 Սիրոն Արայի.— Եթե, եթե...

Եվ նա կես լուրջ ու կես կատակ  
 Խոստովանքի խոսքեր նետեց:  
 Երազիկը հարմար գտավ  
 Միշտ ծիծաղել, պատակներով  
 Խուսափելու միջոց նարել.  
 — Օհո՞, ումի՞ց ես այդ, հերո՞ս,  
 Դու սովորել սիրո ճառեր,—  
 Սիծաղում էր շարանճին  
 Ու թողնում էր մենակ նորան:  
 Զույգ ծամերը խաղացնելով  
 Իր գարարվող մեջքի պրա:

Մտածում էր ողջ օրն Արան,  
 Ու երբ գալիս էր կեսօրին,  
 Հանդիպում էր նորից նորան,  
 Խոսք էր պցում միտուանարար:

— Նո՞ր հասկացաւ ես՝ մի չոքան,  
Դու՝ աղջիկը նախագահի:  
Ո՞չ հայրդ է զիժ, որ քող տա ինձ,  
Եվ ո՞չ էլ դու...

— Ա՞յ քեզ կրակ,—  
Երազիկն էր վրա բերում,—  
Հնդամենը երկու տարի  
Մնացել ես հողում օտար  
Եվ մոռացել մեր աշխարհի  
Օրենքները...

Եվ մինչ կտար  
Արան հարմար մի պատասխան,  
Աղջիկն էլի ծիծաղելով  
Հեռանում էր:

Ու մեր տղան՝  
Անցյալ օրվա զինվորը քաշ,  
Որ թշնամու, մահվան առաջ  
Այնպես սառն էր ու անշրջիոթ,  
Եվարել էր բոլորովին՝  
Չիմանալով, թե ի՞նչ անի...

Այդպես եկավ անցավ տարին,  
Իսկ ձմռանը, թարսի նման  
Ուղարկեցին Երազին կուրսւ  
Եվ դառնալով զոռտեխնիկ՝  
Գարնանը նա վերադարձավ  
Էլ ավելի գեղեցկացած,  
Էլ ավելի թովիլ դարձած:  
Դեռ հոտերը գյուղումն էին,  
Ճայլաղ չէին դեռ բարձրացել  
Գոմի համար այդ օրերին  
Թորգումն էիր աղմուկ գցել,  
Վիրավորել էր բոլորին:

Ոչ էլ Արան անմաս մնաց:  
Ծակատ-ճակատ նա դեմ գնաց

Նախագահին...

(Դե այս արդեն  
Աղջիկը չէր, որ նրա դեմ  
Շփոթվի և իրեն խղճաւ:  
Սա հայրն է հո):

— Զէ՛, ախազեր զա՛ն,  
Նախագահ ես, սակայն նայիր,  
Ես պատրաստ եմ հետդ խոսել  
Իրեն նախկին ճակատային,—  
Մեր տղան է վրա բերում:—  
Այստեղ հարցը ողջ կոլխոզի  
Բարիքին է վերաբերում...

...Արան հոր հետ լավ կովելով՝  
Երեկոյան հանդիպելով  
Հոր աղջկան՝  
Չհամբերեց,  
Բոնեց նրան ու համբուրեց:  
— Տո զի՞ժ, տո խե՞նթ, ի՞նչ ես անում:  
— Հորդ մուռն եմ քեզնից հանում:  
— Ո՞նց թե, ա՞յ զիժ, — աղջիկն ասում,  
Ասում է և հրում թեթև:  
— Ո՞նց թե, այսպե՞ս, — Արան ասում  
Ասում, նրան մոտ է քաշում  
(Չի նկատում նա իրը թե),—  
Ես քեզ համար գնամ կոիվ,  
Կյանքս մատնեմ զրին, հրին,  
Մահվան առաջ կյանքս նետեմ,  
Ցոթը սարի—ձորի հետև  
Քե՞զ երազեմ, քե՞զ կարոտեմ;  
Մի կերպ պրծնեմ մահվան ձեռքից,  
Գամ, որ քեզնից կարոտ առնեմ,  
Իսկ դու ելնես ու ձեռք առնե՞ս...  
Ո՞ւր է գրված, ո՞ր օրենքի,  
Ո՞ր զլինի կամ ո՞ր կետի մեջ:  
— Դու, — շշուկը Երազիկի

Կալանում է այն գետի մեջ;  
Որ խշում է նրանց կողքին,—  
Դու ինքդ էքր ինձ ձեզ առնամ,  
Կատակներով նոցի հանում:  
Կարծես զինվոր Ալենիդը,  
Այլ մի... այլ մի...

...Եշուկ միտապը  
Գարնամապին կրինցի տակ  
Երկարում է, անվեց թվում,  
Զեր փոխում, բայց միշտ առամ՝  
Ինչպես կրագ...  
— Դո՞ւ ես, Արա:  
— Դո՞ւ ես, Երազ...

Առապու մի հազ,  
Ակնհայտնի միտումնավոր,  
Ուշքի բերեց նրանց հազիվ:  
— Դո՞ւք եք, Արա:  
— Մենք ենք, բավոր,—  
Մկրտիչի ծանոթ հազին  
Պատասխանեց Արան հազով  
Խիստ անտեղի և շապաղ,  
Ու մթան մեջ շառագունեց այն մանկան պես,  
Որին հայրն է բռնում շաքար գոզանալիս:  
Եփոթիվել էր Մկրտիչն էլ նույնքան կարծես.  
— Հիվանդացած օքիստիներին տեղ եք տալի՞ս,  
Լավ եք առում,— այլ հարմաք քան չգտնելով՝  
Միկրչն ասաց ու հեռացավ՝ արտագ-արագ՝  
Փոքրինչ հեռու ճանապարհին ձիժաղելով՝  
Իր անհաջող, խիստ անհաջող խոռքի վրա...

### III

Երազիկը ահա եկավ,  
Մի շաքաթ էր, ինչ նա չկար,  
Դնացել էր նա Երևան:

Կարոտել էր Արան առաստիկ և  
Երազում էր, որ շուտ մարդիկ  
Խոսեն, զնան իրենց բանին.  
Որ սիրածից կարոտն առնիւ:  
Երազն հանկարծ գարծավ նրան.  
— Դու այստեղ եւս ո՞նց թե, Արա:  
Դիշերն ազատեց, ի՞նչ գործ ունեան  
Զայն շնանեց Արան մի պահ.  
— Դու փոխանակ դաշտում քննս,  
Հոտն ես թշել սաք ու ձերով,  
Բերել լցրել արթազի մեց.  
Ո՞վ է ասել, թույլ տվել, ո՞վ  
Ի՞նչ ես լրել, խստիր, ինչ՝  
Եվ հայտնի է դա Մկրտչին...  
Պատասխանը Արան կտար,  
Բայց ոչ այստեղ, այս մարդկանց մեջ:  
Ինչո՞ւ Երազն իրեն դիմեց.  
Նրանց առաջ այդպես օտար,  
Թշնամական եղանակով,  
Ինչո՞ւ այդպես անսիրտ վարվեց.  
Եվ զահելը վիրավորվեց,  
Կարծես գարկվեց սուր դանակով...

Երրորդ օրն էր, ինչ նա քաքի,  
Չոր ու սարի, ցրտի միջավ  
Իր հոտի հետ յուրդ էր զաղիս՝  
Հոգում հուսի, կարոտի ծով,  
Թե միզուցե իր սիրելին.  
Դարձել է հետ Դեռ ավելին՝  
Երազում էց, որ նա երդ դառ,  
Երենց ցոյքած ու զավ կզգար,  
Որ իր Արան չի զիմանում.  
Ցուրդ է զալիս, սար չի մնում,  
Որ շուտ տեսնի իր Երազին:  
Մինչոք խնօքիմ աճապատիկա...  
Էլ ի՞նչ ասի, կը ի՞նց խոսիր.

— Իսկ դու, Հեղուշ, իբր վարիչ  
 Խնչ ես արել, — խոսեց նորից  
 Երազիկը, — Աինի՞ թե  
 Դու էլ բացի քո կովերից  
 Ուրիշ բանի չես խառնվում, —  
 Եվ Երազը նրան վերից  
 Մինչև ներքեւ այնպես շափեց,  
 Կարծես նրան փոխված գտավ:  
 — Զէ՛, շա՞նս, չէ՛, — և Հեղիննեն  
 Խմաստալից՝ աշքը ճպեց, —  
 Դե ես՝ ոնց որ անպոչ գդալ,  
 Այս անգամ էլ մեջտեղ մտա,  
 Խառնվեցի այս անգամ էլ...  
 Եվ նա լոեց խորհրդավոր:  
 Դե Հեղուշը ախր չէ՛ որ  
 Արային էր պատին գամել,  
 Բարկացել էր. — Տո՛, անգդա՞կ,  
 Ի՞նչ է, ուրիշ տեղ չգտա՞ր,  
 Որ հոտը միշտ յուրդ ես բերում,  
 Տղամա՞րդ ես, թե չէ տղա...  
 Սակայն հիմա, երբ որ տղան  
 Վատ դրության մեջ էր դրվել,  
 Հեղուշն ուզեց այլ կերպ վարվել:  
 Եվ որպեսզի կանանց առաջ  
 Տղան շատ շըկարմրատակի,  
 Տվեց Հեղուշը կատակի.  
 — Մեղավոր է այստեղ Արտոն,  
 Որ ամեն օր գառան հոտով  
 Մթնեց թե չէ՝ տուն է գալիս  
 Եվ դրանով օրինակ տալիս  
 Մեր շահել ու անփորձ հովվին,  
 Բայց դե ոչինչ. այսուհետեւ  
 Նա կհիշի, որ փուլ Արտոն  
 Գառնարած է, ինքը՝ հովիվ,  
 Եվ որ իրեն չի կարելի  
 Հոտը քշել ու սարերից

Ֆերմա քերել: — Գլխիդ արև, —  
 Խսկույն Արտոն է մեջ մտնում, —  
 Դու մեզ ո՞նց ես համեմատում:  
 Որտե՛ղ Արտոն, որտե՛ղ Արան:  
 Նա հովիվ է, ես՝ գառնարած:  
 Այս՝ մեկ, Հետո՝ կա և սերկուս,  
 Շատ կարենոր ու մեծ սերկուս:  
 Նա՝ ամուրի շահել տղա,  
 Խսկ ես՝ Արտոս, կնիկ ունեմ:  
 Ես բացի այդ՝ ինչքան սիրեմ,  
 Նույնքան պիտի կեղծավորեմ:  
 Լավ մտածեք, կատակ հո չի.  
 Ես՝ գառնարած, վարիչ է նա,  
 Ես՝ շարքալին, հերոս է նա,  
 Խսկ թե հանկարծ թողնի փախշի,  
 Գառնարածին թողնի մենա՞կ...  
 Դրա համար ամեն գիշեր  
 Ստիպված եմ հոտս քշել  
 Թերել ֆերմա և ողջ գիշեր  
 Սիրո քնքուշ խոսքեր ասել  
 Իմ Հեղուշին,  
 Իմ Անուշին:  
 Խսկ դու, Արա,  
 Այ ավարա,  
 Դու ի՞նչ ունես: Չլինի՞ թե  
 Դու էլ ինչ-որ «Հեղուշ» գտել,  
 Նրա համար քո ոշխարի  
 Հոտն ես քշում փափուկ սարից,  
 Բերում հանձնում խիճ ու քարին  
 Թե էղպես է, ասա նրա՝  
 Այդ «Հեղուշ»-ի անունը մեզ,  
 Որ գործը տանք ժողդատարան:  
 Եվ թափանցիկ այդ ակնարկից  
 Այրվեց դեմքը Երազիկի:

Սիծաղեցին տարեց կանայք,  
Հետո՝ նոր խռով ու նոր հանոր.—  
Մինչև Արտոն դաներ էլք  
Ինչ-ոք խռովեց ձիթաղեցի...

IV

Երբ ցնդեցին մշուշ ու մեց,  
Արոտ ելան հոտ ու նպագիր,  
Եվ արևի կիզող վախից  
Ծերպերի մեջ մտավ քամին,  
Նախաճաշի տաքուկ ժամին  
Մկրտիչն ու Կարոն գյուղից  
Զիեր նստած բարձրացան վեր՝  
Եկան ֆերմա:

— Տիրուհինե՛ր,  
Բարով աեսանց, ի՞նչ էք անում,  
Ի՞նչ քեֆի եք,— Ժպտաց Կարոն:  
— Բարօվ եկաք, հազա՞ր բարով,  
Դե ապրում ենք, գործ ենք անում,  
Ամեն մեկըս իրեն բանին,  
— Կաթ ենք խմում, ուսում պանիր:  
— Իսկ ի՞նչ կասեք, թե այսօր մենք  
Փոքրիկ ժողով հրավիրենք  
Կանաչի մեջ ու ծագիռնքիւ  
— Որ եկել եք, գե համեցեք  
— Միայն՝ մի քիչ հանգստացեք,  
Մինչև ցած դան իրենց հստով  
Հովհաններ:

Մի ժամ հետո  
Եկան նաև Արտոն, Արտոն—  
Գտանաբաժներ, նախօրարդ, հավիք,  
Եվ լեռնային մարմանդ հովիք,  
Մաղկունքի և կանաչի մեջ  
Նիստը բացված հայտարարեց:

Եղյան Կարոն՝ բրիգադիր  
Եվ քարտուղարը պարտկոմի:  
— Այսօր ունենք մի լուրջ խնդիր,  
Եվ սպասում եմ ձեր կողմից  
Նույնքան էլ լուրջ վերաբերմունք:  
Հարցը այսօր մեր հստերի  
Այսպես ասած՝ գիշերացին  
Արոտին է վերաբերում:  
Թե շենք ուզում խայտառակվել  
Պարտիայի և երկրի առաջ,  
Թե ուզում ենք բազմապատկեր  
Նվաճումները ձեռք բերած,  
Անհրաժեշտ է կազմակերպել  
Գիշերային կարգին արոտ:  
Լոկ այսպիսով մենք բարձր բնրք  
Երկրին կտանք:

Նստեց Կարոն,  
Ու պարակոմի քարտուղարին  
Մկրտիշը փոխարինեց  
Եվ իր կողմից էլ ավելի  
Մանրամասն բացատրեց:  
Հետո Հեղուշը ձայն խնդրեց,  
Եվ երազը, Արտոն, Արան.  
Ամեն մեկը խոսովներից  
Խնչպես հարկն է հարցը սրեց:  
Միայն տարեց շորան Սողան  
Թերահավատ վիզը ծռեց...  
Գիշերային միշտակպից  
Վիրավորված ու խռովկան՝  
Արան սիրած իր աղջրկան  
Մտքում ներեց՝ հասկանալով  
Իր սխալը, Պետք էր եղել  
Կազմակերպել մթնով արօտ,  
Այնինչ ինքը շոր, բարգարօտ  
Եվ հոգեհան ճանապարհով  
Հոտն է քշել, բերել օրա:

— Այ քեզ շահել, գիտուն չորան,  
իսկ ես քեզ հետ հույս եմ կապել,—  
Մկրտիչն էր նրան կպել  
Ոչ թե գոռալ, բարկանալով,  
Այլ մեղմորեն ու հաշտարար:  
— Պետք է գործել հասկանալով,  
և ավ մտածել է հարկավոր,  
իսկ դու, Արա...  
— Դե լա՞վ, բավոր:

Ներողություն խնդրեց Արան,  
Չորացնելով քրտինքը տաք:  
— Ահա քեզ ինչ խորհուրդ կտամ,—  
Մկրտիչը ասաց նրան,  
Զեռքը դրած նրա ուսին:  
— Լա՞վ մտածիր դու այս մասին,  
ինչ որ պիտի ասեմ ես քեզ,  
Կատարում եմ կյանքում և ես,  
Այդ մտքով եմ առաջնորդվում  
Յուրաքանչյուր քայլափոխիս:  
Եվ հասարակ, պարզ է նա խիստ:  
Հարցը այս է: Ասենք թե դու  
Ոչ թե այստեղ ես աշխատում՝  
Այս հեռավոր խոլ սարերում,  
Այլ Մոսկվայում՝ հենց կրեմլում:  
Աշխատում ես ու դու գիտես,  
Որ քո ամեն, ամեն քայլին  
Աշխատանքիդ, մտքիդ անգամ  
Հետեւում են, դիտում նրանք՝  
Մեր պետության, մեր պարտիայի  
Գործիչները:

Դու ո՞նց կզաս,  
Ինքըդ դատիր, երբ իմանաս,  
Որ ժպտում են քեզ նայելիս,  
Երբ որ քո լավ գործն են տեսնում  
Եվ նայում են դժգոհությամբ,

Երբ արածդ դուր չի գալիս...  
Այ, այս միտքը քանի տարի  
Հետևել է ինձ անդադար:

## V

Մայրամուտի մի ճոխ արև  
Մաղկածիծաղ լեռ ու հանդին  
Փայլ է տվել ու զարդարել:  
Այնպես լուս է լեռնաշխարհում,  
Այնպես խաղաղ, այնպես հանգիստ:  
Աղմկում է միայն առուն,  
Որ բխելով ցուրտ ծմակից  
Թավալվում է դեպի ներքեւ,  
Դեպի ձորը:

Ջրվեժի տակ,  
Հեղինեն է լվացք անում:  
Առավոտյան, իր ցանկությամբ,  
Չորս տղային գյուղ է տանում,  
Որ արտերում հասկ հավաքեն,  
Տղանեղը խաղ են անում,  
Վագվզում են վերե-ներքեւ:  
Մայրն ուզում է ուրախ երգել,  
Բայց հիշում է Մկրտիչին,  
Ու փոխվում է երդը ճիշի:  
Մկրտիչը հիշել տվեց,  
Որ Հեղուշը լուրջ երդըվեց  
Կոլվարչության անցյալ նիստում,  
Թե բերվելիք այն բրդատու  
Ոչխարների յուղ ու կաթի  
Ողջ պակասը ինքն է տալու  
Եր կովերի բրիգադից:

Այն օրվանից, երբ որ սարում  
Գիշերային արոտը նոր

Սովորաթյուն դարձավ բոլոր  
Հովհանների հուարի համար,  
Խոտը կարծես դարձավ կաթու,  
Եվ ոչխարները քրդատու  
(Կոչում էին որոնց «բրդու»).  
Կաթ տվեցին այնքան, որքան  
Մաքիները սովորական։  
Բայց դա հա չի նշանակում,  
Թե հաշիվն է արգեն ֆաքուր,  
Եվ Հեղուշը արգեն տրված  
Իր խոսքից է Ծրաժարվում։  
Բարձր բերքի հարց է դրված,  
Բանն էլ ոչ թե տված խոսքին,  
Այլ դրան է վերաբերում...  
Եվ հիմա նա տարուերերվում...  
Նա հուզվում է ինչ-որ ներքին  
Մի անհանգիստ խլրտումից։  
Խորհուրդ հարցնելու Սակայն ումի՞ց,

Եվ ո՞րտեղից, ինչպե՞ս գտնել  
Այն միջոցը, հնարը, որ  
Պիտի դարձներ հնարավոր  
Էլ ավելի շատ կաթ կթել  
Իր կովերից։  
Իսկ թե նորից  
Այդ արոտը գիշերային  
Նա տարածի և կովերի,  
Այս, նաև նրանց վրա՞...

Այս միտքն այսպես կպազ նրան,  
Որ լվացը թաղած կեղտուու  
Նա վազ տվեց նրազի մասու  
— Գիշերային արսան՝ արոտ,  
Սակայն, Երա՞զ, այնպես շինի,  
Որ ձռւու հոնքը շիներու տեղ  
Հանկարծ աշքն էլ տեղից հանի...»

— Իսկ Միկելը դիմու՞լ եւ գու,  
Զէ, եկ հիմա վետեք աշխատօք  
Մկրտիչը իր վրանի  
Հովհանու տակ, հնաված սյունին,  
Լուռ կարուում էր, վերդիթերցուն  
Ջնառացին իր կազմուերի  
Տեարակները։

— Ե՞նչ ես կարծուա,  
Ախակեր Միկիշ, կովերին էլ  
Ազդ արուաց գիշերային.  
Կույթ օգնի կաթի հարցուած։

Մկրտիչը աշքը ճպեց,  
Լայն ճակատը ամուզ շփեց  
Նա բավ գիտեր՝ տափաստանում  
Կովերին էլ գիշերային  
Արոտի են վաղուց տանում։  
Նույն անում է Կալինինոն։  
Սա, իհարկե, գյուտ չէ մի նոր։  
Բայց... հենց բանը այդ սրայց-ումն էլ  
Այսաեղ վոքրիկ թերացումն էլ  
Մեկ էլ տեսար կանգնեցըրեց  
Ֆերման կոտրած տաշտի առաջն  
Պետք է հիշել նախ և առաջ,  
Որ մինչ այնտեղ՝ ստեպներում  
Տափարակ է, հարթ է, փափուկ,  
Մեզ մոտ՝ այստեղ, այս լեռներում  
Ճամփան խաղում «տափուկ-տափուկ»,  
Կախ է ընկնում մերթ քարտիից,  
Մերթ վիհերի խորքն է շափում,  
Մերթ, կըտրված ասես կապից,  
Գլորվում է ձորակն ի վարց  
Եվ այդ քարու ու քարքարու  
Ճամփաներով քել տավարն  
Ու անթափանց մութ գիշերով։

Տանել արոտ ու կտ բերել,  
Քարափներից ցած գլորել  
Եվ կամ հանձնել գելի բերա՞ն...  
Չէ, այդ գեպքում արդեն նրանց  
Հարկավոր են ոչ թե երկու,  
Այլ շորս կամ հինգ նախրապահներ,  
Մի քանի շուն, որ լավ պահեն  
Հոտի նման և նախիրին,  
Հետո՝ երեք թե շորս անգամ  
Նախիրն հանձնել խիճ ու քարին,  
Քշել արոտ, այնտեղից՝ ե՞տև  
Կովերն հենց այդ ճանապարհին  
Ունենան էլ թե կաթի գետ,  
Ծամփին պիտի զրկվեն կեսից:  
— Ախպեր Միկիլ, մի սպասի՞ր,  
Իսկ եթե մենք, խոսքիս լսիր,  
Իսկ եթե մենք...

Եվ Հեղինեն

Գյուտ արածի նման՝ հանկարծ  
Թռավ տեղից:

Իսկ եթե մենք

Օրն այլևս երեք անգամ  
Մեր կովերը էլ չքշենք  
Արոտներից բերենք ֆերմա՞ն  
Իսկ եթե մենք ինքներս հիմա  
Գնանք սար ու մեր կովերին  
Այնտեղ կթենք ու այսպիսով  
Ծամփին կորչող կաթը շահենք  
Ու վարչության նիստում տված  
Մեր խոստումը պատվով պահե՞նք...

Մկրտիչի բեղոտ շուրթին  
Այն ժպիտը լայն ալիքվեց,  
Որ ուսուցիչն աշակերտի  
Աճն զգալիս է ունենում  
Ու մտքի մեջ հպարտանում.

— Կեցցե՞ս, Հեղո՛ւշ, ես իմ հոգին,—  
Միկիլն ասաց գորովագին.—  
Մենք կարող ենք իրոք կթել...  
— Ի՞նչ է, կաթի հա՞նք եք գտել,  
Եեթեց Արոտն (նա այդ պահին  
իր վեցերորդ շար տղայի  
Արյունոտված մատն էր կապում  
Փաթաթանով, վոազ-վոազ,  
Ու հորդորում.

— Ոչի՞նչ, բալաս,  
Կմեծանաս, կմոռանաս:  
Մինչև օրը հարսանիքիդ  
Ժամանակ կա դեռ ահագին):  
— Զբաղեցրու դու տղային,—  
Վրա բերեց Հեղուշն անփույթ,—  
Հանք չենք գտել, ա'յ մարդ, նայի՛ր,  
Կաթի զետ ենք ձեռքով կապում,  
Սպիտակ գետ՝ փրփո՛ւր-փրփո՛ւր,—  
Եվ Հեղուշը տեղում պարեց:  
Իսկ սրամիտ, ուրախ Արտոն  
Նայեց կնկան, վրա բերեց.  
— Տե՛ս, կաթով է կինս հարբում,  
Ես՝ արաղով,  
Տղաս՝ խաղով,—  
Ի՞նչ եմ ասել՝ տուն ենք համա՞ն,—  
Ու նա կրկնեց կնոշ նման.  
— Սպիտակ գետ՝ փրփո՛ւր-փրփո՛ւր:  
— Դու իզուր ես հանգեր կապում,—  
Միկիլն ուրախ դիմեց նրան,—  
Ասենք՝ դու հենց կապիր հանգեր,  
Իսկ մեզ, Հեղո՛ւշ, պետք է հանգել  
Եելոք ու ճիշտ լուծման հարցի:

Երբ կթվորներն հավաքվեցին  
Նույն վրանի դռան առաջ՝

Ակրտիզ հայունեց նրանց,  
 Որ ամսահետ պետք է նբանք  
 Երկու անգամ կիթը դաշտում  
 Կազմակերպենտ  
 — Մենք Հո կորանք:  
 Բացականչեց ինչ-որ կիթոր,  
 Ճիշտ է, փոքր-ինչ հասակավոր,  
 Սակայն առողջութեա ամրակազմ:  
 Հեղուշին էլ այդ էր պակաս,  
 Նրան էլ այդէք հարկավոր.  
 — Խանում-խաթո՞ւմ, իմ հարգես՝ր,  
 Թե չես կարող կիթոր դառնալ,  
 Խնդրեմ վազը վերադառնաս  
 Գյուղում դառնաս կալվո՞ր, քաղվո՞ր՝  
 Ի՞նչ որ սիրտդ կկամենաւ.  
 Այնտեղ արդեն լավ կիմանաս,  
 Թե քրտինքը ուր կհասնի:  
 Չե՞ս ամաշում բա դու, Ազնի՞վ,  
 Եվ Հեղուշը տոնը փոխեց,  
 Ոչինչ չունես քեզ խանգարող,  
 Որ չոփ շինես աշքս կոխես:  
 Ինձ նայելիս չե՞ս ամաշում:  
 Զեռքիս, գրկիս՝ յոթ երեխա  
 Կամ կաթնակեր, կամ չար, կամ խակ...  
 — Աի մոռացից ութեքարդիդ, —  
 Միծաղելը ասաց Արտօն  
 Ու ցույց տվեց իրեն մատով:  
 Հեղուշն ասես չնկատեց.  
 Ու նույն տոնավ շարունակեց,  
 — Յոթ երեխա, հետն էլ՝ վարիչ,  
 Հետն էր իմ կակ հօժաք կամ զով,  
 Սաե կիթոր... Ի՞նչ է, քարի՞ց,  
 Չէ, մորից եմ ծնվել քեզ պես:  
 Եթե դատենք բարորս էզօֆես,  
 Ո՞ւր կգնա, ո՞ւր կհասնիր.

Զես մատումում բա դո՞ւ, Ազնի՞վ  
 Միջոդիզը վայսենալով  
 Որ կհասնեն կանացը ճեռու,  
 Ինքն ոգնության ուզեց հասնիր  
 — Միւթել ժամկը ճարացցովի, Ազնիվ...  
 Եթե միւթել...  
 — Գեղա՛վ, Անդեմ,  
 Բիրանից խոռք էր թուալ,  
 Եվ Ազնիվը քառչենց ահակագմ,  
 Սակայն հետո չհամբերեց  
 Եվ դիմելով Հեղինեին,  
 Խիստ տաքացած վրա բերեց.  
 — Սրա՞ն նայիր, զարմացըրե՞ց,  
 Ավետարան զլիսիս կարդաց:  
 Բերանից խոռք էր՝ փրթաց.  
 Ի՞նչ է, ես մի անհասկացող  
 Լաշառ կի՞ն եմ կամ թե հիմա՞ր,  
 Որ դու, Հեղո՞ւշ, զլիսիս հիմա  
 Եկար դարձար ագիտատոր:  
 Ե՞ս, իմացիր, խելքի՝ կտոր,  
 Ե՞ս, թող զլիսիդ մի լավ նստի,  
 Տասնյոթ թվի կոմունիստի  
 Կին եմ եղել, լավ իմացիր,  
 Քեզնից էլ լավ եմ հասկանում...  
 — Ա՞յս, Ազնիվ ջան, էդ մի բանում  
 Մեղավոր է ողորմածիկ  
 Հայրս, — ասաց Արտօն տեղից, —  
 Տնաշենը թե իր տղին՝  
 Այսինքըն ինձ՝ ձեր ծառացին,  
 Շուտ տար արյուն, միս ու ոսկոր,  
 Ես էլ անշուշտ... Դե մի խոռքով  
 Կշկաննե՞ր, հաշտվե՞ք, դե շուտ...

Եվ ծիծաղը իր հետ քշում  
 Ու տանում է գժտվածության

Ամեն մի հետք, Եվ հրճվագին  
Սիծազում են թե մարդ, թե կին,  
Իսկ Աղնիվը գորովագին  
Երկու ձեռքով շանչ է անում  
Արտոյին, որ պատի տակին  
Լուս նստել է, ձայն չի հանում  
Եվ անծիծաղ՝ շուրջն է նայում,  
Կարծես փնտրում այդ կատակի  
Իրեն անհայտ հեղինակին...

## ԳԼՈՒԽ ՎԵՃԵՐՈՐԴ

### ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

#### I

Հակառակ է կարծես գնում  
Լույս և մութի օրենքներին  
Ամուն գյուղը: Դեռ կեսօրին  
Լոռությունն է կես-գիշերվա  
Կարծես այնտեղ թագավորում:  
Երբ խավարն է թեր փոռում,  
Իրիկվա հետ ծայր են առնում  
Խոսք ու զրույց, աղմուկ ու վեճա  
Մարմրում են ձայներն անվերջ  
Ու բորբոքվում են վերստին  
Գուան առաջ մեծ պահեստի:

Ամեն հարկի, տանիքի տակ  
Հնչում է խոսք, ծիծաղ, կատակ:  
Իրիկնային ննջող քամին  
Արթնանում է միանգամից,  
Արթնանում է ու զով անում  
Տապից այրված հող ու քարին:  
Կարկաշում է նազով առում,  
Մեկ-մեկ իրեն դրսնորում  
Մրա-նրա կանաչ մարգում,  
Հետո կորչում մթին այգում:

Վարչությունում այդ նույն պահին  
Մեկն իր աշխօրն է ստուգում  
Ու հաշիվներ անում մտքում.

Ինչքան պիտի տանը պահի  
Եվ ինչքանով նոր տան համար  
Մահճականեր գնի հարմար  
Մեկն էլ դիմում նախագահին  
Եվ համոզել է աշխատում,  
Որ իզուր են իրեն կալի  
Պահակ կարգել: Ճիշտ չի գտնում.

— Ինչո՞ւ, ախպե՞ր, թիշո՞ւ պահակ  
Չէ՞, փառք աստծո, աշխատունակ,  
Առողջ մարդ եմ, ուրիշ գործ տուր  
Եվ մի՛ անի ինձ խայտառաւ  
Գյուղի,

մարդկանց,

կնքաւ առաջ...

Իսկ ակումբի արձակ բակում  
Զահել-ջուհուն է աղմբկում:  
Ետ են դարիս տշխատանքից՝  
Կարից, հնձից ու ջրառաքից,  
Հագեղքում են պարզ ու մաքուր  
Եվ շտապում ուղիղ ակումբ,  
Ոմանք ներսի լայն դահլիճում  
Զրուցում են կամ տաք վիճում:  
Թերթ են կարդում ոմանք լոին  
Բացատրում մյուսներին:  
Այստեղ՝ թթված իրար վրա,  
Սպասելով իրենց հերթին,  
Մի խումբ ողերք աղմբկարար  
Քիշ է մնում շարդեն նարզինս  
Այնտեղ՝ նույնպես ամբողջ մի խումբ  
Հետևում է խաղին, սակայն  
Լուր, մառադրազ:

Ճնշումակ աղքան

Հակառակորդ զինվորների  
Նոր հարձակման թափի առաջ  
Կանգ է առեր ռմատիւ դրանք

— Թագավորիդ արգեն, Հրանտ,  
Հիտկերի բախոն է սպասում:  
— Որ այդպես է՝ ուրեմն ապա  
Թող որ լինի և ինքնասպան,  
Ասում է նա և արքային  
Մեջքի միքա զուռ է սպաֆիս...

Իսկ կենտրոնից կամ շրջանից  
Դասախոս է երբ որ գալիս,  
Ջեկուցումից հետո պիրով  
Պատասխաններ է երբ տալիս,  
Եվ թվում չ, որ դահլիճում  
Բոլոր հարցերը վերջացան,  
Եվս մեկի ձայնն է հնչում.

— Կինդրեկիսք քեզ, ընկեր շան,  
Երկու խոսք էլ ասեիր մեզ  
Դրությունից միջազգային:  
Միշտ էլ՝ վերջում, միշտ՝ նույն պահին  
Եվ միշտ՝ անկախ բուն թեմայից...

Եվ դասախոսն ակամայից  
Ստիպված է հարցը հարգել  
Ու լսում են.

— Մակի նոր կուրս...  
Ողջ աշխարհը՝ երկու լագեր...  
Վիետնամում մահ ու արյուն...  
Անգրծովյան Ամերիկայում  
Փնտրութեներ նոր զենքերի,  
Զրածնային ինչ-որ գերառումբ...  
Այդաեղ արդեն Դանկլ քեռին  
Նստած տեղը չի համբերում  
Ու գոշում է ձայնով ամբողջ.  
Պետք է ասել էղ շան որդուն,  
Թե՛ իզուր ես կարծում, որ զու  
Կվախեցնես մեզ քո ոռումբով  
Ատամային...

(Կարծում եք դուք,  
Ես թույլ տվի տառասխան՝  
Ո՞ւ, կոչվում է հենց նա այդպես  
Ատամային)...

— Մենք էլ ախր  
Սուր ատամներ շատ ենք տեսել  
Ու ջարդել ենք, էն էլ ինչպես...  
Զեկուցումից հետո նրանք  
Դեռ ակումբից տուն չեն դառնում,  
Եվ այս ժանոթ նյութի վրա  
Մի տաք զրուց է ծայր առնում:  
Սակայն այսօր...

Ո՞վ էր տեսել,  
Որ զեկուցումը վերջանա  
Եվ ոչ մի ձեռք չբարձրանա  
Ու չհարցնի դասախոսին  
Գրությունից միշագգային:  
Բայց պատահեց, ահավասիկ:  
«Ինչպես բաշխել կոլխոզային  
Միջոցները դրամական»...  
Աչքը չուել, լարել ականջ՝  
Լուր լսում են դասախոսին,  
Եվ խոսում է նա այն մասին՝  
Ինչպես որոշ կոլխոզներում  
Դրամական եկամուտի  
Ճնշող մասը զոհ են բերում  
Եքեղ շենքեր կառուցելուն,  
Եվ դա՝ նույնիսկ այն ժամանակ,  
Երբ որ չունեն շատ հասարակ,  
Բայց անհրաժեշտ նման բաներ,  
Հարմարանքներ, պարագաներ,  
Ինչպես դիցուք...

Մեկ էլ հանկարծ

Լուրթյան մեջ հնչեց մի կանչ.  
— էլ ինչո՞ւ ես, այս տնաշեն,  
Գնում հասնում հեռու-հեռու,

Եվ էնտեղից օրինակ բերում։  
Հենց մեր գյուղը Սովետաշեն,  
Մեր պալամբը... — ուստան գոռում  
Ու նայում է Դանել քեռուն։  
Կու չի գնում նա իր հերթին.  
— Համպի շուշա հո չես, ախպե՛ր,  
Ի՞նչ ես ցցվել, տեղդ նստիր։

Բայց ձայները այս-այն կողմից  
Նրա ձայնն են խլացնում.  
— Զէ, ընկե՛ր ջան, այդ հարցերում  
Նախագահից՝ մեր Թորգոմից  
Ավելի լավ այլ դասախոս  
Դու չես ճարի ողջ աշխարհում։

Իսկ Թորգոմը լուռ ու անխոս  
Բեղն է կրծում ու համբերում։  
Եվ թվում է՝ մի ողջ տարի  
Եկավ անցավ, մինչև Կարոն  
Ուսքի ելնում զանգ է տալիս.  
— Դուք, ընկերնե՛ր, թույլ չեք տալիս,  
Որ դասախոսը հարգելի  
Շարունակի,  
Այդ հո չեղամպէ։  
— Ինչո՞ւ չեղավ, ընկեր Եղյան,  
Ես իմ հոգին, շատ լավ եղավ, —  
Եվ աղմուկը ամեն կողմից  
Խայթում է սիրտը Թորգոմիւ։

## II

Գյուղը կարծես ամայացել,  
Դատարկվել է կարծես հանկարծ,  
Ոմանք հնձի են գնացել,  
Ուրիշները՝ այգի կամ կալ։

Թե ճրագով անզամ ման զաս  
 Պարապ նստած մարդ շես ճարի,  
 Եվ շտապող Դանել քեռին,  
 Ամաչելով ինքն իրենից,  
 Որ կարող է թվու պարապ,  
 Դարբնոց է հասնում տրագ:  
 Ճանաշված է նա շտա վաղուց  
 Իրեն ամեն կարգի պահակ:  
 Մերթ այդի են հանձնում նրան,  
 Մերթ բոստանը, պահեստը՝ մերթ,  
 Իսկ երբ արդեն ձյուն է — ձմեռ:  
 Գոմերը հո միշտ կան ու կան...  
 Եվ այս անզամ,  
 Եվ այս տարի  
 Նշանակվել է մեր քեռին  
 Մեղվանոցի պահակ և կամ,  
 Ինչպես ինքն է սիրում կոչել՝  
 Իր նոր պաշտոնը՝ մեղվաղահ:  
 (Նա՝ մեր ծնրուկ օնափառը,  
 Շատ չի սիրում պահակ բառը,  
 Այդ թվում է խիստ հասարակ,  
 Վիրավորում փոքր-ինչ նրան)...

Բոլորն արդեն վաղուց գիտեն  
 Սովորաւիթը Դանել քեռու.  
 Անկեզծորեն և լրջորեն  
 Այն գործին է սիրահարվում,  
 Որ նրան է հանձնարարվում:  
 Գոմաղա՞ն է — զոմն է դառնում  
 Ամեն ինչից կարևորը.  
 Այսի՞ն, բոստա՞նն է պահպանում՝  
 Այս անզամ էլ ալեորը  
 Դրանով է հտարատանում...

Հասկանալի, պարզ է կարծեմ,  
 Որ բնավ էլ կարեոր չէ,

Թե, օրինակ, անցած տարի  
 Տեսանկյունից հանդապահի  
 Նա ինչպես է գերաբերվել  
 Ասենք թեկուզ մեղվանոցին:  
 — Մեղուն օրն է, տո՞ վա՞զ անցիր,  
 Երբ հաց, ցորեն կա աշխարժում,—  
 Այսպես հասեր Դանել քեռին  
 Անցած տմառություց այս տարի...  
 Որտեղ նոտի ու վեր կենա՝  
 Մեռած բան է — խոսք կրացի  
 Մեղվից, մեղվանոցից,  
 Առարկես է՝ կտաքանա,  
 Չառարկես է՝ կրարկանա,  
 Անհաջող մեկի հետ կվիճի,  
 Ձանք կթափի, կապացուցի  
 Օգտաները մեղվանոցի...

Ու սիրում է նա հատկապես  
 Դարբնի հետ իր ուժը շափել՝  
 Երկու ծերուկ, և թարսի պես՝  
 Մեկը անշատի պյուրագավատ,  
 Եվ սնափառ, և միամիտ,  
 Մյուսն անշափի կասկածամիտ,  
 Խստաբար և անհավատ,  
 Հիսունավաթսուն տարի ահա  
 Միշտ վիճում են, խայթում իրար,  
 Բայց և այնպես — ի՞նչ իմանաս,  
 Հենց միգուցի դրա համար,  
 Մտերիմ են մնում կրկն  
 Ու կոլխոզում եւոչ մեկից  
 Այն հաճույքը շեն ստանում,  
 Ինչ զգում են, երբ որ նրանք  
 Իրար հետ են զրույց անում:  
 Շատ են սիրում նրանք խոսել  
 Նամանագանդ կոմունիզմից:  
 — Զէ՛, չենք եարող դու է՛լ, ես է՛լ

էղ օրհնված օրին հասնել:  
Մաշը կզա մեղ կճպմի,—  
իր կասկածն է հայտնում ուստան:  
— Ի՞նչ ես խոսում, այ անաստված,—  
Տաքանում է Դանել քեռին:—  
Փառ է իշել քո աշքերին:  
Մի դու հապա շուրջդ նայիր,  
Մի մտիկ տուր մեր աշխարհին:

Եվ մեր քեռին շիկնած բոցից,  
Խոսքի ծայրը բերո՞ւմ-բերո՞ւմ,  
Եվ ինչպես միշտ այս սեղոնում  
Հասցընում է մեղվանոցին.  
— Թե լինեիր զու մեղվապահ,  
Կտեսնեիր ավելի պարզ...  
— Լա՛վ, էդ գիտե՞նք, գիտե՞նք, Դանե՛լ,  
Բավական է գլուխ տանես,—  
Ընդհատում է ուստան նրան:

Եվ մուրճն իջնում, ելնում է վեր,  
Բորբոքվում է անվերջ քուրան  
Ու բորբոքում ասես նաև  
Ներողամիտ Դանել քեռուն,  
Որ կոկորդն է հազիվ քերում,  
Եվ ժպտալով ինքնավայել  
(Զի պատահել կարծես ոչինչ),  
Կամենում է նորից խոսել,  
Նորից խոսել... մեղվանոցից,—  
Թե՛ իրը այնտեղ, մեղվանոցում  
Եատ կարեւոր հարց են լուծում,  
Թե՛ այս շարաթ — խոսքին նայիր —  
Փեթակները կոլխոզային  
Նա մաքրել է ամերիկյան՝  
«Թուրժուական» էդ փտախտից,  
Թե՛ էլ մեղվին վտանգ շկա,  
Մեղվարերքն էլ իրենց բախտից

Սով կլինի ամեն տարի:  
Իսկ թե ծով է բերք ու բարիք՝  
Ասել է, թե իր ոտքերով  
Կոմունիզմը մոտ է գալիս:  
Սակայն ուստան այս անգամ է՛լ  
Նրան խոսել հո չի տալիս.  
— Դու պալատի՛ց խոսիր, Դանե՛լ,  
Մոռացե՞լ ես, թե դրանով  
Ինչքա՞ն ես դու հոգիս հանել:  
Հիմա ինչո՞ւ վազ ես անցնում:  
— Էհ, կիսում ես հիմա էլ.  
Ո՞վ ասաց, թե վազ եմ անցնում,—  
Եվ մի փոքր շփոթվելով  
Իր ճակատն է շփում ձեռով:  
Ախր ուստան չի մոռացել,  
Թե որքա՞ն են նրանք վիճել  
Այդ առիթով: Ինքն ասում էր.  
— «Կամաց՝ բայց շատ գնա», ախապե՛ր...  
— Ախր կամաց ո՞ւր ես գնում,  
Զոքանչիդ տո՞ւն, թե՝ կոմունիզմ,—  
Բորբոքվում էր Դանել քեռին  
Եվ միանում ամեն կողմից  
Վաշագանին ու Թորգոմին...

Շփոթվում է քեռին հիմա  
Միտ բերելով, որ Թորգոմին  
Նոր ակումբի շենքի համար  
Երեկ գիշեր լավ խայթեցին,  
Եվ ուզում է շրջանցելով  
Խոսքը բերել մեղվանոցին,  
Բայց զգալով, որ չի կարող,  
Եվ որ ուստան նեղն է ձգել,  
Աշխատում է որևէ կերպ,  
Ինչ-որ ժաւոտիկ ճանապարհով  
Փեշն ազատել, իրեն փրկել:

— Վա՞յ, շատախո՞ս, դու զո՞ւր դառնաս,  
Ո՞չ մտացար, — ասում է նա  
Եվ մագերն է ուզում ձգել  
(Աւ կծփեր, թե ունենար), —  
Մեղմանոցին պետք է, ուստա՛,  
Դու հենց ջիմա սարքես ու տաս  
Երեսուն հատ մայրավանդակ:  
Ի և շո՞ւտ, ուստա՛,  
Մեռքի՞դ մատաղ...

Իսկ ուստալի թավ բեղերում  
Զարաճճի մի քմծիծաղ  
Զբունում է իրեն համար:  
Պարզ տեսնում է ուստան հիմա.  
Սուս է ասում Դանել քեռին,  
Որ աղառվի նրա ձեռից...

## III

Աշխատանքն է գյուղում եռում:  
Մի բառ միայն՝ բերքահավաք, —  
Եվ մի հատիկ այդ կարճ բառում  
Ամփոփվում է որքան կրակ  
Որքա՞ն լարում, եռանդ ու սեր:

Այդ տրերին Փորդուն ասես  
Պտտվում է հողի նման.  
Ուր էլ գնաս, ուր էլ հասնես,  
Միւս կտեսնես նորից նրան:

Հիմա կաշու՞ն առաջում  
Եվ մտածում Ֆանտարէին,  
Որ ինչպես միշտ, ամեն տարի  
Պիտի շուտով յայլաղներից  
Ներքն բերել շահելներին,

Որ զան, լծվեն հունձ ու կալին,  
Եվ ինչպես միշտ, ամեն տարի,  
Առաջինը ոզգ շրջանում  
Հնձից պրծնեն:

Միտք է աեռում  
Եվ հիշում է Մկրտիչին:  
Իսկ եթե նա աղմուկ գցի՞;  
Եվ այդ մտքից նա բարկանում,  
Միկիշի հետ հեռվից-հեռու  
Վեճ է մղում այնպես, կարծես  
Նա աղմուկ է արդեն գցել,  
Նա չի թողնում շահելներին  
Գան մասնակցեն հունձ ու կալին:

Եվ թորգումը չի նկատում;  
Որ իր համար անակնկալ  
Բարձրածայն է խոսում իրոք:  
Միկ էլ հանկարծ ծիծաղելով  
Նրա դեմ է Վաշն բուսնում:  
— Այդ ո՞ւմ հետ ես այգպես խոսում,  
Այդ ո՞ւմ հետ ես վիճում տաք-տաք...  
Բացատրություն մինչ նա կուր,  
Հասկացնում է Վաշն ձեռքով,  
Որ նա լոի:

Կողքի ձորով  
Մի բահ շուր է թավալվում ցած,  
Եվ շրի շուրջ հարյուրավոր  
Հավեր, բագեր են կշկում:  
Թուշնանոցն է տեղավորված  
Այդ ձորակում հարմարավոր,  
Փոքրիկ ֆերման Սաթենիկի:

Եվ դարավոր ուսենու տակ  
Նրա ձայնն է հնջում հանգիստ:  
Նա խոսում է Մարոյի հետ՝  
Հասակակից օգնականի:

Վաշեն դառնում է Թորգոմին.  
— Հապա լսիր՝ ինչ են խոսում:  
Ու նստում են, նրանց լսում:  
— Ո՞նց է, բազի, չս օր Կարոն,—  
Հարց է տալիս նրան Մարտն,—  
Եվ իսկապես՝ ծղյան Կարոն  
Գիշերելով դաշտում շորս օր  
Մրսել է և հիվանդացել:  
— Ասում են, թե երեկ կեսօր  
Տաքությունը անց է կացել  
Քառասունից-քառասունհինգ:  
— Քառասունհինգ: Վա՛խ, խե՛ղճ կնիկ,  
Վա՛խ, քոռանա՛ մերդ, բալա՛:  
— Քառասունհինգ... ո՞նց թե, ա՛յ քիր,  
Քառասունից վերև հոգին  
Ցավին էլ ո՞նց կղիմանա:  
— Ինչի՞ պիտի շղիմանա,—  
Առարկում է Սաթոն հանգիստ,—  
Պարտիական մարդ է, ա՛յ քիր,  
Դու էդ մեկը լա՛վ իմանաս.  
Պարտիական մարդու հոգին  
Հարյուրին էլ կղիմանա...  
Հենց սրանով կարծիք կազմիր.  
Ուրիշ էլ ո՞վ կղիմանար  
Էն անաստված պատերազմին...  
Ու գլխով է անում բազին...

— Քիշ է մնում, թե ականջիդ  
Զհավատաս, ես իմ հոգին,—  
Եվ Թորգոմը նստում հարմար  
Եվ լսել է ուզում էլի:  
Բայց կլկոցը հավերի  
Ստիպում է Սաթենիկին  
Շուռ գալ դեպի վերև նայել:  
Ու տեսնելով նախագահին  
Պառավ կնոշն ինքնավայել՝

Իրենց մոտ է նրան կանչում:  
Ողջ կոլխոզը շատ լավ գիտեր,  
Ճանաշում էր Սաթո բաջուն:  
Անժառանգ ու այրի մի կին,  
Ոնց ասում են՝ «անհիշատակ»,  
Կհասնի նա ամեն մեկի  
Իրեն ուղղված թեթև կանչին,  
Զեռաց կօգնի, խորհուրդ կտա:  
Այցելուն է նա առաջին  
Ուրախության, թե տրտմության  
Ամեն ժամին և լավ ժանոթ  
Ողջ կոլխոզի անցուղարձին,  
Տեղակ գյուղի ամեն ինչին:  
Ոչ մի կեղտոտ մութ նպատակ,  
Ոչ մի կեղտոտ ասեկոսի:  
Կին է այրի, «անհիշատակ»,  
Ոչինչ չունի օր ծերության:  
Ինչո՞վ հապա, ասել կուզե,  
Լցնի օրը, սիրտն ու հոգին,  
Ի՞նչ խնդությամբ ուրախանա,  
Երբ անձնական խինդ չունի նա:  
Նրա մարդուն ողորմածիկ՝  
Հիսուն-վաթուն տարվա հովիվ  
Կովակները սպանեցին  
Հոտի առաջ:

Սաթո բաջին

Զով սարերի մարմանդ հովին,  
Պաղ շրերին շատ էր սովոր,  
Եվ հետո էլ, իբրև կթվոր,  
Շարունակեց ֆերմա գնալ,  
Մինչև մի օր ասաց.  
— Ախապե՛ր,  
Էլ ձեռքերիս ուժ չմնաց:  
Ուզեց մի քիշ հանգիստ ման գալ,  
Բայց կոիվը պայթեց հանկարծ,  
Ու նա կրկին

### Երամլ առաջին.

Անկ' պիութեառամ հայովեարի գրառավ:  
Թոնքորդ վաս ունց արառանձ աշբառառամ,  
Մեկ' աջիստանց նաւահառում.  
Կէաց, մաւքրեց երեխութին:  
Ինչ գալիս երապառավ ձեռքից՝  
Չին այցեց և որչ մի ներին.  
Ամսիթարեց, առաւտագրեց,  
Սրան հեղան ոթելառթինց  
Թուգթ ու նամեանկ' որեափի միրոնու,  
Եվ իր առան անեց ուզ գիշերով  
Հին իտուքերով, ատոթքի պես  
Ստաքինին դարով դիմեց,  
Ար նա քաժի հուրսի միւրուն՝  
Հարորի նեւուին՝  
Ըստն շխուերին  
Եվ բալօրին ևս բերի տուն...

Անց ած ստացի մեաթի բարին  
Դարձավ պարիչ միշնան ոցի:  
Աշխատանքի, քուրծի սուկոր՝  
Նրան, թվում քրանսովար,  
Որ նա պիափի ամերող ստարին.  
Մեծ գործ չանի: Ի՞նչ էր անոնմ.  
Թոշուներին կուտ էր տալիս,  
Չուն հավաքում, հանձնում պահեստ:  
— Փաշչեմ ուզում գրուխ պահել,  
Դիմեց հիմա նա Թորգոմին:—  
Ես էլ հիմա միաք եմ անում.  
Ինչ որ արել՝ էլի կանեմ:  
Լավ չի լինի: Ես հավերին  
Էգուցվանից վերցնեմ տանեմ,  
Ու մոտեցնեմ ֆերմանեցին:  
Ճիշտ է, թե ու ուս է հատած,  
Բայց պի օգուտ ես էլ կում.  
Կով կկթեմ...

### Գիտե՛մ, գիտե՛մ, —

Զերմ ժպաւլով Թորգոմն ասաց, —  
Գնա, բաջի:  
Եվ իմացի ըւ  
Ար ես կպդեւք նախագահ,  
Քեզնեց շատ եմ շնորհակալ:  
Են էլ ասեմ, որ այս տաղի:  
Կարժանացնենք քեզ մեղակի:  
— Էհ, ի՞նչ մեղալ:  
Այ քիզ մատաղ,  
Էղ մեղակի համար հոչի:..  
Կոտզած ձեռով Սաթո բացնն.  
Ուզում է, որ տա մի օգուտ  
Իր կոլխոզին: Մատազ հոգուզ,  
Դե իմ մարզն էլ, իմքդ առա,  
Լուսահոգին ում գոհ զնաց:  
Դողաց ձայնը Սաթենիկի,  
Եվ նա դիտմամբ բարձր հազար,  
Որ հուզմունքը հազար ձաձկի...

### IV

Օրբստորե, անտան արագ  
Նոր գուներով է զարդարվում,  
Վերջակայսի նման վառվում  
Ծիկնանքներով հագարեթամբու

Վեր գազագույքացի նման,  
Քամուց քայած իսպակն աբգեն,  
Մայրամուտին իրիկվա դեմ,  
Սավառնում է լիտան վըսա  
Կախվում օդում,  
Չորը պատում,  
Եվ զարշով իր ոսկեթել  
Սածկում կածան, ակունք, առու

Մի անվտանգ, անբոց խարույկ  
Վառվում է և չի մոխրանում,

Եղանիներն են լոկ կանաչ,  
Որ օրեցօր, կամաց-կամաց  
Լուս մերկացող անտառի մեջ  
Երևում են ավելի պերճ՝  
Իբրև գարնան զրավական:

Սով դաշտերում էլ բերք չկա, —  
Ամբարվել է պահեստներում  
Եվ այնտեղից հորդել է դուրս,  
Լցվել ամեն խրճիթ ու տուն:  
Բերքահավաքը վերջացավ  
Առաջինը ողջ շրջանում,  
Փոխանցիկը ձեռքից չանցավ,  
Ինչպես Թորգոմն էր վախենում:  
Բարձր բերքի համբավն անցավ  
Ու տարածվեց հեռու-հեռու  
Երևանից եկան հասան  
Թղթակիցներ և նկարիչ:  
Եվ շատ շանցած լրագրի  
Երրորդ էջում իրենց տեսան  
Սեթը, երեք օղակավար,  
Թրիգաղավար Եղյան Կարոն  
Եվ Թորգոմը, որ խանդավառ  
Հաղթությունից դարձած բարի  
Ու մոռացած վեճ ու կոփվ, —  
Ափերն ուրախ շինեց իրար  
Ու Վաշեի մեջքին խփեց.  
— Լսի՛ր, Վաշե, ինչ եմ ասում:  
Պիտի ակումբը վերջանա՞  
Առաջիկա երկու ամսում...

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՌԴ

### ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

#### I

Երկինքը՝ կարծես լուսաքողարկված,  
Մթին ամպերից բացվում է հանկարծ,  
Եվ անժամանակ արթնացած քամին  
Կեսպիշերային անդորրված ժամին,  
Ինչ-որ մի բանից կարծես թե դժգոհ,  
Ամպերն է քշում գեպի Մեծ Մասիս,  
Գեպի մայր Արաքս՝ սահմանից այն կողմէ  
Եվ Գնդասարի կաթնագույն ուսին  
Հոգնած թիկնում է մի լրիվ լուսին:

Անքնությունն է Մկրտչին տանջում,  
Եվ նա վերարկուն զցելով ուսին՝  
Նստում է տեղում: Կողքին անձանձիք  
Աղբյուրն է անվերջ ինչ-որ բարբաջում,  
Մի գառ փոշտում, հովատակ մի ձի  
Ընդհատ ու բեկ-բեկ մի պահ խրխնջում,  
Լուսմ է ապա:  
Միտքը Մկրտչի  
Առանց դադարի պտույտ է անում:  
Մերթ այնպես, ինչպես համառ ճանճերին՝  
Մկրտիչը ձեռքով այդ միտքն է վանում,  
Մերթ՝ այն թվում է այնքան հաճելի,  
Այնքան գրավիչ:  
Աղի՛, Մկրտիչ,  
Դուրս եկ խճճված մտքի ցանցերից:

Ու նա չի քնում։  
 Ու միտքը զնում։  
 Մերթ հեռանում է, մերթ գալիս մոտիկ։  
 Որոշ է բախտը իր ժողովրդի։  
 Ապրում են իրենք մի մեծ տան նման,  
 Եվ ինչպես տանը, մեծ ընտանիքում,  
 Կան հազար հոգսեցն  
 Բայց մի հզոր սեր,  
 Որ արյան մեջ է, ամենքի հոգում,  
 Կապում է ամուր բոլորին իրար,  
 Եվ մի պիտինմասց ողջուր ճանապարհ։  
 Խոշընդուածերի պիտին անփերց։  
 Իրենց առանում է բարձումքից բարձումք։  
 Լինում են, ինչ խոսուց պատասխյում ու զեն։  
 Ահա թարգումը։  
 Վասկրից ցածռմ  
 Խնձոր թառում է խորին քնի մնչ,  
 Խսկ արշարույթը աշքերն է բացում,  
 Աղոտանում է խափարը դանդաղ։  
 Ի՞նչ է պատահել արդյոք թորգոմին,  
 Իր ընկերոցը, իր բարեկամին,  
 Սիրելի մարդուն, բան չեմ հասկանում,  
 Մոտ քսան տարի առաջ էր տանում  
 Իր ձեռքով հիմնած կոլեկտիվը մեծ։  
 Միշտ առաջինը ամեն բանի մեջ։  
 Այս անգամ մարդը սխալ է զորձել  
 Եվ ինքը, ինքը ինչքան է փոքթել  
 Հասկացնել նրան իր բարեկամը  
 Դնո համոզված է, որ այս անգամ, էլ  
 Այս կառուցվելիք ակումբի հարցրում  
 Ինքը ճիշտ է և սխալ չի գործում։  
 Բայց կհասկանա, այլ կերպ չի կարող—  
 Եվ Մկրտիլը ենում է ոտքի։—  
 — Գյուղ իջնենք, աեսնենք ինչ կամ կարոն։

Երբ որ գյուղի հասավ, Մկրտիլի գարցին՝  
 Ին ո՞ւ է եւարոն, պատասխան տովին,  
 Որ դրեթյունը շատ ֆանը է տղի,  
 Պատկան է պիտինութիւնը թորգումն էլ արդեն  
 Մեկնել էր քաղաք, որ շինանյութեր  
 Հասցընելի չփնդող ակումբի չննքին։  
 Ու վերապարհապահ Մկրտիլը կրկին,  
 Երբ որ այցելեց ու տեսավ, որ դեռ  
 Կարոն աւենագի մեջ չի վիճակի չէ  
 Ու հարցուր քննելու ու ուշ էլ լուծել։

## II

Ճամփուան նղնաւմ է առյուն ի պինը  
 Կեռածաններով չի ամրամատը,  
 Ոտքերիդ առակ հատրուենի պինը,  
 Գլխիդ գլերն է կապույտ կամար,  
 Որ ամպերով ծոպավորված՝  
 Ավելի է կապույտ դառնում։  
 Երկու հոգի միեր նատան,  
 Անվերջ պինը վեր ան նղնում։  
 Վե՛ր առաջնորդն թն կեսպի նրկինը  
 Զիերն ամնկներ այցի վերներից  
 Քրտնակալած ու բեզարած,  
 Վեր են հենաւմ դանդաղորեն։  
 Աշունն էլի աներեւույթ  
 Վրձննմերը իր ձեռքն առած,  
 Արսաններն է ոտքեզորիելը։  
 Իշել է նա մերկ հանգիրին  
 Եվ անտառին վեղնականաչ։  
 Կարծես Շնոր մի հրդեհի  
 Ցողքն է փուփել երկրի վրա։  
 Գարնան պետը հորդ ու վարտար  
 Բարակել է, դարձնել առո՞ւ...  
 Եսոր աշունն է լեռնաշխարհում։

**Ապաքինված, արդեն առողջ՝**  
**Փարտքարտուղար Եղյան Կարոն**  
**Թորգոմի հետ զրույց անում,**  
**Դեպի յայլաղ են բարձրանում:**  
**Երեանից նոր ետ դարձած,**  
**Ոգեստված, դարձած բարի՝**  
**Թորգոմն ամբողջ ճանապարհին**  
**Նոր լուրեր է հայտնում նրան,**  
**Եվ մեծ մասամբ խոսքը նրա**  
**Պտտվում է կոլխոզի շուրջ...**  
**Եվ Թորգոմը ոգեստված**  
**Թվարկում է երկու տարվա**  
**Պլաններն իր.**

### Ակումբին կից

**Գիտի շինի նոր հյուրանոց:**  
**Լավ սրբատաշ բազալտ քարով,**  
**Հիսուն-վաթսուն մահճակալով:**  
**Հետո՝ պանրի մի գործարան,**  
**Հետո...**

**Հարց է տալիս Կարոն.**

— Իսկ քաղաքում, մի ինձ լիր,  
 ի՞նչ իմացար գոմի մասին  
 Եվ կամ, ասենք, հենց բաղնիսի:  
 Հը՝, ի՞նչ կասես, ընկեր Թորգոմ։

**«Ընկեր» բառը նախագահին**  
**Հարկադրեց զգուշանալ:**  
**Տարված անուշ անըրջանքով՝**  
**Զէր էլ անցել մտքով նրա,**  
**Թե քարտուղարը պարտկոմի**  
**Իր հարուցած մտքի վրա**  
**Նայում է լուրջ կասկածանքով:**  
 — Զմեռանոց... կկառուցենք, —  
 Թորգոմն ասաց սառն ու դժո՞հ,  
 Մտածելով, որ Կարոն էլ  
 Վարակվել է անտարակույս

«Մկրտիչան հիվանդությամբ»:  
 — Իսկ ինչո՞ւ «գոմ», ոչ թե «գոմեր»:  
 — Է՛հ, թող լինի «գոմեր» թեկուզ:  
 — Իսկ ե՞րբ, Թորգոմ:

Ու Թորգոմն էլ

Սիրած խոսքը կրկնեց նորից.  
 — Կկառուցենք մենք ամեն ինչ,  
 Միայն՝ հերթով:

— Հետո՝, հետո՝,—  
 Խիստ անհամբեր հարցրեց Կարոն,  
 Եվ այլևս չսպասելով

Պատասխանի, շարունակեց.

— Զմեռանոց է հարկավոր

Մեզ հենց հիմա՝

Զմռան համար...

Կարոն ձիու սանձը ձգեց,

Որ Թորգոմը հավասարվի,

Եվ լրջորեն շարունակեց.

— Անմիջապես պետք է շարվի,

Եթե կուզես՝ վաղը թեկուզ:

Այս մեկն Ունենք նաև ռերկուս:

— Բայց, սպասի՛ր, ախր էդ ո՞նց,

Ո՞նց ենք շինում ձմեռանոց:

— Մենք ամեն ինչ ունենք, Թորգոմ, —

Բանվոր, քարտաշ, ճարտարապետ

Եվ շինափայտ, էլ ի՞նչ է պետք:

— Ո՞նց թե...

— Այսու,

— Ո՞նց թե, Կարոն:

— Այո, թեկուզ հենց այն քարով,

Որ ակումբի համար արդեն

Պատրաստված է:

— Իմ աստվածը,

Դու գժվել ես, կարծես, Կարոն:

— Դու ես գժվել, Թորգոմ, հենց գո՞ւ

Լսի՛ր, թե քեզ ինչ եմ ասում:

Կիտե՞ս, մարդիկ, ինչ են խռում.  
 Նորիազահ են Քաղսովեալ  
 Քեդ անվանում, մի մականուն  
 Որ ցանկանում — չես ցանկանում  
 Քո անվանն է կպել արդեն:  
 Ժողովուրդը հենց զրանով  
 Իր կարծիքն է արտահայտել:  
 Ասենք՝ նաև արտահայտեց  
 Նա կարծիքն իր որոշակի:  
 Դու հիշո՞ւմ ես, ընկեր անդին,  
 Ջեկոցումն այն, մեր ակումքում:  
 Սա լուրջ բան է, ազդանշան,  
 Որ, անկառկած, այն է ասում,  
 Թե կը տրվում մասսաներից,  
 Հեռանում ես, առաջ վազում:  
 — Եթե անգամ ճիշտ ես ասում,  
 Ապա դու էլ մասսաներից  
 Կտրվել ես՝ ետ մնալով,  
 Քնով անցել՝ շիմանալով  
 Այն, որ արդեն հասանելի  
 Բան է գարձել մասսաներին:  
 — Մասսաներին, մասսաներին:  
 Հետո՞... — զլեց նա ձայնն իր քամբը, —  
 Իսկ ո՞վ առաց, թե կուրությամբ  
 Պիտի կախվենք մասսաների  
 Պոչից, Կարո՞...

— Լսի՛ր, Թորգոմ:

Եկ մենք իզուր ջուր շծեծենք:  
 Եվ իմացիր, մենք աիպային  
 Զմեռանոց կվառուցենք  
 Հենց վաղվանից: Մինչև հիմա  
 Բերքով էինք մենք զրազված,  
 Հունձ ու կալ էր, շկար հնար  
 Հարցը կարգին քննարկելու  
 Հիմա, առանց քողարկելու,  
 Ես բեղ պիտի անկեղծ ասեմ...

Նրանք հանկարծ նկատեցին,  
 Որ ֆերժա են արդեն հասել:  
 Եվ տաք լինեց հարկադրված  
 Անժամանակ ընդհատեցին:

### III

Ցուրաքանչյուրը լուռ ասպանդակեց իր ձին:  
 Տրաները, որ զեռ չէին տեսել նրանց,  
 Ճամփից վորքր-ինչ ներքեա՝ փափուկ լեռնալանջին  
 Արտասանում էին իրենց անգիր արած  
 Ուանավորենը, իսպան էին, երգում:  
 Եվ այդ պատճին հանկարծ ականջներին նրանց  
 Հասավ բարակ մի ձայն՝ մանկական ու զնզուն:  
 Մի մանուկ էր երգում,  
 Ինչպես պարզվեց հետո՝  
 Հեղինեի չորրորդ շարանձի տղան,  
 Մի երգ, որ վերցերս հորինել էր Արտոն:  
 — Եկեք խնդրենք Միկիշին,  
 Թորգոմի հետ շվիճի,  
 Գնա շրջկոմ ու աօի,  
 Որ մենք չունենք հասարակ  
 Չմեռանոց կոլխոզի,  
 Իսկ նա պաշտո է շինում  
 Մեր գյուղ՝ Սովետաշենում:  
 Քարտուղարը շրջկոմի  
 Շուտ զանդ կտա Թորգոմին,  
 Հետո այսպես կիսուի,  
 Քաղսովեալ իսկույն թող,  
 Վերադարձիր կոլխոզին...

— Գու լսո՞ւմ ես, Թորգոմ, թե չես լսում՝ լսի՛ր.  
 Նույնիսկ երեխիեքը  
 Պարզ տեսնում են ելքը, —  
 Եվ ծիծաղեց Կարոն ու շուր եկավ թամբում:  
 — Եթե քո հույսն էս է՝ երեխների երգը,

Մեղքս շատ ես գալիս, թող քեզ աստված հասնի, —  
Ասաց նախագահը՝ առերևույթ անփույթ.  
Սակայն սրտի խորքում վիրավորված երգից:  
— Չես խոսափի, Թորգոմ, դու այդ միակ ելքից, —  
Ակնարկելով նորից երգը երեխեքի  
Ասաց Մկրտիչը, երբ որ նրանք արդեն  
Տեղ հասնելով՝ նրա վրանի տակ  
Նախաճաշել, փոքր-ինչ հանգստացել  
Ու նույն հարցին էին անդրադարձել կրկին:  
Խսկ Թորգոմը ժպտաց մանկան նման բարի:  
Եվ ժպիտը նրա ավելի էր ասում,  
Ամեն տեսակ խոսքից պերճ էր խոսում:  
Մկրտիչն ու Կարոն նույն ժամանակ,  
Երբ նա ծիծաղում էր և կատակում,  
Փաստարկումներ էին լուս հավաքում:  
— Մկան համար մահ է, կատվի համար՝ հանաք, —  
Ուզեց Մկրտիչը շհամբերել,  
Բայց Թորգոմը մինչ այդ վրա բերեց.  
— Դեռ գոմը թող մի կո՞ղմ,  
Ասա մի հասկանանք.  
Էղ քո գոված ցեղի բուրդն ի՞նչ եղավ,  
Երբ որ մթերումից, զոշա՞ղ տղա,  
Դեռ մեզ պակասում է հարյուր կիլո:  
Հը՞, ի՞նչ կասես սրան, ընկեր Կարո, —  
Եվ խորամանկ ժպտաց շեղ աշքերով:  
— Մինչ ես «առ» եմ ասում, դու քշում ես «ակոս», —  
Ասաց Մկրտիչն ու աշքի տակով  
Խորհրդավոր նայեց Կարապետին: —  
Անհո՛գ մնա, զա՞նս, մթերումը բրդի  
Ոչ թե կտանք մի կերպ, ինչպես ամեն տարի,  
Այլև, ընկեր Թորգոմ, ես լուրջ խոսք եմ տալիս  
Ազատ մթերման դեմ հանձնել ևս կես տոնն...  
  
Իսկ Թորգոմը ժպտաց.  
— Կատակներդ քե՛զ թող,  
Ես այդ հարցում արդեն լուրջ եմ խոսում քեզ հետ:

Սակայն «լուրջ խոսելը» շեղավ արդյունավետ:  
Թորգոմը լրջացավ անմիջապես,  
Կատակախառն տոնը փոխվեց իսկույնեեթ,  
Եվ մի ակնթարթում, այն մարդու պես,  
Որ փոխարեն գինու խմել է նավթ կամ ձեթ՝  
Ծամածովեց գեմքը մեր Թորգոմի,  
Երբ որ խոսքը նորից պտտեց եկավ  
Հասավ ակումբին ու վերաբերեց գոմին:

Իզուր Մկրտիչը փորձեց խոսել խաղաղ,  
Զուր օգնության կոչեց գիտություն ու լեկցիա, —  
Նրա տետրակները կոպեկի տեղ չանցան,  
Միջամբտեց Կարոն, նոր փաստարկներ բերեց՝  
Նույնիսկ և Սերգեյի մի նամակից:  
Զանաց նրա վախն ու կասկածները ցրել,  
Լրջությունը չօգնեց, զիմեց և կատակի,  
Բան դուրս չեկավ սակայն, Թորգոմն էլի  
Մնաց առաջվա պես անդրդվելի:

Ու վրդովվեց Միկիչն այդ միալար տոնից.  
— Ախապե՛ր, բավական է «Մուկ ու կատու» խաղանք:  
Սա մի հարց է արդին դատ ու դատաստանի:  
— Խսկ քեզ համար պարզ է նաև դատավճի՞ռ, —  
Բարկությունից բոլոր «ըս»-երը կու տալով՝  
Նախագահը նետեց Մկրտիչին:  
— Դատավճիռը, չէ՞, բնավ ինձ հայտնի չէ,  
Քանի որ նա միայն քեզ է վերաբերում, —  
Միկիչը հարվածեց ասես սրով:  
Հանդից եկած Արտոն ուրախ փոթկացրեց,  
Երազիկը խնդաց.  
— Ցոթով զրո՞...  
Հայրը դարձավ դստեր, շափեց ոտից գլուխ:  
— Ախր, հայրիկ...  
— Հայրի՞կ, թե՞ զահրումար:  
Երազիկը լոեց, մի կողմ քաշվեց հլու:  
— Մասխարա եմ դարձել սրանց համար, —

Եվ վրանից ելավ արտգ-արագ,  
Պատասխան շտալով իրեն ուղղված հարցին...  
Դրսում լեռան քամին սև թուխպերն էր քշում:  
Իսկ արել հեռվում՝ Մասիսների լանջին  
Կարծես վայր ընկելով՝ դարձել փշուր-փշուր,  
Խառնվել էր նրանց հավերժական սասցին:

#### IV

Աշնանային քամու շնչից  
Արդեն ձմռան հոտ էր գալիս,  
Նա չէր փշում, այլ սուր ծակում:  
Արեգակն էլ Գնդասարից  
Կիսաքուն էր կարծես ծագում  
Եվ արդեն ոչ թե զերմություն,  
Այլ միմիայն լույս էր տալիս:  
Պաղ եղյամը-արդին վաղուց  
Գիշերվա մեջ անտես մաղվում,  
Բոլոր քարերը անխտիր  
Մածկում էր իր բարակ խավով,  
Այնպես, ինչպես որ յայլաղում  
Հովիվների ձեռքը սովոր  
Ազաքարերն է լոկ աղում:  
Զարժեր մնալ էլ յայլաղում,  
Երբ որ հիմա տաք էր գյուղում,  
Իսկ ցելերում խռտն էր աճել,  
Խոզաններում՝ ձեռքից թափված  
Հասկ ու հատիկ դեռ մնացել:

Եվ նստելով զամբիկ իր ձին՝  
Մկրտիչն էլ կոլխոզ՝ իշավ,  
Որ զոմերի հարցը լուծի:

Մինչ այդ արդեն եղյամն Կարոն  
Զանգ էր տիկել, հայտնել շրջկոմ,

Թե ձմեռիլ մենք չենք կարող՝  
Չունենալով ձմեռանոց  
Կառի համար ու ոչխարի:  
— Կվերջանա շուտով տարին,  
Ժամանակը շի սպասում:  
Թե մնացած երկու ամսում  
Գլուխ չգա գործը արագ՝  
Կլինենք խաղք ու խայտառակ:

#### V

Դոնիակ, ապա և բաց ժողովում  
Լուծվել էր հարցը ընդդեմ թորգոմի:  
Հիմա նաև տանը աշ ու ձախ կողմից,  
Իր թավ հոնքերն էր իրար ժողովում:

Նախագահել էր երկու ժողովում  
Քարտուղարն ինքը, որ պարտքրչկոմից  
«Վիլիս» էր նստել ու եկել իսկույն:  
— Եթե դու գյուղում քեզ վատ ես զգում, —  
Ընկեր Վերդյանն էր դիմել թորգոմին, —  
Ազատենք, զնա ապրիր քաղաքում,  
Իսկ սա կոլսո՞ զ է, սա գյո՞ւղ է... Մեզ մի  
Զեկուցում կարդա դու կոմունիզմից,  
Որ մոտենում է, գալիս է, այո՞,  
Ցոթ մղոնանոց հսկայի քայլով:  
Բայց հո դա, եղբա՛յր, շի նշանակում,  
Որ գյուղում դու քեզ զգաս քաղաքում,  
Եղածի առաջ աչքերդ փակես  
Եվ զիտմամբ, զոռով ներշնչես զու քեզ,  
Թե անտաշ քարը խոյակ է, խարիսխ,  
Զբոսնող խումբ է հոտը ոչխարի:  
Ներեցեք, զուցե կոպիտ եմ առում,  
Բայց «Դոհ Կիխոտն» եմ ես աբսուզ հիջառմ...»

... ռԵՎ այդ օրվանից, ախր ո՞ր օրվանից,—  
Խորհում էր Թորգոմը,— ևս այս օրին հասաւ:  
Եվ կյանքն էր վերհիշում այն կավաշեն տանից,  
Որտեղ ծնվել, սնվել, առել հասակ,  
Վազգել էր բորիկ, բերանքսիվայր ընկել,  
Փխրուն հողերի մեջ խաղացել էր «տուն-տուն»  
Լուսյակը դարձնելով իրեն զրուցընկեր,  
Հարևանի դուստրը՝ խանում-խաթուն...  
Թվում էր, թե ոչինչ չի փոխվի աշխարհում.  
Միշտ կճողիա լիճը իր եզրերին,  
Դաշտածաղիկի բույրը լեցուն մարագներում  
Խայտանք կպատճառի զույգ եզներին,  
Կյանքը պարզ կմնա՝ ինչպես առակներում —  
Կովը միշտ կաթ կտա, արտը՝ գարի,  
Տատը միշտ կնստի թել ճախարակելու,  
Պապը չի ձանձրանա «խեր ու շառ»-ից,  
Եվ նոր տանջված հոգին բերնից պիտի հանի  
Խարազանը դաժան հարկահանի...

Ինչքա՞ն հեշտ է լինել վշտին անգետ մանուկ,  
Երբ դեռ անգամ չկա փոխան հագիդ...  
Հետո կյանքը փոխվեց այնպես հանկարծակի,  
Ինչքան աշնան քամուց անտառն է մերկանում...  
Սակայն ո՞ւր են նրան այդ հուշերը տանում,  
Ի՞նչ գործ ունի հեռվում, ինչի՞ համար...  
Դեռ երեսուն թվից այս նույն կոլեկտիվում  
Խախագահել է նա մինչև հիմա:  
Նախադահել է նա ահա այսքան տարի  
Եվ շատերի համար օրինակ է եղել,  
Գրավել է, շահել միշտ առաջին տեղեր,  
Սիրվել շարքայինից, հարգվել ղեկավարից...  
Ի՞նչ պատահեց, սակայն, նրան այս մի հարցում...  
Ի՞նչ դուրս եկավ, մինչդեռ ինքը ի՞նչ էր կարծում...

Կողքին Մկրտիչն էր, որ չէր նայում նրան  
Եվ անհարմար զգում աշակերտի նման,

Որին դրվատում են բոլորի մոտ:  
Մեղք չէր գործել անշուշտ իր ընկերոց առաջ,  
Թայց մի անմեկնելի, մի մանկական ամոթ  
Թույլ չէր տալիս նայել այն Թորգոմին՝  
Երկար տարիների իր այն բարեկամին,  
Որին սիրում էր նա եղբոր նման,  
Եվ որ վատ էր զգում, ամաշում է հիմա...  
Գուցե բացատրեր այլ կերպ նա Թորգոմին,  
Գուցե այլ կերպ խոսեր՝ նա հասկանա՞ր...  
Եվ ժողովից հետո, երբ որ պետք էր գնալ,  
Նա վեր կացավ արագ և Թորգոմի  
Ներքն հակված զլուխն իր կրկի մեջ առավ.  
— “Իե”, դե՝, բա՛րձր պահիր՝ ինչպես էիր առաջ,  
Աշ ոք դեռ չի տեսել քեզ գլխահակ, Թորգոմ.—  
Եվ Մկրտիչը գրկեց ու բոլորի առաջ  
Զերմ համբուրեց նրան գորովանքով...

## VI

Եվ տիպային նոր գոմերի  
Նախագիծը գծեց Վաշեն:  
Դեռ մոայլ էր Թորգոմն էլի.  
Իր սխալն էր նա հասկացել,  
Թայց դժվար էր միանգամից  
Իրեն նորից վերականգնել,  
Հին հունի մեջ նորից մտնել:

Եվ ակումբի շենքը մնաց  
Առժամանակ կիսակառուց:  
Նոր՝ խելացի հերթ էր տրված,  
Որ և պիտի լիներ վաղուց.  
Նախ՝ գոմերը, հետո՝ պալատ...

Եվ Մկրտչի աշքի առաջ  
Լեկցիաների անգիր արած

Նետրակնեցից վեր էր հառնում  
Գումզը... Հապա նայի ք գոմին.  
Լուսամտաներ ամեն քողմից,  
Ե՛վ տաք, Ա' սրազ ջրի ժարակի  
Հայն ամափող,  
Հարմար, տաքուկ.—  
Եղ որբան ԾԵ՛զտ, որբան արա՛զու.

Խակ գարբնացում, բոցի առաջ,  
Գեղամ ուստան, քրտնակալած,  
Տաք մրկաթն է հանդիստ ծուում  
Մի ականջը Դանել քեռուն:

Հայլին Արաքի՝ բրուտ Ավոն,  
Իր տօքայի և ճրազի  
Հարսանիքը պիտի անի,  
Ծվ նոր զույգի նոր տան համար  
Պատվիրել է պատուհանի  
Ամուր ցանցեր:

— Այ խնամի,

Ավելորդ է, կարիք զկա:  
Էլ ոչ զող կա, ոչ թշնամի,  
Ինչի՞ն է պետք ցանցը երկաթ.—  
Եվ բացակա Ավոյի հետ  
Վեճ է մղում Գեղամ ուստան:  
— Ճիշտ ես առում, Մութ կիխնի,  
Ուրիշ ուժնչ, — Համաթայնում,  
Հսստառում է Դանել քեռին:  
Էլ ինչո՞ւ է ուստան շինում:  
Էնց շշինի, բա ի՞նչ անի,  
Պահանջել է երբ ինտմին:  
— Իե հին մարդ է, դժվար է շատ  
Նրան նոր քաե հասկրցոնթի, —  
Լուրջ հարում է Դանել ընսին  
Այնպես, կարծես ինքը քառե:  
Սոմսոմոլ է, իսկ փնտամին:

Զառամյալ ծեր, մինչդեռ իրոք  
Ինքը փոքր է մի հինգ տարով:  
— Հա, հին մարդ է, ո՞նց հասկանա՝  
Կոմունիզմի վախտ է հիմա...

Եփ սկսվում, ծայր է առնում  
Նրանց սիրած այդ թեմայով  
Ջրույցը տաք:

Իկող գարուն  
Արդեն պիտի մեծ ֆերմայում  
Ելեկտրախույզը աշխատի  
Վճռվում է հարցը բրդի:  
Մեղրի հարցն էլ Դանել քեռին  
Վճռել է դեռ անցյալ տարի:  
Հացն ու կաթի էլ ծով են գյուղում:  
Այս ամենը ցույց են տալիս,  
Որ մոտակա աղազայում  
Մով կլինի բերք ու բարիք:  
Ինչի՞ համար, ախր ինչի՞,  
Ունեցածը մեզ հերիք շի՞:  
— Աւտոա՛ Փեղամ, հողուդ մեռնեմ,  
Էս բոլորը ասում են էն,  
Որ կոմունիզմ պիտի տեսնեն  
Ինձ ու քեզ պես պառավներն էլ...

\*\*\*

Նույն այդ պահին՝ Հեղ ու խելոք,  
Թվում է թե գիտակցելով,  
Որ այսուհետ մի կես տարի  
Կարուտ պիտի մնան սարին,  
Հոծ հոտերն են իջնում սարից,  
Թշում այնպես ծանր ու դանդաղ,  
Ասես խոտերը հաշվելով...  
Ամենուրեք լուս է, հանդարտ:  
Միայն կարծես փոքր-ինչ խռով,

Ասես փոքր-ինչ վիրավորված,  
 Ար հյուրերը այսքան օրվա  
 Հեռանում են միանգամից,—  
 Մրթմրթում է աշնան քամին:  
 Իսկ քիչ հետո՝ մինչ այդ հանգարտ  
 Լեռնաշխարհը միանգամից  
 Վերջին անգամ կյանք է առնում:  
 Ամեն թից, ամեն քարից  
 Շունն է հաշում, գառն է մայում,  
 Լեռան լանջից ու կատարից  
 Թոշվորսերն են իրար նայում,  
 Իրար կանչում և ձայն տալիս  
 Կովին, հորթին, գառ ու մաքուն:  
 Իսկ քարափը, ձորն ահալի  
 Զայնակցում են, արձագանքում  
 Եվ կանչին ու ձայնին տալիս  
 Հնչեղություն զարմանալիւ  
 Նստած զահել մի զամբիկի,  
 Հեղուշի և հրազիկի  
 Ուղեկցությամբ իշնում է ցած  
 Մկրտիչը:

Կարծես հարբած՝  
 Աշնան քամին հռհռում է:


Նայում են ցած ու լոռում են:  
 Ահա ցածրում, սարալանջին,  
 Իրենց հոտերն են արածում:  
 Բայց ո՞չ, նայի՞ր, չե՞ն արածում.  
 Կշտացել են ու նայում են:  
 Շուրջը այնպես հմայուն է,  
 Կարծես դյութված ու կախարդված:  
 — Ի՞նչ բան է սա, տե՛ր իմ աստված:  
 Ետ եմ դառնում ու նայում եմ...  
 Տե՛ս, մենք ինչից ինչ ենք դարձել,—  
 Հեղինեն է խոսում հանկարծ՝  
 Ետ դառնալով Մկրտիչին.

— Ո՞չ դու ես դու, ո՞չ ես եմ ես:  
 Փոխվել, ուրիշ, այլ է դարձել  
 Զորն էլ, սարն էլ, քարն էլ կարծես:  
 Եվ ամենից գլխավորը՝  
 Հին է անուն-ազգանունը,  
 Բայց մեր մարդիկ ա՛յլ են, նո՞ր են:  
 Հապա ինքդ նայիր մեզ մի:  
 Այլ, ես հիմա հասկանում եմ,  
 Որ հասնում ենք... կոմունիզմին...  
 Մկրտիչը լսում նրան,  
 Նրան շատ լավ հասկանում է:  
 Ավելորդ է թվում միայն  
 Խոսել, ասել՝ հասկանում եմ:  
 Եվ ներշնչված նայում է ցած:

Տարածվել է նրանց առաջ  
 Հորիզոնը հեռո՞ւ-հեռո՞ւ,  
 Որ այս լեռան սեղ կատարից  
 Թվում է թե գալիս-գալիս,  
 Մոտենում է և մոտենում,  
 Մոտենում է, հասնում կարծես,  
 Ուզե՞մ ձեռքով կշոշափես...

1917—1952

ԱՐԵՎԱՆԻ ԻՒ ԱՅՐ



I

Դու տեսնո՞ւմ ես հիմա, իմ սիրելի՝,  
Թե մեզ ո՞ւր հասցըրեց քո ուշացած սերը,  
Քո ուշացած սերը,  
Դու չուշացած իմ սեր:

Կշտամբանքի խոսքեր ես չեմ ուզում ասելու  
Բայց դու ո՞նց թույլ տվիր,  
Որ նա' դառնա տերը  
Ում դու չէիր սիրում  
Եվ ում համար  
Զէին դողում շրթերդ՝ ինչպես հիմա,  
Զէին շողում աշքերդ՝ ինչպես հիմա,  
Ինչպես հիմա՝ կուրծքը չէր տըրոփում կրքով:  
Ինչպես դու քանդեցիր տունը քո իսկ ձեռքով:

Զուր մի՛ արդարանա:  
Սիրո հարցում  
Զի՛ ճանաշում կյանքը արդարացում:

Զուր մի՛ ասա, թե դու  
Թոլորովին անփորձ աղջիկ էիր այն լում,—  
Սե՞րը, ո՛չ, չի զգում փորձի կարիք  
  
Մի՛ մտածիր իզուր,  
Թե կյանքն ինքը քեզ հետ իրը վարվեց դաժան,—

Կյանքը շի՞ բաժանում շարիք-բարիք:  
Եվ մի՛ կարծիր իզուր,  
Թե շբերեց բախտըդ:  
Բախտ բերելըս ո՞րն է,  
Նրան ձե՛ռք են բերում...

## II

Եվ այսպես է լինում.  
Նրբության տեղ՝ սիրով  
Ոմանք նուրբ մետաքսն են գերադասում հաճախ:

Եվ այսպես է լինում.  
Տաքության տեղ սիրով  
Ոմանք տաք մուշտակն են գերադասում հաճախ:

Ո՞ր հիմարը կասի, թե վատ բան  
Բարձրը աստիճանը,  
Փողով լի գրպանը,  
Եթե... սիրո հարցում շիրիմ չէ գրպանը:

Երախտապա՞րտ եմ ես դատարկ իմ գրպանին.  
Թե չէ, ի՞նչ իմանաս, աստվա՞ծ շանի,  
Չէ՞ որ կարող էր նա ինձ էլ գուցե  
Ուրիշների հիմար դրության մեջ զցել.  
Կարող էին, այո՛. կարող էին ինձ է՛լ  
«Աղվես»-ի տեղ իրենց ուսին զցել.  
Իբրև մուշտակ՝ կրել.  
Իբրև ոսկե քորոց՝ կրծքին խրել:  
Չէին կարո՞ղ է,  
Նրանք՝ հետիոտըն,  
Իսկ ես ձիավո՞ր եմ.  
Նրանք՝ կլոր զրո,  
Իսկ ես միավո՞ր եմ:

Ախ, չէ՞ կարո՞ղ էին,  
Որովհետև կյանքում  
Մեծագույնը մեծին միշտ հաղթում է:  
Իսկ շատերի համար, անշուշտ, սրտից մեծ է  
Կահավորված-կարգին-շքեղ տունը:

Ախ, չէ՞ կարո՞ղ էին,  
Որովհետև կյանքում  
Թեպետ հաղթությանը միշտ նորինն է,  
Սակայն հինն էլ կյանքում  
Նրանով է կանգուն,  
Նրանով է զորեղ,  
Որ նա հին է:  
Եսկ «քաղքենի» կոշումն այնքան է հին կյանքում,  
Որքան... ինքը կինը:

Բայց արտաքուստ քեզ պես  
Ու քեզ նման կարծես  
Նույն այդ կինը  
Անհունորեն քեզնից և տարբեր է այնպես,  
Ինչպես նկարներից՝ «նեղատիվը»:

Եվ ինձ համար բախտ է,  
Մեծ պատիվ է,  
Որ գու ուրիշ կին ես,  
Իմ անգինըս,  
Որ հեռու ես ամեն մի քաղքենուց,  
Ինչպես պղտոր ջուրը՝ կարմիր զինուց...

## III

Բայց, սիրելի՛ս, քեզ հետ եղել է վատթարը,  
Քեզ հետ պատահել է ահավորը:  
Քաղքենուհին անգամ պակաս մեղավոր է,  
Քան զու՝  
Իմ անմեղըս,  
Իմ արդարութ

Նա՝ վատ թե լավ՝ կյանքում առևտուր է անում.  
Մի բան՝ առաջիս,

Տեղը ուրիշ բան է առնում:

Նրան կարելի է արհամարհել,  
Իսկ քեզ... կարելի է քեզ շներել,  
Որովհետև նրանք սեր են խաղում,  
Իսկ դու... խաղացել ես դու սիրո՞ հետ,  
Որովհետև նրանք կյանք են խաղում,  
Իսկ դու... խաղացել ես դու կյանքի՞ հետ...

Քեզ ո՞նց ներել, թե դու

Գնացել ես մարդու

Այնպես, ինչպես մի օր քո հեռավոր տատը,  
Երբ որ հարցը ոչ թե սերն ու սիրտն են լուծել,  
Այլ, ամենից առաջ, մատնեմատը:

Ինչպե՞ս ներել, թե դու

Գնացել ես մարդու,

Ինչպես Արևելքում ընդունված է եղել  
Երկո՞ւ հազար տարի՝

Զավակի հետ մի լավ գերդաստանի,

Որի յոթը պորտին ճանաչել է հայրը.

Որի յոթը պորտին ճանաչել է մայրը:

Ճանաչել են,

Սակայն նրա գերդաստանին,

Բայց ո՞չ նրան, ում դու

Գնացել ես մարդու:

Գնացել ես մարդու

Եվ... մտածել,

Թե սերն ինքը,

Եթե կյանքում նա կա,

Հետո մի օր կա,

Թո՞ղ որ առաջնեկի՝

Քեզ պես ու քեզ նման մի աղջրկա,

Թո՞ղ որ երկորդ մանկան՝

Իր հոր քթից թռած մի շեկլիկի

Մնընդի հետ,— մե՞կ է՝

Միայն թե զա...

Սակայն սերը փառք չէ,

Ոչ էլ հաջողություն,

Որ հետո զա

Եվ կամ

Թնալ շզաւ

Հյո՞ւր չէ,

Որ մերթ ընդ մերթ այցելի ձեր տունը,

Մերթ պատճառի հաճույք

Ու մերթ՝ տհաճություն,

Խանդարելով անուշ ձեր ետմաշյա քունը

Ախ, չէ».

Սերը հյո՞ւր չէ,

Տանը հյո՞ւր չէ սերը:

Թե բանն այդտեղ հասալ՝

Նա տանտե՞ր է:

Հիմա դու լավ գիտես,

Իմ սիրելի՝,

Որ սիրո հետ խաղալ չի՞ կարելի.

Ո՞չ նա խաղալիք է,

Ո՞չ էլ մանուկ ես դու

Իսկ թե խաղալիք է՝

Նա չի շարդկում ինքը.

Հետը խաղացողին ինքն է այնպե՞ս շարդում,

Ինչպես որ նա քեզ է շարդել հիմա...

Մի՞թե արդեն պարզ չէ և քե՞զ համար,

Որ կարող է սերը... վրեժխնդի՞ր լինել,

Վրեժ լուծել՝

Իրեն անտեսելո՞ւ համար.

Տառապալից սիրով չսիրողին զինել,

Ինչպես որ քեզ՝ հիմա...

Ես սառուցի նման կհալեի  
Քաղքենական տաքուկ ու գազզ օդում,  
Եվ ինձ... ինձ չէր փրկի  
Եվ ո՛չ մի սառնարան՝  
Վերջին «մարկան» վրան։

Ես թշնամո՛ւս անգամ շիմ կամենում  
Տնաքուզը ճյուղ լինեկ աքմավինու՝  
Լուսամուտի զոգին,  
Կըճուճի մեջ կավե,  
Եվ կամ լինել ոսկե — չգործածվող գավե՞ր։

Զէ՛, ես սառուցի պես կհալեի  
Քաղքենական տաքուկ ու գազզ օդում։  
Բայց... ես ո՞նց եմ ուզում։  
Ու երազում,  
Անգի՞ն,  
Թո ոտքերը տեսնել իմ զրկաբաց շեմքին,  
Քեզ մեկընդիշտ տեսնել իմ տանն աղքատ ու հին  
Եվ հավատալ, որ դո՛ւ,  
Դո՞ւ ես տանտիրու հին։

Բա՛րձրը,  
Բա՛րձր է հնչում.  
«Իմ սիրելի՞ն»,  
«Իմ սե՞րու».  
Բայց ես ո՞նց եմ ուզում։  
Ու երազում,  
Անգի՞ն,  
Քեզ շշուկով, ան-ծա՞յր մի շշուկով ասել.  
Քեզ շշնջալ.  
«Իմ կի՞ն»...

Իսկ դու ուրիշինն ես,  
Իսկ դու ուրիշինն ես,  
Դո՞ւ — ուրիշի՞ն։

Դո՞ւ, իմ հարազա՞ւը,  
Մոտի՞կ հարազաւը,  
Եվ — ուրիշի՞ն...  
Ա՞յս, ուրիշին թող որ մեկ ուրիշը լիներ,  
Չէ՞ր կարելի, ասա՞։  
Ա՞յս, զու այդ ինչպե՞ս ես ուրիշինը եղել.  
Իմ սիրելի՞՝ ասա՞...»

Եվ նա ով է՝ զիտե՞մ։  
Պարզ է. նա ո՛չ կարիճ,  
Եվ ո՛չ էլ իժ է նա։  
Գուցի վատ չէ այնքան,  
Գուցի լավն է անգամ,  
Բայց քեզ համար օտա՞ր—ուրիշ է նա...»

Ինձ բռնեցի հանկարծ ես այն բանում,  
Որ ոտներըս հաճախ ինձ, ակամա,  
Անգերզ այգիներից—այգիներ են տանում։  
Իսկ դուքսի՛ շտապեք հանցանքի մեջ բռնել։

Այգիներ եմ գնում ո՛չ թե նրա համար,  
Որ շրջում են այնտեղ կանայք ամե՞ն ոճի,

Կանայք՝  
Նման նրին ձենապակու.  
Հիանալ ես ուզում, ուրիշ ոչի՞նչ...

Կանայք՝

Նման շքեղ սիրամարդի,  
Իրենք՝ անգույն, մինչդեռ նրանց հագի՛ն...

Կանայք՝

Նման դռան, որ չեն փակում.  
Կողպեք բաց անելու ո՛չ մի հակում...

Եվ աղջիկնե՞ր.

Աչքերի այնպե՛ս վճիտ,  
Որ լեռնային ջրին եթե ասես՝  
«Զինջ ես աղջրկական աշքերի պես»,  
Զուրբ հիացմունքից կլճանա մի պահ.  
Շո՛յված կզար այնպե՛ս,  
Կզար այնպե՞ս հպարտ:

Եվ աղջիկներ բազո՞ւմ—

Այնպես նազո՞ւն,  
Նազո՞ւկ,  
Որ ամե՞ն մի պախրա,  
Ամեն եղնի՛կ,  
Այծյա՞մ  
Ցնծությունից պիտի շիկնի ներքուստ,  
Եթե հանկարծ լսի իր հասցեին.  
«Ասես աղջիկ լինի, ահա թե ի՞նչ»:  
Եվ աղջիկնե՞ր —

Այնքա՞ն կախարդիչ ու թովիչ  
(Նրանց թովլանքն արդյոք ի՞նչ մակդիրով չափես),  
Եվ աղջիկնե՞ր —  
Թովիչ՝  
աղջրկա՛ պես...

Բայց ալգի են տանում ոչ թե նրանք՝  
Ո՛չ թե այս բոց կանայք,  
Աղջիկներն այս կրակ,  
Ո՛չ էլ անձանոթին

Իբրև մոտիկ,

Վերջ ի վերջո ռդոււ-ով անվանելու հույսը...

## VII

Սակայն ճիշտ է, որ ես այգիներ եմ զնում,  
Եվ ճիշտ է, որ այնտեղ կանա՛յք չեն ինձ տանում:

Մանուկներն են տանում, երեխե՞քը:

Լայն ծառուղի:

Ավագ, որ և շեկ է,  
Ինչպես այս թմբլիկը, ա՛յ, այս մեկը,

Որ իր գլխին,

Ասես

Թասակի պես,

Անվտանգ արևն է մազերի տեղ կրում:

Ինչպես և այն մե՛կը,

Այն մե՛կը, տե՛ս,

Որ ավագին, մատով, ինչ-որ բան է գրում:

Ժպտոն դեմքը նրա,

Նրա ձեռ ու ոտը

Այնպես պեպենոտ է,

Որ ուզում ես լվալ առվի ջրով այս ջինջ.

Քեզ թվում է տղան ոչ թե պեպենոտ է,

Այլ որ նրա դեմքը,

Նրա ձեռ ու ոտը

Այս ավագն է նախշել, ուրիշ ոչինչ:

Խսկ հապա ա՛յս մեկը...

Ա՛յս, այս երեխե՞քը...

Ամեն մեկըս ունի իր մեծ թուլությունը.

Մեկին՝ բարությունը,

Մեկին՝ մայրությունը,

Մեկին՝ խմիչքները,  
Մեկին՝ սերը կանանց:  
Ինձ մոտ մանուկների տիրություն է.  
Ինչքան ինձ հիշում եմ՝  
Հպատակն եմ նրանց:

Ես, իսկապես ասած, այսպես եմ հասկանում.  
Մարդիկ ուրիշ բան չեն, քան թե մանուկ՝  
Մանուկ — հասակ առած,  
Մանուկ — տարեց դառած,  
Եվ, վերջապես, նաև մանուկ-ծերուկ:

Ես, իսկապես ասած, այսպես եմ հասկանում.—  
Մեր մեջ ամեն լավ բան մանկական է,  
Ուստի «մանկական» է լուզի ածականը,  
Այդպես չի կարելի կոչել ժխտականը...

Իսկ դուք նկատե՞լ եք՞ւ  
Բոլոր մանուկները  
Եւֆինան են իրարա  
Ե՛վ իրարից տարրեր։  
Չե՞ք նկատել արդյոք, որ աշխարհում  
Տգեղ մանո՞ւկ, երբե՞ք,  
Աշխաղումքա բոլոր մանուկներն են սիրուն...  
...Ու հառթափառութիւն ենք աշդին երուան,  
Որ վերստին լսեմ զանդագիւղը նրանց,  
Տեսնեմ ինքնամոռաց — տարվաժ խաղը նրանց,  
Տեսնեմ...  
Թե ինչպես են կավից տնակ շինում,  
Գոտի շինում խոսից  
Տեսնեմ,  
Թե ինչպես են իրենք իրենց զինում  
Լաց լինելով ստից  
Լսեմ,  
Թե ոնց նրանք բլրում են անվերց

Ու մոր հոգին հանում.  
— «Իսկ այս ի՞նչ է, մա՛մա»...  
Լսե՞մ,  
Թե հալվելով՝  
Ի՞նչ սիրով է նրանց մայրը պատամիանում,  
Մերթ էլ.  
— «Բախվական է, ոք Ակ՛ Ծանիք Յամբառ»  
Տեսնե՞մ,  
Թե ինչպես են մեկը մեկի առաջ  
Իրենց հայրիկներով հոգագործանում.  
Սրանք ինժեներէ,  
Կրանք օդաչու է,  
Որ... Կորկորից անդամ անց է կենամ...

Այստեղ ես հասկանում,  
Զգում ու հասկանում ամբողջ սրտով,  
Որ դու ի՞նչ էլ լինես՝  
Ճարտարապե՞տ,  
Վարպե՞տ,  
Միլիցիոնե՞ր,—  
Դու ամենից առաջ  
Այս ամենից առաջ և կամ չետո՞  
Պարտավոր ես կյանքում... «Հայրիկ» լինել...  
Եվ իսենթ մի ցանկություն  
Լափիկում է քո սիրտն ու հոգին  
Որ քե՞զ,  
Եվ քե՞զ,  
Եվ քե՞զ  
«Հայրիկ» կոչի ձայնը ինչ-որ մեկի,

Ինչո՞ւ ինչ-որ մեկի։  
Ո՞չ թե ինչ-որ մեկի,  
Այլ, սիրելի՞ս, ձայնը մեռ մանկիկի...

## VIII

Մենք ինչքա՞ն ենք տիրել՝ երազելով,  
ես աղջիկ եմ ուզում,  
իսկ դու՝ տղա:  
Ես աղջիկ եմ ուզում՝ քո՛ մազերով,  
Դու տղա ես ուզում՝ ի՞նձ պես թխաշ...

Ես աղջիկ եմ ուզում,  
Որ քեզ նման լինի.—  
Քեզ պես՝ կախարդանքով իրեն զինի.  
Քո հասակի նման՝ մանրանկար հասակ,  
ինչպես քո գեմքի շուրջ՝ լուսապսակ.  
Լինի քեզ պես նազո՞ւկ,  
Քեզ պես նազո՞ւն,  
Եվ քեզ նման զգաստ,  
Եվ երազուն.  
Ու երբ ժպտա քեզ պես՝  
Բացվի արշալույսը.  
Ու երբ նայի քեզ պես՝  
Վառվի մարած հույսը.  
Երբ ծիծաղի քեզ պես՝  
Զգաս —  
Կյանքին է զնզում.  
Ու երբ սիրի —  
Զգաս՝  
Արժե՛ ապրել կյանքում:  
Ամե՛ն ինչով նման,  
Թուլությունով անգամ,  
Քե՛զ պես,  
Միայն... քեզ պես գառնություննե՞ր չզգա...

Իսկ դու «չէ՛» ես ասում.  
Դու տղա ես ուզում:

Թո՛ղ որ իր հոր նման տղեղ լինի. ոչի՞նչ,  
Բայց թող աստղով լինի՝ իր հոր նման:  
Մոր հոգու հետ, ոչի՞նչ, իր հոր նման  
Թող նա մեկ-մեկ խաղա,  
Չարություններ անի,  
Բայց թող՝ իր հոր նման՝ երբե՛ք երես չառնի:  
Թո՛ղ որ՝ իր հոր նման՝ շա՞տ բան տեսնի կյանքում,  
Բայց թող՝ իր հոր նման՝ մի՛շտ էլ մնա կանգան.  
Թո՛ղ նա իր հոր նման՝ մեղկությունը ատի,  
Փոքրոգություն, քծնանք իր հո՛ր նման դատի.  
Իր հոր նման՝ երբեք չշլանա փառքից,  
Թող շլանա, լավ է, աղջիկների քայլքից.  
Իր հոր նման՝ թող որ հափշշտակվի՛, տարվի՛,  
Բայց, երբ ժամը հասնի, հո՛ր պես սիրահարվի՛,  
Հո՛ր պես կարողանա ատել, սիրել,  
Կարողանա քե՛զ պես բախտի տիրել...

Ես ինչպե՞ս եմ ուզում  
Ինձ հա՛յր տեսնել,  
Դու ինչպե՞ս ես ուզում  
Քեզ մա՛յր տեսնել...

## IX

Բայց դու արդեն... արդեն մայր ես վաղուց.  
Բակում քո տղան է հիմա խաղում...

...Ես ո՛չ փոքրոգի եմ,  
Ո՛չ տգետ եմ,  
Սակայն արի և տես, որ խանդոտ եմ,

Ես խանդոտ եմ, ինչպես գարնան գետը՝  
Ամեն զրի հանդեպ,  
Ինչպես արեգակից խանձված խոտը՝  
Ամեն ըրի հանդեպ:

Ի՞նչ փույթ, ին խանդելու շունեմ տեսիք,  
 Բայց իրավունք...  
 Չէ՞ որ ամբողջովին քոնն եմ:  
 Քո՞նն եմ,  
 Բայց ո՞չ իբրև կրծքիդ թառած ծաղիկ.  
 Քո՞նն եմ,  
 Սակայն իբրև ո՞չ պաշարված քաղաք,  
 Ա՛չ էլ հարձակումով մեկեն ցահված քաղաք:  
 Քոնն եմ ամբողջովին՝  
 Այն տան նման,  
 Ուր դու և՛ տանտեր ես այդ տան համար,  
 Ե՛վ տան միա՞կ-միա՞կ բնակիչը:  
 Չէ՞ որ ես այլ բան չեմ,  
 Եաւսկ սիրո ճիշ եմ՝  
 Խոսուն կասկածներից զուռ միարատման համար:  
 Քոնն եմ իմ մանցալուկ,  
 Իմ ներկայուկ,  
 Երազներուկ բոլոր,  
 Ապագայուկ.  
 Քոնն եմ ամբողջովին,  
 Իմ սիրելիս:  
 Սա իրավունք մի՞թե ինձ չի տալիս  
 Գեթ այսքանից հետո պահանջելու,  
 Որ իրավունք շոնես ինձ տանջելու,  
 Որ դու պիտի լինես ի՞մը՝ անվերապահ,  
 Ի՞մը՝ ստեղ-գլուխ,  
 Ի՞մը՝ ամբողջովին.  
Որ քո գորովագին սիրո ծովին  
 Ես տեր լինեմ,  
 Ինչպես ծովի հին աստվածը՝  
 Ինքը Պոսեյդոնը.  
 Որ դու ամբողջովին ի՞մը լինես այնպիս.  
 Ինչպես ես մեմ քոնը.  
 Որ մի՛ կաթիլ անդամ դու շքես,  
 Ել չեմ ասում՝ պիրե՞ն...

Ել չեմ ասում՝ պիրե՞ն..  
 Բայց ես գիտեմ, թե դու ո՞նց ես երկրպագում,  
 Ո՞նց ես պաշտում... նրան,  
 Որ կոշում է քեզ «մայր»:  
 Ու ես, որ ո՞չ կույր եմ,  
 Ի՞ւ էլ հիմար,  
 Միշտ մի հարցից առաջ աշք եմ փակում.—  
 Ո՞վ է առաջինը քո մեծ հոգում.  
 Ե՞ս եմ արդյոք, թե նա,  
 Ու վա՞յ թե նա...  
 Եվ ի՞նչ էլ որ լինի՝  
 Ես չե՞մ խանդում նրան,  
 Ա՛խ, չէ՞՝ ես լոկ քեզ եմ որպուդ համար խանդում.  
 Չէ՞ որ նա ըսկ քոնն է և... իմը չէ:

Ու ես ո՞նց կուզեի,  
 Ո՞նց կուզեիր և դու,  
 Որ նա լիներ ի՞մը,  
 Որ ինձ «հայրիկ» կանչեր,  
 «Հայրիկ» այնպե՞ս կոշեր,  
 Այնպե՞ս գոչեր,  
 Որ աշխա՞րհը լսեր հռո անունը

Բայց-նա քոնն է միայն և իմը չէ:  
 Ցավն էլ այստեղ է, որ... խորանում է...

## X

Հո ասեղ չէ սերը, որ կորցընես,  
 Իսկ թե ասեղ է նաև կթաքցընե՞ն  
 Ինչ-որ բարձիկի մեջ կամ տոպրակում:  
 Եթե ասեղ է նաև  
 Աչք է ծակում...

Դե՛մ, ո՞ւմ լավ հայտնի չէ մեր խսկ թուլուիլունը.  
Մենք բոլորու չէ մի պիշ փսփսութ ենք սիրում:  
Խսկ գեղեցիկ սեռի դրությունը  
Շա՛տ է նախանձելի այս հարցերում:  
Ոմանց համար արդեն դա մի թուլություն է,  
Ինչպես ջուր խմելը, հաց ուտելը...  
Պատկերացրեք հիմա զուք մեր դրությունը,  
Պարզ է. հայտնի դարձավ և մեր սերը:  
Որիշները դարձան կիսով նրա տերը.  
Ե՛վ այս, և՛ այս կողմից տնտըղեցին նրան,  
Մերթ թաղեցին նրան,  
Մերթ պեղեցին նրան:  
Ուրիշ խոսքով ասած՝  
Նա մի դրոշ դարձավ,  
Որ ո՞չ թե ձեռքից-ձեռք—բերնից-բերա՞ն անցավ...

Զէ՛, ասե՞ղ չէ սերը, որ թաքցընես,  
Խսկ թե ասեղ է նա՝  
Աշք է ծակում.  
Խսկ թե ասեղ է նա,  
Հենց թաքցընես՝  
Քո ցանկությանն ընդդեմ կհազցընես  
Պոլին երկա՞ր մի թել,  
Որ երեա՛ խսկույն:  
Մենք ասեղը թելել բնավ շենք էլ փորձելէ  
Բայց ի՞նչ...

Դուրս է գալիս՝  
Հիմար բան ենք գործել.  
Կարելի է, ինչ խոսք, սիրահարվել  
Միայն... հարկավոր էր խելոք վարվել,  
Սուսի՞կ-փուսի՞կ այնպես...

Աստված վկա, այսպես  
Զէ՞ որ կարելի է անգամ խելագարվե՞լ:  
Ախար իմ ի՞նչ գործն է՝ մարդիկ ո՞նց են անում:  
Իմ ի՞նչ գործն է.

Մարդիկ շա՛տ բաներ են անում,  
Հազար ու մի տհսակ վա՛տ բաներ են անում:  
Ես զործ ունեմ մարդկա՞նց,  
Ո՛չ թե ամեն կարգի նրանց արարքի հետ.  
Ես զործ ունեմ սիրո՞ւ,  
Ո՛չ թե թաքոն կապի հրայրքի հետ.  
Միայն աղբյուրի՞ հետ հավերժախոս ու չինչ,  
Եվ ո՞չ հոսանքի հետ հեղեղային,  
Եվ ո՞չ երրեք մոր հետ այն տղայի,  
Որին շար ընկերն է խաղում դաղում.  
— «Է՞յ, բի՛ճ...»

## X1

Ու մեր սերը բացվեց,  
Թերնե-թերան անցավ.  
Օրվա հերոս դարձավ  
Ու նյութ օրակարգի:

...Ու ես էլ իմ կարգին  
Խոսք տվեցի, անգի՞ն,  
Այսուհետև էլ քեզ... քե՛զ... չսիրե՞լ,  
Իշխել հոգուս վրա,  
Սրտիս տիրել...

Ա՛յս, սրտի տեղ եթե լիներ լեզո՞ւն,  
Որ խոստացավ հանդիսաւ քեզ չսիրելւ:  
Հասկանո՞ւմ ես, թե ես ինչ եմ ասում,  
Հասկանո՞ւմ ես արդյոք, քե՛զ... չսիրե՞ւ...

Գուցե գիտակցաբար ես ստեցի՞,  
Գլուխս ազատեցի՞:  
Զէ՛, պարզապես  
Կարծես ընդունված է ժողովներում  
Ուրիշ տեսակ խոսել,  
Ինչպես ընդունված է, ժողովներում  
Նույնն արեցի ես է...

Բայց և այնպես Գիմա ա'յլ լեզվով են խռառա  
 Այս տողերը:  
 Բարեկամներ,  
 Անգի՞ն,  
 Այսօր ևս հուզվել ու սրտնեղել եմ  
 Բարեկամներ,  
 Անգի՞ն,  
 Զէ՞ որ խոսք մամակել չափել,  
 Զէ՞ որ խոստացել եմ միշտել հոգուս պըս,  
 Սրտիս տիրել...

Խոստացել եմ:

Սակայն

Եթե բան դուրս չգա՞...  
 Թո՞ղ որ ասեն, թե սա  
 Սովորական մարդուն բնա՛վ սազական չէ,  
 Թո՞ղ որ ասեն, անգի՞ն,  
 Որ մեր սերը կյանքում բնա՛վ տիպական չէ,  
 Թո՞ղ որ այդպես:

Սակայն

Զէ՞ որ կյանքում նա կա,  
 Զէ՞ որ արժան գտան նրան նիստի տանել,  
 Քննարկումից հետո կեսուրչ ու կեօկատակ  
 Զէ՞ որ խորհուրդ տվին.  
 — «Կարելի՞՝ է անել...»:

Ո՞ւ Միայն ո՞չ այնպես, ինչպես Գարենար գտան,  
 Ես գործ ունեմ մարդկա՞նց,  
 Ո՞ւ թե ամեն կարգի նրանց խորհըրդի հետ.  
 Ո՞ւ թե թաքուն կապի,  
 Ես գործ ունեմ միայն սիրո ու սրտի՞ հետ...

XII

Հիմա դու տեսնում ես, իմ սիրելի՞,  
 Թե մեզ ո՞ւր հասցրուց քո ուշացած սերը,

Քո ուշացա՞ծ սերը,  
 Դու չուշացա՞ծ իմ սեր:

Դատավիետում են քեզ  
 Ու խստորեն դատում  
 Նրա՞ համար, որ դու  
 «Ընտանիք ես քանդում»:  
 Բախտի ի՞նչ չար կատակ  
 Եվ ի՞նչ ծաղր է հիմար,  
 Դո՞ւ, որ հենց ծնվել ես ընտանիքի համար,  
 Սուրբ օջախի՞,

Սիրո քո տանիքի՞ համար,  
 «Ընտանիք ես քանդում»...  
 Եվ դու պարտավոր ես փրկե՞լ մի ընտանիք,  
 Որ շա՞տ վաղոց արդեն կործանվել է ինքը.  
 Հանուն կործանվածի կործանումի մատնել  
 Ուրիշ մի ընտանիք:

Ո՞ւր է այստեղ խիղճը,  
 Դատողությունն ուր է,  
 Ո՞ւր է առողջ միտքը.  
 Հանուն փլված մի տան՝  
 Մեկ այլ տանիք քանդել,  
 Եվ ինչպիսի՞ տանիք...

Եվ մի՞թե քեզ դատող,  
 Դատավիետող մարդիկ չեն իմանում,  
 Որ դու... հեղո՞ւկ չես դու,  
 Որ քո ձեզ փոխես այն ամանում,  
 Որտեղ որ քեզ կածեն...  
 Մի՞թե մինչև հիմա ոմանք չեն հասկացել,  
 Դու կենդանի՞ մարդ ես,  
Ամենամա՞ս մարդու,  
 Սիրո՞ղ մարդը,  
 Քեզ շի կարող ձեւ տալ ամեն կուժ ու կուլա,  
 Եվ որ շորստառանի «մարդ» կոշվածը կյանքում

Ծա՛տ ավելի բարդ է,

Քան թե հազարատառ, թեկուզ սրբագործված, մի ֆորմուլա...

Եվ դու ինչպե՞ս հիմա բերան իսկ շբանաս,  
ինչպե՞ս դու նրանց դեմ շըմբոստանաս,  
եթե շա՞տ լավ գիտես.

Թոլո՞ր օրենքները նրա՛ համար են լոկ,  
Որ պաշտպանեն կյանքում մարդկայի՛նը,  
Մարդո՞ւն,

Եվ որ բոլոր տեսակ օրենքներից բացի  
Կա մի օրենք կըս—և շա՞տ խելոք.

Թոլոր օրենքների ո՞չ թե տառն են կարգում,  
Այլ էությո՞ւնը լոկ...

Եվ դու ինչպե՞ս հիմա բերան իսկ շբանաս,  
ինչպե՞ս դու նրանց դեմ շըմբոստանաս,

Ինչպե՞ս շասես, որ քեզ

Պետք է սուրբ ընտանի՞ք,

Բայց ո՞չ ընտանիքի ծաղրանկար,

Պետք է օջա՛խ մաքուր,

Սիրո գողտրիկ տանի՞ք,

Ուր չի կարող լինել ոչ մի կարիք  
Խաղալ «լավ ընտանիք».

Մի հա՛րկ,

Ուր հա՛րկ չկա

Խաղալ, թե «սրա պես լավ հարկ չկա՞».

Մի հա՛րկ,

Ուր իսկապես չկա կեղտի նշույլ,

Եվ ո՞չ երբեք մի հարկ,

Ուտեղ մութ անկյուն են կեղտը քշում՝

Հանուն ըն-տա-նե-կա՞ն սուրբ մաք-րու-թյա՞ն...

Ա՛խ, չէ?.

Քո մեծ սրտով

Դու սովոր չես նման մի փոքրության...

Ու ցավում է հիմա մեր վիրավոր հողին,

Նա ցավում է հիմա՝ ատամի՞ պես:

136

Մենք ե՛ երջանիկ ենք,

Ե՞վ պատըժված հիմա,

Դու նվայի՛ նմ ան,

Իսկ ես՝ Աղամի՞ պես:

Ա՛խ, ցավում է հոգիդ նրա՛ համար,

Որ աստըծո գործած հին սխալից հետո,

Եվ քանի՞ զար հետո,

Այս անաստված մարդիկ նաև հիմա

Մեր նկատմամբ, կյանքըն, նույն սխալն են գործում,

Մեզ պատժում են... գտած երշանկությա՞ն համար:

Թո՞ղ որ դրախտ պետք չէ.

Մենք մեր ձեռքերով ենք այդ ստեղծել փորձում:

Բայց դե ինչի՞ համար,

Ախար ինչի՞ համար

Պնդել, որ դու ընդմիշտ նույն դժոխքո՞ւմ մնաս:

Բայց դե ինչի՞ համար,

Ախար ինչի՞ համար

Մի նոր զժոխք սարքել և՛ ինձ, և՛ քեզ համար,

Նույնպես վարվել նաև քո մանկան հոր՝

Մեզանից ոչ պակաս դժբախտի հետ...

Ա՛խ, ի՞նչ հեշտ է

Խաղալ մարդկանց խեղճ բախտի հետ...

### III

Ես լա՛վ գիտեմ.

Այստեղ հերոսություն է պետք,

Հերոսություն է պետք՝

Ինչպես երեկ կովում:

Փոքրոգություն կյանքում ես չեմ արել երբեք.

Մահվան հանդեպ վախից չեմ կորանում-կեռվում:

Ճանաշում եմ և քե՞զ.

Մենք հեռու չենք հիմա  
 Հերսուական քայլից: Բոլորովին:  
 Իսքը ջոյային ես անհունորեն նման,  
 Իսկ ես շատ եմ սիրում Մատրոսովին:  
 Մակայն այստեղ մահով բա՞ն չես շահի,  
 Իզո՞ւր բան է հիմա դիմել մահի:  
 Նա չի կարող այստեղ ցուց տալ մեզ օգնություն:  
 Երեկ՝ կովում մահը հերոսություն էր մեծ,  
 Այսօր՝ աններելի փոքրոգություն:  
 Երեկ այնտեղ մահով շահում էիր դու կյանք,  
 Մահը նոր կյանք դարձնում,  
 Այսօր այստեղ մահով,  
 Թու մի՛ հատիկ մահով,  
 Երեք կյանք ես կորցնում.—  
 Երկու՝ ամբողջովին, ու երկու՝ կես.  
 Փոքրիկ որդիդ՝ կիսո՞վ,  
 Նրա հայրը՝ կիսո՞վ,  
 Ամբողջովին՝ դու ինձ,  
 Ու ես էլ՝ քեզ...

Իսկ թե փոթորիկ է սա մի բաժակ զրո՞ւմ:  
 Թո՞ղ որ այդպես,  
 Մակայն նա կյա՞նք է կործանում:

Իսկ թե մի հարց է սա,  
 Որ փակ նիստից պիտի լայն ասպարեզ քաշվի՞։  
 Իսկ թե մի հարց է սա,  
 Որի մասին պիտի ամբո՞ղջ ձայնով խոսվի:  
 Խոսվի բա՞րձը և բա՞ց,  
 Եվ ո՞չ լոկ մերպեսի,  
 Այլև բոլո՞ր նրանց,  
 Բոլոր նրանց մասին,  
 Ովքեր կես լրջորեն ու կես կատակ  
 Վաղը մեր նմանին խորհուրդ կտան.  
 — «Կարելի՞՝ է անշուշտ,  
 Մարդը մարդ է, քար չէ...»:

Չէ՛, նման խորհուրդը մեզ համար չէ:  
 Չէ՛, նման խորհուրդը մեզ հարմար չէ,  
 Մեր աշխարհին նման ու հարմար չէ:  
 Թեկուզ նրա՝ համար մեզ հարմար չէ,  
 Որ մարդն, այս՛, մարդ է, մարդը քար չէ:  
 Թեկուզ նրա՝ համար մեզ հարմար չէ,  
 Մեր աշխարհին նման ու հարմար չէ,  
 Որ նա մեր աշխարհն է,  
 Որ նա Սպարտա՛ չէ,  
 Որտեղ դատում էին ու խիստ պատճում գողին  
 Ո՞չ հափշտակության,  
 Ո՞չ էլ գողության մեջ խառնվելու համար,  
 Այլ լոկ անբավարար ճարագլիությա՞ն՝  
 Թոնըվելո՞ւ համար,  
 Իսկ մենք չէ՞ որ զեմ ենք ամե՞ն տարողության,  
 Ամե՞ն շախսի գողի,  
 Եվ առավել երս՝ լա՞վ գողության,  
 Եվ առավել երս, ճարայի՛կ գողի...

## XIV

Իսկ ի՞նչ անել հիմա:  
 Անուղղելի-հիմար  
 Սիրտըս ահա նորից  
 Կուրծքըս այնպե՞ս թակում,  
 Այնպե՞ս է տկտկում,  
 Կարծես թե Մորգեի այբուբենով  
 Ամենքին է դիմում մի զուապ քենով,  
 Ամենքին է տալիս իր նույն հարցը հիմար,  
 — «Իսկ ի՞նչ անել հիմա»...

Սիրտըս մոլեգնորեն կուրծքս է ծեծում,  
 Ինչ-որ մեկն էլ  
 դուռն է ծեծում հուշիկ:  
 Հարբածի պես ելնում,


Դնում դուռն եմ բացում:  
Դուռն եմ բացում —  
Եվ ի՞նչ.  
Դու ես, իմ անզի՞նըս,  
Դու իմ տունն ես եկել,  
Եվ այնպես ես եկել,  
Որ որոշված ժամին վեր չկենաս  
Ու մորթվողի նման դուրս չգնաս,—  
Որ չգնա՞ս,  
Մնա՞ս,  
Ընդմի՛շտ մնաս...»

Ու ես լուս նայում եմ քո աշքերին,  
Սիրո՞վ, ցավո՞վ լեցուն,  
Տագնապներո՞վ լեցուն  
Այս աշքերին:

Մի՛ տագնապիր, ոչի՞նչ, առանձին բան չկա' .  
Թո՞ղ որ քո մանկիկը ինձ անվանի «քեռի»,  
Բայց նա «քույրի՛կ» կասի վաղը մեր աղջրկա՞ն...

1952—53  
Մոսկվա

## ԵՐԳ. ԵՐԳՈՒՅ



## Ը Լ Ռ Ի Խ Ա

...Խնդրեցի զնա՝ և ոչ գտի,  
Կոշեցի զնա՝ և ոչ ես ինձ զձայն...  
Համեղ պատիւալ է ամեն ըս...  
• ԵՄՐԴ ԵՐԳՈՒՅՆ

### 1. Գարունն այս անգամ ձմռանը եկավ.

Այն էլ հյուսիսում.  
Ես բոլորովի՞ն չէի սպասում,  
Զմեռն այս վկա:  
Քեզ շփընտրեցի՛, լըորոնեցի՛  
Եվ... գտա հանկա՞րծ,  
Ինչպես դու մի օր անունդ ես գտել,  
Օ Սուլամի՞թա:

### 2. Օ Սուլամի...

Սուլամի՞...  
Օ Սուլամի՞թա.  
Քո բիբլիական անունն եմ սիրում,  
Սիրում եմ, այն էլ բիբլիակա՞ն սիրով,  
Որ երբ իր նեղիկ բառե շապիկն է աշխատում հազնել,  
Թվում է հիմա հեթանոսակա՞ն՝  
Նույնիսկ անպարկե՞շտ,  
Բայց... նրա՞ աշքում,  
Ում համար սիրո սրբությունն արդեն  
Դարձել է հազուատ տոնակա՞ն օրվա,  
Մինչ նա իմ միա՞կ շապիկն է. մաե՞...

### 3. Եվ ես սիրում եմ քեզ ամբողջովի՞ն:

Իսկ ի՞նչ ես, ի՞նչ ես դու ամբողջովին,  
Եթե ոչ մարմին,  
Ու նաև արյուն:  
Իսկ մնացածը՝ բառեր են միայն,

Պա՛ղ-արհեստակա՞ն ու ճապա՛ղ լեզվի  
Մի թարգմանությո՞ւն:  
Իսկ ես խոսում եմ մայրենի՛ լեզվով՝  
Աղամի՛ նման  
Ու եկայի՛ հետ:

Օ Սուլամի՛թա, օ Սուլամի՛թա.  
Մենք, կարծեմ, արդեն խնձորը կերանք,  
Քանզի նա, ով որ մտքով է տրվում,  
Տրվում է, անշուշտ, մարմնից առավել...  
Ո՞ւր է դրախտը,  
Եթե ոչ՝ միայն քո թարթիշների հովանու ներքո.  
Քո

Դեռ փակ  
Ճոցում,  
որի դոները,  
Արդեն թակում են  
Եվ երկո՞ւ կողմից,  
Քո սիրտը՝ ներսից,  
Իմ ձեռքը՝ դրսից...

5. Օ Սուլամի՛թա, բա՛ց արա դուռը,  
Ես քեզ չե՛մ փնտրիլ, քեզ չե՛մ որոնել,  
Չե՛մ էլ հարցըրել ես պահակներից  
Քո  
Իմ չունեցած-չիմացած հասցեն,  
Ես ճամփորդի պես,  
Ու մոլորվածի,  
Հասել եմ դուռը,  
Որ և բախում է իմ ձեռքը դրսից,  
Քո սիրտը՝ ներսից,  
Ընդունիր հյուրիդ,  
Որ կդառնա տե՛ր,  
Բայց նաև՝ ծառա՛...

6. Եվ թո՛ւյլ տուր խոսել.  
Գրկելուց առաջ,  
Փարվելուց առաջ,  
Թույլ տուր քեզ նայել  
Մի փոքր հեռվից:  
Եվ թո՛ւյլ տուր կրկնել՝  
Համբույրից առաջ,  
Համբույրի նման  
Կրկնել անունը.  
— Օ Սո՛վ...  
՝ Սուլամի՛...  
Օ Սուլամի՛թա...

### Գ Լ Ո Ւ Խ Բ

...Գեղեցիկ ես իբրև զերուսաղեմ...  
«ԵՐԳ ԵՐԳԱՅԻ»

1. Օ Սուլամի՛թա.  
Հապա շո՛ւտ արի, որ ես քեզ տեսնեմ:
2. Գեղեցիկ ես դու, ինչպես բոլորը,  
Որոնց սիրում են,  
Եվ ո՛չ ավելի ու ո՛չ էլ պակաս:  
Ի՞նչդ է գեղեցիկ՝ ուրի՛շը կասի,  
Մինչդեռ ինձ համար դու գեղեցիկ ես,  
Ինչպես բոլորը, որոնց սիրում են:  
Եվ կախարդիլ ես, ինչպես բոլորը,  
Որոնց չեն տիրել:  
Ե՛վ անսովոր ես,  
Քանի որ նոր ես,  
Ե՛վ սովորական՝ քանի որ դու էլ  
Երբեք չես կարող չսիրած մնալ:

3. Դու սև ես՝ ինչպես քո ժողովրդի դարավոր բախտը,  
Եվ սեռթյան մեջ՝ այնքան լուսավոր,  
Որքան լուսավոր անուն է տվել քո ժողովուրդը:  
Սև են աշքերդ՝ իմ աշքերի պես,  
Եվ գիտեն նայել այնպես տրտմորեն,  
Որքան տրտում է սիրտըս ա'յն պահին,  
Երբ ինձ թվում է, թե չե՞ս սիրելու:

4. Սև են վարսերդդ, ինչքան ճերմակ է  
Դեռ փակ կուրծքը քո,  
Ավելի՛ ճերմակ  
Միշտ անհալ ձյունից իմ Արարատի,  
Որ փրկեց նոյին,  
Ուրեմն՝ և քե՛զ,  
Ի՞նձ ու... մեր սե՛րը.  
Ավելի՛ ճերմակ, քանի որ նրան  
Իմ աշքերի պես և ո՛չ մի սև աշք  
Դեռ չի ստվերել անգամ հայացքո՞վ:

5. Մի՛ լինիր այսքան... այսքան սպիտակ.  
Բացվի՛ր հայացքիս և աշքերիս դեմ,  
Նաև մատների՛ս,  
Ցուրաքանչյուրը՝ միս դարձած մի շող:  
Արևոռությո՛ւն ընդունիր մի քիշ  
Իմ հայացքի՛ տակ,  
Նաև մատների՛ս:

6. Քո կրծքի նման ճերմակ են նաև քո ատամները:  
Եթե պարկեշտ ես՝  
Մի՛ ժպտա երբեք...

7. 0 Սուլամի՛թա.  
Այդպես ամաշկու շուռ մի՛ եկ ինձնից,  
Բայց շիկնի՛ր, շիկնի՛ր,  
Որ իմ նեղ խցում  
Արևածագի պատրանքն զգամ ես:

Եիկնի՛ր ու թո՛ւլլ տուր,  
Որ հետքդ խոսեմ՝  
Փարվելուց առաջ,  
Փարվելուց առաջ՝  
Մի փոքը հեռվից  
Քեզ նայեմ այնպես,  
Կարծես առաջի՛ն անգամն եմ տեսնում:

8. Ա՛խ, այդ քո շիկնած այտերը մաքուր՝  
Քո թուխ մազերով լուսապսակված:  
Եվ քո շուրթե՛րը...  
Ինչո՞ւ է թվում,  
Թե քո այտերին — առաջի՛ն անգամ —  
Հպվելը նույնքան դժվար է հիմա,  
Որքան որ հնում հավատափոխման — դարձի բերումը,  
Եվ քեզ համրուրելն — առաջի՛ն անգամ —  
Նո՞ւյնն է, ինչ մի նոր տաճա՞ր ավերել,  
Թե՞ հիմնադրել մի եկեղեցի...:

9. Քո պարանոցը՝  
Ազնիվ մարմարե մի վե՛հ աշտարակ,  
Որտեղից—դարե՛ր—մարդիկ են կախվել՝  
Ինձ նմաննե՛րը...  
Նման երշանիկ կախաղանի դեմ  
Ես չե՛մ բողոքում:

10. 0 Սուլամի՛թա.  
Դու ամաշելուց շրջվում ես ինձնից:  
Ա՛հ, քո կոնքերը քնար են լարված:  
Դու չե՛մ կամենում, որ ամբողջ գիշեր  
Քնարը հնչի,  
Որ իմ մատները ողջ գիշերն ի լույս  
Սաղմոսնե՛ր երդեն.  
«0 Սո՛ւլ...  
Սուլամի՛ր...  
0 Սուլամի՛թա...»:

**11. Օ Սուլամի՞թա.**

Տեսնո՞ւմ ես, թե քեզ ինչպես եմ սիրում.

Առասպելական քո նախապապի՝

Սողոմոնի՛ պես:

Նրա արյունից մի՞թե մի կաթիլ

Հորձանք շի տալիս քո երակներում:

Որտեղի՞ց հապա

Նրա արյունը օտարի՛ս սրտում՝

Խմ սրտում, որ քեզ

Սիրում է այսպես՝

Աստվածաշնչյան ա՛յնտեսակ սիրով,

Որ երբ իր բառե շապիկն է հագնում,

Թվում է այսօր հեթանոսական՝

Նույնիսկ անպարկե՛շտ,

Բայց... նրա՛ աշքին,

Ում համար սիրո սրբությունն արդեն

Դարձել է հագուստ տոնակա՞ն օրվա:

Իսկ նա իմ միա՛կ շապիկն է. մսե՛:

**12. Ես քեզ սիրում եմ քո նախապապի՝**

Սողոմոնի՛ պես,

Որ մի արքա էր,

Մինչդեռ ես...

Գիտե՞ս,

Ես ինչ-որ շափով նո՞ւնպես արքա եմ:

Ո՞ւ նրա համար, որ ունեցել եմ

Հարճեր ու կանայք,

Ո՞ւ էլ նրանով, որ ես կարող եմ

Երգ երգոց թողնել:

Եթե ինձ համար թագուհի ես դու,

Ի՞նչ եմ ե՛ս հապա,

Ինչպե՞ս ի՞նձ կոչել, եթե ոչ արքա,—

Այլ կերպ շի՞ լինում.

Թագուհիները ե՞րբ են պատկանել մանկավիկների...

**Գ Լ Ո Ւ Խ Գ**

Մուծեք ինձ ի տուն գինոյ...

Վասնզի խանդակար եմ սիրով...

«ԵՐԳ ԵՐԳԱՅ»

**1. Երուսաղեմում երբեք չեղած աղջիկներ՝ խարտյաշ,**  
Դուստրե՛ր Հյուսիսի.

Ի՞նձ էլ սնուցեք կազդուրիշ գինով,  
Քանի որ սիրուց ես նվազում եմ:

**2. Ես նվազում եմ, իսկ կրծքիս ներքո  
Կախված է նաև ծանրաքար մի բեռ՝**

Սեփական սի՛րտըս:

Նա ծա՞նը է դարձել,

Եվ... ծանըը այնքա՞ն,

Որ հազիվ մի ցուլ իր մեջքին տանի:

Իսկ մինչև անգամ եթե ցուլ եմ ես,

Այդ բեռը գոնե մեջքի՛ս շեմ կրում,

Որ դյուրին լիներ.

Այդ ծանրությունը ներսումս է կախված:

Երուսաղեմում երբեք չեղած խարտյաշ՝ աղջիկներ,

Ի՞նձ էլ սնուցեք կազդուրիշ գինով,

Քանի որ — տեսե՛ք — ճկվում եմ արդեն

Սեփական սրտիս ծանրության ներքո:

**3. Երուսաղեմում երբեք չեղած խարտյաշ՝ աղջիկներ,**  
Դուստրե՛ր Հյուսիսի.

Երուսաղեմում երբեք չեղած

Երուսաղեմի դուստրը սկահեր

Ի՞նձ շի պատկանում:

Նա կա և չկա՝ ինչպես երկինքը,

Իմն է—իմը չէ՝ ինչպես որ ինքը...

**4. Ողջ գիշերն ի լույս իմ մահճակալին**  
Փնտրում եմ նրան, չեմ գտնում սակայն:

- Ողջ ցերեկն ի բուն իմ նեղ սենյակում  
Կանշում եմ նրան, և ձայն չի տալիս:  
Եվ գուրս եմ գալիս,  
Որ փողոցներո՞ւմ որոնեմ նրան:
5. Երուսաղեմում երբեք չեղած աղջիկնե՛ր խարտյաշ,  
Դուստրե՛ր Հյուսիսի.
- Երուսաղեմում երբեք չեղած  
Երուսաղեմի զստերն եմ փնտրում,  
Փնտրում եմ նրան ես փողոցներում,  
Փնտրում եմ նրան նաև ձեր դեմքին,  
Դժոնում եմ մի մա՛ս, մի նշո՛ւլ, մի շո՛ղ,  
Իսկ իրեն՝ բնա՛վ:
6. Երուսաղեմում երբեք չեղած խարտյաշ՝ աղջիկներ.  
Թե պատահարար հանդիպեք նրան՝  
Երուսաղեմի թխահեր զստեր,  
Ի՞նչ պիտի ասեք:
- Երդվեցնում եմ ձեզ. ասացեք նրան,  
Որ ես հիվանդ եմ կարեվեր սիրով:
7. Ասացեք նրան, որ սիրում եմ ես  
Նրա անծանոթ մորը սիրելի,  
Նրա դարավոր արյունն եմ հարգում,  
Ինչպես հարգում են հղիոթյունը:
8. Երդվեցնում եմ ձեզ. ասացեք նրան,  
Որ սերն իմ հին է ու վաղընջական՝  
Իր բազմադարյան  
Հրեական արյան  
Եվ նոր՝  
Նոր զարթնած իր սրտի՛ նման,—  
Հին ու նոր՝  
Ինչպես առավատն ինքը
9. Դուք լսո՞ւմ եք ինձ, խարտյաշ՝ աղջիկներ։  
Դուք զիտե՞ք արդյոք. թե ի՞նչ եմ ուզում,  
Որ ասեք նրան՝ այդ սեահերին։  
Երդվեցնում եմ ձեզ, ասացե՞ք նրան.  
Ուզում եմ լինի նա սերն իմ վերջի՛ն,  
Իսկ ես էլ՝ նրա առաջի՛ն սերը։
10. Երուսաղեմում երբեք չեղած աղջիկնե՛ր խարտյաշ.  
Թե իմ փոխարեն դուք պատահարար հանդիպեք նրան՝  
Երուսաղեմի մրահոն զստեր,  
Ասացեք, որ նա մի փակ այգի է,  
Այդու մեջտեղում՝ դռնփակ հնձան,  
Բուրող հնձանում՝ եռացող զինի,  
Իսկ դուք, բարիներ, սնուցում եք ինձ  
Ուրիշ մի զինով,  
Որպեսզի սիրո անհագ ծարավից  
Ես շնվաղեմ։
11. Երդվեցնում եմ ձեզ. ասացեք նաև,  
Որ եթե հանկարծ նա ինձ որոնի,  
Եթե իմ դուռը նա բախի հետո,  
Եվ նույնիսկ կանչի՛,  
Ինձ ձա՛յն տա սիրով՝  
Կլսի միայն  
Իր խզվող ձայնի արձագանքը թույլ.  
Կյանքի և սիրո եզերքին ընկած  
Խեցին կա՛,  
Սակայն...  
Անփոփոխ խեցու խեղճ բնակիշը  
Հափշտակված է օտար գագանից  
Եվ կամ թաղված է իր քարե բնում...
12. Երուսաղեմում երբեք չեղած աղջիկնե՛ր խարտյաշ.  
Թե հանկարծ տեսնեք Երուսաղեմի սեակրն զստեր,  
Ավելացըրեք,

Որ առայժմ ես ննջում եմ անուժ,  
Բայց դեռ արթուն է սիրտը նվազուն,  
Թող նա շտապի',  
Թե չէ՝ կուշանա՛,  
Թե չէ՝ կլսի  
Աշ թե իմ կանը,  
Այլ վերջին ճի՛լը...

## ԳԼՈՒԽ Դ

Աննակ նորա ընդ գլխով իմով, և աշ  
Նորա պատեստ զի՞ն...

«ԵՐԳ ԵՐԳՈՅՆ»

1. Եվ դու շուշացա՛ր.  
Դու շտապեցի՛ր,  
Իմ Սո՛ւլ...  
Սուլամի՛թա...  
Իմ Սուլամի՛թա...
  2. Իմ Սուլամի՛թա.  
Եկար վազեվազ'  
Եռամյա կայտառ զամբիկի նման,  
Եվ զամբիկի պես գեղեցիկ՝ եկա՛ր:
  3. Եկա՛ր... և իսկույն, իմ Սուլամի՛թա,  
Հազարամյակներն իմ ու քո միջն ասես ջնջվեցին...  
Ես այգի շունեմ,  
Որ հիմա քեզ պես դալար վազերից  
Կողերիդ համար մահիճ պատրսստեմ:  
Ես այգի շունեմ... և այգի՛ս չեկար:
- Մայթե՛ր կան հիմա  
Ու գորշ քաղաքնե՛ր,  
Շենքե՛ր քազմահարկ,

4. Նրանցից մեկում՝  
Սենյակ մի նեղիկ:  
Դու այնտե՛ղ եկար:  
Եկար փարվեցիր՝  
Քո ամբողջությա՛մբ:  
Մամուռն է այդպես քարերին փարվում:  
Եվ արշալույսի գույները՝ երկնին:  
Ու ես այդ պահին զգայուն էի՝  
Ինչպես քո մա՛շկը,  
Եվ մաքուր էի՝  
Ինձ վրա հառված հայացքի՛դ նման:
5. Եկար դու բացվեցի՛ր...  
Այդպես բացվում է մահճում երեխան,  
Մինում՝ ծաղիկը:  
Ու ես այդ պահին՝  
Քո անմեղության բույրերից արրշիռ՝  
Մոռացա իմ ողջ անցյալը հարուստ  
Ու երշանկացա իմ... աղքատությա՛մբ:
6. Ու տրվեցի՛ր դու  
Մնվելով նորից:  
Այդպես տրվում է հողն արմատներին,  
Իր հունին՝ ջուրը:  
Ու ես հասկացա, որ ես ո՛չ մի տեղ  
Այնքան չեմ զգում իմ գոյությունը,  
Որքան քո՛ գրկում:
7. Ես այլ բան չէի,  
Քան մի ապակի,  
Որ թափանցիկ է—լույսը շի բեկում:  
Եկար ու նրան ամալգամ դարձար,  
Եվ ինձ դարձըրիր դու մի հայելի,  
Որ անդրադարձավ սերդ երդիներանգ.
8. Իմ սերերն իրար և նման  
Եվ նման չէին,

Ինչպես աշխարհի մեծ քաղաքները  
Եկավ սերը բա  
Եվ ծննդավայլը դարձավ ինձ համար...

## 10. Իմ Սուզ...

Սուզամի՛...

Իմ Սուզամի՛թա:  
Գիշերը կարծես իր սկիզբն առավ  
Քո թուխ վարսերից  
Ու ծավալվելով՝  
Վերստին եկավ խառնըվեց նրանց.  
Երկինքը նորից  
Զբաղվեց աստղեր տեղաշարժելով,  
Բայց մենք չանանք ո՞չ այս, և ո՞չ այն.  
Քո գլխի տակ էր իմ ձախը դրված,  
Եվ քո մեջքն էի պատել իմ աշով.  
Չկա՛ր ժամանակ,  
Չկա՛ր նաև միտք.  
Կար շնչառությո՛ւն,  
Որ շատ էր նման  
Օվկիանոսների տուրեառության...

## ԳԼՈՒԽ Ե

Ես ճճշեմ, և սիրո իմ արրուն կայ...  
Դիր զիս իրքն զիմիք ի վերայ սրտի  
Հո... վասնզի ճօր և իրքն զման սէր...  
«ԵՐԳ ԵՐԳԱՅՑ»

Լաւ են երկու, քան զմի.. զի երէ  
Անշենցն երկուց՝ շնորհանեն  
զմիմանս, իսկ մին՝ զիա՞րդ շնորհու...

«ԺԲԱՆՎՈՂ»

## 11. Իմ Սուզ...

Սուզամի՛...

Իմ Սուզամի՛թա:  
Ես այլ բան չէի,  
Բան մի ապակի,

Որ թափանցիկ է—լույսը չի բեկում:  
Եկար ու գարենար նրան առավատմ,  
Եվ ինձ դարձըրիր դու մի հայելի,  
Ուր անդրադապ ուրբադ երգի երգներանդ:

Հիմա դու չկա՛ս,  
Ու ես վերըստին  
Ահա հայելուց ապակի դարձա՞  
Մի սովորակա՞ն—աննե՞րկ ապակի,  
Որ թափանցիկ է—լույսը չի բեկում...

## 2. Ինձ արդեն վաղո՞ւց այնպես է թվում, Թե ես ննջում եմ, իսկ սիրուս արթում է:

Եվ փնտրում եմ քեզ,  
Ստկայն չեմ գտնում,  
Ու կանչում եմ քեզ,  
Բայց ձայն չես տալիս.  
Տարածությունն է ընկած մեր միջն,  
Ինչպես մի սահմա՞ն,  
Որ բաժանում է  
Երկու թշնամի երկիր մեկմեկուց:  
Իսկ մենք — թշնամի՞...

## Գարունը նորից

Իր վտանգավոր քարոզն է կարդում,  
Կոշեր է անում ինչ-որ նոր սիրո,  
Եվ չի հասկանում,  
Որ վտանգավոր իր քարոզի գեմ  
Թե ես արթուն եմ՝ իմ սիրան է քնած:

Հեռու ես, հեռո՞ւ,  
Ու ձայն չես տա ինձ՝ որքան էլ ձայն տոմ:  
Գիտե՛մ, որ չկա՛ս,  
Ու չե՞մ գտնի քեզ՝ որքա՞ն էլ փնտրեմ:  
Բայց... մի՞թե սրտին բան կհամբացնեն:  
Նորից ակածման ելնում եմ մոռղաց,  
Սանրող հայացքով իմ շորջն եմ նայում:

**Մայթերը լի են ժպիտ-ծիծաղով,**  
**և ներողություն»-ով ու «համեցեք»-ով,**  
**«Յտեսություն»-ով ու «բարեւ-ներով.**  
**Բոլո՞րն այստեղ են—իրենց տեղերում,**  
**Միայն դո՞ւ շկաս—իմ սիրտն է թափուր...**

**Եվ նո՞ր հասկացա,**  
**Որ ես էլ, գիտե՞ս, ես էլ եմ նախանձ:**  
**Նախանձում եմ ես սիրող զույգերի՞ն,**  
**Երջում են գրկված, ձեռք-ձեռքի, կիպ-կից:**

**Մենակ եմ լոկ ե՞ս.**  
**Դո՞ւ շկաս, լոկ դո՞ւ**

**Չեռքիս ափերը հալվել են ուզում:**  
**Ո՞ւր է կրակը.**  
**Քո ձե՞ռքը շկա:**  
**Մատներս ուզում են լույս ու շող հոմցել.**  
**Ո՞ւր են ուսերըդ,**  
**Եվ լանջըդ ո՞ւր է:**

**7. Եվ ամենուրեք ծաղիկ են ծախում,**  
**Սիրա՛ծ ծաղիկըդ:**  
**Ես ո՞ւմ նվիրեմ:**

**8. Հեռախոսային խցերն ազատ են,**  
**Եվ խոսափողի կեռերը բոլոր**  
**Չորս կողմից ինձ են հարցական նայում:**  
**Ո՞ւմ զանգահարեմ, եթե դու շկաս:**

**9. Ու ես պատված եմ**  
**Մեր անցած օրվա հուշերով այնպես.**  
**Ինչպես Պոմպեյը՝ սառած լավայով:**

**10. Եվ ինձ վրա են լույս ու ստվերը՝**  
**Ա՛յժըմ և ընդմի՛շտ:**  
**Ա՛յժըմ և ընդմի՛շտ**

**Այդ քո ստվերից ու լույսից՝ արդեն**  
**Երտավոր եմ ես,**  
**Ինչպես հովազը:**

**11. Ա՛խ, երանի՛թե**  
**Իմ տառապանքը բռնագրավեն**  
**Եվ անմիջապես հանեն աճուրդի՝**  
**Ցանկացա՞ծ գնով:**  
**Եվ ո՞ւր էր հանկարծ ձերբակալեին**  
**Ու տային դատի**  
**Կարու հորջորջված այս հանցապարտին:**  
**Իսկ այս հոչե՞րը,**  
**Որ կենդանի են կենդանի մարդուց,**  
**Ինչո՞ւ չեն կարող**  
**Հանկարծ ենթարկվել ավտուղետի...**

**12. Իմ Սո՞ւ...**  
**Սուլամի՛թա.**  
**Իմ Սուլամի՛թա.**  
**Առանց քեզ ապրելն այնքան է հիմա**  
**Անհասկանալի ու տարօրինակ,**  
**Որքան սառույցի կամ ձյունի վրա**  
**Վառվող խարույկը:**  
**Ու ես ապրում եմ՝**  
**Այդպե՞ս վառվելով:**

**13. Դու կարծես շկաս**  
**Ու շես լինելու,**  
**Այլև ինձ համար մեռած ես կարծես:**  
**Սակայն ես գիտեմ,**  
**Որ դու անմահ ես,**  
**Ինչպես անմահ է կրակն աշխարհում.**  
**Այստեղ կհանգչի,**  
**Կվառվի այլուր:**  
**Եվ դու—ինձ համար—շե՞ս մեռնի երբեք,**  
**Ինչպես չի մեռել**

Քո նախա-նախա-նախամայրիկը,  
Որ քո սիրելի անունն էր կրում,  
իմ Սուլամի՛թա:

14. Եվ ուզում եմ ես փորձը մոռանալ,  
Ահավոր փորձը իմ ամբո՞ղջ կյանքի,  
Եվ ի հակառակ՝ անկասկա՞ծ ասել,  
Որ կմոռանա շունը տիրոջը,  
Մառն՝ իր ծաղկելը,  
Ցուլն՝ իր բառաշը,  
Եվ ժամապահն՝ իր նշանաբանը,  
Մակայն ո՞չ ես՝ քե՞զ,  
Իմ Սո՛ւ...  
Սուլամի՛թա...

1957 դեկտեմբեր, 1960 մայիս  
Մոսկվա

## ՆԱՇԱՅ ԵՐԳԱԿ



## I

Սս շատ էի նման այն հեքիաթի կատվին,  
Որ երբ մինչև անգամ շքանում է աշքից՝  
Վառ ժպիտը նրա դեռ մմում է երկա՞ր...

Ես գյուտարարն էի քո այն գեղեցկության,  
Որ մի գուցե չկար ինձնից առաջ  
Եվ Ալինի գուցե ինձնից հետո:

Ու նիրհեցի (գուցե և քնեցի<sup>o</sup>)  
Քո այդ գեղեցկության ստվերի տակ՝  
Բոլոր կասկածներս արձակուրդի ճամփած  
Եվ ծածկըված տաքուկ այն շգիտեմ ինչով,  
Որ կոչվում է... հավա՞տ, վստահությո՞ւն:

Արթնացել եմ արդեն:  
Օ, չէ՛, արթնացրի՞ր:  
Եվ իմ զրշի ծայրից, օր-ցերեկով,  
Մի պուտ մթին գիշեր հենց նոր կաթեց  
Այս միամիտ-անմեղ  
Մաքուր-ճերմակ թղթին,  
Մաքուր-ճերմակ՝  
Ինչպես ինքըդ երեկ...

## II

Ես գիտեի հաստա՞տ,  
Ես գիտեի վաղո՞ւց:  
Դա գիտեի նույնիսկ քո ծննդից առաջ

Ես սպասում էի և գիտեի՝  
Կզա՞ն:

Եվ գիտեի նաև, որ ինձ համար  
Քո գալստյան օրը պետք է լինի  
Սարսափելի, բայց և հանդիսավոր այնքան,  
Որքան հավատացյալ մարդու համար  
Ակնկալված օրը Ահեղ Դատաստանի:

Հավատացյալն եմ ես մշտացյելու սիրո,  
Եվ օրերի օրը հասա՞վ.  
— Եկա՞ր:

Գործած և չքալված իմ մեղքերի ծովից  
Ես դուրս եկա մաքուր՝ որպես որոր ճերմակ:

Եվ ինձ պետք չէր դրախտ կամ եղեմյան այգի,  
Թաղաքամերձ անտառ և այգիներ կային...

### III

Թաղաքամերձ անտառ և այգիներ կային,  
Որ ինձ համար դարձան արվեստանոց սիրո...

Թե մինչև իսկ կայիր դու ինձնից առաջ՝  
Ես քեզ միանգամայն նորից ստեղծեցի,  
Քեզ տվեցի նո՞ր կերպ՝  
Հստ իմ սիրո:

Ու երբ քաշված մի կողմ՝  
Քեզ նայեցի հեռվից,  
Սառած իմ աշքերը միանգամից դարձան  
Անշեղ հիացմունքի կրակարան երկու:

Ո՞վ չի սքանչանում իր իսկ ստեղծածով...

Իրոք. այդ ես էի, որ քեզ ստեղծեցի,  
Այդ ես էի, որ քեզ կյանք տվեցի կյանքում:  
Եվ վաղ թե ուշ պիտի դու ապրեիր  
Թու առանձի՞ն կյանքով:

Եվ ապրեցի՞ր:

Իսկ ես միայն մարդ եմ:  
Ես աստված չեմ քնավ,  
Որ բարկանամ հանկարծ և որոշեմ.  
— «Ե՞ս տվեցի քեզ կյանք,  
Ես էլ ետ եմ առնում»...

### IV

Աղջիկները կյանքում ուռենու են նման,  
Շա՞տ արագ են աճում:

Եվ աճեցի՞ր:

Ինչ ես էի զգում՝ հասցըրեցիր զգալ,  
Ինչ ես էի սիրում՝ դու սիրեցիր:

Ինձ հետ—կմոռանա՞մ—դու երջանիկ էիր  
Ավելի, քան դուցե

Դաղձը՝ առվի ափին,  
Ցուլի վզին՝ զանգը,  
Ճրճորի մեջ՝ աստղը:

— Քեզ ի՞նչ եղավ հանկարծ,  
Իմ բախտավո՞ր...

...Քո երգեցիկ քայլից  
Իմ ականջի համար  
Անդուլ դղրդացող այս քաղաքի  
Դժոխային աղմուկն ու ժխորն էր լուսմ:

— Նվագդ ինչո՞ւ լռեց,  
իմ երգեհո՞ն...

...Ոչ մի արդուկ կյանքում չի հարթեցնում կնճիռ:  
Թո ձեռքն—ի՞նքդ գիտես—շա՛տ դյուրին էր հարթում.  
— Զեռքըդ ինչո՞ւ չվեց՝  
Ամուն կեսի՞ն...

...Սերն իմ գեղեցիկ էր քնած մանկան նման,  
Որ ժպտում է նաև՝ երազի մեջ:

— Ինչո՞ւ արթնացըրիր՝  
Լացացնելո՞վ...

...Բայց նման չե՞մ հիմա ես այն մանկանն արդեն,  
Որ հարցնում է նաև իր իմացա՛ծ բանից:

— Չէ՞ որ ինքս գիտեմ.  
Աղջիկները կյանքում  
Ուոենու են նման—  
Աճում են շո՞ւտ այնպես:

Եվ աճեցի՛ր:

Հիմա  
Ի՞նչ կա զարմանալի,  
Որ քո ըստվերի տակ,  
Քո շվաքի ներքո  
Նաև ուղիշներն են հանգստանում...

## V

Ա՞խ, ես սիրո հարցում երեխա եմ տարեց...

Ու ծխամորճն է լոկ իմ ստընտուն բարի  
Եվ իմ աղախինը, որ չորս կողմից հիմա  
Շրջապատում է ինձ իր հոգատար ծխով:

Բայց չորս պատերի մեջ բանտված ծուխը հլու,  
Համբերությունն արդեն իսպառ հասած,  
Ապըստամբում իմ դեմ,  
Իմ աշքերն է ճանկում:

Ես ամե՞ն ինչ գուցե կյանքում լինեմ,  
Բայց բռնակա՞լ—  
Երբե՞ք,  
Ինչպես էլ նա կոչվի՝  
«Հա՞յր», «ղեկավա՞ր», «արքա՞»,—  
միւնո՞ւնն է:

Ու ես բաց եմ անում լուսամուտիս փեղկը՝  
Ազատություն շահած ծխին ուղեկցելով  
Ներողություն հայցող իմ հայացքով տիսուր...

Նո՞ւն հայացքով հիմա ուղեկցում եմ և քեզ,  
Ավելի ճիշտ՝  
Ինքըս նահանջում եմ դանդաղ,  
Միշտ դեպի քեզ՝ դեմքով,  
Մեշքով՝ դեպի այնտեղ,  
Որտեղ գու չես լինի,  
Բայց կլինես նաև՝  
Թեկուզկ այն բարի հիշողությամբ,  
Թե քեզ ազատեցի՝  
շապասելով  
Թո ապըստամբ խոսքին  
Եվ ակնարկին անգամ...

## VI

Բայց քո սե՞րը... գիտե՞ս.  
— Նա ինձ համար նույնն էր,  
Ինչ «Ամենա-ը՝ խորունկ հավատացյալ մեկի...»

Թե զգեցած էիր՝  
Մարիամ էիր մի նորու  
Թե մերկացած էիր՝  
Հելլեն էի մի հին...

Ասես մի շերմեռանդ կրակապաշտ՝  
Ես քո լույսին էի միշտ կարկառվում...

Քո գրկի մեջ ես ինձ զգում էի հնդիկ  
Ու հասկանում էի, թե ինչ է ռնիրվանա»...

Եթե մահմեգական ես լինեի,  
Եվ լինեի նույնիսկ սովթան մի ցոփ,  
Հարեմ չէի պահի՝  
Քո՛ պատճառով...

...Ու նստած եմ հիմա իմ նախընտիր ձևով՝  
Այնպես, ինչպես թաւդան՝  
Ժալապատիկ,  
Բայց խաշված եմ զգում՝  
Քրիստոսի՛ նման...

## VII

Եվ էջերն եմ շրջում մեր անկատար սիրու,  
Ինչպես հավատացյալն՝ Ավետարանն իր սուրբ:

Շա՞տ բան անգիր գիտեմ—որպես աղոթք  
Շա՞տ բան սուտ եմ գտնում—եղել եմ կույր:  
Շա՞տ բան հասկանում եմ ես նո՞ր միայն:  
Շա՞տ բանի մեջ հիմա նո՞ր իմաստ եմ դնում:

Միայն հավատս է, որ... չի՛ խորանում արդեն:

Իրենց գլուխներն են թերահավատ շարժում  
Մրսած զրոսայզու մերկ ծառերը նույնիսկ:

Ու ես սուն եմ դառնում՝  
Հասկանալով,

Որ ես՝  
Հաղատաքա՛ղց  
և հավատի ծարա՛վ,

Ես պատրաստ եմ հիմա  
Էժան—հարմար գնով  
Սե՞ր վաճառել նույնիսկ,  
Միայն թե տան հավատ.  
Միայն թե կասկածը չփռաւանա իմ մեջ,  
Ինչպես տաք երկաթը՝ շեղչի մեջ ձյան,  
Ինչպես պտուղի մեջ՝ իր իսկ ծնած ճիճուն.  
Միայն թե ալեքս չմտածեմ,

Որ շուրթերը նաև համբույրով են ստում  
(Խոսքով ստելն ասես քիչ էր, տե՞ր իմ աստված):

...Ինձ պես գունատ պատից՝  
Քո փոխարեն,  
հիմա,

Տիցիան կոշված ինչ-որ արդար մեկի կամքով,  
Իմ մեղքերն է լալիս Մագդաղինեն՝  
Քույրը:

Եվ հակառակ դիմիս ու հակառակ կամքիս,  
Միրտըս՝

անուղղելի՛ն,  
այդ հիմա՛րը,  
դարձյալ  
Հավաքել է ուզում տեղեկանքներ սիրո  
Եվ հավատի շեղյալ կամ սուտ վկայական:  
Հենց որ խոսում ես դու սիրելո՛ւ պես:

Ու ես խեղդելո՞ւ պես քո ձեռքերն եմ սեղմում...

Ես աշխարհ եմ եկել,  
Որ... ամենքի՞ն ներեմ,  
Քայց ո՛չ երբեք նրան, ում սիրում եմ:

— Ինձ նմաններն անգամ... սիրածին շե՞ն ներռում. 22

Քայց ես ի՞նչ եմ ասում: Ինչի՞ համար:  
Է՞ս, ասելով լիներ՝

Կարելի էր շուր տալ աշխարհն իրոք  
Եվ իտկույն էլ տեղը մի նոր աշխարհ շինել... 23

Ու ես, որ ինքնակամ դատապարտել եմ ինձ  
Մի՛ տնային կոշված՝ բանտարկության,  
Բողոքարկման մասին անգամ շխորհելով՝  
Լոկ ալիքն եմ փոխում ուաղիռ-ընդունիշի,  
Ինչպես ուրիշները իրենց սերն են փոխում:

Դրսում՝ սառնամանիք,  
Եվ ձմռան մեջ, հանկարծ,  
Իմ հին բարեկամը, որ թրամս է կոշվում,  
Տարածում է ամա՛ռ,  
Լույս ու արև,  
Ձերմություն է սփռում  
Ու փռում շոգ:

Եվ ձմեռն է շվում՝ թռչունի պես ճերմակ:  
Ու սուտ-մագաղաթե այն թղթերը շերտ-շերտ,  
Որ պինդ սոսընձվելով նեղ ճեղքերին բոլոր՝  
Ասես հագցըրել են իմ տան պատուհանին  
Աքսորական մարդու զոլ-զոլ հագուստ,—  
Մի վայրկյանում պոկվում-ընկնում են վար,

Եվ բաց պատուհանըս շքաղուռ է դառնում  
Արքայաբար մտնող ամռան համար:

Այս դարը հերքումն է բոլո՞ր հրաշքների  
(Նաև՝ հավերժական կոշված սիրո),  
Սակայն ներշնչումով իմ այն բարեկամի,  
Որ թրամս է կոշվում և այցելում հաճախ,  
Հրաշքին եմ նորից ես հավատում խորունկ:

Եվ ամառ՝  
Կախած ինձ իր փեշից,  
Իսկ քեզ թերս գցած՝  
տանում է մեզ  
Քաղաքամերձ անտառ...

Դու հիշո՞ւմ ես արդյոք...

Այնտեղ ամառային ստվերն անգամ  
Թերև հագուստի հետ մտնում վեճի  
Ու հաղթում էր նրան  
Եվ ստիպում,  
Որ կանաչի վրա կարկատանվենք՝  
Ստեղծելով մի հին բարձրաքանդակ:

Դու հիշո՞ւմ ես արդյոք...

Գձնում էի ես քեզ  
Անտառային լայնթուժի տերևներով  
Ու պսակում էի շարով ծաղիկների,  
Որ դու ամեն ինչով ճավայուհի դառնատ,  
Ու մեզ մի պահ զգանք չունգլիներում...

Դու հիշո՞ւմ ես արդյոք...  
Ինչո՞ւ հիշել սակայն:  
Զէ՛, ավելի լավ է, որ հասկանամ հիմա,  
Թե քեզ կորցըրեցի չունգլիներում կյանքի,

Թե իսկապէս շուտով ամառ կգա կրկին,  
Բայց մենք էլ չե՞նք լինի մեկը մեկի համար...

Կգա կրկին ամառ,  
Եվ տառապած փոշին  
Աղահ կներծքծի անձրևի ջուրն այնպես,  
Ասես վալերյանի կաթիլներ է քմառում,  
Որ վենի ինձ պես ուշագնաց...

## IX

Եվ ինձ նման ամպած երկինքն է լուռ ձնում:  
Ու մայթերն են իրենց դեմքին շպար դնում:

Դու շունեիր ոչ նե՛րկ,  
Ոչ շպա՛ր ու սնգո՛ւր:  
  
Դու ի՛նչ էիր, գիտե՞ս, թե ի՛նչ էիր:  
Դու կին էիր, բայց և աղջիկ ու քույր,  
Սնդիկի սյա՛ն նման ուղիղ ու ջինջ էիր,  
Իշակաթնո՛ւկ չէիր, այլ սինձ էիր.  
Գինի՛, որ չի տալիս մքուր-տականք:  
Եվ ի՛նչ.  
Դու քե՞զ չէիր, ահ ի՞նձ էիր  
Այս ամենի համար լոկ պարտական...

## X

Զյուն է գալիս կրկին:  
Եվ վաղո՞ւց է արդյոք:  
Հանդիպակաց շենքի քիվ-ճակատի բայնքին  
Նա նստել է հիմա  
Վիրակապի նման:  
  
Իսկ իմ խեղճ ճակատը, ի՛նչ է. կարիք չունի՞ւ

Ու ես դուրս եմ գնում՝  
Ապաքինման հույսով:

Անհոգորեն սուլող ինչ-որ ջահել քամի,  
Ինչպես երես է՝ դեռ չսիրահարված,  
Իմ պատանի կյանքն է հիշել տալիս կարծես...

Եվ սաղցապատ մայթը, որ իսկական դեմքին  
Զնի փափկությունն է որպես դիմակ հագել,  
Ինքն իրեն է մատնում՝  
Մտում ամեն վայրկյան.  
Ու ես սայթաքում եմ՝  
Կտ ու առաջ,  
Դես-դեն...

Զյունն է անվերջ տեղում,  
Կարծես ուռկան լինի,  
Հսկայական մի ցանց՝  
Նետված երկնից երկիր:  
Ասես հսկա մի ձուկ այդ ուռկանում գերված,  
Ուսկանն այդ քարշ տալով ու տանելով ինձ հետ՝  
Ես լողում եմ առաջ,  
Ո՞ւ—  
Հզիտե՞մ:

Այս ձյուն-ձմեռվա մեջ՝  
Ողջ իմ ներսն է տենդում,  
Նոր գոզէրոցքով է ասես հիվանդ հոգիս,  
Ուստի զարմանալի ոչի՞նչ չկա,  
Թե մտքերըս բոլոր զառանցանք են թվում...

Զյուն է գալիս. Անվերջ,  
Նա ե՞րբ դադար կառնի,  
Ու ե՞րբ դադար կառնի և այս զրույցը մեր,  
Որ նման է երկու խուզի խոսակցության...

## XI

Թայց երբ վերըսկսենք մեր զրույցը կիսատ,  
Որ կոշվում է կարծեմ բացատրություն,  
Ինչ որ կոկված-սոկված խոսքերի տակ ծանոթ  
Պիտի ջանամ ծածկել լոռությունը հսկա,  
Որ դրանով, հանկարծ, քեզ շվիրավորեմ:

Միշտ խորհելով նույնը՝ պիտի շասեմ նաև,  
Որ ինձանից երբեք գու չե՞ս ազատվելու,  
Ինչպես շես ազատվի ո՞չ թե միայն փեշից,  
Այլ քո մաշկից նաև,  
Որի վրա  
Իմ մատներն են թողել իրենց դաշվածքը խոր,  
Որ շպիտի ջնջվի մոռացումից անդամ...

Պիտի շասեմ նաև,  
Որ աշքերս էլ փակեմ՝  
Իմ հայացքը կզգաս գու քո մեջքո՞վ նույնիսկ,  
Անգամ հազարավո՞ր կիլոմետրի վրա:  
Ու սայթաքես եթե կամ քայլերըդ խառնես՝  
Զուր մի՛ կարծիր, թե դա դարուփոսից եղավ:

Այդ իմ հայացքն է քեզ շփոթեցնում հեռվից...

## XII

Էլեկտրական լարին միշտ կիպ ու հուա  
Իր եղանով անկոթ  
արորելքուսը  
մերթ-մերթ  
Շաղ է տալիս կայծի խրձեր խառն ու խոփիվ,  
Շաղ է տալիս այնպես,  
Ասես անտես մի մարդ  
Ինչ-որ բան է զողում

Խավարի մեջ,  
Օդում:

Մեր սրտերն էլ չէ՞ որ զոդված էին իրար,  
Չոդված էին՝  
ասես աստծու հենց ի՞ր ձեռքով.  
Ո՞չ մի սպի չկար զոդման տեղում:  
Չոդված էին՝  
ինչպես մոլեկուլն է զոդված,  
Եվ ատոմ...

Ու մենք—բաժանվո՞ւմ ենք:

Հիմա անգիր զիտի ողջ աշխարհը.  
Երբ անբաժանելին բաժանում են՝  
Անջատվում է ահե՞ղ մի շերմություն:  
— Վկա՝ ատոմն ինքը:

Խսկ մեր բաժանումից... ծնունդ կառնի  
Մի այնպիսի՝ ահեղ սառնամանիք ու ցուրտ,  
Որ չի կարող շագդել եղանակի՝ վրա:  
— Վկան՝ բնեռները...

## XIII

Իրոք՝  
սառնամանի՞ք,  
Այնպիսի՝ ցուրտ իրոք,  
Որ կարող է նույնիսկ ահարեկել  
Գեռ նոր սիրահարված այն զույգերին.  
Որոնք հանդիպումի այլ տեղ չունեն,  
Բացի փողոցներից ձմեռնաշունչ:

Ճեղ շունեինք մենք էլ:

Ու ցրտի մեջ ձմռան  
 Քայլում էինք՝  
 Ասես կոխկըրտելով  
 Ոչ միայն ծյուն-սառաւց,  
 Այլև ժամ-ժամանակ:  
 Իսկ մեր շրթունքներից ու ոռոնգներից  
 Ընդհատ պողիքացող շնչառությունը տաք  
 Ասես ծուխը լիներ այն լուս կրակոցի,  
 Որ «սոլյուտ» է կոչվում օտար բառով...

Քայլում էինք՝  
 գուցե ցրտից սրբարքալով  
 Ու թերեւս ցրտից փոքր-ինչ և կուշ եկած,  
 Քայց... տաքանում էին մեզ նկատող մարդիկ...

Սառնամանիքի մեջ անծայրածիր  
 Քայլում էինք այնպես, ինչպես հավանաբար  
 երկրագնդի երկու սառած բևեռների  
 Հայտնագործողներն են քայլել մի օր...

Եվ մենք ինչո՞վ չեինք հայտնագործող, ասա՛:  
 Ես քե՛զ էի գտել,  
 Գտել էիր դու ի՞նձ...

#### XIV

Սենյակում բուն դրած հսկա սարդի նման՝  
 Համայն աշխարհով մեկ իր ոստայնն է փոռում  
 Ռադիո-ընդունիչը:

Երկու մատով  
 Ես սեղմում եմ նրա սապատները մեկ-մեկ,  
 Եվ որտեղից-որտեղ, շանցած երկու վայրեկյան,  
 «Ավե Մարիա»-ն է մսերիս մեջ խրում  
 Նոտաների փուշը...

Զե՞ս նկատել արդյոք,  
 Որ հասնում է մի տեղ,  
 Սարսըռազդո՞ւ մի տեղ,  
 Երբ նվագող բոլոր գործիքները  
 Լոկ մի բան են ճշում.  
 — «Զարմանո՞ւմ եմ»:

Զարմանում եմ ե՞ս էլ,  
 Միայն զարմանում եմ:

Զարմանում եմ, թե այդ ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս,  
 Որ կարճ պաշի փոխվեց մեր համբույրը երկար,  
 Եվ ժպիտը փոխվեց քմծիծաղի...»

...եավարատյաց էին աշքերն իմ սե,  
 Մթահալած էին աշքերն իմ մութ.  
 Զույգ լուսարձակ էին կարծես նրանք:

Զարմանում եմ, թե ո՞նց, ո՞նց պատահեց,  
 Որ բնակվեց այնտեղ մթին տրտմությունը՝  
 ինչպես որ շղիկը քարանձավում...

...Դու շատ հաճախ էիր իմ մազերը գովում,  
 Որովհետեւ ուրիշ գովելու բան չունեմ:  
 Եվ ինձ զգում էի զորե՛զ զարմանալի:

Զարմանում եմ, թե ո՞նց իմ մտքով իսկ շանցավ,  
 Որ կարող ես մի օր դու Դալիլա դառնալ  
 Եվ քո ձեռքով խուզել մազերը Սամսոնի...

...Իմ ձեռքերի գործը քեզ սիրելն էր որ կար՝  
 Փայել-փայփայելը,  
 Գրկել-գուրգուրելը:  
 Հիմա նրանք ի՞նչ են.  
 Խեղճ գործազո՞ւրկ:  
 Ու թե նրանց նույնիսկ նշանակեն նպաստ՝  
 Պիսի հրաժարվե՞ն:

## Չղարմանա՞մ...

...Ներսը հացադուլ է հայտարարել հիմա,  
Ու սիրադուլ՝ սիրում:  
Եվ ոտներս են միայն, որ չեն հայտարարում  
Իրենց գործադուլը.  
փողոցներում նրանք  
Կոշկատակ են մաշում:

## Չղարմանա՞մ...

Ու մտքերս են գործում,  
Նույն փորձանքն են փորձում.  
— Սկըսելով քեզնից՝ վերադառնում են քեզ,  
Այն ընտանի սովոր կենդանու պես,  
Որ դուրս գալով տնից՝ տուն է գալիս վերջում,  
Իսկ տունն արդեն չկա՞:

## Չղարմանա՞մ...

Չղարմանա՞մ, ասա՞,  
Ինչպե՞ս լզարմանամ,  
Որ այսքանից հետո ես, մտովին,  
Քո անունն եմ տալիս՝ շատ ավելի հաճախ,  
Քան վտանգված նավի ուղիո-հեռագրից  
Իր ահարեկ «SOS»-ը...

## XV

Դու փորձում ես գտնել արդարացում.  
«Սայթաքում են... ընկնում... բայց չէ» որ ես...»:

Իսկ ես վերհիշում եմ քո երազը.  
Իբր թե ընկել ես ու ոտները շարդել,  
Բայց... չես կարողանում քայլել ո՞չ թե ինքը,  
Այլ ե՞ս, քո փոխարեն, ե՞ս չեմ կարողանում...

Ե՞ս, որ երազների չեմ հավատում բնավ,  
Հիմա ինչպե՞ս շասեմ,  
Ասա՞՛, ինչպե՞ս շասեմ,  
Որ այս երազը ճիշտ դուրս եկավ:

Քո՛ ոտներն են ջարդվել,  
Քայլել ե՞ս չեմ կարող...

## XVI

Դու մեղք բնա՞վ չունես,  
Ես այդ գիտե՞մ, գիտե՞մ:  
Եվ ուզում եմ ցավս արդարացման փոխել,  
Բայց և հասկանում եմ, որ դա շատ է նման  
Մի աշքը շիլ մարդու այն ձգտումին,  
Երբ նա նկարվում է միշտ կիսադարձ,  
Կարծես պիտի աշքը շտկի նկարվելով...

## XVII

Եվ սեահեր-սեաչ կարոտ կնոջ նման,  
Խնձ գիշերն է կանչում — հրավիրում՝  
Տաք ժպիտով զառ-վառ իր լույսերի,  
Իր գինդերով լամպե,  
Ռեկլամ-հեռագրերով:  
Եվ շգիտի խեղճը,  
Եվ շգիտի, թե ես,  
Ե՞ս, որ հայացքով իմ  
Անցնող-դարձող կանանց  
Մեխում էի մի պահ իրենց տեղում  
Եվ տիրաբար անխոս հրամայում,  
«Կանգնիր՝ քեզ աշքերով սիրե՞մ մի քիշ»,—  
Ես դարձել եմ հիմա ինչ-որ էակ անսեռու»

Ու ես գուրս չեմ գնում,  
Ես իմ տանն եմ մնում,

Որտեղումի՞ այնպիսի՞ մթնոլորտ է՝ հիմա,  
Այնպիսի՞ գարզ մի օդ, որից հավանորեն  
Կսատկեին և՛ ճանձ, և՛ փայտողիլ...

Իսկ աչքերիս առաջ, նույն սեղանին,  
Հարցականի պես կեռ նույն լամպն է. միշտ տնկված՝  
Կոպիդ այնքան՝ նման լուսամփոփով:  
Ու մտքերս են հիմա իմ ուղեղը խածում՝  
Իշամեղուների անտես պարսի նման...

Ու բերանըս հիմա ասես դուռն է դառնում  
Այն մութ քարանձավի, որտեղ ձմռան մուտին  
Տարին են կրակ տալիս հովիվները...

Եվ իմ տառապանքը նորից նմանվելում է՝  
Մեր լեռնային կեռման կածաններին...

Ա՛խ, այդ լեռնաշխարհ...

Թե լինեի այնտեղ  
Եվ այս կիսգիշերին ելնեի բակ՝  
Այս արթը մնի ծանըր մըղքավանցից  
Դուրս հանելու բարի՛ կամ հցոռելյամբ.,  
Ինձ կդիմավորեր մի ողջ հաշք՝ լերկինք...

Դու շպիտի՛ տեսնես այդ երկինքը երթեք.  
Եվ շպիտի՛ զգաս, որ այդուիսաշխարհում՝  
Երբ նայում ես վերև՝  
Գիշերային երկնին,  
Ասես զույգ ա՛շը շունես,  
Այլ զույգ հեռադիտա՛կ...

Թե լինեի այնտեղ  
Ու դուրս գայի հիմա  
Զեղնածածկ ու կավե մեր տնաւկեց,  
«Քար-կշեռքը» պիտի աչքերիս դիմ ճոճվեր:

Ինձ թվում՝ էր, թե նա իր թաթերավ  
Հույս ու մութն է կշոռում ազնը վորեն,  
Որ հաշտեցնի երկու վիճող հարեւանի՝  
Գիշեր-ցերեկվանը:

Իսկ հիմա նա  
Հավանաբար պիտի իմ պարուսացը կշուր՝  
Մի նժարին դրած քո արդարացումը...

### XVIII

Գարնան քայլն եմ լսում.  
Հասեհաս է արդեն:

Իսկ դու հեռանում ես:  
— Գնաս բարո՞վ:

Գնա՛, սակայն հիշի՞ր.  
Կան այգիներ,  
Որոնց շուտով երբ դու այցի քնարս,  
Սանոթ ձառերը քեզ պիտի հարցնեն տնշույտ.  
— Իսկ ո՞ւր է նա... ո՞նց թե...

Դու .ժամանակիր,  
Թե ի՞նչ պիտի նրանց պատրաժիանեն:

Կա նստարան կանաչ:  
Պիտի կանչի նա քեզ,  
Եթե մինչեւ անգամ միութես ճանապարհուց,  
Եվ իր կանաչ դեմքը թուխ բիրերիդ հառած  
Պիտի ճառցնի.  
— Ո՞վէ՛ այս օտարը պողքիոդ...

Լիճ կա զրոսայզում,  
Կան գրավա կներսավին:

Ամեն անդամ հենց որ թիերն անվարժ բանեն՝  
Քուրք պիտի հարցնի.  
— Ո՞նց թե... առանց նրա...»

## XX

Ճոճ կա լճի ափին,  
Հսկայակա՞ն մի ճոճ,  
Որ պտույտ է գործում շուրջանակի  
Եվ զույգեր է ճոճում՝  
Նրա՛ համար կարծես,  
Որ նոր ծնված սերը հասունանա:

Ճոճն այդ,  
Քեզ տեսնելով ուրիշի հետ՝  
Իր պտույտով պիտի գծի մի մե՞ծ... զրու:

## XIX

Ես չեմ եղել Համլետ,  
Չեմ էլ ուզում լինել.  
«Լինել-չլինելը» մեղանից չէ կախված...

Եթե պետք է, որ ես ո՞չ ինձ նման լինեմ,  
Այլ անպատճառ ինչ-որ ուրիշ մեկի նման,  
Ապա ես կուզեի, շա՞տ կուզեի  
Լինել շեքսապիրյան մի խեղկատակ,  
Որ ասեի հենց այն,  
Ինչ բոլորը գիտեն,  
Բայց բարձրածայն ասել չեն հանդրգնում...

Սակայն ես դեռևս քեզ սիրում եմ այնքան,  
Որ, է՞հ, գուրս եմ գալիս իմ երազած դերից  
Եվ կաշխատեմ հագնել Առեկինի դիմակ.

— Սուտ սե՞ր պիտի խաղամ, անհա՛յտ Կոլոմբինա...

Արդյոք չէի՞ր ուզի գեթ մի պատառ լեզենդո»

Աստված, երբ Մովսեսին գերապատվեց՝  
Բոլորի մեջ նրան նախընտրելով,  
Եվ պատվիրեց իր ձայնը հասցընել  
Մեղքերի մեջ թաղված ժողովրդին, —  
Աստված, որ աստված էր՝  
Զէր նկատել մի բան.  
Իր Մովսեսն էր թլվա՛տ, կակա՞զ, ծանրալեզո՞ւ

Աստծու համար ի՞նչ կա.  
Ամենազոր է նա:  
Եվ թույլ տվեց աստված, որ իր գրուցներին  
Ներկա լինի նաև Ահարոնը,  
Որ, իհարկե, ուներ ճարտար լեզու

Մովսեսի պես թլվա՛տ,  
Մովսեսի պես կակա՞զ՝  
Ես որտեղի՞ց գտնեմ մի Ահարոն:  
Որ քեզ սիրող սրտիս պատվիրաններն ամեն  
Ականջիդ մեջ թողնի՝  
Հեռանալուցս առաջ:

Սակայն ինչի՞դ են պետք պատվիրաններն իմ սոսա.  
Զէ՞ որ ամեն նոր սեր իր նոր օրենքն ունի,  
Ուրեմն ունի նաև արդարացումն իր նոր...

Ու ես պիտի մեռնեմ որոշակի մահով.  
— Մի օր ես խեղղամա՞հ պիտի լինեմ,  
Սակայն ո՞չ թե շրում,  
Թեպետ մինչև այսօր  
Չեմ սովորել գոնե կյանքում փո՞քր-ինչ լողալը  
Ապրած-զգացածըս ասել չզորելո՞ւց

Ես կիսեղղվեմ մի օր՝

ինչպես մահանում են  
Առկարգի մեջ խցված սուր ոսկորից...

## XXI

Բոլոր փառքներւմ՝

«Փամիների ժայռը»,  
Իսկ խաշմերուկներւմ՝  
Խարհրդակցություն թքի.  
— Ի՞նչ են քննում արդյոք,  
Ի՞նչ կորոշեն:  
Իսկ ես...

արդեն խորհել  
ու մտածել եմ ես,  
Ինչ որ ծածուկ՝ էր գեռ՝  
Արդեն բացել եմ ես,  
Եվ մեկընդիշտ՝ ցավով՝ արդ հասկացել եմ ես,  
Որ դու գիշերային իմ սարսափն ես անանց.  
— Թույլ տուր մի քիչ քնե՞մ...

Եվ այն ափն ես հեռու,  
Որ ընկած է անծիր օվկիանոսից անդին.  
— Եթե այստեղ՝ գիշեր,  
Այստեղ ցերեկ է վառ...

Այս առածիգ կյանքի ցատկան լարի վրա  
Թե Գև՝ շարտիադաց,  
Դու այն ձողն ես կիրճիչ,  
Առանց արի վաղուց գշշրել էի գանգը...

Դու՝

Վյժիարանի մեր,  
Եվ այնպիսի՝,  
Որին շակում չփառ,  
Ու գրանեց  
Աղճատվում է կյանքի փման ազգ...

Եվ ինձ ի՞նչ է մնում, որ ի՞նչ անեմ:

Թե իմ տառապանքից ես արձաններ շինեմ՝  
Դու կարող ես իսկույն մի կոատուն դառնալ,  
Ուր կարող է անթիվ տոտեմների  
Մի ո՞ղջ կենդանական աշխարհ լինել.  
Բացի շնի՞ց գուցե,  
Որ տոտեմն էր կարծեմ հավատարիմ սիրո...

Սակայն կուռք են կերտում լոկ հավատից դրդված  
Եվ հավատից համար,  
Ինչ ես շունեմ հիմա,  
Ու թե տառապում եմ  
Այդ պատճառով...

Ու ես տառապանքից խաղալիք եմ շինում,  
Որ... ինձ նման տարեց մանուկներին խարեմ...

## XXII

Եվ իշնում է ահա մի գոգավոր գիշեր,  
Ասես Հսկայական մի կափարիչ մրոտ:  
Եվ գգում եմ հիմա իմ սեփական կաշվին,  
Որ — հակառակ խելոք օրացույցի պնդման —  
Գիշերներն են աճում ցերեկների հաշվին...

Դրսում վրնջում է սանձակոտոր քամին՝  
Իր զամբիկից զրկված հովատակի նման:  
Եվ իմ կուրծքն է իշնում ու բարձրանում շուտ-շուտ՝  
Անխղճորեն քշված ձիու կտղերի պես...

Մե՛կ էլ անակնկա՛լ,

ուաղիո-ալիքներով,  
Առանց դուռ բախելու՝  
օգնության է գալիս  
Բախը բարությամբ իր աստվածային:

Անշունչ երգեհսնը տառապյալ է դառնում.  
Հնկնում-վերականգնում՝  
ավողանքի ծխով  
ծշմարտում է սերը զուգակշիռ ցավին  
Եվ անձնադատ խոսքով պատժապարտում իրեն,

Ու ես վերանում եմ,  
Սյս աշխարհից պոկլում,  
Ու ես կորցընում եմ զգացումը կշոփի  
Բայց... հիշում եմ հանկարծ,  
Որ այսպես էր լինում,  
Երբ գլուխը հանգչում քո ծնկներին  
Ու ճակատս էր շոյվում քո ափերով տաքուկ:

Վերացումի այդ կարճ-երկար վայրկյաններին  
Ես հավատում էի մարդկայնորեն,  
Որ կարո՞ղ են լինել և իսկապե՞ս որ կան  
Ուրիշ մոլորակներ և աշխարհներ ուրիշ,  
Որտեղ չկա կշիռ ու ծանրություն...

... Հիմա կշում եմ ես երեք հազար շորս փութ,  
Եվ չի կարողանում հողն ինձ կրել.  
— Նրա կեղեկ մեջ իմ ոտներն են խրվում՝  
Մեր ու կորուստ շափող կարկինի պես...

### XXIII

Բքի հարվածներից ծառերն ահա  
Խեղճ-խեղճ կկոցում են աշքերն իրենց:  
Ե՞ս եմ արդյոք լալիս,  
Թե այդ՝ ձյունն է հալլում  
Տառապանքից ցերմած դեմքիս վրա...

Իմ տղամարդ տեղով լաց եմ ուզում լինել,  
Ի՞նչ կա ամազելու.  
Հապա ինչպե՞ս,

Իւ ո՞նց...  
Զէ՞ որ հիմա ես մի թանկ մեռել եմ թաղում,  
Այն էլ՝ ո՞զ ու առո՞զ,  
Ապրո՞ղ ու կենդանի... .

Դիտե՞ս, թե ինչպե՞ս են մեռելատեր մարդուն  
Մխիթարում մերոնք՝  
Լեռնաշխարհի մարդիկ.  
«Աստված ձեռիցդ առավ,  
Թող սրտի՛ցդ էլ առնիս:

Քեզ իմ ձեռքից առա՞ն.  
Մեռելատեր եմ ես:  
Իսկ երբ պիտի գնաս և իմ սրտի՛ց, սրտի՛ց...

Իսկ թե ի՞նչ է լինում իմ սրտի՛ հետ, գիտե՞ս՞՛  
Հարմար բառը գտնել այնքան հեշտ է հիմա,  
Ինչքան որ աստղծուն բակում հանդիպելը:

Եկ այստեղ է, ահա, որ չես կարող  
Չնախանձել,

Թե կան այլ լեզուներ,  
Որ և՛ բաժանումը, և՛ պայթումը սրտի  
Նույն բառով եմ կոչում,  
Նույն մե՛կ բառով...

### XXIV

Եկ ուզում եմ ասել քեզ երկու խոսք:  
Ու խցիկն եմ մտնում հեռախոսի:  
Բայց հիշում եմ հանկարծ, որ ամիսներ առաջ,  
Մըր ես խոսում էի հեռախոսով քեզ հետ՝  
Մառած լսափողը շիկանում էր ձեռքիս  
Պո կարոտի խոսքից ու շշուկից սիրու:

Խեղես ոսկորի մեջ ծուծն է մնում  
Հսափողի մեջ էլ մնում էր քո ձայնից

Ինչ-որ ալիք մի տաք,

Ու ես —

Գազանի պես —

Պատրաստ էի ջարդել,

Միայն թե դուրս հանեմ...

Հիմա, հավանաբար, լսափողով այդ նորին,

Ինչպես մութ անցուղով,

Պիտի մի ցուրտ սողա,

Մի միջանցիկ կեղծիք...

Ու ես

Անմիջապես

Չեռքըս ետ եմ քաշում լսափողից՝

Այն գագանի նման, որ սխալմամբ

Թաթն է հանկարծ դնում ողնու վրա:

## XXV

Ասեղներ են հոսում ամեն ջրհորդանից,

Ասեղների հոսք է և իմ ներսում...

Մեծքթանի մի ամպ առաջ մեկնած գնչով

Հոտոտում է հեռվից մի երկնաքեր շինվածք,

Որ երեկի նրան ուրույն կին է թվում՝

Սլացի՛կ ու ճերմա՛կ,

Հնարավո՛ր սիրով...

Ես իմ տառապանցից առփունաթյան հյուսում

Եվ ձգտում եմ կախվել կանանց թարթիչներից.

— Կոնե լինեմ այլքան ներկված-առընթած...

Եվ կտրելով խայռաց՝

Հըթիսի պես

Հայացքս եմ վեր նետում

Ու նկատում,

Որ մեկ ոսկից ան ոտես, փառլիառնե՛.

Իր կոշիկն է կախել սւղիղ զլիսիս.

— Ո՞ւր էր թե հարվածեր՝

Խելքի զայի...

Ա՞յս, թե խելքի գայի?

Ու զզայի,

Որ քո մաշկով էին իմ մատները սնվառմ,

Մինչդեռ հիմա, երբ ես քեզ են դիպշում հանկարծ՝

Ընկրկում եմ իսկույն բնազդական վախով,

Ասես հանկարծ դիպա էրեկորական լարի.

— Իմ մատները քեզնից օտար հոտ են առնում...

Եվ համբուրում էի ես այն տեղերը քո,

Որ տարիներ հետո խորշուներ են տալիս.

— Այդ խորշամներն արդեն ե՞ւ շոկտի տեսնեմ...

Օր ու զիշերները հաշված ժամերն իրենց

Սախում են միշտ՝ տնտես մի տանտիրոջ նման:

Սակայն կույրի վեհն է, թե թանկ արժեք մնալի:

Մենք՝ կուրացած սիրացց

Ու կուրացած բախտակց,

Ցերեկ է ինք վատուամ գիշերից մեջ.

Եվ զիշերված հաշվին ձգում ցերեկները...

— Ո՞վ կարող է ասեց, թե այդ ե՞րբ է գանձում

Իր շաշված սիրո օրանավասարը...

## XXVI

Սիրում էի ես քեզ ոհմ խնդություն» կոշել:

Եվ դա սիրուն բա՛ռ զէր,

Եվ կամ սո՛ւտ չէր սիրուն...

Հիմա...

Նույնիսկ լեզուն, կենդանու պես,

Իր քնազդը ունի:

Ու երբ բնազդաբար  
Նորից կոչում եմ քեզ «Իմ խնդություն»,  
Բերանիս մեջ լեզուս դազդղվում է այնպես,  
Ինչպես, հավանաբար, այն ծագուկի լեզուն,  
Որ եղինչ է կրծում՝ խոտ կարծելով...

Քեզ ի՞նչ կոչեմ հիմա.  
«Իմ տառապա՞նք»,  
«Իմ ցա՞վ»:  
Ի՞նչ, ի՞նչ ասեմ հիմա...

Լավ է՝ ոչի՞նչ չասեմ  
Եվ ինքնակամ թույլ տամ, որ իմ միտքը գործի  
Շախմատային ձանոթ ձիուկի պես՝  
Թոշկոտելով թեքվի ամեն կողմի վրա,  
Որտեղ եղել ենք մենք ու շենք լինի...

## XXVII

Շորորում է նորից հնատարագ մի օր:  
Իսկ ես քո նոր շորերն էլ չպիտի՝ տեսնեմ...  
Սակայն աշքերն ունեն հեռուստացույցն իրենց.  
Ու կտեսնեմ ես քեզ նաև հեռվից-հեռու։  
Քեզ կտեսնեմ հենց այն ծաղկանկար շորով,  
Որի զանգակաձև քղանցքներից  
Վարպետորդի քամին կարուսել էր սարքում,  
Մի կարուսել, որ միշտ փշանում էր շուտ-շուտ,  
Բայց և վերասարքվում արագորեն...

Եվ ձեռքերն էլ ունեն հիշողությունն իրենց...  
Ու հիշում են իմոնք  
Եվ կհիշեն անվերջ  
Իրենց նվազումը՝  
Սագերիդ մեջ,

Ուշաթափումն իրենց՝  
Կրծքիդ վրա,  
Եվ արթնացումն իրենց՝  
Տաք կողերիդ...

Եվ ստքերն էլ ունեն բնազդն իրենց.  
Ինձ այնտեղ են տանում, որ «մերն» էինք կոչում՝  
Ինձ տանում են այնտեղ՝  
Կամքըս չհարցնելով։

Ահա փողոցը մեր.  
Կուլ եմ տալիս աղմուկ,  
Ահա նրբանցքը մեր.  
Ներծծում եմ խավար,  
Եվ իմ կնճիռներում ցավն է կապտին տալիս, Ահա ծառուղին մեր...

Եվ հյուսիսում այս պաղ  
Գարնան վերահասից ծառերն են լաց լինում՝  
Արևադարձային մեծ-մեծ կաթիլներով...  
Ահա կանգա՛ռը մեր...  
Ներշնչում եմ հառաշ,  
Արտաշնչում մեռյալ մի լոռություն,  
Եվ լալիս է հոգիս՝  
Քարանձավի նման —  
Ինչ-որ անմարդկային արցունքներով...

Ահա մեր անտա՛ռը...  
Եվ իմ ականջներում  
Անվերջ զրցնգում է արյունըս տաք,  
Այնպէ՛ս խենթացընող և միալա՛ր այնպես,  
Ինչպես մժղուների պարսի բղզոցը խուլ՝  
Ամուն անտառի մեջ,  
Շոգ կեսօրին...  
Ահա երկինքը մեր գիշերայի՞ն...

Հողանդական պանրի գլխի նման գեղնած  
Մի լուսին է հիմա ինձ խեթ ու մեթ նայում՝  
Գուցե ակնարկելով հաշարության անկամ...

Սևամոռութ մի ամպ, իմ աչքերի առաջ,  
Սևս վերջին վրա ազ աժելով,  
Հուանի. ճապջն է կրծում՝

արծաթ հյութավ նրան  
Իր սև բեղ-մորուքը թունդ օծելով...

Ահա երկիրը մեր...

Եվ մեր երկրի նման՝  
Իմ կլորված սիրտն էլ իր բնեռներն ունի,  
Քո «այս» ու «չէ» ու՝  
Երկուսն էլ սա՛ռն ու պա՛ղ...

### XXVIII

Է՞՞, հանդերձյալ կյանքի շի հավատում հիմա  
Հոռմի պա՛պը նույնիսկ, էլ ուր մնաց թի հստ  
Բայց իսկապես սերը իր հանդերձյան ունի՝  
Ուրիշ — անդրսերյան. — երկորորդ մի կյանք,  
Որ կոչվում է կարծեմ հիշողություն,  
Եվ շի զնում փոքրանց,  
Ինչպես առաջինը,  
Այլ տեսում է այնքան,  
Որքան ինքը կյանքը:

Այդ կյանքով է ապրում իմ սերն արդեն՝  
Նորից նորոգելով,  
Ապրեցմելով  
Այն ամենը, որ կա՛ր և շի՛ լինի...

Ու խլացած արդեն տառապանքի ցավից՝  
Քեզ եմ դարձյալ քառակ,

Հսում քո խոսքերը,  
Որ խառնըվում էն սկրով հունցած կյանքիս,  
Խշպես աղմըկարար այս քաղաքն է խառնում  
Թոշունների ծիւ-վկան իր ծկացող շնչին՝  
Քաղցըը թիթերի,  
Անուշ մակարդի՛ պես...

Ինձ փողոց եմ նետում,  
Գցում բուքի բերան,  
Իսկ դու բուքի միջից իմ առաջ ես ելնում  
Թեթև-ծաղկուն շորով գարնանային  
Ու ճշմարտում սերը, մի ժպիտով,  
Որից ամեն կասկած խուսափում է այնպես,  
Ինչպես խույս է տալիս դմբ խաչից...

Այն, ինչ անվանում են վիրավորանք,  
Անհնար է դառնում երկար պահել.  
Մեկ էլ տեսար՝ հոտեց — գարշահոտեց մեջըդ  
Եզ՝ այստեղ է ահա, որ մին ֆարբած արցոնք,  
Երկա՞ր ու տանշալի՞ց տառանիթուց հնոտ,  
Տաղաղիում է մերքեմ  
Հասկացմելով,  
Թե կարտար մարդ չէ, որ բանիս ու մորթես,  
Եվ անզոր է այստեղ այն դաշնոր նույնիսկ,  
Որին անվանում են վիրավորանք...

Աչքերիս եմ սաստում՝ պինդ փակելով:  
Սակայն կոպերիս տակ քո աչքերն են բացվում.  
Ինձ հարազա՞տ այնքան սև աչքերըդ,  
Որ երբ ինքնամոռաց նայում էին երկինք՝  
Ճերմակ ամպերն էին նրանց խորդում լողում,  
Հեռանալուց առաջ մի պահ կաշկանդվելով  
Քո կեռ թարթիշների վանդակի մեջ թափառու

Ա՞յս, այդ աչքերը քո  
Ու քո թարթիշները...

Սերն ինձ համար կյանքում այն կնիքն է եղել,  
Որ միշտ դրոշմում են ոսկու վրա:  
Եթե կյանքըս զորկ է այդ կնիքից սիրո՝  
Եվ սեփակա՞ն աշքիս կեղծ է թվում ոսկիս:

Հիմա... որտե՞ղ ծախտեմ  
Եվ ո՞ւմ ծախեմ ոսկիս,  
Ինչպե՞ս հավատացնեմ, թե կեղծվա՞ծ չէ, ինչպե՞ս,  
Եթե ինքըս արդեն չեմ հավատում դրան,  
Եթե ինքըս գիտեմ, որ նա պիտի  
Այս քեզազորկ օդից ժանգապատի...

## XXX

Ու բռնում եմ հանկարծ ինձ հանցանքի վայրում...

Քո խակակովթ սիրուց ատամնառու սրտով,  
Ստուգապես խարված և մահառիթ խոցված՝  
Ես հպարտությանըս բարձր թոշակ տալիս,  
Որով բողոքարկու նրա շուրջն եմ փակում  
Եվ... նորոգում սերըս այն ներումով,  
Որ մտովին է լոկ, ուրեմն՝ անցողակի...

Թանաքի պես թանձըր ցավս է տարրալուծվում՝  
Տալով կաղո՛ւյտ մի չին  
Եվ ջո՛ւր վճիտ...

Ինձ խարելով ինքըս՝  
Ինձ չեմ հաշվում խարված.  
Ինքըս ինձնից գաղտնի՝  
Քեզ եմ դարձյալ սիրում...  
Եվ այսքանից հետո՝  
Այս ցավերի  
Եվ այս տանջանքի մեջ քեզ սիրելը

Այնքա՞ն արտառոց է,  
Տարօրինակ այնքան,  
Որքան արտառոց է, որ ծովերի  
Աղի ջրերի մեջ ողջ ժամանակ ապրող.  
Զկներն այնուհանդերձ անալի են...

## XXXI

Շենքերն ահա նորից հարբուխով են հիվանդ.  
— Սկըսվում է արդեն ձնհալն էլի:  
Ցուրտ է, սակայն արդեն պաշտոնակա՞ն մի ցուրտ,  
Եվ ուր որ է պիտի գործն ավարտի-գնա:

Եվ ուր որ է կգա ինքը գարունն արդեն,  
Ու պատանու նման հողը կապրի արբունք.  
Կանաչ բեղեր կաճեն նրա շրթունքներին,  
Եվ կմազակալի անմազ դեմքը նրա:

Կվարարեն շուտով վտակ-գետակ-դետեր:  
Զվարարե՞ն, բա ո՞նց...

Թե ամեն ինչ լոի՝  
Մինչև անգամ հեռվից  
գու կարող ես լսել  
Արյան գոշգոշումը և իմ երակներո՞ւմ.  
Հնդերկրյա՛ գետեր՝  
Կարարել են, բա ո՞նց...

Կվարարեն շուտով վտակ-գետակ-գետեր,  
Եվ ջրերը ելման կստանան գույն յոդի:  
Ու, ջրերը ելման յո՞դ կդառնան իրենք,  
Որ վերքերը բուժեն խեղճ ափերի,  
Իրե՞նց իսկ հասցըրած վերքերը խոր,  
Որոնք, միննո՞ւյնն է, չե՞ն բուժվելու,  
Ինչպես վերքերն իմ այն,  
Որ գու տվիր...

## XXXII

Իսկ զու գիտե՞մ առդպոք,  
Թե մարդկացին լեզվին  
Ո՞ր բառով է կոչվում այս վիճակը՝ իմը,  
Որին ո՞չ մի մակղիր չի սոսննձվում բնավ:

Իսկ ես գիտե՞մ արդեն.  
— Ճնշածա՞մ է կոչվում:

Ճնշածամն էլ այն է, որ անցնում է վաղ-ուշ.  
Թե չէ պիտի որ նա ուրիշ բառով կոչվեր:  
Եվ սա ճիշտ է նույնքան,  
Եվ անխուսափ նույնքան,  
Որքան որ մագերի ճերմակումը:

Իսկ իմ մագերն իբրև սկսեց են փոփովել  
Եվըս մի քիչ ճերմակ՝  
Ու կազատվեմ քեզնից.  
Էլ չե՞մ քայլի այնպես,  
Ասես մարդ չեմ ապրող,  
Այլ կախարան քայլող, որից կրախ մեն սպիզ  
Մի վերարկու մաշված և մի ծանոթ գլխարկ...

Էլ չե՞մ շնչի արդին խոխուալով աղնաքես,  
Ինչպես բութ սղոցը՝ թաց գերանուան...

Մաքսանենգի նման ինձ վտանգի մատնած,  
Չունենալով նրա ճարպը կությունը գեթ;  
Էլ ես՝ կոխկրտեղով՝ շեմ՝ անցնի՛ ու դառնա  
Հպարտության հնկած այն սահմանից,  
Որի հին անունը ինքնասիրություն է...:

Տառապանքի տապից աշքերս էլ չե՞ն քրտնի,  
Եվ չի կաղա ժամիտն իմ շորթնիրի վրա՝  
Դեմքըս վերածելով ծուռ հայելու...

Էլ չե՞մ գերադասի ես խավարլ լույսից,  
Ինչպես անում է դա նտխապապը մեր այն,  
Որին պատվում ենք մենք «անձրևառդ» բառով...

Եվ ինձ չսիրելուդ, ինձնից հեռանալուդ  
Հանժառածանաս որուտին նես կնայիմ այնժամ,  
Ինչոքես որ նայում նեք արդ վառողի գյուտին.  
— Ահավոր էր՝ երթեկ,  
Սովորական՝ այսօր...

... Ով որ ուսանել է սիրո դպրոցներում՝  
Դաս է առնեում նաև ողբրոֆեսոր սարդից:  
Ուստի ես էլ գիտեմ, որ երբ — սարդի նման —  
Մի մահարադա պահի կախ են տալիս իրենց՝  
Իրենց ավշն հյութից իրենց հյուսած թոկով,  
Ապա... չե՞ն փառլովում, չէ՞ւ  
— Անվան ո նն մեռմ...

## XXXIII

Ճեռանալոց առաջ Վամեն ահավասիկ  
Թաց կոկորդն է՝ մաքրում մի անհարմար հազով՝  
Իրրե ճարահատյալ իր մթկնումի նշան:

Մեկնելու եմ ե'ս էլ...

Ու ես ճիշս եմ խզում՝ իմ կիսաբաց բերնում՝  
Կիպ շարժումով՝ ձեռքին,  
Հպա՞րտ ձեռքիս:

Մեկնելու եմ ե'ս էլ...

Թե լինեին մտքեր ճայնագրող նիշեր՝  
Կդառնայի գուցե նո՞ր Բեթհովեն.  
Ե'վ փոլացած արդեն՝

Բիրտ աղմուկից ցավի,  
Բայց և լեցուն սիրո նվազներո՞վ:  
  
Մեկնելու եմ ե՞ս էլ...

Վաղը կայարանում ես շունչ կառնեմ աղատ՝  
Գործող հրաբուխի ինձ հարազատ վայրում.  
— Շոգեքարշերն իրենց խառնարանից նեղիկ  
Սուխ կինչան երկինք՝  
Հուր ժայթքելու պատրաստ,

Իսկ իմ ծուխը երբեք դու չե՞ս տեսնի...  
Ու կմեկնեմ հեռու,  
Ու կմեկնեմ անդարձ,  
Ու կնստեմ մարդկանց սրտերին մոտ,  
Որ տաքանամ մի քիչ նրանց բարությունից,  
Եվ տաքանան մի քիչ նրանք իմ բարկ սիրուց...

#### XXXIV

Նորահաստա՞տ մի սեր և նորաքաշնդ մի սեր,—  
Սա մի պատմություն է, որ չի հնանալու,  
Ինչպես երբեկց չեն հնանա  
Մահն ու ծնունդը նոր,  
Լացը երեխայի  
Ու ծերացած աշքի արցունքութելն անլաց.  
Ինչպես երբեկց չեն հնանա  
Բախի զրուցները արարչի հետ,  
Կասկածն օթելոյի՝  
Իմ հորեղբոր որդու,  
Եվ իմ Սոկրատ պապի վարքը ծանոթ...

Դերը չսիրվածի կամ մերժվածի  
Ես՝ կարող եմ խաղալ նո՞ւյն հնշությամբ,  
Ինչ հեշտությամբ կյանքում պիտի դառնա

Համ չզηացող մարդը՝ լավ գինեգործ,  
Գույն չշոկող մարդը՝ լավ ծաղկագետ:

Մերժված ես չե՞մ եղել  
Ու չե՞մ լինի — երբե՞ք:  
Եվ ինձ չսիրելը — անհնար է նույնքա՞ն...  
Ես լոկ նահանջում եմ,  
Որ սկըսվեմ նորի՞ց...

#### XXXV

Երբ հաղթում է խոսքը՝ մեղեղին է մեռնում:  
Ես կլեմ հիմա, որ մեղեղին հնչի.  
— Կնահանջեմ,  
Սակայն կնահանջեմ... երգո՞վ:

— Ե՞ս եմ ստեղծել քեզ  
Եվ ստեղծել՝ սիրո՞վ:  
Եվ դու պիտի ապրես սիրով միայն,—  
Լոկ այս երգն է թառած իմ նահանջող բերնին...

— Մի ընդօրինակի՞ր,  
Օ-ր-ի-ն-ա՞կ տուր սիրո,—  
Ես այսպես եմ երգում նահանջելիս...

— Օրհնյալ եղիր այնպես, ինչպես կայիր՝  
Թեկուզ ինձնից հեռո՞ւ,  
Ո՞չ ինձ համար...


— Հավետ օրհնյալ լինի քո անունը,  
Որ հնչում է մերթ «Կին» ու մերթ էլ «Սեր»...

— Հավետ օրհնյալ լինի քո ժպիտը՝  
Հայտարարը սիրո և ինդության...

- Հավետ օրհնյալ լինեն քո կողերը,  
Որոնք կյանք են ծնում տաք հպվելուց,  
Ինչպես որ շփվելուց ծնվում է հուր...
- Հավետ օրհնյալ լինի նաև հեռացումըց,  
Որ իբրև նոր գալուստ կարձագանքի հեռվում...
- Օրհնյալ լինի նաև տված տառապանքըզ,  
Որից ոչ թե մեռնում, այլ ծնվում են կրկին...
- Օրհնյալ լինի նաև իմ մեկնումը,  
Իմ այս նահանջումը,  
Որ նահանջ է... երգով,

1961 թ. Փետրվար  
Մոսկվա

## ՎՐԴԱՆԱԿՑՈՒՅԵՐ



ԿՈՆՐԱԴ ՎԱԼԵՆՐՈԴ

Պատմական պոեմ

Dovete adunque sapere come sono  
dne generazioni da combattere biso-  
gna essere volpe e leone.

Macchiavelli

Բռնավենտուրա և Խոհաննա Զալեսկի-  
Շարին՝ ի Թիշտատկ հազար ուր հարյուր  
քսանուր թվականի, նվիրում է նեղինակը:

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Դար է անցել այն օրվանից, ինչ Օրդենը խաչակիր  
Այլադավան անօրենի արյան մեջ է լողանում.  
Նրա ձեռքով պրուսակն արդեն հանձնվել էր կապանքի  
Կամ, որպեսզի փրկվի մահից, հայրենի հողն էր թողնում:  
Խսկ փախչողին ասպետն արդեն հալածում էր այս անգամ,  
Ճետապնդում ընդհուպ մինչև սահմանները լիտվական:

Լիտվիններին և Օրդենին նեման գետն էր անջատում:  
Այս մի ափում՝ կույս անտառներ աստվածներով բնակված,  
Մյուս ափին՝ բլրի վրա, ամպերի մեջ բռնըկված,  
Խաչն էր շողում, խաչը, որից ասես արյուն էր կաթում:  
Սիմվոլն էր դա գերմանացու, որ կարծես թե բարձունքից  
Սպառնում էր լիտվիններին, թե կրերի նա ծունկի  
Պալեմոնի հետնորդներին իրենց հողով բովանդակ  
Ու կսեղմի, ու կճգմի իր երկաթե ձեռքի տակ:

Այս մի ափում՝ երիտասարդ լիտովցինները ահեղ,  
Միշտ անբաժան նիզակներից ու ձեռքերին նետ-աղեղ  
Լուսնակաշվե գլխարկներով, հազած արջի հաստ մորթի,

Իրենց սահմանն են պահպանում ոսոխներից տմարդի:  
Խսկ նեմանի մյուս ափը գերմանացին է պատել.  
Զինված աճեղ հրազենով, սաղավարտով պողպատե,  
Նստած իր ձին ու քաշելով իր համրիշը ահագին՝  
Հետեւում է զօր ու գիշեր թշնամական բանակին:

Ինչպես սրանք, նույնպես նրանք հետեւում են գետանցին:  
Եվ նեմանը, որ իր անդավ բարեկամ էր միշտ հոսել,  
Շաղկապել էր եղբայրական տիրովյուններ դրացի,  
Մահվան դրաւ. էք դարձել հիմա, դարձել էր նա մահվան սեմ,  
Ով ուզում էր ստրիանալ և կամ զրկվել իր կյանքից,  
Նա՛ կարուր էր միայն անցնել նեման գետի սահանքից:  
Լոկ լիտվական գայլուկ բույսը, աղջկա պես հերարձակ,  
Սիրահարված գերմանական շիտակիրան բարդենուն,  
Ինչպիս առաջ՝ իր թները տարածում էր համարձակ.  
Անցնում գետը, թշնամական այն ափին էր մոտենում,  
Առափենյա թփուտներին ու սոտերին թիկնելով՝  
Փաթաթվում էր իր սիրածին՝ խոր հուզմունքից շիմնելով:  
Մեկ էլ միայն սոխակները կովկենական անտառի.  
Թուշում էին դեպի այն ափ, ընկերներին հանդիպում,  
Ու խմբվին մեկանու երգում լեռնակուտակ այն ափում,  
Երգում լիզվով լիտվինների, երգում քաղցր ու անթերի  
Եվ խորթացած կղզիները նորք իրար շաղկապում,  
Հապա մարդի՞կ... նրանք արդեն լիտովցու և պըրուսի  
Մտերմությունը. հինավուրց վագուց էին մոռացել, —  
Մոլիգնում էր. թշնամանքը. Սակայն սերը մնացել,  
Սերն ապրում էր են ևս այսօք, վերհիշեցի երկուսին:  
Նեմա՞ն, մահն է քեզ, մոտենում իր ոսկրացած ձեռքեղու,  
Եվ հրդի՞ն պտուահռովմը արգեն քո շուրջն է պարտաւ:  
Քո ափերի թափուտներում կաղմիներ է տապալում  
Սուր կացինը՝ քեզ քա շքնազ, դանգուրմերից զրկելով:  
Սոխակները կահարեկվեն թնգանոթի որոտից,  
Եվ բարեկամ զույգ ազգերին կապող թելը կհատի՝  
Ողջը փոշի կդարձընի թշնամությունը դաժան:  
Լոկ սիրահար զույգի սերը, միայն սիրմ' րզը սրտի  
Երգերի. մեջ վայգելոտի միշտ կմնա անքաժան:

## ԸՆՑՐՈՒԹՅՈՒՆ

Մարիենբուրգարան աշտարակից Վեխնց ձայնը զանգերի,  
Միախանանից գլորոցյունը թմբութերի, գլուխերի:  
Սուրբ Օքտենի համար այսօր տոնն է մեծ ու փառակալոր.  
Մայրաքազաք են ալանում առաքեները Ձեռակոր,  
Մայրաքազաք, ուր ամեն ինչ պատրաստել են ողջ պիչեր,  
Ուր սուրբ հոգու ներշնչումով պիտի այսօր որոշեն՝  
Ո՞վ մեծության հանդերձ պիտի հաղթ ուսերին իր կրի  
Եվ ուժ պիտի հսկա ֆուրն ու ոսկե խաչը զարդարի:  
Թնարկում են Տարցը Մի օր, երկրորդ օրն են քննարկում,  
Քիչ փառակալ ասպետներ չեն մեծ պատփառ այն վիճարկում,  
Մեզ ասպետներ, որ ոչ ծագմամբ, ոչ քաջությամբ ու խլճով  
Ուրիշներից են շնորհում ու շնորհում ուշնչով:  
Բայց հավաքը իր վերինական խոսքն ու վճիռն է ասում՝  
Բոլորից վեր ու փառակալոր Կռնդապին չ' նա դառնում:

Պրասիաբում՝ ամնհար մի ոք, ոստարակուն՝ որդենորուն,  
Սուրբ Օքտենին առնենութեք իւսուք ու ուղարկութ նաև թերեց:  
Նա՛ շախցակնեց ու մալքութին և առատիշումն գլուխներուն,  
Նա՛ օսմանցուն հազմեց ծովառ, ճառա ուսքամփար ցրեց,  
Նա՛ իր զարդուզ ապրուսի այցեց անօրիններ ու առինութիւն:  
Առաջինն էր նա և մարտում, և մրցման մեջ: Ո՞վ էր Թին  
Վալլենրոպի վրնջացող նժույզի գեմ կհանձր,  
Եթև նա իր գեմքը ծածկող երեսկալը ետատանկր:  
Այնժամ ոչ մի գոռոզ ասպետ ձեռք չէր պարզի նկազին,  
Որ Կռնրազը շարժանանար կրկին դասին պասկի:  
Նա ոչ միայն փառավորվեց սիրանքներով ուսզմական՝  
Մարտնչելով իսաշակըրաց զորքերի մեջ շարունակ,  
Այլև կյանքում անտեսելով օգուտն ու կյանքն անձնական,  
Առաքինի վարչով դարձավ ուրիշներին օրինակ:  
Եորին էր նրան պալատական քծնալից կյանքն աշխարհիկ,  
Նա չէր զգում ստորացման, ճարպիկ խաղի թույլ կարիք,  
Թա փր պինքը, բազի ուժը, իր պատիվը չէր ծախում  
Իրար հանդեպ թշնամացած բարոններին արնախում:

Պատանությունն անց էր կացրել նա հեռավոր մի վանքում,  
Գայթակղման վտանգից զերծ, հեռու մեղքից աշխարհիկ.  
Խորի էր նրան աղջիկների, կանանց ծիծաղը զնգուն,  
Զէին հուզում մենեստրելի երգերն անգամ քաղցրալիք,  
Ոչ մի բանով չէր վրդովվում նրա սիրտն ու պարզ հոգին,  
Դրվատանքին ու գոփեստին նա չէր տալիս ոչ մի գին,  
Գեղեցկությանն առանց մթին ցանկության էր նա նայում,  
Դատարկամիտ զրուցները նրան չէին հմայում:

Անտարբեր էր նա ի ծնե՝, թե՝ տարիքն էր մեղավոր,—  
Հեշտ չէր ասել: Թեպետ ջահել՝ գլուխն արդեն թել առ թել  
Սպիտակած մազերն էին նկատելի արծաթել,  
Իսկ այտերին նրա դալուկ սառնությունը՝ ահավոր  
իր կնիքն էր արդեն դրել: Լինում էին և պահեր,  
Երբ նա անփույթ կատակում էր անկշռադատ ու ջահել  
Ասպետների հոծ խմբի մեջ՝ սրամտո՛ւմ, զրուցո՛ւմ,  
Շաղ էր տալիս շոյիշ խոսքեր՝ անհոգորեն ժպտալով,  
Նուրբ հեգնանքով և աննկատ ծաղրով նրանց սնուցում  
Այնպես, ինչպես երեխային՝ քաղցրավենիք ցույց տալով:  
Սակավ էին լինում սակայն նման պահ ու նման ժամ:  
Մեկ էլ հանկարծ, անակնկալ, այլոց համար աննշան  
Ու աննշմար ինչ-որ մի խոսք, ինչ-որ ակնարկ կամ վարմունք  
Պատճառում էր նրա հոգուն մի անսովոր շփոթմունք:  
Պարտք, արշավանք խաչակրաց, լիտվաց երկիր, հայրենիք,  
Սեր բառերից ամեն անգամ շփոթվում էր նա սաստիկ:  
Նա ամբոխից պալատական խույս էր տալիս ու խորշում,  
Եվ կնծիռներն էին նրա սեգ ճակատը ակոսում,  
ինչ-որ խոհից ծանր ու համառ, ինչ-որ հոգսից անպատում  
Նրան նորից մոայլություն ու թաքուն ցավն էր պատում:  
Նրա համար կյանքում միայն մի խնդություն էր մնում  
Ուրախ էր մի ընկերությամբ — ուներ նա մի բարեկամ  
Աղոթքներից կորված մեջքով մի ալեհեր վանական,  
Մի մարդ, որին բոլորն այստեղ Հալրան էին անվանում:

Նա էր կիսում մենությունը և խոհերը Կոնրադի:  
Նրան, իրեն իր հույզերի ու մտքերի միջնորդի,  
Խոստովանվող մարդու նման Կոնրադն իր սիրտն էր բանում:  
Երանելի՝ ընկերություն: Եվ նա է սուրբ իսկապես,  
Ով սրբի հետ իր մտքերն ու խնդությունը կանի կես:

Ահավասիկ թե ինչպես է գնահատում Կոնրադին  
Խաչակրաց մեծ Օրդենի հավաքույթը վերադիր:  
Բայց արատներ նա էլ ունի — ու արատից ո՞վ է զուրկ.  
Նա չի տալիս այս աշխարհիկ բյուր ծեսերին ոչ մի տուրք,  
Չի հանդուժում նա հարրածի զրուցն անկապ ու ծանծաղ:  
Բայց, փակվելով իր մենավոր հարկի ներքո, նա հաճախ,  
Երբ դառնությունն ու թախիծը նրա սիրտն են ծվատում,  
Մոռացություն է որոնում ինքն էլ գինու գավաթում:  
Նրա դեմքը այդ պահերին նոր երանգ է ձեռք բերում:  
Այդ գունատ ու խստարար դեմքի ծանոթ գծերում  
Հիվանդագին կարմրությունն է շողքը փռում, իսկ նախկին  
Բիլ աշքերը, որոնք հիմա կորցրել են փայլ ու գույն,  
Բոցկլտում են նախկին փայլով, առաջվա պես կայծակում:  
Եվ խոր հառաջ է արծակում տառապահար այդ հոգին,  
Մարգարիտներ են շողշողում նրա շաղված աշքերում:  
Ո՞ւր է վինը: Նա կարոտ է, նա ծարավ է երգելու:  
Թո՞ղ որ լեզուն անծանոթ է, բայց լսողները սրտով  
Հասկանում են մելամաղձուր երգի հմայքը անբավ,  
Ելեզներն են ընկալում ու մեղեդին հոգեթով:  
Բավական է նայես երգչին՝ կհասկանաս ամեն բան.  
Նա այդ պահին, իրեն աղեղ, հիշողությունն է լարել,  
Մտքով բռնել շատ հարազատ, բայց հեռավոր մի ճամփա՝  
Նա աշխատում, ջանում է նա ժամանակը ետ բերել:  
Ի՞նչ կա նրա այդ երգերում, ի՞նչ երազանք, ի՞նչ կարոտ:  
Հավանաբար նա սուրում է պատանության հետքերով,  
Պատանության, որ սլացել, որ մնացել է հեռու:  
Ո՞ւր է նրա հոգին հիմա: Հիշողության աշխարհում:

Սակայն երբեք, ոո՛չ մի անգամ իր այդ վիճից բազմաշար  
նա չէր կորզում ռարսախոսաթյան ոչ մի չնշուն, ոչ մի բառ,  
իր պահաժամի շրթունքներից նա ժպիտն է հալածում, —  
ժպիտն ասես նորա համար հանցանք լինի մահացու  
Վինը նրա մատների տակ միշտ իր տանջանքն է լալիս  
Ու երգերով լսողներին իր հուզումներն է տալիս.  
Այնտեղ միայն խնդոքաթյունն է, որ ոչ մի կերպ չի շնչում,  
Այնտեղ միայն հուզի լարն է կարծես մեռած — չի հնչում:

Միաբաններն անակնկալ ներս մանելով՝ շատ հաճախ  
Նկատել են, թե ինչպես նա, ուչքի գալով, անհապաղ  
Զայրացագին մի շարժումով ձեռքի վիճն է դեն նետել  
Եվ իր սիրած նոր սկսած երգը հանկարծ ընդհատել.  
Հեղեղի պես անեծքներ են շրթունքներից հոսել ցած,  
Շնչացել է Հալրանին՝ նրա ուսին կռացած,  
Հետո այնպես, կարծես զորքին հրաման է հաղորդուն,  
Նա տվել է փնշառը՝ մենքին խթառ պատժելու սուրբ երդում:  
Այս ժամանելով՝ ներկաները շփոթվել են զարմանքից,  
Լոկ Հալրամն է նայել նորան, նայել նորան մի հանգիստ,  
Մի անվերտով, բացց համառու մարդութանու հարացքով:  
Ի՞նչ էր առաօմ ացդ հարացքը, նախասո՞ւմ էր, պատրաստո՞ւմ, —  
Հեշտ չէ առաջ: Թարգ փր առափազն, որ կարծես թե հրաշքով  
Կոնրադն իսկաբան այսպիսվում, մեղմանում էր,  
Հանդիպատում՝

Նայում էր նա մեզմ հարացքով, մնանու ճակատը հարթաւմ:  
Այսպես՝ միայն առյուծներին սանձահարողը հանգիստ  
Բաց է անսամ մացարանում փակ դռնակը վանդակի,  
Հանդիսատես ժողովրդից թույլտվություն է հայցում  
Ու նշան է տալիս, և ի՞նչ — անապատի գոռ արքան  
Մոնշում է այնպես ահեղ, սարսափելի՛, որ անգամ  
Փշաքաղվում են մազերը... Ով առյուծին է սանձում,  
Միայն նա է ի կիճակի մի նշանով աննշան,  
Իր աշքերի մի կենտ շողով, թալիսմանով իր հոգու՝  
Մի հայացքով որ ուժեղ է, քան թե ամեն խարազան,  
Մեղմել դաժան գաղանների մոլեզնությունն ահարկու

## II

Մարիենբուրգյան աշուարակից հնչեց ձայնը գանգակին  
Դատապիվեցին. հավաքացյթի դաշները աճնագին։  
Հետևելով մագիստրովագին. միաբանները, շարքավ  
Եզ ծազիկը ասպետության դեպի տաճար դիմեցին,  
Որ հոգիներն իրենց մասքրին պրագնագուցն ազաթուով,  
Փառաբանն է Հոգիովան սրբով. Հարք, Արքունա միջամտին։

### ՕՐԱՅԻՉՅԻ

Ո՞վ սուրբ հոգի արարշական,,  
Ո՞վ աղավնի սուրբ Սիոնի.,  
Ո՞ջ աշխարհը քրիստոնեկան  
Քո սուրբ գահի պատվանդանին  
Այժմ և միշտ և հավիտյան դրւ ընդունիրք  
Փառավորիր այսօր դրւ մեկ քո սուրբ հրով  
Եվ՛հովանի եղիր այսօր քո թևերով  
Եղբայրներից արժանավոր եղբոր համար:  
Թող քո կամքավ նրա համար  
Այժմ և միշտ և հավիտյան կիմնի ամառ:  
Նրա առաջ ծունըր դնենք այսօր կրկնն,  
Քանզի նրա անհաղթ ձեռքին  
Պիտի շողա շահը փառքի:  
Փրկի՛ շորդի, քո սուրբ աջով  
Լիւավորիր փարախն աստծո,  
Նաև նրան, ով առաջինն է արժանի.  
Սառայելու քո սուրբ ոտաց,  
Ով վերքերը քո սրբազն կպահպանի,  
Ով ի վերա անհավատաց  
Մեկը Պետրոսի ահեզ թուրը պիտի հանի.,  
Ով Հիսուսի լույսով հստակ,  
Քերովքական ճախրանքի տակ:  
Մրանց կրւյց աշքը բաց կանիւ  
Եզ բովանդակ,  
Աշխարհը թող ծունըր դնի  
Թրոշի տակ սուրբ Օրդենին

Երբ աղոթքը ավարտվում է, տաճարից դուրս են գալիս: Մագիստրոսը առաջարկում, նրանց խորհուրդ է տալիս Հանգիստ առնել, իսկ այնուհետ կրկին հայց ու աղոթքով Թարձրյալի կամքն աղերսել: Ու ցվըրվում ամեն կողմ, Կամ խումբ առ խումբ կամ առանձին զրոսնում են թարմ օդում.

Ոմանք՝ վանքի շքամուտքի աստիճանին նստոտում, Ոմանք՝ անցնում պարիսպներից, զրուցում են իրար հետ Սալարթաշատ այգիներում, պուրակներում բուրավետ: Դրսում՝ գարուն, մեղմ եղանակ, դրսում մայիսն է ծաղկում: Կապուտի հետ լուսար ծեփի արդեն կորիվ էր մտել, Գժգունել էր լուսնյակն արդեն լուսադեմի երկնքում: Մերթ ծածկվելով մուժի քողով ու մերթ փայլով արծաթեւ Սիրահարն է այդպիս տիրում այն պահերին, երթ թաքուն Այրվում սիրուց ու տանջվում է կասկածանքի խոցերից: Իր գոյության և իր կյանքի շրջանակը շափելով, Անց կենալով իր հույսերի, խինդի, խանդի ափերով՝ նա է այդպիս շառագունում, մերթ՝ իր կրքի բոցերից, Մերթ՝ զգալով, որ իր երազն ու հույսերն են խորտակվում: Նա է կրկին, որ վերստին մութ խոհերի է հակվում: Ասպետները, զրոսնելով, իրենց հանգիստն են գտնում: Լոկ նրանց մեջ մագիստրոսն է, որ ժամանակ չի վատնում: Ավագագույն եղբայրներին ու Հալբանին առնելով Եվ զրոսնող ասպետներից նրանց հեռու տանելով, Քայլում է նա՝ խուսափելով հետաքրքիր աշքերից, Կարգադրում, հրամայում ու խորհուրդներ ընդունում, Եվ շշուկը նրանց հանդարտ ու կարևոր խոսքերի Հեռանալով ապարանքից՝ մենության կողմն է գնում: Ու քայլելով ոնց պատահի, չփնտրելով ճանապարհ, Նրանք հասնում են մի լճի՝ շուրջն ամայի առապարք Ժամանակն է ետ դառնալու: Այզն է արդեն մոտենում: Եվ հանկարծ... ձայն: Ու որտեղի՞ց: Աշտարակի՛ց մենավորը Նրանք մի պահ կանգ են առնում ու լուռ ականջ են դնում: Դա այն կինն է, որ ինքն իրեն բանտարկել է կամավորը Մարիենբուրգ գալով մի օր հայտնի չէ թե որտեղից, Եվ անծանոթ, և անտեղյակ ապրողներին այս տեղի,

Կինն այդ եկավ որոնելու ողորմությունն աստղծու: Արդյոք երկնի կամեցությա՞մբ հրաժարվեց կենաց ծով Տվայտանքից, թե զղջումի խորհրդավոր ուժը մեծ Թաղեց նրան՝ դեռ կենդանի՝ աշտարակում այս մթար:

Աղաշանք ու պաղատանքի իր խոսքերով նա մեղմեց Սիրտը նրանց, որ խեթ էին նրան նայում: Նա գտավ Իր անդորրը՝ ներս մտնելով աշտարակի դարբասից: Եվ անցնելով սեմը նրա՝ կինն այդ մնաց այնուհետ Սիրայն աստծու և մենավոր իր սեփական հոգու հետ — Դուռը փակեց ինքը ներսից, իսկ ուրիշները՝ դրսից: Եվ ոչ մի ուժ էլ չի կարող դուռն այդ բացել այսուհետ, — Սիրայն ահեղ դատաստանին հրեշտակներն են կարող Բացել դուռն այդ՝ ներսից փակված, դրսից շարված լեռ քարով:

Վերից փոքրիկ մի ճեղք ունի լուսամուտը այդ խցում, Եվ այդ անցքով բարի մարդիկ ուտելիք են ներս գցում: Փակ խցից դուրս — պայծառ երկինք, զվարթ քամի և արեւ Ո՞վ մեղսուհի, թշվառակա՞ն, ո՞վ տարաբախտ ու խեղճ քուրը,

Բիրտ աշխարհը այնպիս է քեզ մի՞թե տանչել, շարշարել, Որ դու խույս ես տալիս լույսից, անգամ օդից այս մաքուրէ Այն օրվանից, ինչ այս շիրմում փակվել է նա ինքնակամ, Գեթ չեն տեսել, որ դուրս նայի լուսամուտից մի անգամ, Դիմավորի արարչական արեգակին նոր ծագող Եվ կամ նայի լուրթ երկնքին մի անբարբար ըղձանքով: Գեթ մի անգամ նրան գոնեն ծաղիկները գրավեն, Գեթ մի անգամ նրա հոգին ջերմ հուշերը խոռվեն Իր հարազատ մարդկանց մասին, որոնք թանկ են առավել Ու սիրելի, քան ծաղկունքը, քան արեգակը անգամ:

Լոկ գիտեին, որ նա դեռ կա, դեռ ապրում է իր բանտում: Մեկ անգամ չէ, որ ինչ-որ ձայն և հաճելի, և տրտում, Աշտարակի կողքով անցնող անծանոթին մի վայրկյան Կանգ առնել է հարկադրել, — երբէ ձայնը դյութական, Որով կինն այդ փառաբանում ու կանչում էր աստղծուն:

Մանուկները շրջակայքի պրուսական գյուղերի,  
Աշտարակի մոտակայքում տրված իրենց խաղերին,  
Շատ անգամ են տեսել ծանոթ նույն տեսիլքը նույն խցում—  
Մազե՞րը ճոխ ու ոսկեգույն՝ համեստորեն կես արած,  
Ինչ գունաթափ ձեռքը, որ նա հեռվից հեռու տարածել,  
Իրիկնային կիսամթնում խաշակնքել է նրանց...

Մազիստրոսը իր խմբի հետ դիմեց դեպի աշտարակ,  
Եվ այդ պահին երգը հնչեց ձայնով կերկեր ու բարակ.  
«Կոնրա՞դ, պիտի ինքը տերը փառավորի քեզ այսօր.  
Մեծ մազիստրոս քեզ ընտրելով՝ ոսոխներին քո հզոր  
Պիտի քո դեմ ծունկի բերի: Քեզ դժվա՞ր չէ ճանաշել:  
Թեպետև դու, օձի նման, Հին շապիկդ ես դեն գցել,  
Որ արտաքուստ այլափոխվես, բայց նայնպես նո՞ւյն ես դու:  
Առաջվա՞նը, ինչպես որ ես առաջվանն եմ մնացելք  
Եթե բացեն ոսկորներդ էլ, որ շիրիմի մեջ են փտում,  
Խաշակիրներն, անշուշտ, էլի՞ քեզ կարող են ճանաշել...»  
Ասպետները ականջ դնում ու նայում են մեկմեկու:  
Ում են ուղղված այդ խոսքերը և այդ երգը: «Արդյոք ո՞ւմ:  
Ներս են նայում լուսամուտից: Մեկնած ձեռքերն իր օդում՝  
Ո՞ւմ է արդյոք նա ցույց տալիս: Հեռվում չկա ոչ մի մարդ,  
Հեռվում միայն աղոտ մի լուս առկայծում է ու թարթում,  
Ասես լինի ասպետական ինչ-որ փայլուն սաղավարտ,  
Մեկ էլ՝ գետնին ինչ-որ թիկնոց իր սկ ստվերն է գցել:  
Իսկ կինն արդեն անհետացավ: Տեսի՞լք էր դա միգուցե,  
Գուցի մտքի պատրա՞նք էր դա, խարեռիթյո՞ւն էր աշքի՝  
Լուսածագի ոսկեճաճանչ արեգակին նայելուց:

«Ո՞վ եղբայրներ,— Հալբանն ասաց, — դա ցուցումն էր  
երկնքի,  
Որ մեզ հիմա ներկայացավ երգի տեսքով վայելու:  
Մարգարեի սուրբ խոսքերի դուք նոր եղաք ունկնդիր:  
Այդ երգի մեջ հիշատակվեց և անունը Կոնրադի:

Մեր Օրդենում Կոնրադ անվամբ քաջ ասպետներ շատ շինան,  
Կա մի Կոնրադ՝ Վալլենրոդը: Եկեք այստեղ տանք երդում,  
210

Որ Մազիստրոս կընտրենք նրան առողջութան խորհրդում:  
«Ճի՞շտ է ասում: Ծշմարի՞տ է», — հնչեց իրբն պատասխան:

Ու դղրդաց աղմուկն ուրախ, ցնծությունը ամբարված,  
Երջակայքում առագետների կանչը հնչեց. «Իմացե՞ք,  
Վալլենրո՞դն է մազիստրոսը: Մեր Ֆոնդրա՞դն է ընտըրված:  
Թող Օրդենը փայլատակի՞ւ Յնհավատնե՞ր, շքացնե՞ք»:

Իսկ Հալբանը մնաց մենակ: Նա վանական ամբոխին  
Նայեց այնպես, ինչպես միայն նայում են շար ոսոխին,  
Հետո ձեռքով աշտարակին նա հրաժեշտ ուղարկեց  
Եվ իր ձայնով ծերունական հանկարծ այսպես նա երգեց.

#### ԵՐԳ


Վիլիան մայրն է մեր սառնորակ աղբյուրների,  
Մինչ հատակը՝ դեղին ոսկի, զուրն է հստակ,  
Բայց լիտվուհին, որ աղբյուր է գալիս շրի,  
Կապույտ աշքեր և սիրտ ունի խոր ու անտակ:

Վիլիան հառած է Կովկենյան ծաղկունք հովտով,  
Բուրում է նա կապաշների, վարդի հոտով.  
Իսկ լիտվուհուն շահեներն են շրջապատում՝  
Մաղեկց սիրուն ու հասակով նման բարդու:

Մաղիկներին Վիլիան բնավ չի էլ նայում,  
Նրան օտար նեման գետն է լոկ հմայում,  
Այսպես նաև լիտվուհուն շահել հոգին  
Մերոնց թաղած՝ որոնում է օտար մեկն:

Հանդիպելով մութ ու հուժկու մի հոռանքի՝  
Զուլալ Վիլիան սիրով նրա գիրկն է թուզում  
Առ նրա հետ սուրում է ծով, հաշտ ու հանգուու:  
Միրածի հետ վիճերի մեջ անհետ կարշում:

ԱՌԻ, լիտվուհի՝, քեզ էլ այդոքիս մի ժարդ օտար  
Պոկից մի օր, հնառու տարավ քո տան սեմից:



Հիմա, ընկած ահեղ կյանքի ծովը մթար,  
Սուզվում ես ուր ինչպես նավը զրկված կայմից:

Իզո՞ւր բան է ճամփա ցուց տալ սրտի՞ն, ջրի՞ն.  
Մա՞ հոսում է, նա տրվում է սիրո հրին,—  
Նեման գետն է խեղճ Վիլիային անվերջ ձգում,  
Իսկ լիտվուհին տառապում է աշտարակում:

### III

Կանոնագիրքը Օրդենի մագիստրոսը համբուրեց,  
Ու հանձնեցին այնժամ նրան հսկա թուրն ու խաչը մեծ:  
Բարձր է պահում նա գլուխն իր, թեպետ հոգսերը մթին  
Ստվերներն են իրենց թողել նրա հպարտ ճակատին:

Փայլատակող իր հայացքում խառնած և՛ խինդ, և՛ ցասում՝  
Շուրջն է նայում, և մի ժպիտ նրա դեմքն է ակոսում,  
Թո՞ւլ մի ժպիտ պատահական և շսպասված հյուրի պես:  
Առավոտյան արևելքից ելած ամպն է լոկ այդպես  
Լեցուն լինում լուսածագի ու կայծակի շողերով:

Իր մեծության հանդերձանքում՝ զրահապատ շորերով,  
Մեծամբավ գործեր է նա հիմա սրտով գուշակում:  
Նա մտովին գոռ մարտերի ծրագրեր է մշակում՝  
Անօրենի արյուն հեղում, ավար բաշխում օրերով:  
Այդ ի՞նչ արգելք, այդ ի՞նչ պատճեշ պիտի նրան դիմանա, —  
Իր հայացքով և իր զենքով աննվաճ է հիմա նա:  
Սուս է արդեն օրհասը քո, լիտվա՝, սարսիր ու դողա, —  
Քո Վիլնոյի պարիսպներին շուտով խաչը կշողա:

Թայց հույսերը անցնում են զուր: Մի ողջ տարի է թոշում,  
Իսկ Կոնրադը, հանգիստ նստած, ոչ մի գործի չի կպչում:  
Պատրաստվում է լիտվան մարտի, սպառնում է նա արդեն,  
Իսկ Կոնրադը ո՛չ ելնում է, ո՛չ զորք հանում նրա դեմ:  
Թե մի բան էլ անում է նա ու թե մի բան մտածում,

Ապա լոկ այն, որ հին կարգը նորության է վերածում: —  
Եղայրության հին օրենքն է, իբրը, հիմա զանց արված,  
Մոռացության է հանձնըված պատվիրանը արքենի.  
«Հարստության ախտը թողնենք, հրաժարվենք ի փառաց:»  
Առաքինի վարքն ու բարքը թող մեր համար փառք լինելու:  
Եվ հսկումով, մեղանշումով, ծոմ ու պասով՝ օր-օրի  
Փոքր ու անմեղ հաճույքներից նա զրկում է բոլորին,  
Փոքր ու անմեղ մեղքերի դեմ իր ահեղ թուրն է առնում,  
Մտորերկրյա զնդաններով ու աքսորով սպառնում:  
Մինչդեռ հիմա լիտվինները, որ նախկինում քաղաքի  
Դարբասներին իսկ մոտենալ երբեք չէին սիրո անում,  
Հիմա շենքերն ու գյուղերն են անվախ մատնում կրակի,  
Շրջակայքի ժողովրդին թալանում ու սպանում,  
Պարիսպներին մոտենալը նրանց վախ չի պատճառում,  
Պարձենում են, որ քեֆ կանեն շուտով աստծու տաճարում:  
Եվ մանուկներն են սեղմըվում խեղճ մայրերի կողերին,  
Երբ հնչում է ահեղ ձայնը ժմուղական փողերի:

Իսկ ե՞րբ պիտի վրեժ լուծել հարևանից այդ գոռոզ:  
Հարմար պահ է. կիտվան ինքը պառակտված է իր ներսից՝  
Անհնազանդ լսախն է այստեղ, այնտեղ ուստիշն է հերոս,  
Երրորդ կողմից՝ հանգիստ շունեն թաթարների երեսից:  
Յագելան էլ ահա գահից ցած է ցցել Վիտոլդին,  
Որ եկել է Մարիենբուրգ և օգնություն է հայցում:  
Ի հատուցում՝ նա օրդենին իր կալվածքներն է կցում,  
Բայց օգնություն մինչև հիմա չի ստացել քաջորդին:

Միաբանները հուզվում են, ասպետներին հավաքում,  
Հալբանին էլ Վալլենբողին փնտրելու են ուղարկում:  
Նա դղյակում չի երևում: Հավանաբար նա էլի  
Թափառում է այն մենավոր աշտարակի մոտերքում:  
Միաբանները տեսնում են նրան ամեն իրիկուն  
Արոտներով ու մարգերով դեպի լճափ քայլելիս:  
Այստեղ նա կամ թափառում է, կամ մարմարե սյունի պես  
Աշտարակի պատին հենված ու փաթաթված թիկնոցում,  
Հաճախ մինչ լույս, իսկ երբեմն էլ մինչ գիշերը լինի կես,

Աղոթքներով ու հոկումով հոգին աստծուն է բացառի  
իսկ մենավոր Աշտարակից երգի ձայն է եղբ բազմին,  
Այդ մեղմ երգին ցածր ձայնով պատասխան է նա առփառ  
Եվ ոչ ոքի գեռ հայտնի չէ թաքոն իմաստը գրանցու  
Սակայն նրա աղերսազին, դեպի երկինք երկարած  
Չույզ ձեռքերը, պատասխանի ձևն ու շեշտերը կայտն  
Այն անսովոր զրոյցների լըջությունն են վկայում:

### Երգ աշտարակից

Ո՞ւմ է հայտնի իմ տանջանքն ու տառապանքը,  
Այդ ո՞վ կտա իմ արցունքին համրանք ու թիւն՝  
Ե՞րբ է այնքան երկար տեսել հեկեկանքը,  
Որ վանդակն էլ արցունքներից ժանդապատիք  
Պաղ քարերը իմ արցունքներն են կու տաքիտ,  
Բարեկամին հոգուն կարծես հագուրդ տաքիու:

Սուրբ քուրմերը՝ մեկը մեկից վարակվելով՝  
Միշտ անմար են պահում հուրդ Ավենորազի:  
Ամենամյա անրիծ ձայնից նորոգվելով՝  
Միշտ զիշտ է մնում ազրուրը Մենդոգի:  
Սահման չկա իմ հառաշին ու արցունքին,—  
Կեղեքման է դառապարտված իմ խեղճ հոգին:

Հօր գուրգուրանք ու մայրական քնքաւշ ձեռքեր,  
Հաքսւտ դպյակ ու հայրենի ուրախ երկիր,  
Պատանության անհոգ օրեր, բայց ո՛չ վերքեր,  
Բայց ո՛չ գիշեր տանջակից ու անկարեկից  
Օր ու գիշեր, դդյակում թե դաշտում ազատ,  
Ինձ ամեն ինչ և՛ ծանոթ էր, և՛ հարազատ:

Մայրս երեք սիրուն դստեր ծամ էր հյուսում,  
Առաջինը պիտի մարդու ե՛ս զնայի:  
Մեզ ամենքիս երշանկություն էք սպառում...  
Ո՞ւմ շնորհիմ, ինչո՞ւ պիտի հասկանաք,  
Թե կա նաև ուրիշ մի կյանքը Դո՞ւ արեցիր,

Քո խոսքերով կույսիս հոգին հմայեցիր:  
Ինքը Տերը և սուրբ ոգիք իմ պարզ հոգուն  
Ներկայացան քո՛ խոսքերով: Դո՞ւ պատմեցիր  
Թե ինչպես են Կոստյոլներում պատարագում.  
Ասպետներից և՛ տաքարյուն, և՛ գեղեցիկ  
Իշխաններին աղջիկները ո՞նց են տիրում,  
Կույսին ո՞նց են հովիվի պես քնքուշ սիրում:

Դո՞ւ պատմեցիր հրաշալի այն աշխարհից,  
Որտեղ մարդը գեպի երկինք է վերանում:  
Ա՛խ, քեզ մոտիկ, քեզ լսելիս թվում էր ինձ,  
Որ իսկապես ինձ խոսքերը վեր են տանում:  
Ա՛խ, ես քեզ հետ, միայն քեզ գետ երկինք տեսա,  
Քեզ հետ միայն չար ու բարի բախտի հասաւ:

Կրծքիդ խաչը պատճառում էր ինձ խնդություն,  
Հավերժ բախտի գրավական թվաց նա ինձ:  
Վա՛յ ինձ, այդ նույն խաչն ինձ թաղեց հավերժ մթնում,  
Դարձավ մթին ճակատագիր, բախտի դահիճ:  
Սակայն գա չէ կորացրել իմ ուսերը,—  
Ողջ կորավ, բայց չեն կորել իմ հույսերը:

— Իմ հույսերը,— անտառներն ու հովիտները մերձակա  
Մեղմ կը կնեցին ու ձիգ տվին, իրեք սավոր արձագանք:  
Առ քրջաց Կոնրադն այնպես, ասես նրան ցնցեցին.

— Իմ հույսերը... ֆիշո՞ւ համար նրանք այստեղ հնչեցին  
Ինձ գիշ երգն այդ. ապրում էին երեք քույրեր բախտավոր,  
Երեք քույրեր երփառարգ, երեք քույրերը պաշտամիք.  
Առաջինը մարդու գնազ այդ գու էիր պարտավոր  
Եվ գնացիր՝ ամուսնացար: Վա՛յ ձեզ, ծաղկունք դաշտերիւ  
Թունոտ օձը թաքնովիլ գու ներ մատակա մարդիւնք:  
Գալարվելով ու խայմելով՝ առ առզում էր, առ վնաս,  
Զորանում էր այնտեղ խոտը, և վարդերը պիշերազ  
Թունում էին, պեղնազունքում շատրվիկ պես ոձերիւ  
Մոլի՛ր այստեղ երազանքով, թոփ՛ր աշխանդ հուզերով:  
Զէ՝ որ աղնածող այս ամենը չէր առվիրու բոցմարի:

Ու չէր տրվի, եթե... բայց դու ի՞նչ ես լոել: Օ՛, երգի՛ր  
Եվ նզովի՛ր: Տաք արցունքը թող պաղ քարերն այս ծակեն:  
Ես իմ զլիից վայր եմ բերում սաղավարտն այս խաշակիր,—  
Արցունքները՝ արյան նման՝ թող ճակատիս ցամաքեն,  
Թող ինձ այրեն, որ իմ աշբով տեսնեմ այն դատն ահարկու,  
Որ սպասում է ինձ այնտեղ՝ քստմնելի դժոխքում:

### Զայն աշտարակից

Ների՛ր դու ինձ, հարազա՞տս, ների՛ր դու ինձ, սիրելի՛ս,  
Ուշացար դու, շա՞տ ուշ եկար: Ճիշտ է, ես եմ մեղավոր,  
Որ իմ երգը տխուր հնչեց: Բայց դա էլ է ներելի, —  
Ա՞յս, կորուստը քո մեծ սիրո շատ է դառն ու ահավոր:  
Մենք եղել ենք քեզ հետ մեկ տեղ, մենք ապրել ենք Իհասին  
Կարծես միայն մի ակրնթարթ, կամ լոկ գուցեց մի րոպե,  
Բայց եղել է դա մի վայրկյան, երբ մենավոր երկու սիրտ  
Երկու սիրող կրծքի ներքո մի զարկով են տրոփել:  
Ես շեմ փոխի մենությունն այդ ցնծության հետ բազմամբոխ,  
Եվ վայրկյանն այդ՝ ողջ կյանքի՝ հետ, որ անցել է ճի՛շտ  
ճամփով:

Դու ինքդ ես ինձ ուսուցանել, որ շատ մարդիկ այս կյանքում  
Թե ապրում են, ապա՝ ինչպես խիսունջները լճակում.

Գոռ փոխորկի շնչով մի պահ նրանք նետվում են երկինք,  
Որ քիչ հետո տիղմում գտնեն իրենց հին տեղը կրկին:  
Չէ՛, նման կյանք ես երբեք չեմ երագել իմ կյանքում,  
Չէ՛, նման կյանք չեմ ցանակցել, երբեք չեմ էլ փափագում,  
Ես ճիշում եմ, հայրենիքում, դեռևս աղջիկ ժամանակ,  
Լիներ դաշտում, թե դղյակում, խմբով լիներ, թե մենակ,  
Ինչ-որ անհայտ բանի համար թախծում էի ես թաքուն,  
Սիրոս ինչ-որ բան էր հուշում, ինչ-որ փակ դուռ էր թակում:

Շատ է եղել, որ կտրելով մարգագետին ու հովիտ,  
Վազ եմ տվել դեպի հեռու բլուրները և, օդում  
Նկատելով արտյուտներին, ես պոկել եմ մտովին  
Արևի տակ փայլող նրանց ամեն թևից մի փետուր,  
Որ նրանց հետ, նրանց նման ուրախածայն ու թեթև,  
Կտցիս պահած մի վառ ծաղիկ՝ իբրև հողից հիշատակ,

Թռչեմ հեռու, թռչեմ վերև, ամպի հետև ինձ նետեմ,  
Հետո էլի թռչեմ-թռչեմ, կորչեմ մթին ամպի տակ:  
Գո՛ւ ինձ կյանքում թեւեր տվիր և մենք հիմա, իմ անգի՛ն,  
Երկնային լույս ճամփաներում, տե՛ս, պտտում ենք ու  
պտտում:

Ինձ ինչ փոքրիկ արտույտների ծլվոցը թարմ օդում,  
Մի՞թե կարող է նախանձել նրանց անմեղ ճախրանքին  
Նա՛, ով եղել է երկնքում մեծ աստծու հետ միասին,  
Ում սիրում է երկրում մի մեծ, աստվածային ամուսին:

### Կոնքադ

Մե՛ծ, էլի՛ մեծ ու մեծություն: Չէ՛ որ, անգին հրեշտակ,  
Ի սեր հենց այդ մեծությանն էլ մենք կորվեցինք վշտի տակ:  
Բայց թող կորչի փորձանքը շար: Հնչեց ժամը օրհասի:  
Եր ուժերի մնացուկը թող հավաքի ամեն սիրու:  
Ժլատ են այն արցունքները, որ անցյալն է պահանջում:  
Մենք լաց եղանք—թո՛ղ թշնամին իր հոգու քարը քաղիւ  
Ե՛ս լաց եղա—թո՛ղ թշնամին իր դիակները թաղիւ:  
Բայց դու, անգի՛ն, ինչո՞ւ համար, ինչո՞ւ ես զուր քեզ  
տանջում:

Ինչո՞ւ խաղաղ կյանքդ թողած՝ եկար այստեղ հասար դուք  
Այն ապահով մենաստանի պարիսպներում հուսատու  
Ուզում էի ես քեզ պահել, փորձանքներից պաշտպանել:  
Լավ չէ՛ր արդյոք մնալ այնտեղ, ապրել հեզ ու հաշտարար,  
Քան գալ այստեղ, ուր սովոր են խարել, ստել, սպանել,  
Քան գալ այստեղ, մտնել շիրիմ՝ մտնել մի փակ աշտարակ,  
Չօր ու գիշեր տրվել հսկման, տրվել տրտում տաղերի,  
Նայել անգութ այս վանդակից՝ հենված նրա ճաղերին  
Եվ գեպի ինձ հեռվից-հեռու թույլ ձեռքերը կարկառել:  
Խսկ ես... իսկ ինձ ի՞նչ է մնում—ինքըս ինձ հետ պայքարել՝  
Քո տանջանքը վերապրելով, անգորությունն զգալով,  
Հարյուր անգամ իմ բախտը սկ և մի հոգին սգալով  
Նրա՛ համար, որ այդ բախտը քեզ այրում է ու տանջում,  
Նրա՛ համար, որ այդ հոգում հին ձայներ են դեռ հնչում...

## Հայն աշտարակից

Թե միտք ունես դու ինձ այդպիս հաճդիմանել ու սատել,  
իմ դաժան նըս, աղաջում նմ, էլ մի՛ արի դու այտաեց  
Եցա զնդանում հավետ անդուռ, մետաղակոփ այս ցանցում  
Լուսից ծնված ո՞չ մի սովոր, ո՞չ մի շող չի թափանցում  
Արցունքները կթաքցընեմ՝ ևս կու կտամ առանձին...  
Իսկ դու.. նոյնի դու բախտավոր ինձնից հեռու, առանց ինձ,  
Թող հագերժի ծոցը սուզդի այն վայրկյանը ահարիու,  
Երբ իմ հանդեպ դու կորցրեցիր կարեկցանքը քո հոգու

## Կոնքադ

Ախ չէ՛, ախ չէ՛, իմ հրեշտակի: Օքն հանդարժ իմ հանդեպ  
էլ գթասիրտ գու շինեն, հավատո՞ ինձ, այս պատճին  
հիմնավ այս քարե պատին՝ ևս իմ գանդը կշարժեմ,  
Որ դու լինես ականատես կայենական իմ մահին:

## Հայն աշտարակից

Ա՛յս, դու ճիշտ ես. ծամանակին է, որ մենք խղճանք մեկմեկոււ  
Մի՛ մոռացիր, որ աշխարհը չունի սկիզբ, չունի վերջ,  
Եզ մենք, սեր իմ, ի՞նչ ենք արդյոք—ոչ այ ինչ ենք, քան  
Գրիու

Ճողի կաթիկ՝ անապատի ավագենիր ծովի մեջ:  
Անապատի տաք խորշակից եթե դառնանք մենք շոգի,  
Մենք կնուրդնենք և կկորչենք իբրև մի պիտ ու հոգի  
Ջեկա այտաեղ, որ քեզ տանշեմ, քեզ՝ պաշտելի իմ անձին,  
Բայց ես սէլսել չի կարող և ինձ հանձնել քոնձին,  
Դու համացի՛ր, չի կարող տրվել կամքին աստղեա,  
Երբ իմ հոդին լի եր քնզնով՝ իմ հողածին սիրածով:  
Ես շանացի առյուղ այնանդ՝ մենաստանում հուսվոր  
Ու նվիրվել աղոթքների, արքել ծոմի ու պասի,  
Բայց ինշան էլ աշխատեցի, ողը թխաց ահազոր—  
Ապրել քնզնից այդքան հեռու, շառըն քեզ հետ միասի՞ն:  
Ես դիտեի, որ դանձարազ կրկին տապես ահարկու,

Դու վերստին կհայոնվես Մարփենքուրգ քաղաքում,  
Որ, ապրելով թշնամու հետ, էլի՛ բռնես քո ճամփան՝  
Դառնաս քո խեղճ ժողովրդին զորավիզ ու պահապան:  
Հույսը միշտ էլ տարիների ծիգ ժամկետն է կրծատում:  
Մտածեցի. գուցե կգամ կամ վաղուց ես դու եկել,—  
Մի՛թե մեղք է երազելը և ո՞ւմ համար — մի մարդու,  
Որ ինքն իրեն, գեռ կենացանի, շիրմի մեջ է բանտարկել,  
Որպեսզի գեթ սիրածի հետ աեւակցություն երազի  
Ու թե մեռնի, ապա մեռնի գեթ նրա հետ միտասին:  
Որոշեցի ճգնել այնտեղ, ուր մի նեղլիկ ճանապարհ  
Անց է կենում անապատով, հասնում մինչև լեռնապար:  
Գուցե մեկը, մտածեցի, անցնի կողքովն իմ խուցի,  
Մի խաչակիր գուցե հանկարծ ինքն իրեն հետ զրուցի,  
Աւ քամին էլ ինձ հասցընի թանկ անունը այն մարդու,  
Որ տիրում է իմ մտքերին, որ իշխում է իմ սրտում:  
Եվ կամ գուցե ինքը անցենի այս կողմերով մի անգամ  
Բոլորպին ուրիշ տեսքով, օտար զենք ու հագուստով,—  
Մինույնն է՝ իսկույն նրա մոտիկությունը կզգամ,  
Ուրիշներից կտարբերեմ, կճանաշեմ իմ սրտով:  
Իսկ թե ծանր պարտքը նրա հարկադրի մահ ցանել,  
Ամայություն փուել շորս կողմ, ավերել ու սպանել,  
Անեծքների տարափի տակ, ի պատասխան նզովքի,  
Նրա համար լուս կաղոթի, նրան կօրհնի իմ հոգին:  
Ես ուզեցի ինձ արսորել, այս մութ շիրիմը մտնել,  
Որ թախիծն իմ, որ իմ լացն ու հառաջանքը շմատնեմ  
Օտար աշքին ու ականջին: Ես գիտեի, որ մենակ  
Սիրում ես դու թափառել գիշերները շարունակ:  
Ես երազում, տենչում էի, համառոքեն սպասում,  
Որ մի օր էլ գուցե հանկարծ ընկերներից քո վախչեա,  
Գաս այս կոզմը, ուր լճակը քամու հետ է փսփսում,  
Ինձ հիշելով, գուցե հանկարծ նաև ձայնս ճանաշես:  
Համբերատար իմ աղոթքին արարիչը սևնկ գրեց՝  
Տրտմաթախիծ իմ երգն ահա այստեղ՝ ինձ մոտ քեզ բերեց  
Ա՛յս, ինչքան եմ ես երազել, որ քնիս մեջ, երազում,  
Գեթ մի անգամ դեմք տեսնեմ՝ թեկուզ անխոս և անզու

Եղինչ—ահա ինձ մոտ ես դու, և՛ լսում ես, և՛ խոսում,—  
Միասին ենք մենք լաց լինում...

### Կոնրադ

Քայց ի՞նչ կանես արցունքով:  
Դու հիշո՞ւմ ես, դառնակսկիծ արտասվեցի ես այնժամ,  
Երբ ինքնակամ իմ երկրային բախտը հավետ կորցրի,  
Երբ թողեցի քո գիրկը տաք՝ հանուն ահեղ ու դաժան  
Ավերումի, արնահեղման; հանուն դժնի գործերի:  
Եղիմա, երբ վերջն է հասել իմ ահավոր սպասման,  
Երբ հատուցման ու վրեժի սուրն եմ արդեն հեսանում,  
Քո գալուստով ինձ իսանգարում, ինձ թեաթափ ես անում  
Եղի ազատում ես թշնամուն ալիքներից իմ ցաման:  
Այն վայրկյանից, երբ ձայն տվիր այս քո բանտից ահավոր,  
Ողջ աշխարհը շրվեց կարծես, ծխով ծածկվեց ինձ համար,  
Դարձա ինչ-որ ես անտարբեր, և աշքերիս հանդիման  
Լոկ այս լիճն է, աշտարակն այս, քո վանդակը ճաղավոր:  
Չորս բոլորը իմ զինավառ զորքերն են խուզ աղմբկում,—  
Եղի տագնապի թմբկահարում, և՛ զենքերի սուր շառաշ,  
Իսկ ես... իսկ ես լոկ լսում եմ հառաշանքը քո հոգու,  
Եղի քո տանջված կերպարանքն է օր ու գիշեր իմ առաջ:  
Օրն ինձ համար լոկ լեցուն է սպասումով այս բարի,  
Թե գիշերը մեզ կգըթա ու գթալով՝ կերկարի.  
Երիկունը՝ նրա համար, որ անցածն է վերհշվում,—  
Ես իմ կյանքը գիշերների համրանքով եմ լոկ հաշվում...  
Այնինչ Օրդենն ինձ կշտամբում ու կովի է կոշ անում,  
Զիմանալով, որ դրանով ինքն իրեն է կործանում:  
Վրիժառու Հալբանն էլ ինձ շտապեցնում անարդար,  
Երդումներս է հիշել տալիս, հանդիմանում է արդար:  
Իսկ երբ նրան ես շեմ լսում՝ իր հայացքով մոլեգին,  
Իր հայացքով կշտամբալից և իր ծանըր հառաշով  
Նա իմ վրեժն է բորբոքում ու կիզում է իմ հոգին:  
Մոտենում է օրհասն արդեն, դա չես վանի ոշնչով,—  
Խաշակրաց արշավանքը անհնար է կաշկանդել:  
Եղինչ էր հենց, որ Հոռոմից եկավ այստեղ սուրհանդակ.  
Խաշակրաց հոծ խմբեր են, որ կիտվում են երկնի տակ,

Պահանջում են, որ Կոնրադը, որ ես Վիլնոն իմ քանդեմ,  
Որ զորավոր մեծ խաչն առնեմ, արյուն թափեմ ահավոր:  
Իսկ ես (ամո՞թ, հազա՞ր ամոթ), երբ որ բախտն է որոշվում:  
Երկու ազգի, ժողովրդի, նստած՝ ժամերն եմ հաշվում,  
Թե երբ նորից քեզ կտեսնեմ քո վանդակից ճաղավոր:  
Պատանություն, դու շոայլ ես, և որոշմամբ ես անխախտ:  
Զահելության իմ օրերին ես զոհեցի սեր ու բախտ  
Հանուն իմ խեղճ ժողովրդի՝ ինչ ունեի այրեցի:  
Ու քայլեցի՝ ափսոսանքով, քայց և հաստա՞տ քայլեցի:  
Հիմա մազերս են ճերմակել, պարտքը և կամքն աստըծո:  
Ինձ կոշում են ի զեն, ի մարտ, իսկ ես տարիքը առած,  
Աչքը քո փակ աշտարակի լուսամուտին միշտ հառած,  
Սպասում եմ քո մի բառին, ապրում քեզնից լսածով...»

Ու նա լոեց: Աշտարակից լոկ հառաշանք է լսվում,  
Էլ ո՞չ մի բառ, էլ ո՞չ մի ձայն: Այդպես գիշերն է կիսվում:  
Հորիզոնը ազատվում է աղջամուղի քողերից,  
Լիճն է շիկնում վաղորդայնի բոսորափայլ շողերից,  
Առախնյա թփուտներն են քամուց շրջում ու դողում,  
Արթնանում են թոշունները, անմեղորեն ճռվողում,  
Հետո լուսմ հանկարծակի, հասկանալով երեխ,  
Որ ավելի վաղ են զարթնել, քան շողերը արեկի:  
Ու Կոնրադը ոտքի ելափ, Երկարատև հայացքով  
Նայեց նա փակ աշտարակին, նայեց նա փակ վանդակին,  
Ասես քնից նոր արթնացած՝ հրաժեշտ տվեց նա ձեռքով:  
Նայեց շուրջը: Առավոտ է: Երգն է հնչում սոխակի:  
Երեսակալն իշեցըրեց, լայնաքղանցք թիկնոցով  
Դեմքը ծածկեց, վերջին անգամ մի տրտմագին հառաշով,  
Երբեկ նշան հրաժեշտի, ձեռքը շարժեց թարմ օդում  
Եղի շքացավ թավուտում:

Եկեղեցու գավթից այդպես շար ոգին է դուրս փախչում:  
Առավոտյան, երբ զանգերն են հանդիսավոր դողանջում:

## ԽՐԱՋԵՑՔՆՔ

Հասավ օրը մեծ ցնծության՝ հասավ օրը պատրոնի:  
Ամենուրեք՝ խաչակիրներ. ամբոց, դղյակ, բերդ ու վանք  
Զարդարված են դրոշներով. և ի պատճիվ սուրբ տոնի  
Ահա տալիս է Կոնրադը ասպետներին խրախճանք,

Հարյուր սեղան և նրանց շուրջ՝ հարյուր ճերմակ պատմուման,  
Եվ ամեն մի պատմումանին՝ ուս խաչ, մարդու հասակի.  
Թիկնաթոռին՝ միարաներ, աստիճան առ աստիճան,  
Իսկ հետևում ամեն մեկի՝ կանգնած մի խումբ զինակիր:

Կոնրադն, անշուշտ, սեղանի շուրջ բարձր է նստած ամենից,  
Նրա կողքին քաջ Վիտոլդն է, շրջապատված իր զորքով:  
Նա՝ Օրդենի հին թշնամին, մղված ոսից ու քենից,  
Արդ պատրաստ է իրում զիս ելել ամբողջ իր կրքով:

Մագիստրոսն է ռաքի կանգնառմ. «Փա՛ռք ափբարը», — և  
վնասում

Շողշողում են բաժակները: Հարյուր հագի, հունակայս,  
«Փա՛ռք տիրոջը» կրկնակաղ՝ գավերն իրար են զարկում,  
Եվ հոսում է կարմիր գինին՝ ծովի նման անպակաս:

Իսկ Կոնրադը, հենված ձեռքին, արհամարհանքը դեմքին,  
Հետևում է գինարբութին: Հանկարծ աղմուկն է լոռու,  
Լոկ ուշացած զրնգոցը ինչ-որ մեկի բաժակի,  
Կամ հարրածի կատակն է լոկ լոռությունը խանգարում:

«Այդ ինչպե՞ս եք դուք քեֆ անում: Ձեզ, ասպետներ, ի՞նչ  
եղավ:

Մտորմունքի մեջ եք կարծեա, կամ երկյուղն է ձեզ պատել:  
Ի՞նչ է, այստեղ ավազակներ, զողե՞ր եք, թե՝ արեղաւ  
Ուրախացե՞ք, ի՞նչ եք թթվել, ի՞նչ եք նորիներդ կիտել:

Այդպես ձինք սրախանում մենք մեք քահել օրեքին,  
Երբ թշնամուն ջարդում էինք, խարույկի շուրջ բոլորում,

Եվ թունգ գինին՝ լիներ լանջին Կատախլական լեռների,  
Թե անտառում ֆինլանդական՝ մեզ էր անվերջ օրորում:

Երգեր էին այնտեղ հնչում... մինչդեռ հիմա քեֆերում  
Դու չես տեսնի մինեստրելի, դու չես լսի գուսանիւ  
Ճիշտ է, սրտին գինին է, որ ուրախություն է բերում,  
Բայց հարբում է միտքն էլ երգից, որ գինուց է հուսալիք:

Անմիջապես մեջանդ եկան երգասացներ բազմաթիվ.

Մեկ՝ կարմրադեմ խոալացին սոխակի պես դայլալեց,  
Փառաբանեց քաջությունն ու բարությունը Կոնրադի.

Մեկ՝ Դարսեյան ափից եկած տրութագուրը սիրու այրեց  
Կանանց թռվիչ գեղեցկությամբ, նազանքով ու թովշանքով  
Եվ սիրահար ասպետների թաքուն սիրու տանջանքով:

Իսկ Կոնրադը մաքով աարգեց: Երգերն ահա լոեցին...

Խոալացի երգին նաշեց և դրամով լեփ-լեցում

Իր քսակը նետեց նրան. «Դու ի՞նձ միայն գովեցիր  
Եվ ինձնից էլ առ քսակն այս՝ իրրկ գովքիդ հատուցում՝  
Ու շուտ շքվիր, որ շտեսնեմ: Իսկ քեզ, շահել դու երգիւ,  
Որ երգում ես երազ ու սեր, որ երգում ես տանջանքից...  
Ներիր դու մեզ՝ կաշտ ու կոպիտ զինվարներիս. մեր շարքում  
Զկա ոչ մի քնքուշ աղջիկ իր ծաղկագետ հասակում,  
Որ քնքորեն, իրրկ պարգև և պատախան քո երգին,  
Քեզ մոտենար, նվիրելիք բորբակետ գարդը ձեռքին:

Վարդերն այստեղ թառամեցին ու թոշնեցին... Զէ՛, պիակի  
Ուրի՛շ մի երգ հնչի այստեղ՝ երգ ճնշավոր-ասպետի,

Մի երգ գաֆան ու վաշրենի, որ այսպես է գոռ ճնշում,  
Ասես մարտի փող են փշում կամ պողպատն է ճոնչում.

Երգ, որ վահերի պատերի պես մատնի ահի ու դողի  
Եվ բոցավառ լինի՛ ինչպես զառանցանքը ճգնողի:

Զէ՛, մե՛զ համար, որոնց թուրը անօրիններ է խալում,

Ով արյուն է հեղում շորս կողմ, պետք է ուրի՛շ երանեակ:  
Մի երգ, որտեղ կոմի, արյան, մահվան շառաշն է հնչում,

Մի երգ՝ լեցուն մոլեզնությամբ ու դառնությամբ անքանակէ  
Ինչպիսի կյանք — մեզ նույնպիսի եղանակ է հարկավոր:  
Եվ ո՞վ կերգի նման մի երգ:

«Ես»,— մի ծերուկ հարգմոր  
Վալլենրոդի կոչի վրա առաջ եկավ ու դիմեց:  
Իսկ մինչև այդ, ծառաների հոծ ու խոփի խմբի մեջ,  
Ոչ ոք նրան չէր նկատել: Հագուստներից դատելով,  
Նա լիտվին էր կամ պրուսակ՝ մոմի նման մատերով,  
Վտիտ մարմնով, թավ մորուքով, ամբողջովին ճերմակած,  
Տարիների ու վշտերի դառնությունը ճաշակած.  
Թեպետ նրա խոր աշքերն ու դեմքը վեղարն է ծածկում,  
Էլի հետքերը վերքերի՝ կնճիռներն են աշք ծակում:

Ու բռնելով իր աջ ձեռքով պրուսաց վինը հինավորց,  
Կերուխումով, գինով տարված բազմությանը անհամար  
Իր ձախ ձեռքի վեհ շարժումով անխոս սաստեց՝ լինել լուրջ,  
Լինել խոսքին իր ուշադիր: Ապա երգեց.

«Ես հիմա  
Կը երգեմ այն, ինչ երգել եմ ձիգ տարիներ ձեզ համար,  
Ո՞վ լիտվիններ և պըրուսներ: Այսպիս՝ ոմանք նրանցից  
Հանուն իրենց հայրենիքի գոռ մարտում են սպանվել,  
Մեկ ուրիշը ինքն իր ձեռքով վերջ է տվել իր անձին՝  
Չուզենալով իր սպանված հայրենիքից բաժանվել,  
Ինչպես ծառան հավատարիմ կուլ է գնում կրակին,  
Որ խառնը տիրոջ այրված ու մոխրացած դիակին:  
Ոմանք ամոթն ու կյանքն իրենց թաքցընում են անտառում,  
Ուրիշները, Վիտոլդի պես, օտար ծառի են թառում:

Սակայն մա՞ս կա: Մահից հետո... Արժե մի պահ մտածել,  
Թե երկնային այն աշխարհում ինչպէ՞ս նրանք կվարվեն,  
Նրա՞նք, ովքեր հայրենիքը և հավատն են ուրացել.  
Երբ դժոխքում, կրակի մեջ, նրանք այրվեն ու վառվեն,  
Երբ աղաջեն, որ նախնիքը դրախտային ափերից  
Օգնեն նրանց, ի՞նչ պատասխան իրենց նախնյաց պիտի տան:

Նրանց կոպիտ ու բարբարոս գերմաներենն անպիտան  
Պիտի թվա օտար լեզու — չհասկացվի պապերից:

Այս, լիտվիններ: Ի՞նչ կա կյանքում էլ ավելի անպատիվ...  
Ո՞վ ձայն հանեց, ինչպիս կասեն, խփեց մատը իր մատին,  
Երբ հենց բեմում ոտքիս դրին գերմանական շղթաներ  
Ու քարշ տվին Վայդելուտիս: Ո՞վ ամոթն այդ կտաներ...  
Կյանքըս այսպիս ես անցկացրի՝ միայնակըս ու գերիս:  
Ես երգիշ եմ, պիտի երգիմ, բայց ո՞ւմ համար—չգիտեմ:  
Դևակի լիտվա շատ նայելուց փառ է իշել աշքերիս,  
Հիմա արդեն ես չգիտեմ՝ ո՞ր կողմ նայեմ, ի՞նչ դիտեմ,  
Իմ հայրենի տո՞ւնն եմ հիշում,— բայց որտեղից կգտնեմ  
տուն,

Երբ երկիրը՝ թշնամական և օտար է՝ ամեն մարդ:  
Ինձ մնում է մի բան միայն, այն էլ այստեղ՝ իմ սրտում —  
Այն ամենը, ինչով մի օր իմ հայրենիքն էր հպարտ,  
Գերմանացի՛ք ձեզ եմ տալիս՝ մարգարիտներն իմ հուշի,  
Գոհարաշար երգիս թե՛լը, անհուն գանձից՝ լոկ փոշին:

Ինչպես ասպետը մրցման մեջ խիստ պարտություն կրելով,  
Թանկ պատիվն իր վաճառելով թշվառ կյանք է ծախ առնում:  
Խայտառակված ու հալածված ծաղրի ծանր քարերով՝  
Իր պարտության վայրն է կրկին ուշացումով ետ դառնում,  
Վերջին ուժերն է հավաքում, ջարդում թուրը մեջտեղից  
Ու թշնամու ոտքի տակ է նա շպրտում կատաղի, —  
Այդպիս այսօր սիրտըս ուզեց նորից դիմել այդ վինին՝  
Ես ուզեցի իմ վինն առնել, երգել վերջի՛ն մի անգամ:  
Դե, լսեցեք, ականջ դրեք վերջին երգիշ — լիտվինին,  
Վերջին լիտվին — Վայդելուտից՝ վերջին երգը լիտվական»:

Ավարտելով՝ սպասում է նա Կոնրադի խորհրդին:  
Սպասում են մյուսներն էլ: Խոր լուսություն է տիրում:  
Իսկ Կոնրադը հետևում է շարժումներին Վիտոլդի,  
Հետևում է հետաքրքիր ու քմծիծաղ աշքերում:

Եվ տեսնում են, որ Վիտոլդը Վայդելուտի խոսքերից,  
Նրա երգ ու եղանակից գույն է տալիս ու առնում:

Երբ խոսք ընկավ դաշտանից, նրա մոլի աշքնրից  
Թափվող քեն ու զայրութի տեղ մեկ է՝ ամոթն էր բանում:  
Եվ, վերջապես, թուրը սեղմած իր զայրագին ձեռքերով,  
Նա վեր կացավ, որ հեռանա: Բազմությունը ճեղքելով,  
Նա, թունալից իր հայացքով, երգիշ ծերին մոտեցավ,  
Նայեց նրան, և ի՞նչ—հանկարծ անցավ և քե՞ն, և ցասո՞ւմ,  
Ու նրանց աել արտասուրն է, որ հոսում է ու հոսում:  
Նա՝ գունաթափ դեմքը ծածկած իր ճիկնցով՝ ետ դարձավ,  
Իր հին տեղը նստեց կրկին, մտքով տարվեց, վերացավ:

Եշնում են գերմանացիք. «Քեֆում ում է հարկավոր  
Լոլիկան երգեր անվերջ լսել այս ծերուկից միրթավոր:  
Ո՞վ է նրան ականջ զնում: Ո՞վ է դրանք հասկանում»,—  
Նույն տրաունդը, նույն բողոքն է շարքերով մեկ անց կենում:  
Առ ժերտափին ձեռք են առնում՝ ինչքան սրտները կուզի.  
Այն ասաբինան, որ լիսուգած մանկավիճեներն ընկուզի  
Փուշ կճնաբը շրթին դրած—իբրև ծաղը ու ծանակ—  
Շվացնամ են, առւլում. «Ա՞յ քեզ և լիտվական եղանակ»:

Ութի եղավ Կոնրադն այնժամ. «Ասպետնե՛ր և բարոննե՛ր,  
Մեր Յրդենը չէ՝ որ այսօր, ինչպես երկար տարիներ,  
Իր նվաճուծ քաղաքներից, զավաներից հարկատու  
Ընդունում է ամեն կարգի նվեր, ընծա, հարկ ու տուքք:  
Այս մուրացիկ ծեր երգիշը ինչ-որ երգ է հորինել —  
Նա բերել է համեստ ընծա: Գա կընդունենք անպայման,  
Ինչպես մի օր տերն ընդունեց այրի կնոջ խեղմ լուման:

Չէ՝ որ այսօր մեր մեջ ինքը մեծ իշխանն է լիտվական,  
Մեզ հետ այսօր քեֆ են անում զորապետներն իշխանի:  
Այս ծերուկի երգից նրանք խիստ կլինեն բավական,  
Հպարտ կզգան, երդը նրանց փառքի ճամփով կտանի:  
Ում դուր չի գա, նա կարաղ է, ինչ խսաք, դուրս գալ  
այստեղից,

Իսկ ինձ... շատ են լիտվինների այգ երգերը գուր գաղիս.  
Մեկ՝ օվկիան է կարծես այնտեղ՝ փաթթակամ է կատառաց:

Մեկ էլ՝ գարնան մեղմ անձրէ է — և երգում է, և լալիս,  
Ասես մաք պես օրորում է — քունդ է գալիս: Դե, լսի՛ր,  
Կախա՛րդ ծերուկ, վերցրու վինըդ, իզուր էլ մի՛ սպասիրու:

### ՎԱՅՆԱԼՈՏԻ ԵՐԳԸ

Երբ ժանտախտը սպանում է լիտվինական ափերին,  
Ամենից շատ Վայրելուն է դա և՛ տեսնում, և՛ հիշում.  
Ու, թե հավատ մենք ընծայնք նրանց կախարդ բիբերին,  
Լուր շերմատան մուժի միջով և դաշտերով հարակից  
Զարագուշակ Մահ-աղջիկը երևում է մշուշում:  
Ճերմակ հագած, զիխին պսակ՝ հյուսված սուտակ-կրակից,  
Բելովեժյան թափուտից վեր՝ նա ձեռքերը բաց անում  
Եվ արյունուր հագուստներն է ժածանում ու ժածանում:

Բերդապահներն իրենց դեմքը երեսկալով են պատում,  
Խսկ շները իրենց գնչով հողն ու օդը հստոտում  
Եվ ոսնում են ու կաղիտնձում՝ մահվան շունչը զգալով:

Մահ-աղջիկը մոտենում է շարագուշակ իր քայլով.  
Որտեղ քաղաք, որտեղ դյուզեր, որտեղ շները ու բերդեր՝  
Մուռ է լոկ անայտություն, մնում է լոկ անապատ,  
Շիրիմների շարք է բուռնում, շիրիմնե՛ր, որ թարժ են դեռ

Սարսափելի՝ մի տեսարան: Բայց լիտվային ավելի  
Գերմանական արշավներն են մատնում մահ ու ավերի,  
Նրանց փայլուն սաղավարտը՝ ջայլամի մեծ փետուրով  
Եվ մետաղն լաւ գրահը՝ ու խալով ու կեռ թրով:

Այնտեղ, որտեղ գերմանական այդ գուռ տեսիլըն է հասնամ,  
Փլատակ է միայն մնում ծաղկուն գյուղ ու քաղաքից,—  
Մեր ողջ երկիրն անծայրածիր գերեզմանոց է դառնաւմ  
Ում հոգին, որ դեռ կիզգում է մեր լիտովյան կրակից,  
Թող գա ինձ մոտ, նստենք ողբանք մեր հայրենին խեղճ  
ու որր,  
Նստենք մեր բյուր շիրիմներին և ոկտենք լաց ու ողք...»

Ավանդական տապանի պես՝ ժողովրդի երգի մեջ  
Հին ու գալիք սերունդները մեկտեղ ապրում են անվերջ  
Երգը սուրն է ժողովրդի՝ կոփված հրից ու լուսից,  
Մի գորգ՝ հյուսված նրա խոհից, երազանքից ու հուսից:

Ժողովրդի երգը, ինչպես ավանդական մի տապան,  
Զերծ է մնում հարվածներից թշնամական ուժերի:  
Նա հսկում է, նա կանգնած է ժողովրդի հուշերի  
Սուրբ տաճարի սեմի առաջ՝ որպես արթուն պահապան,  
Որպես արթուն հրեշտակապետ՝ պահպանելով իր թեով,  
Բայց և, իրեւ հրեշտակապետ՝ նաև զորեղ իր թրով:

Դոռ հրդեհը բան չի թողնի մեր պատմության գորքերից,  
Գանձն ու ոսկին չես պահպանի շարագործի ձեռքերից,  
Սակայն երգը ժողովրդի միշտ կմնա անվթար,  
Ու թե հանկարծ շհասկանան, նրան սրտում տեղ շտան,  
Նա կթոշի դեպի լեռներ, անապատներ ու երկինք՝  
Իրեն ժածկոց գարձենելով լեռների պարն ու շղթան,  
Կազդարարի և կը երգի անցյալ փառքը նա կրկին:  
Այդպես սոխակն այն տանիքից, ուր հրդեհն է ճարակում,  
Լուսավորված նույն հրդեհի ամենակով բոցերով,  
Ծխի ամպերը ճեղքելով ու թևերն իր խանձելով,  
Ճախր է գալիս այն տան վրա, որ այրվում է կրակում  
Ու թշում է դեպի հեռուն, թշում դեպի թավ անտառ,  
Որ այնտեղից լսեն նրա գեղգեղանքներն անդադար:

Ո՞նց մոռանամ մեր լիտվական կորաքամակ գյուղացուն  
Պապենական իր թշաշափ հողաշերտը հերկելիս:  
Երբ արորի երկաթ խոփը գանգ ու ոսկոր է բացում,  
Շատ եմ տեսել, գործը թողած, նրան տրտում երգելիս  
Նա ուտենու պարզ սրինգով և պարզունակ մի երգով  
Իր հանգուցյալ և անանոն պապերին է մեծարում:  
Ինձ այդ երգը ի՞նչ տվայտանք, ի՞նչ հուզմունք է  
պատճառում:  
Ես հիշում եմ այդ երգը միշտ ամբողջ սրտով ու հոգով:  
Ինչպես վերջին դատաստանին ահեղ ձայնից փողերի  
Ամեն մեռած ու հանգուցյալ կենդանություն է առնում,

Այդպես և իմ նվազի տակ, իմ երգերի տողերից  
Ոսկոր ու միս միանալով՝ նորից մարմին են գառնում,  
Մոխիրներից նորից սյուն ու կամարներ են վեր հառնում,  
Լիճն է ճողփում՝ նավակ ու թի օրորելով կողերին,  
Դյուակների դարբասները պտղտվում են կրնկին,  
Իշխան, սեպուհ զենք-զրահով շողզողում են, ու կրկին  
Հնշում են երգ, վին ու փանդիռ, աղջկներն են կաքավում...  
Անրջանքից հիանում ես, արթանցումից ես ցավում:

Ահա նորից անհետացան հայրենի լեռ ու անտառ,  
Երազանքի բարձունքներից ահա նորից գահավեծ՝  
Այս անխոյանք, առօրյական լոռիթյան մեջ ինձ գտա,  
Եվ հոգնատանց մատների տակ լոեց ձայնը իմ վինի:  
Թվում է, թե ձայնն անցյալի ես շեմ լսի էլ հավերժ՝  
Լոկ լսելով հառաջանքը հայրենասեր լիտվինի:  
Բայց և այնպես հոգուս խորքում շահելության հուրը թեժ,  
Թեկուզ արդեն վաղոց՝ ինչպես մթնում գիշերի,  
Առկայժում է հանկարծակի, փայլ է տալիս հուշերիս:  
Հիշողություն, դու նման ես բյուրեղակերտ կանթեղի՝  
Սաղկազարդված շոայլորեն, սակայն... վաղո՞ւց փոշեպատէ  
Բայց թե վառեն լուսը հանկարծ, միննույնն է՝ այնտեղի  
Բյուր զարդերից ու նախշերից կշողշողա ամեն պատ,  
Շրջապատին նոր փայլ ու գույն, նոր կերպարանք կտա նա,  
Աչքն էլ մարդու բազում անգամ խորին հաճույք կտանաւ:

Օ՛, թե ես էլ կարողանամ բոցավառվել նույն հրով  
Եվ այդ հրով, ով լիտվիններ, վերակոփել ձեր հոգին:  
Օ՛, թե ես էլ կարողանամ հնամենի երգերով  
Փառաբանել մեր անցյալը, ձեզ հաղորդել նոր օգիւ  
Օ՛, մի անգամ, գեթ մի վայրկյան թե լսեիք իմ երգաւան  
Չեր հայրենի երկրի կոշը, — կլսեիք դուք այնժամ,  
Որ ձեր սիրտն էլ ձեր պապերի սրտի նման է զարկում,  
Չէիք ուզի լինել նրանց մեծությանը անարժան:  
Եվ այդ պահին, գեթ ա՛յդ պահին, դուք կապրեիք առն  
կյանքով,  
Որ ապրել են նախնիքը ձեր—մեծարանքով ու փառքով:

Բայց ի՞նչ իմաստ, ի՞նչ միաք ունի լոկ անցյալը դրվատեղ  
Եվ ներկային, այսօրվանը ոչ մի հայացք չնետել:

Կա մեծ մի մարդ և ապրում է նա ոչ հեռու՝ մտերքում:  
Ո՞վ լիտվիններ, ականջ դրեք, հիմա նրան եմ երգում»:

Ու նա լաեց, սպասելով՝ գերմանացիք ի՞նչ կասեն,  
Թուլլտվություն կտան արդյոք, նրա երգը կլսե՞ն:  
Բայց դահլիճը քար էր կտրել, ոչ ոք ոշինչ չէր ասում:  
Դա նշան էր, որ դահլիճը սպասում է նոր երգի:  
Եվ ահա նա, վմբն առնելով, իր նոր երգն է ակսոմ.—  
Քոլորովին ուժիչ մի չափ, հնշեղություն ու ոզի:  
Չիգ լարերին հազիվ նրա դողդոշ մատներն են զարկվամ.  
Անմիշապես երդը նրա սպատմության է վախարկվամ:

## ՎԱՅՐԵԼՈՏԻ ՊԵՇՄԱՆԸ

Որտեղի՞ց են այդպես սուրում, ալդպես թաշում լիտվինները։  
Լիտվինները ետ են սուրում գիշերացին արշավանքից՝  
Բերդ ու վանքից հափշտակած գիշերացին թանկ ավարով,  
Ու գերեվար գերմանացիք՝ ողապարանը վզներին,  
Եղբայրակապ, վազ են տալիս, որ ետ չընկնեն նժույգներից։  
Աշք են գցում Պրուսիային — ողողվում են արտասուրով,  
Կոնվոյին են ահօվ նայում — իրենց հանձնում աստծու։  
Կամքին։

Ճիշտ կենտրոնում այդ քազաքի Պերուն աստծու բացատն է  
լայն։

Ուր լիտվական իշխանները, ետ դամակով արշավանքից,  
Հստ վաղեմի սովորության, հրկիկում են գերբներին...  
Գերիններից լոկ երկուսն են անվախ նայում այդ քազաքին։  
Մեկը՝ սիրաւն երկտասարդ, իսկ մասուը՝ ճերմակահեր։  
Նրանք մարտում, գերմանական զարքը ըրում հոժարակամ,  
Լիտվինների կողմն են անցնում. կտնգնում իշխան։  
Կեցրասասոփ զեմ։

Որը նրանց ընդունում է շքախմբում, բայց և հսկում  
Եվ, առանելով իր դուսակը, ենթարկում է հարցուփորձի-.

Ք՞եզ ժարդիկ են: Յրտեզի՞ց են: Ի՞նչ նպատակ ու միաք  
ունեն:

Ռմզ ժագումը, ոչ անունը ես չգիտեմ,— զահելն ասաց, —  
Որովհետե, դեռ երեխա, ինձ գերել են գերմանացիք:  
Ես մեր տունն եմ միայն հիշում՝ լիտվինական մի քաղաքում,  
Առ փոված էր բըլրի վրա: Փայտից էին տներն այնտեղու  
Բայց մեր տունը... աղյուտից էր, ծածկված կարմիր  
կղմինդրով:

Եղենուան էր խշշում շորս կողմ, և թագուտում լիճն էր շողում։  
Մի անդամն էլ մնաք արթնացանք ահեղ աղմուկ-աղաղակից։  
Ցերեկվա պես լույս էր շորս կողմ, ապակիններն էին ճաքում,  
Ամբողջ տունը լիքն էր ծիսով, ու մենք հազիվ դուրս  
նետվեցինք:

Փողոցներում, կարկուտի պես, կայծեր էին թափվում վերից,  
Գոշում էին. «Գիմեք զենքի! Գերմանացիք են քաղաքում...»  
Հայրը արագ թուրը խլեց, նետվեց առաջ ու... ետ չեկավ։  
Գերմանացիք մտան մեր տուն: Մեկը ընկավ իմ հետեկից,  
Գավակն առամլ, — թե ինչ եղավ այնուհետև՝ ես չգիտեմ։  
Միայն՝ երկար դեռ հնչում էր մորը ճիշք իմ ականջում,  
Խեծգին՝ զենքի շառաշցունից, վիլող շենքի գզրայունից։  
Ա՛ս այդ ճիշը... նա անդադար հետեւում էր ինձ ամենուր.  
Որտեղ էլ որ հրդեհ տեսնեմ՝ ես այդ ճիշն եմ հիշում կրկին,  
Նա հնչում է իմ հոգու մեջ, ինչպես ձայնը՝ քարանձավում։  
Ահա ողջը, ինչ մնում է իմ լիտվայից, ծնողներից։  
Հորս, մորս, եղբայրներիս քնիս մեջ եմ տեսնում միայն,  
Բայց, գնալով, նրանց ծանոթ կերպարաններն է աղոտանում, —  
Ժամանակը հուշերիս մեջ այդ դեմքերն է խառնում իրար։  
Մի կատարյալ գերմանացի գերմանացու շարքերի մեջ՝  
Ես մեծացա Վաղտեր անվամբ և ինձ տվին Աղջ մահանուն։  
Բայց անգան տակ գերմանական իմ լիտվական սիրտն էր  
խփում,

Ի՞ կարուով դեպի լիտվան, ոխով՝ զեպի գերմանացին։  
Ինձ Վինրիխը՝ խաչակրաց մագիստրոսն իր պալատն առավ,  
Շոյեց, ափրեց որդու նման ու պատրաստեց միջրության։  
Տաղողացի էր ինձ պալատում, և, վինրիխից խառափելով,  
Փնտրում էի Վայդելոտին։ Այդ օրերին նրանց շարքում

Իրեն թարգման աշխատում էր գերված ծերուկ մի Վայդելոտչ  
Եվ ծերուկը, երբ իմացավ, որ լիտվացի մի որք եմ ես,  
Հաճախակի իր մոտ կանչեց, պատմեց հեռու իմ լիտվայից՝  
Սփոփելով ու հոգելով հայրենական խոսք ու երգով,  
Զերմացնելով իմ որք հոգին գորովանքով իր հայրական։  
Հաճախ էր ինձ գետափ տանում, ուր հոսում էր նեման գետը,  
Ֆույց էր տալիս մեր լիտվական հովիտներն ու լեռները սեզ։  
Տուն դառնալիս ամեն անգամ արցունքներս էր ծերը սրբում,  
Որ կասկածներ չհարուցի։ Բայց արցունքներն իմ սրբելով՝  
Նա իմ հոգում բորբոքում էր վրեժ գեպի գերմանացին։

Եվ դղյակում դաշոյն էի թաքուն սրում, մագիստրոսի  
Գորգերն էի պատառուում, հայելիներն էի քերծում։  
Փոշի ցանում ու մուր քսում, թքում պողպատ վահաններին։  
Կլայպեդա նավահանգիստն անշուշտ գիտեք։ Մենք  
մակույկով

Հետո, շահել տարիներիս, դեպի լիտվա նավարկեցինք։  
Սաղիկ էի այնտեղ քաղում, և կախարդիչ բույրը նրանց  
Հարուցում էր ինչ-որ հուշեր և իրական, և անորոշ։  
Այդ բուրմունքը ներծծելով՝ դառնում էի նորից մանուկ, —  
Թվում էր, թե եղբորս հետ խաղ եմ անում մեր պարտեզում։  
Եվ ծերուկը զգացումն այդ բորբոքում էր իր խոսքերով՝  
Պատկերելով իմ անցյալը ծաղիկներից ավելի վառ։  
Ինչ բախտ՝ ապրել շահել կյանքդ հայրենի տան կտուրի  
տակ...

Մինչեռ զուրկ են նման բախտից քանի՛ գերի լիտովցիներ,  
Որ գերվելով՝ մանկությունը անց են կացնում իրեն ստրուկ։  
Այս պատմում էր արոտներում, իսկ ծովափին Պալանգայի,  
Ուր անդադար կուրծքը ծեծող ծովը փոքր-ինչ շունչ է  
քաշում

Եվ ավագի հեղեղներ է անվերջ ժայթքում իր երախից,  
Ուրիշ բան էր ծերն ինձ պատմում ու ներշնչում։ «Տեսնո՞ւմ  
ես դու՝  
Արոտների թարմությունը ո՞նց է կորչում ավագի տակ։  
Տե՛ս, բուլսերը ո՞նց են շանում ճեղքել մահվան պատանքը  
ինդ,

Բայց ապարդյո՞ւն, — ավագն անվերջ դուրս է սողում  
Հրեշի պես  
Եվ սպիտակ իր փորի տակ տրորում է և բռւս, և ծիլ՝  
Կանաչ կյանքը մի վիթխարի անապատի փոխարկելով...  
Գարնանային այն ծիլերը, որ թաղվում են դեռ կենդանի,  
Քո հարազատ եղացյրներն են, լիտվինները քո տառապյալ,  
Խսկ ավազը ծովից ժայթքող — Օրդենն է դա տեսունական օւ  
Ես ոնց էի ուզում խոցել գազաններին այդ խաշակիր  
Եվ կամ՝ թողնել լիտվա փախչել։ Բայց ծերուկը զսպում էր  
միշտ  
«Լոկ ասպետն է ի վիճակի ուղած զենքով ելնել մարտի  
Եվ բացահայտ մրցման մտնել թշնամու գեմ։ Խսկ ո՞վ ես դու  
Դու ստրուկ ես։ Խսկ ստրուկը մի զենք ունի՝ դավաճաններ։  
Մնա այստեղ, գերմանացուց դու սովորիր գործը ուազմի,  
Ճանա շահել վստահություն։ Խսկ այսուհետ — դեռ  
կտեսնենք»։  
Ես լսեցի և մնացի տևոտնական զորքերի մեջ։  
Սակայն մարտում, հենց որ տեսա դրոշները իմ հայրենի,  
Հենց լսեցի ուազմերգը ձեր, ես նետվեցի դեպի մերոնք՝  
Ինչ-որ ուժով կախարդելով ու քարշ տալով և ծերուկին։  
Այդպես բազեն՝ բնից խլված, կերակըրված վանդակի մեջ,  
Ինչքան էլ որ տանջեն նրան, մթնեցնեն հայացքը սուր,  
Հենց որ թոշի դեպի երկինք, իր աշքերով հենց որ շափի  
Հեռուները իր հայրենի՝ զգա իրեն լուրթ երկնքում, —  
Այնժամ ազատ պիտի շնչի, լսի աղմուկն իր թեսերի։  
Դու տո՞ւ դարձիր, որսկա՞ն ախապեր։ Թուած բազեն էլ չկ՝  
գա ետք։

Եվ պատանին ավարտում է։ Կեյստուտն ինքն էր լսում նրան  
Դեռափիթիթ — աստվածային Ալդոնայի՝ իր դատեր հետ։  
Աշունն եկավ՝ երեկոները ձգելով իր հետեկից։  
Եվ Ալդոնան ճախարակի կամ քյարգահի առաջ է միշտ՝  
Երշապատված ընկերուհի աղջիկներով ու քուրերով։  
Եռղղողում են ասեղները, ճախարակին է անվերջ մանում,  
Եվ կալտերը խոսք է բանում հազար ու մի հրաշք բանից,  
Պատմում է նա գերմանացուց, շահելությունն է իր հիշում։

Եվ Վալտերը ինչ էլ ասեր, և Վալտերը ինչ էլ պառանձն՝  
Համիշտակում ու որսում էր աղջիկն իսկույն՝ նրա մտքում  
Դրոշմվում էր այն աստիճան, որ քնի մեջ տեսնում էր նա  
Այն, ինչ պառանձն էր Վալտերը՝ նեման գետի մյուս ափին  
Ամուր բերդեր, ճոխ հանդերձներ, ասպետական

մրցություններ,

Երբ բազմարյուր մարդկանց առաջ փշրվում են նեա ու  
նիզակ,

Այս հաղթողին աղջիկները սրահներից գտունջ են նետում։  
Պատմում էր նա միակ աստծուց, նրա ահեղ զորությունից,  
Աստվածամոր կուտությունից, գթությունից աստվածամոր։  
Աստվածամոր պատկերը սուրբ, որ կրում էր կրծքի վրա,  
Նա նվիրեց Աղդոնացին — բերեց նրան ճիշտ հավատից  
Նա աղոթեց աղջկա հետ, ուզեց նրան ըտավորել.

Ուսուցանել այն ամենը, ինչ որ գիտեր եվ, տեսմա,  
Ուսուցանեց և այն, ինչին անծանոթ էր ինքն էլ — սիրո՛։  
Ու սովորեց ինքն էլ ջատ բան, ի՞նչ հաճույքով լսում էր նա  
Կիտակերենը, որ զարթուում էր, հարաւթյան էր առանում Ծորում։  
Ամեն բառից մի նոր հոսոյ էր ծննդում սրտում խեղճ վկասերին։  
Ինչպես մտարից՝ Կայսեր Ծրբ — ըուրամ էին ծանոթ փութեր՝  
Ընկերությունն, ազգակցությունն, և սեր — և սեր, որի նման  
Զկա սպիզ և ոչ մի բառ, բայց մենքից՝ հոգբնիքի՛ց ...

Իսկ Կեցաւուայր միտք է անում. աժ՛նչ պատահեց իր գրանքը  
Հետո:

Մզ մանկան զգարի փառքը, ո՞զ զգարնանք աղջկամրան։  
Ազգին եղան տոն օրերին պար են բռնում, ուրախանում,  
Իսկ իր դստեր խնդությունը զրուցելն է Վալտերի հետ։  
Էի որերին ամեն առջիկ ձեռքին ունի առեղ ու թեր,  
Սրա ձեռքից՝ առանց ընմանամ, խճճիւամ են թեզ ու մանվածք։  
Ինչ-որ բան է եղել նարան և բորբը են քայ նիրատուում։  
Երեկ տեսա՞ վլարդ էր քարծում, վարդ, բայց կանա՛շ, կանա՛շ  
Թերազ,

Այնքան քաղցումն առ մի երը՝ վարժմի՛ր միեւն, ալ մեռարժի՛ց։  
Դե անց ջունք գուշաց գուշաց, երբ աղջիկն ու միտքը նրա  
Զբարդան մեն չուկ վարժանի պրացցներու և աղջիկով։

Հարցնեմ. մ՛տ էու — «Հովտումն է նա»։

«Մրտեղի ց է գալիս», — հարցնեմ,  
Եթի նույնը. «Հովտից», — կատեն. ի՞նչ հովիտ է, մի ինձ ասեց։  
Վալտերն այստեղ նոր պարտեզ է անկել։ Դե լա՛վ, կարո՞ղ  
է նա

Համեմատվել իմ այցու հնաւ. (Իսկ Կեյտուտի այգիները,  
Որ լեցում են ծով մրգներով և հայտնի են ողջ Կոնվոյին,  
Աղջիկների համար նույնն են, ինչ որ խայծը՝ ձկան Գամար)։  
Ցէ՛, այգին չէ նրան ձգում։ Իսկ ձմռանը ի՞նչ եմ տեսնում։  
Նեման նայող պատուհանին՝ ո՞չ մի եղամ, ո՞չ մի սառուց —  
Ոնց մայսիսին՝ փացրիւմ են ապահիներն ինչպես բյուրեղ կասեր՝ ինչի՞ց. Կատեն՝ շատ պարզ.

ման է գալիս Վալտերն այնտեղ,  
Բայ սա՞ նուտած, առկադին է իր տաք շնչով մաքրում  
սառցից...»

Կործում էի, թե Վարտերը նրան կարդար կուսուցանի, —  
Խիսանական զագանեսերին այժմ արդին դա պետք է շատու  
Քաջ Վալտերը գրագետ է ինչպես բանն կամ վարդապետ։  
Ո՞նց վանդես նման մեկին։ Պետքական է նա Լիտվային։  
Նա մարտաք է ուազմի գործում, շատ խորամանկ դիրք է  
շինում,

Տեղյակ է նա թնդանոթից, — մենակ արժե մի ողջ զորքի...  
Վապտե՛ր, գործիք դու ինձ փեսա, մենք երկիրը պահնենք  
մեկտեղ։

Եկ Վալտերը վեհայացավ՝ Դերմանացի՛ք, գուք երգի՛  
Կարծում եք, թե երգս պրծավ։ Դե ձեր բոլոր ոսմանսներում  
Եթե ասպեսան ամուսնության տրուբուուրի երգն էլ պրծավ...  
Ասեմ և այն, որ ապրեցին նրանք երկար և երջանիկ։  
Նա պաշտօւմ էր իր կնացը, սակայն նրա աղնիք հոգին  
Երջանիկ չէր, որովհետև՝ երջանիկ չէր Լիտվան նրա։  
Զնհայն ընկավ — արտայունները սկսեցին նորից երգել,  
Ամենուկեք մեծ խնդություն աղդարաբել զարթնեղ հոգին,  
Իսկ Լիտվային իսեղմ ու անբախտ՝ նոր կոտորած ու նոր

Հրդի՛։  
Կաշակրաց բազմահազար գորդն է շարժիւած գեսքի Լիտվան, —  
Նման գետի մյաս ափից գլուխուած է բամին բերաւմ։

Զենքի շառաւ, թրի զնգոց, ուազմի կանչեր, ձիու խրխինջւ  
նրանց գնդերն ամպերի պես խտանում են դաշտի վրա,  
Փողփողում են դրոշները առաջամարտ զոկատների՝  
Խնչպես շանթը մրրկից առաջ: Եվ հասնում են նրանք նեման,  
Գետանցներ են սարքում այնտեղ և Կոնվոն են շրջապատում.  
Աշտարակներն են ցերեկը խոյահարում բաբաններով,  
Գիշերները ականներ են փորում բերդի պարսպի տակ,  
Խսկ ոռմբերը լուսավորում մութ երկինքը, այնուհետև  
Խնչպես ցինը՝ ճուտի վրա, վայր են ընկնում տանիքներին:  
Կոնվոն արդեն ավերակ է, — և լիտվացիք՝ դեպի Կեյդան,  
Կեյդանն արդեն ավերակ է, — և լիտվացիք՝ դեպի անտառ:  
Մաքառում են, բայց թշնամին արշավում է անվերջ առաջ:  
Իշխան Կեյստուտն ու Վալտերը առաջինն են ահեղ մարտում  
Եվ վերջինը՝ նահանջելիս: Սառնարյուն է Կեյստուտը միշտ.  
Մանկությունից սովոր է նա մարտի բախտին փոփոխական:  
Նա լավ գիտեր՝ իր նախնիքը զարկվել են միշտ տեսուններին,  
Եվ արդ՝ ինքն էր զարկվում նրանց՝ շխորհելով վաղվա  
մասին:

Ուրիշ մտքեր Վալտերն ոմեր: Դաստիարակված նրանց  
շարքում՝

Նա Օրդենի ուժը գիտի. մագիստրոսի լոկ մի կանչով  
Ողջ եվրոպան կտա նրան և՛ զենք, և՛ զորք, և՛ գանձն իր ողջ:  
Զարկվում էին պրուսներն էլ, բայց տեսունը ջնջեց նրանց,  
Եվ վաղ թե ուշ նույն սև բախտը սպասվում է լիտվիններին:  
«Ուրիշ» ս, դու մեզ, — Կեյստուտն ասաց, — գուշակում ես  
շար կործանում,

Դու աշքերիս քողը առար, որ ես տեսնեմ անդունդն անտակի:  
Երբ լսում եմ ես քեզ, որդի՛, իմ բազուկներն են թուշանում, —  
Հենց կորցրեցիր հույսը՝ իսկույն քաջությունդ է հալլում  
ձյան պիս:

Հիմա ինչպես և ի՞նչ անենք տեսունի հետօ: Վալտերն ասաց.  
«Հա՛յր, ես գիտեմ լոկ մի հնար, որ հաստատ է, բայց  
ահավոր:

Հետո, գրւե, ասեմ ես քեզ...»: Այդպես նրանք կոմից-կոմի  
Խորհում էին, կշռադատում, քանի նրանց դեպի նոր մարտ  
Դեռ չեր կոշում շեփորների ու փողերի տագնապն ահեղ:

Մթագնում էր Կեյստուտն անվերջ—ոնց է փոխվում նրա  
փեսան: Ասենք՝ միշտ էլ առանձնապես ուրախությամբ նա չէր  
փայլել, — Երշանկության պահերին էլ նրա ճակատն ամպ էր պատում, —  
Բայց և այնպես կնոշ գրկում քիչ պարզվում էր դեմքը նրա, Մինչդեռ հիմա կարծես շունի ոչ մի հուզում և զգացմունք. Զերքը ծալած՝ ողջ օրն ի բուն կարող է նա անշարժանալ, Դիտել ծուխը հրդեհների, որ այրում են ավան ու շեն,  
Գիշերները վեր էր թոշում և հայացքով վայրենացած Կատաղորեն նայում անվերջ հրդեհների մոլի պարին: «Ի՞նչ է եղել, Վալտե՛ր, քեզ հետ, ամուսի՞ն իմ», — կինն է հարցնում:  
«Ինձ հե՞տ... ոչի՞նչ... Միայն հանկարծ քնո՞վ շանցնել,  
որ քնի մեզ Գերմանացիք մեզ շղթայեն, շղթայակապ հանձնեն դահճին»:  
«Աստված փրկի մեզ դրանից: Չէ՝ որ ամբողջ զորքն է հսկում»:  
«Ճորքն, իսկապես, հսկում է մեզ, զինավառ եմ ես էլ,  
սակայն Եթե շաղ գա զորքը շարդված, ու բթանա թուրն էլ իմ սուր,  
Դե մտածիր, թե ինձ ու քեզ սպասում է ի՞նչ ծերություն: Աստված այնժամ մեզ կսփոփի մանուկներով...» հիսկ թե  
հանկարծ Գերմանացին մեզ սպանի, իսկ նրանց էլ հետը տանիհ»,  
Սովորեցնի նշան բռնել ուղիղ իր հոր, մոր ճակատի՞ն: Ինքս էլ գուցե սպանեի եղբայրներիս կամ հորըս ծեր,  
Եթե ծերուկ Վայրելուր շանդիպերո: «Դնանք, Վալտե՛ր,  
Մեր լիտվայի անտառներում ու լեռներում պահվենք շարից»:  
«Իսկ մնացած մայրերին ու մանուկներին թողնենք այստե՞ղ: Այդպես արին պրուսները, բայց տեսունը բռնեց նրանց...  
Նույնը մեզ հետ կկատարվին: «Իսկ մենք կերթանք էլի՛ հեռուս:  
«Դե ո՞ւր՝ հեռուս: Հո լիտվայից դուրս չես գալու, Հո չես զնա  
Ռուսիչի կամ թաթարի մոտ», Եվ Ալդոնան, շփոթահար,  
Զիմացավ, թե էլ ի՞նչ ասի: Մինչ այդ խեղճին թվում էր, ին  
Անսահման է լիտվան: Հիմա նա առաջին անգամ լսեց

Ու հասկացամք, որ իհովայում թաքնվելու տեղ իսկ չիտ և հսկ ինչ անենք», — վհատորեն իր մատներն էր նա

#### ջարդութում

«Մենք, Ազգանա, միայն մի ճար, լոկ մի հնար ունենք հիմա՝ ջարդել ուժը սև Օրդենի: Եվ ես գիտեմ ճարն այդ միակի: Բայց այդ մասին մի՛ հարցըրու: Թող անթծվի այն ժամը սև, երբ թշնամին ինձ կատիսկի գիմել վերջին այդ հնարին: Եվ իր խոսքը նա ընդհատեց: Հիմա ոչ թե Ալդոնային — նա տեսնում էր իր գիմ վերջերն իր կարևեր հարցենիքի: Եվ այդ պահից նա լուս ու մունչ խոր վրեժն էր սնում իր մեջ, Աղետներով ու հրդեռով այդ վրեժը բոցավառում:

Նա իրենից հնուու վանեց ամեն մի հոյզ, ամ՞րը տեղամբ նրա միակ սփոփանքը դժբախտության ահեղ ծովում:

Երբ որսորդը շնոր է զցում հոկա կազմու փշակի մեջ, թարուն հուրը ողջ միշուկն է լափում դանդաղ, և շատ

#### շուտով

Անտառների ահեղ արքան մերկանում է իր սարդից, կեռանում են ու ցած թափվում քամուց ջարդված ճյուղը նրա, եվ կատարից, ինչպես թագից, վերջին տերմն է ցած:

#### ընկնում...

Իիտինները շատ շրջեցին անտառապատ դոյյակներում, Մերթ՝ զարկելով, մերթ՝ վերստին ընկրիելով շար թշնամուց: Եվ Ռուդավյան մարտը հասավ, ճակատամարտ մի վճռական, Ուր բյուր ջահեց ու վառվուն լիտովիներ ընկան կռվում նույնան հապար ատպեաների, պիտերի հետ խաշակրաց, Տևտոններին, իրքն սատար, շառավ ծովից հասան գորքեր, իսկ լիտովիքի իրենց մի բռու կորիճ խմբով բռնենք տեցան: Թթացել են թուր ու սուսեր, շարդութել են վերա ու վտան, Պատաված փոշով և արյունով՝ ահա նրանք տռոն են դրանում: Եվ Վալտերը, Ազգուաշին մի խոսք շառամ, Կեյտուտի Շնա Վալդելուի ներկայությամբ խոսքի մոտավ՝ գերմաններու Անձանոթ է օտար լիզուն, բայց իր արտով զդում է նա Արևոտ գերբից: Ահա նրանք, ամարտելով զրոյցն իրենց, Տիուքուտուտ հայոցքներով Աղրոնայի կռշմն են նայած: Եվ Վալտերը իր հայուաք մյուտներից երկար պահեց,

Ու աշքերից գետի նման արցունքները դուրս հորդեցին: Նա սիրածի ուղերն ընկավ, սրտին սեղմեց ձեռքը նրա ծվ պատճառած ցավի համար լալով խնդրեց ներողությունն ուշ՝ կողը, որ սիրում է խելացնոր իր ամուսնուն:

Ամ հայացքը միշտ հառված է իր ծննդյան վայրից այն կողմ,

Ում մտքերը, ինչպես ծուխը, տան կտորից թոշում են վեր, Ում սիրու չի կապվում խաղաղ ընտանեկան հաճույքներին: Այդ հոգիներն, իմ Ալգոն՝ շատ են նման փեթակների.

Մեղրով երբեք բերնիբերան ցցվելով՝ բուն են դառնում

Խեղների: Դու մի՛ տխրիր, այսօր տանը ես կըմնամ

Ու կաշխատեմ բան չհիշել, դառնալ այնպես և այնպիսին, Խնշպես տռաչք Խնկ գա՞ղը...: Նա ուժ շունեցավ խոսքն

ավարտել:

Ալդոնային ի՞նչ էր մնում: Եվ ինքն իրեն նա համոզեց,

Որ կդառնա Վալտերն էլի առաջվա պես՝ հանդի՛ստ, ուրա՛խտ

Տե՛ս, ահա նա քիչ է մուալլ, տե՛ս, աշքերը աշխուժացան,

Տե՛ս, այտերը կարմրեցին: Եվ նա, կնոշ ուղերի մոտ,

Ամբողջ գիշեր միտ չի բերում ո՞չ հայրենիք, ո՞չ թշնամի,

Շառում-խռոսում, վերհիշում է անցած օրերն այն երջանիկ,

Երբ հայրենիք վերադարձավ, երբ հանդիպեց Ալդոնային,

Երբ գնացին զրունելու... — վերհիշվում է ամեն մանրութ,

Որ այնքան շատ տեղ է բռնում սիրո բոլոր հուշերի մեջ:

Բայց նա ինչո՞ւ փոխվեց այդպես, երբ «վազ» բառը բերնից

թռավե

Նա վերստին Ալդոնային նայեց երկա՛ր, արտասվալից

Մի հայացքով: Նա շատ կուզեր խոսել, հայտնել, բայց ո՞ւժ

շկար:

Տե՛ս նա անցած երջանկության տեսիները դուրս է կանչում,

Որ հավիտյան և հենց հիմա հըրաժեշտ տա իր հին բախտին:

Մի՛թե վերջին այս երեկոն, քնքանքով լի՛ այս երեկոն

նաև վերջին՝ Ծրաժեշտի բռնկումն է սիրո լույսի...

Ա՛խ, Ալդոնան ի՞նչ մտածի: Ու, ենելով իր սենյակից,

Դռան ճնդքից, խռովահուզ, հետեւում է նա սիրածին:

Իր Վալտերը գինի լցնում ու զավերն է անվերջ քամում,

Եսկ ծերունի Վայդելուտին պահել է նա գիշերն իր մոտ:

Արեգակը նոր էր ծագել, երբ դոփեցին սմբակները.  
Երկու հեծյալ, մշուշի մեջ շտապում են դեպի լեռներք  
Կիսարեկին պահնորդներին, թե լիներ սիրող կնոջ  
Արթուր աշքը: Եվ Ալդոնան զլիի ընկավ, իշավ հովիտ,  
Կարեց նրանց ճանապարհը: Հանդիպումը շա՞տ էր տրտում  
«Ա՞խ, սիրելի՛ս, ետ դարձիր տուն, ուր կլինես դու

բախտավոր,

Քեզ երջանիկ կղգաս գուցե ծնողներիդ սիրող գրկում...  
Դու շահել ես և գեղեցիկ, դու կափոփվես, կմոռանաս:  
Դու հիշո՞ւմ ես՝ շատ իշխաններ քո ձեռքն էին խնդրում  
անվերջ:

Հիմա արդեն դու ազատ ես՝ այրին նրա՝ ով ինքնակամ  
Հրաժարվեց ամեն ինչից հանուն իր խեղճ հայրենիքի,  
ի սեր սիրած հայրենիքի հրաժարվեց սիրո՞ց, քեզնից:  
Մնաս բարեւ: Մեկ-մեկ նաև արցունք թափիր՝ ինձ հիշելով  
Թո Վալտերը ողջը կորցրեց և աշխարհում մնաց մենակ՝  
Ինչպիս քամին անապատում: Հիմա պիտի նա թափառի,  
Թափաճանի և սպանի, ինքն էլ մեռնի մի վատ մահով:  
Սակայն կանցնեն ձիգ տարիներ և մոռացված անունն Ալֆի  
Լիտվայով մեկ կը որոտա Վայդելոտի շրթունքներից:  
Դու կլսես զեռ իմ մասին և, սիրելի՛ս, կմտածես՝  
Ահ տարածող այն ասպետը, ծածկված քողով մի

գաղտնիքի,

Որ հայտնի է մի՛միայն քեզ, — ամուսինդ է եղել մի օր:  
Հպա՛րտ եղիր դու այս մտքով և սփոփիր քո կյանքը որբա՛:  
Խեղճ Ալդոնան լսում էր լուս, բայց ոչ մի բառ չէր  
հասկանում:

«Գնո՞ւմ ես դու, — բացականչեց ու սարսափեց նա իր  
խոսքից:

Ամեն ինչից լոկ այդ ճիշն էր նա հասկանում՝ «գնո՞ւմ ես դու»:  
Ողջ անցյալը և ապագան նրա մտքում խառնվեցին:  
Լոկ ասում էր սիրտը նրան, որ անցածը ո՛չ ետ կգա,  
Ո՛չ էլ երբեք կմոռացվի: Տագնապալից իր հայացքով  
Երբ Վալտերի մութ ու մոայլ հայացքին էր նա հանդիպում,  
Այնտեղ արդեն էլ չէր գտնում առաջվա պես մխիթարանք:  
Որոնելով ինչ-որ նեցուկ՝ նա հայացքն իր կրկին հառեց

Գեղի հովիտ՝ կարծես այնտեղ ինչ-որ մի բան պիտի գտներէ  
Նեմանից դեն, անտառի մեջ, վեր է հառնում մի աշտարակ:  
Մի մենաստան, տառապահար հոգիների մի հանգրվան:  
Նրա հայացքն ու մտքերը կանգ են առնում մենաստանին:  
Այդպիս՝ ծովում, հանկարծահաս փոթորիկի հանդիպելով,  
Արդեն հողնած աղավնին է ապաստանում նավակայմին:  
Դա հասկացավ Վալտերն իսկույն և, նրա հետ լուս քայլելով  
Սիրտը բացեց, երդում տալով՝ իր գաղտնիքը պահել թաքում:  
Մանր էր նրանց բաժանումը մենաստանի դռների մոտ...  
Վայդելոտն ու Ալֆը կորան: Նրանց մասին խոսք չի լսվում:  
Վայ Վալտերին, թե իր խոսքը չի կատարի, թե զրկելով  
Երեն բախսաից՝ կկործանի Ալդոնայի բախտը նաև,  
Թե ինչ զոհեց, բանից պարզվի, որ իզուր էր և ապարդյում...  
Բայց մենք կապրենք ու կտեսնենք, Երգն ավարտվեց,

գերմանացի ք»:

«Ի՞նչ, վերջացա՞վ, երգը պրծա՞վ», — աղմըկեցին դահլիճում:  
«Իսկ Վալտե՞րը... ինչու իմաստի: Եվ այդ ումի՞ց նա պիտի  
Վրեժ լուծի», — լսողները հարց են տալիս ու կանչում:  
Լուս է միայն մադիստրոսը, նա՛ չի կանգնել լոկ ոտի  
Այս հոտնկայս ամբոխի մեջ, որ գոռում է ու գոշում:  
Առերևույթ կարծես հանգիստ, լոկ գլուխը խոնարհած,  
Խիստ հուզված է նա ներքնապես. գավը շշին գեմ արած՝  
Դատարկում է գավերն այնպես, կարծես գինին լինի զուրտ  
Նրա դեմքին, վայրկենապես, հազար միտք է կայծակռում,  
Հազար հույզեր փոխարինում, հետեւում են մեկ-մեկու  
Բայց գնալով նա դառնում է մոռայլադեմ ու խոժոռ.  
Դեմքը՝ դալուկ, երակները՝ նկատելի ու խոշոր,  
Խսկ հայացքը՝ ինչպիս ծիծառ, որ զգում է փոթորկի  
Մոտենալը: Եվ, վերջապես, թիկնոցը դեն զպրտում  
Ու ենում է ընդուստ ոտքի. «Իսկ ուր է վերջը երգի:  
Երգն ավարտիր և կամ, ծերո՛ւկ, ի՞նձ տուր վինը քո տրտում:  
Ի՞նչ, ողջո՞ւմ ես զու երկյուղից: Որ այդպես է, զե, արդեն,  
Ես կպարպեմ այս լի գավը և քո երգը կավարտեմ:

Ես լա՞վ զիտեմ, վայդելոտնե՛ր, ձեր երգն ինչ է գուշակում:  
Դժբախտություն ու տառապանք և մոխրացում շեների:

Ինչպես մինում զիշերային՝ խով կտպկանձր շների,  
Ցավ երդեն էլ պատճառում է ինչ-որ հաճոյք ձեր հոգաւու:  
Մենք դեռ մանուկ օրթոքամ ձեր այդ երգը օժի պես  
Սողում այնտեղ և իր թույնով մեզ աշբում է բոցի պես,  
Նա մեր սրուում մեր արյանը թույն է խառնում ու լեզի՝  
Իր հայրենի հողը սիրել ու փառքի տենչալ անտեղի:

Հետևում է այդ երգը մեզ ջահելովիյան օրերին,  
Չար թշնամու ստվերի պես կախվամ պլխին պատանու,  
Համախ նաև քաֆի ժամին սեղանին է մատենում,  
Որ մեր զինուն արյուն խառնի, հարբեցնելով օրորի,  
Խարդա՛խ ծերուկ, շա՞տ եմ լսել ես իմ ջահել հասակամ  
Այդ երգերը, որոնց ողբը միշտ դարձել է իրական:  
Բանաստեղծի համար գանձ է ահազանգը մարտական,  
Թող, սրբեմն, այնպես լինի, ինչպես դու ես գուշակամ:

Ես կավարտեմ այդ երգը քա... Թայց չէ, ինչո՞ւ միշտ նորից  
Նույնը կրկնել... կամամ էի, երբ Կառավարան լեռներում,  
Ես այսպիսի մի լավ բալլագ սավորեցի մազրերից...  
Դու նվազիք զիտե՞ս որը — լսւագեմին, այն հեռու  
Նաղկած հովառում... ա՞ի, օրսրոցքում, գեռ քնի մեզ  
մանկան  
Ներծծում ես այդ երգերը, ներծծում ու արվենանամ...  
Ե՞տ դարձիր, ծերուկ երգիշ, թե չէ — լինեն թող զիտ  
Աստվածները գերմանական և պրոտական...»:  
Ես գառնում,

Վինն է առնում վայրելուր և նվազով լարտգին  
Վալլենրոդի գոշերն է լոկ զգուշորեն կրկնում,  
Ինչպես ստրուկն է հետևում իր տիրոջը զայրագին:  
Սեղանի շուրջ մարմըրում են արդեն մոմերն ահագին,  
Ասպետներից շատերն արդեն կամ նիրհում են, կամ քնաւմ:  
Թայց Կոնրադի ահեղ ձայնից նրանք զարթնում են կրկին,  
Իրենց շտկում, թափ են տալիս, աշքերից քունն են վանում  
Ու խմբվում են իրար զլիի: Աշոք ծպտուն շի հանում:

## ԱԼԳՈՒԽԱՐՅԱՆ ԲԱԼԱԴ

Մավրին էլ հասագ փախչելու հերթը.

Հաղթել են նրան թուրն ու կրակը.

Չի ընկել միայն Գրենադա բերդը,

Մակայն այնտեղ էլ համաճարակ է:

Ալպեիտարայում ուժերն է լարել,

Վերջին ուժերը մեծ Ալմանզորը:

Իսպանացիք էլ բերդը պաշարել,

Պիտի գրոհեն, երբ բացվի օրը:

Ահա որուաք հրանոթների, —

Արկերը բերդի պատերն են հոշում, —

Խաղեր են շողում մինարեթներին,

Եվ իսպանացիք ամրոց են խուժում:

Փրկությո՞ւն: Զկա՞: Օգնությո՞ւն: Ումի՞ց, —

Զարգվել են զորքն ու հեծելազորը:

Եվ դուրս է զալիս շրջապատումից,

Փրկվում է մահից լոկ Ալմանզորը:

Իսկ հազիած զորքին էլ ի՞նչ է մնում.

Ավերների մեջ ու զիտեների,

Խրախնանք սարքել՝ լողում են զինում,

Իրար մեջ բաշխում ավար ու գերի:

Հանկարծ պահակը մտնում է վրան

Ու հայտնում պետին ինչ-որ ասպետի

Համար ինդիրքը՝ ընդունել նրան,

Նա շատ կարևոր ինչ-որ լուր գիտի:

Ալմանզորն էր դա, արքան մավրերի.

Նա իսպանացուց էլ թաք չի կենում,

Նա հանձնվում է հաղթողին զերի,

Իր համար կյանք ու մեծարանք գնում:

Կանզնելով շեմքին, խոնարհ ու հլու,  
«Խսպանացիներ,— ասում է գերին,—  
Եկա ձեր աստծուն խոսավանելու  
Եվ ընդունելու ձեր իսկ սրբերին:

Եկ թող համբավը որոտա հիմա,  
Որ արաբների մեծ տիրակալըս  
Կրտսեր եղբայր եմ դառնում ձեզ համար.  
Այս է վկայում իմ այստեղ գալըս»:

Իսպանացիք էլ խիջախությանը  
Գիտեն տալ և զին և կարգին հարգել:  
Եվ, ի պատասխան այդ եեզությանը,  
Նորադարձին են սկսում զրկել:

Գրկում է հերթով արաբն ամենքին,  
Կրծքին է սեղմում, հպվում, գուրգուրում,  
Իսկ նրանց պետին՝ կրկի՞ն ու կրկի՞ն,  
Իսկ զորապետին՝ նաև համբուրո՞ւմ:

Հանկարծ... ծնկները էլ չեն դիմանում,  
Զեռքերն են դողում... Տնկում է գետին:  
Նա վայրկենապես իր շալման հանում  
Ու փաթաթում է զահի ոտքերին:

Նայում են գերուն: Նայում է գերին՝  
Այտերի վրա մահվան դակություն,  
Մի շար քմծիծաղ պաղ շրթունքներին,  
Հայացքից դժնի վրեժն է կաթում...

«Գյավուրնե՛ր, ինձնից գլուխ չե՞ք հանի...  
Դո՞ւք չեք ինձ գերել, ե՞ս եմ ձեզ գերել:  
Դուք ընդունեցիք ահեղ դեսպանի, —  
Գրենադայից ժանտախտ եմ թերել

Ես իմ համբուրով ձեզ վարակեցի.  
Թո՞ւյն կար ոսկեզօծ խոսքերիս ներքո,  
Հրճվե՞ք տանջանքով իմ մահամերձի, —  
Դուք պիտի մեռնեք նո՞ւյն տառապանքով»:

Եվ քրքում է շար ու հաղթական,  
Ջղաձգվում է, գալարվում, տնքում  
Ու գյավուրներին մի վերջին անգամ  
Ուզում է սեղմել իր ահեղ գրկում:

Եվ քրքիջով էլ տալիս է հոգին:  
Կոպերն են անշարժ, շրթներն են սառած,  
Բայց դժոխային քրքիջը կրկին  
Առընդմիշտ նրա դեմքին է թառած:

Հաղթողներն ահով փախչում են թերքից,  
Բայց ամենուրեք, թրից էլ հատու,  
Ժանտախտը նրանց դնում է հերթի  
Ու մեկ-մեկ կյանքի թելերը հատում:

Մի ժամանակ մավրերն իրենց վրեժն այսպես են լուծել:  
Իսկ ուզո՞ւմ եք լսել գուցե և վրեժից լիտվինի:  
Դե ի՞նչ կա որ նա տան շեմքին սպասում է միգուցե,  
Եվ դուք գուցե թույն եք խմում, ոչ թե մաքուր գուտ գինի...  
Բայց, ասենք, չէ՞։ Հիմա կարծեմ ուրիշ կերպ է ընդունված։  
Վիտոլի իշխանն իր պետքով ձեզ ինքնակամ հանձնված՝  
Իր լիտվական կալվածքները իրեւ ավար մատուցում։  
Ու հայցում է կիտվա խուժել՝ որպես արժան հատուցում։  
Բայց չէ, բոլորն այդպես հո չեն, — ինքը Պերո՞ւը վկա,  
Որ կիտվայում դեռ կան մարդիկ, կա՞ն, այդ ես եմ ձեզ  
ասում։

Հերիք է մեզ երգ ու նվագ, շհատված լար էլ չկա,  
Ո՞չ երգերի — ես ինքս արդեն վրեժի՝ եմ սպասում։  
Եվ կա՛ հնար — ոչ թե ինչ-որ հիվանդություն և կամ թույն...  
Բայց դե, ասենք, հարբած եմ ես... գավաթները ետ մղեք,  
Եվ ահավոր դու Հալ... մանզոր, և դու Հալբան, անզամ դու  
Աշքերիցը հեռու չքվեք, բավ է, մենակ ինձ թողեք»։

Այս ասելով՝ ետ-ետ գնաց նա հարբածի իր քայլով,  
Ներկաներին իր զեմքի տեղ լոկ թիկունքը ցույց տալով:  
Ինչ-որ մեկին սպանալով՝ ոտքով խփեց սեղանին  
Ու, շուտ գալով, զբնգացին լի գավերը գեղանի.  
Ինքն էլ ընկավ բազկաթոռին՝ դանդաղ թերթելով,  
Կարծես ծանըր և ուժից վեր մի բեռան տակ կքվելով:  
Նրա աշքերը թալկացան, բերնին փրկուր դուրս եկավ,  
Եվ նիրհի մեջ նա ընկավ:

Իսկ միարան ասպետները քար կտրեցին զարմանքից,  
Թեպետ վաղուց լավ գիտեին, որ սանարյուն ու հանգիստ  
Մեծ մագիստրը շափից ավել երը խմում է ու հոգնում,  
Միշտ դառնում է դյուրագրգիռ, վայրենու պես մոլեզնում:  
Սակայն այստեղ, խրախճանքում... աստիճանին  
անվայել...

Եվ հյուրերի ներկայությամբ... իրեն արգեսու վաս պահելու<sup>1</sup>  
Այս ամենի մեղավորը Վայգչելու տը չէք միթե:  
Նա որտեղ է, ո՞ւր չքվեց նա... Զի երեսում ոչ մի տեղու  
Լոկ մնում էր ենթադրել, որ լիտվական այդ երգով  
Թրիստանյա ասպետներին գոտեմարտի էր կաշում  
Ինքը ծպտյալ մեր Հալքանը և, չգիտես թե ինչու,  
Դա դուր չեկավ մագիստրոսին, լցուց նրան մոլաւցքավ  
Բայց, այդ դեպքում, Վիտոլին ինչո՞ւ միքավարվեց: Երկի...  
Ի՞նչ միաք ունեք այն բալլագը... ո՞նց էք երգում՝  
հազվեցման...

Ահա այսպիս՝ կուտամի անտակ ծավը սառվելավ,  
Աշխատում էր ամեն մեկը հարցը լաւեց գորովի

## V

### ՊԱՏԵՐԱՁՄ

Ի զե՞ն, ի մա՞րտ, ի պատերա՞զմ,— ասպետներն են  
պահանջում,—  
Ֆվ այս անգամ ստիպում են Վալենրոդին ընկրկել:  
Հատուցում է, մոլի կիրքը ողջ երկիրն է ընդգրկել,—  
Վիտոլին նոր քայլի համար «գեափի կիտղա» են կանչում:

Վիտոլին ինքը այստեղ գալով իր սեփական ոտենքով,  
Օգնություն էր հայցում, որ իր մայրաքաղաքը դաշինի:  
Եվ ի՞նչ — հանկարծ քեֆից հետո, շքախմբով իր անլիլ  
Որոշում է վերադառնալ՝ ուխտ ու դաշինք ոտենելով.  
Ռազմական ողջ ծրագրերին արդեն ծանօթ՝ նա թարուն  
Խաչակրաց սուրբ Յորդենի բանակառեղն է լքում:  
Մազիստրոսի կեղծ հրամանն ամենուրեք նա ճամփին  
Յուց է ստալիս և, հանդիպած ամրոցները մտնելով,  
Առանց տաղնատպ հարուցելու, առանց թեթև խուճապի,  
Ճարդում, փշրում, ավերում է՝ ողջը սրի մտանելով:  
Անպատճիք է զգում իրեն այդ վարմունքից տմարդի  
Եվ Օրդենը պատրաստվում է խաչակրաց զոռ մարտի:  
Պատը կոնդակ է արծակում, և որբազան այդ կոչով,  
Հաղած-կապած զենք ու զրահ ու զարդարված սուրբ խաչով,  
Իշխանների, վառալների զինագինդերը բազում:  
Անց են կենում ծով ու ցամաք, որ հարգածով իրենց սուրբ  
Մյու հեթանոս լիտվիններին աստծո կամոք փորձ անեն  
Կամ սուրբ խաչով դարձի բերել, կամ — եթե ոչ —  
կործանել:

Նրանք լիսովա արշավեցին: Իսկ ինչ այնտեղ արեցին:  
Քիչ է առել, թե քանիցին, ավերեցին, այրեցին:  
Թե ուղաւմ ես ծիշտ իմանալ՝ երբ որ իշնի երեկոն,  
Գու բարձրացիր այն բլուրին, որ նման է վրանի,  
Ու կտեսնես պատերազմի արքայական ծիրանին՝  
Ամենուրեք հրի շառափ, հրացոլք է ամեն կողմէ:  
Այդ արնագույն հանգերձանքը ճանաշվում է շատ դյուրին՝  
Այն ցոլանքով, որ ընկնում է համատարած դիերին.  
Եվ սա մինչդեռ հիմարներին հետաքրքիր է թվում,  
Իմաստունին հուզում է խիստ, սարսափելի վրդափում:

Գու հրդեհն է քամին անվերջ արծարծում ու տարածում,—  
Եվ լիտվայի խորքն են միւլում զորագնդերն ուղարկված,  
Լուր է պտտում, իբր կոնվոն ու վիլնոն են օղակված,  
Մոռացվում է դա էլ հետո, ու չի լսվում ձայն ու ձուն:  
Երբ մոտակա շրջակայքում ամեն ինչ է բոցն ուտում,  
Մարիենբուրուրում տեսուններին առհայտությունն է պատում:

Զո՞ւր են նրանք թալանված ու պարտված երկրից ավարի  
և բազմամբու շղթայակապ գերիների սպասում.

Զորքին փնտրող նրանց բոլոր սուրհանդակները բազում  
Գնում, սակայն ետ չեն դառնում, որ լուր բերեն մի բարի:  
Ի՞նչ պատահեց, — ամեն մեկի սիրտը երկյուղ է պատում,  
Թե կըսի հանկարծ շար բոթ, ոչ թե բարի ավետում:

Աշունն անցավ: Զմեռային բուք ու բորանն արթնացան  
Ու ծածկեցին ձյան հաստ շերտով ամեն ճամփա ու կածան:  
Հյուսիսափա՞յլն արդյոք նորից իր շողերն է արձակում,  
Թե՛ սահմանին սպասվում է նորից ինչ-որ հարձակում, —  
Կարմրատակում ու փայլում է երկնի հսկա մի պատառ,  
Եվ հրացոլքն այդ ծիրանի մոտենում է անդադար:

Մարիենբուրգիք ետ են նայում, իրենք իրենց մտածում.  
Այդ Կոնրա՞դն է վերադառնում իր պետերով ու զորքով:  
Եվ հաղթությա՞մբ, թե հետեկց թշնամին է հալածում:  
Խնչպե՞ս նրանց դիմավորել. ահազանգո՞վ, հրճվանքո՞վ:  
Գնդերն ո՞ւր են: Վալլենրոդը, ձեռքը վերև պարզելով,  
Ցույց է տալիս իր հետեկց քայլող զորքի շարքերին:  
Ա՞խ, լոկ տե՞ս սքը, միայն տե՞ս սքը վերադառն զորքերի...  
Նայես նրանց՝ անմիջապես կհասկանաս. պարզ է, որ  
Ետ են դառնում ոչ հաղթությամբ: Երբեմնի զորքը զորեղ  
Քարշ է գալիս ձյան մեջ հազի՞վ, մի կե՞րպ, անկա՞րգ,

ցանուցի՞ր.

Եարժվում, սողում այնպես, ինչպես կարկըտահար մի մորեի՞  
Կոխկրտելով և անցնելով ձյան մեջ հենց նոր ընկածին:  
Մեկն ուժասպառ իր ոտքերով ճամփի հետ է մաքառում.  
Ուրիշները՝ ցրտատարված, սրսրթալով շան նման,  
Դլորվում են ձյան շեղչի մեջ, ձեռքերը վեր կարկառում  
Ու քարացած մնում այդպես՝ ճամփաեղրի սյան նման:

Ժողովուրդը հուզված հոսեց, պարիսպներից անց կացալ:  
Հարցուփորձը ի՞նչ միտք ունի, — ամեն մեկը արդեն իր  
Կարողությամբ գլխի ընկապ, անմիջապես հասկացավ,  
Որ այս անգամ ձախողվել է արշավանքը Օրդենի:

Ջինվորների բիբերի մեջ մահն էր սառել-մնացել,  
Ցուրտ ու սովից դեմքի գույնը վաղո՞ւց թռել-գնացել.  
Նրանց շուրջը փայլիլում է անապատը ձների,  
Նրանց քայլին ուղեկցում է լոկ կաղկանձը շների.  
Մինչ հետեկց հետապնդող լիտվիններն են մոնշում,  
Նրանց գլխին ագռավներն են շարագուշակ կոնչում:

Ողջը կորա՞վ: Սուրբ Օրդենը աղետների մատնըվեց  
Վ'յն Կոնրադից, որին մարտում ոչ մի ասպետ հասավ,  
Որ փորձության ու հաղթության միշտ սովոր էր հավասար,  
Բայց արշավը դեպի Կոնվո տե՞ս որ տանով նա տվեց:  
Նա, բանի տեղ չդնելով այդ խորամանկ Վիտոլդին,  
Ամեն տեսակ զգուշություն վերջիվերջո կորցըրեց,  
Լիտվինական լայն հովտի մեջ զորքը փոեց քաջորդին,  
Խսկ Վիլնոյի պաշարումով՝ հոգնածության հասցըրեց:  
Երբ գումակում զորքի բոլոր պաշարները վերջացան,  
Ու ճամբարը խաչակնքեց սովն իր ոսկրոտ մատներով,  
Գաղտագողի հարձակումի լիտովցիները անցան՝  
Ե՞վ օգնություն, և՛ մթերքի ամեն ճամփա կտրելով:  
Գերմանացիք սկսեցին հազարներով մահանալ:  
Խնչի համար շար արշավն ալս գործով չեն ավարտում,  
Կամ, թողնելով պաշարումը, վերադառնում դեպի տուն:  
Բայց Կոնրա՞դը... Մտքով խոտոր, դեմքով հանգիստ ահա նպա  
Որսի մեջ է անվերջ գտնում ուրախություն ու խնդում:  
Ի՞նչ միտք ունի, ի՞նչ ծրագիր, — գիտի ինքն ու իր հոգին,  
Նա շի ուզում տեղյակ պահել իր պետերից ոչ մեկին:

Ինչ-որ սառել ու մարել է նրա ալյունը նախկին,  
Զորքին հուզող խոսքը նրա և աղոթքը շի հնշում,  
Զէ՛, այլևս գոտեմարտի էլ շի վարում նա զորքին:  
Նա, ձեռքերը ծալած կրծքին, շես հասկանում, թե ինչու,  
Դանդաղում է, ողջ ժամանակ Հալբանի հետ զրուցում,  
Զմեռն անվերջ ձյուն է տեղում, ծածկում անտառ,  
սար ու ձոր,  
Խսկ Վիտոլդը, հավաքելով զորամասեր նորանոր,  
Հաղթում այստեղ, հաղթում այնտեղ — հաղթանակն է  
տարածում:

Ամո՞թ, այպա՞նք սուրբ Օրդենի ավանդալից անցյալին.  
Մ է մագիստրը կովի դաշտից ետ է դառնում զեպի տռն  
Եվ, փոխանակ ճռի ավարի ու հաղթության պանծալի,  
Կրտվինների մեծահամբավ հաղթանակն է ավետում:

Տեսեք ինքներդ ահավասիկ. զինավառ ու գեղեցիկ  
Իր զորքի տեղ ուրուրների ինչ-որ պարս է ետ բերում:  
Նրա կնճռոտ լայն ճակատին վշտի ամտերն են թառում,  
Նրա դեմքը այլայլվել է ցնցումներից շղաձիգ:  
Նա ակենայտ տառապում է: Խոկ լազ կանեք դուք, եթե  
Բոնեք նրա հայացքը խոր: Շատ էլ հեշտ չէ նկատել,  
Բայց այնտեղ կա խոր թաքրած ինչ-որ լուսե բռնկում,  
Որ փայլում է վայրկենապես, հետո մարում է կրկին:  
Շատ նման է դա ճամփորդի զգայտկան պատրանքին,  
Որ գիշերվա խալարի մեջ մերթ խնդությամբ վարակում,  
Մերթ էլ հանկարծ գժոխային բոցերով է ճառագում:

Ժողովուրդը տրտեցում է, Կոնքադն իբր չի լսում:  
Նա կանչում է ասպետներին անմիաբան հավաքի.  
«Մենք խաղը եղանք, ենթարկվեցինք անլուր ժաղը ու  
Ճանակի», —  
Նրա բերնով կարծես ինքը վհատությունն է խոսում:  
Նրան լսում ու նայում են ամենքն էլի հավատով,  
Եվ պատրաստ են բացատրել ողջը տիրոջ զայրութեավ:

\*\*\*

Կանգ առ, գոռող դու զորապետ: Ժամըդ հնշեց: Տե՛ս,  
այնտեղ՝  
Ստորերկրյա խավարավառ գետնափորում այն մթին,  
Ամբողջ գիշեր մինչև առավոտ վառ են մոմեր ու կանթեղ, —  
Այդ քո Հարցն է քննում այնտեղ նիստը գաղտնի խորհրդիւ  
Այն գաճի շուրջ, որտեղ խաչի կանոնագիրքն է դրված,  
Ահավասիկ տասներկու հատ բազկաթոռներ են շարված,  
Եվ տասներկու բազկաթոռում՝ դատավորներ տասներկու,  
Որոնց մթին հանդերձանքը ու դիմակն է քողարկում:

Թաքնրվելով օտար ալքից, ինչպես տեսիլք շիրմատան,  
Կիսամթին գետնափորում նրանք սարքել են ատյան:

Մի ինքնակամ որոշում է նրանց կապում մեկ-մեկու՝  
Այս աշխարհի հզորներին, լինեն շահել կամ թե ծեր,  
Գործած ծանըր ու խայտառակ մեղքի համար հատուցել:  
Նրանց վճիռն անդարձ է միշտ. չի ճանաշում նա բեկում,  
Եվ մեկ է միշտ այդ վճիռը — մահապատի՛ծ, որ անգամ  
Չի խնայում ու չի գերում և եղորը սեփական...  
Եվ նրանցից ամեն մեկը — ուժով կլինի, թե դավավ —  
Ազգարարած իր վճիռը կատարել է պատվավոր, —  
Նրանք կողքին սուսեր ունեն, գոտիներում՝ կեա դաշույն,  
Եվ նրանցից ահա մեկը իր սուսերն է դուրս քաշում.  
«Ն’վ անկաշառ զաղտնի խորհուրդ, — թուրն է մեկնում ու  
գոշում, —

Մեր կասկածը արդարացավ հարկ եղածից առավել.  
Այն անձը, որ առաջ իրեն վալլենրող էր միշտ կոչում,  
Վալլենրող չէ բնավ էլ:  
Թե ո՞վ է նա և որտեղից, ես, խկապես, չգիտեմ,  
Բայց տասներկու տարուց ավել մեր երկրումն է նա արգեն:  
Երբ մեծըն կոմ Վալլենրողը գնաց դեպի Սուրբ երկիր,  
Նա կար նրա շքախմբում, իբրև նրա զինակիր:  
Աակայն կոմսը Պալեստինում անհետ կորավ շատ շուտավ:  
Խոկ անձը սույն, որին կոմսի մաշվան մեջ են կասկածում,  
Խոքը նույնպես Պալեստինից անհետանում է փութով,  
Հետո իբրեն ծովի վրավ խսպանիա է նա զցում,  
Ամենուրեք հանդիս զալով մեռած կոմսի հագուստավ՝  
Աշքի ընկնում մավրերի գեմ մզվազ մարտում մոլեգին,  
Ասպետական կոիվներում ծնկի բերում ամենքին:  
Եվ ի՞նչ — ահա մագիստրոս է նա Օրդենի բանակում՝  
Իբրև նշան մեր կործանման, մեր սրբության ծանակում:  
Բե նա արշավն ինչպես վարեց՝ քաջ հայտնի է ամենքին:  
Երբ ձմունը սովն ու կրտվան հանում էին մեր հոգին,  
Որս անելու պատրվակով սա մեր բանակը լքում,

Վիտուղի հետ մեր պարտության հարցն էր թաքուն  
քննարկում:  
Նրան անվերջ հետևել են լրտեսները իմ բազում:  
Իրիկվա գեմ նա շատ հաճախ աշտարակին մոտեցել,  
Այնուեղ իմակված այն կնոջ հետ թաքուն զրոյց է բացել:  
Նրանք ո՞չ թե գերմաներեն — լիտվիներեն են խոսում:

Ով անկաշառ դատավորներ, հիմա ի միտ բերելով  
Եվ ա՛յն, ինչին լրտեսները հետևել են օրերով.  
Եվ ա՛յն, ինչ դուք արդ քաջ գիտեք, բայց պահում եք դեռ  
ծածուկ,  
Եվ ա՛յն, որ մութ ամբոխն անգամ քննարկում է կամացուկ,—  
Մագիստրոսի հանցանքները ես հաշվում եմ  
Հաստատված.  
Նա արյունոտ մարդասպան է, դավաճան ու  
անաստված:

Եվ բորբոքված մեղաղրողը փութով ծնկի է գալիս,  
Զեռքը հաստատ դուռ խաշին և Հիսուսի տանջանքով  
Երդում, որ այս պատմությունը, լեցուն ծանր հանցանքով,  
Ճշմարիտ է և դրանով՝ կրկնապատիկ սոսկալի:  
Նա լուսում է: Եվ խստագույն դատավճիռ են հանում.  
Առանց խոսք ու որոշման է այդ վճիռը կայանում:  
Գլխի ինչ-որ թեթև շարժում, աշքի ինչ-որ թույլ թարթում  
Շատ ավելի բան են ասում ամեն տեսակ խոսքերից:  
Այսեն մեկը, դուրս չգալով իր հոգու մութ խորքերից,  
Զեռքի փոքրիկ դաշույնիկով մաշված էշեր է թերթում  
Վերջին անգամ սուրբ պատվիրան — օրենքները կարդալով,  
Վերջին անգամ արթուն խղճին և օրենքին հարց տալով:  
Հետո նրանք, բոլորը մեկ, իրենց կրծքին են խաչում  
Զեռքերն իրենց և խմբովին հանկարծ «վայ» են մռնչում:  
Գետնափորն է ահեղորեն արձագանքում այդ «վայ»-ին:  
Այդ կարճ բառը այսուհետև հավասար է վատ մահին:  
Եվ տասներկու սուրսայր դաշույն մերկ ու պատրաստ են  
արդեն.

Եռտով նրանք Վալենրոդի կուրծքը պիտի ծվատեն:  
Թեպես նրանք դուրս են ելնում քայլով զգուշ՝ կատվայիթ  
Թայցեայնպես յուրաքանչյուր նրանց քայլը կարծես թե  
Արձագանք է մթնում տալիս զարհուրելի այդ «վայ»-ին:

## VI

### ՀՐԱԺԵՏԸՆ

Լուսադեմին ձմռան բուքը կաղկանձում է ու ճշում:  
Եվ մի հեծյալ բուքի միջով սլանում է խիստ արագ:  
Կոնրադն է դա, որ թուզում է դեպի մթին աշտարակ  
Եվ լճակի սառած ափից Ալդոնային է կանչում:  
«Մեզ է նորից, իմ Ալդոնա, կանչում կյանքը մեր անցածք  
Ես երդումը կատարեցի — խորտակված է թշնամին,  
Տևողական դրոշները պատառութած ընկան ցածու:

### ՄԻՒԱՆՃԱՌՈՒԻ

Ա՛խ, դա ձայնն է իմ սիրելու Ա'լֆ, այդ դո՞ւ ես, այս  
Ժամի՞ն...  
Մի՞թե նորից ինձ մոտ ես դու: Ճի՞շտ է արդյոք, որ անցած  
Սպասումի օրերը քար: Տագնապները վերջացա՞ն:

### ԿՈՆՐԱԴ

Աստծու սիրուն, իմ Ալդոնա, էլ մի հիշեր այդ մասին,  
Հարցերը թող և լավ լսիր, թե սիրելիդ ինչ կասի:  
Վե՛ր տեսողնին — սահման չկա նրանց կրած կորստին:  
Տե՛ս, թե ոնց է շառագունել երկնի մոտիկն ու հեռուն:  
Այդ կիտվան է տեսողներին հրի մատնում վերսախին,  
Կիտվիներն են, որ ամենուր ամայություն են փոռում:  
Յոթգլխանի այդ վիշապին ես խոցեցի մահացու:—  
Ավերակ են ամրոցները մեր ոխերիմ դրացու:  
Ես զրկեցի զորությունից գերմանական հրեշին,  
Գեհենն անգամ անկարող էր ավելի լավ վրեժի:

Հիմա արդեն բավական է: Ես էլ մարդ եմ, և բար չեմ.  
Կոփեներւա ու դաշերուա անցուկ հյանքս բավանգուկ,  
Այժմ, արդեն կատած հոգի ու տարիքի բեռան տակ,  
Պիտանի շեմ ես մարտերի — ուժու ու արյունս է սուռել:  
Բավական է վրեժ լուծել: Դերմանացին բա մարդ չէ:  
Աստված բացեց իմ աշքերը — չէ՞ որ եղա կիտվայում:  
Կովենական քո դպյակին այնտեղ այցի գնացի.  
Քարը քարին չի մնացել քո հայրենի ամրոցի,  
Որ արծվի պես ժայռին թառած՝ անդունդի խորքն էր նայում:  
Մանր էր աեանել... և հեռացաւ ավերակից ամացի  
Ու քաշեցի ձիռու սանձը գիտեն՝ մեր հովտում:  
Նո՛ւն խոտերը, կանաշների նո՛ւյն գորդեմը հմայիւ,  
Եվ դույնդույն ժաղիկների նո՛ւն բերմանքը թարմ օդում, —  
Մնացել է ոզքը այնպես, ինչպես ծանըր այն պահին,  
Երբ մայր մտենալ արեկ տակ բաժանվեցինք ես ու դու...  
Ա՛խ, կարծեմ թե երեկ չիներ... իսկ այն քա՞րը վիթխարի:  
Դու հիշո՞ւմ ես՝ մենք ինչքան ենք հանգիստ առել այդ  
քարին:

Նա մնում է, բայց պատված է բաղեղով ու մամուռավի:  
Ես մամուռավ սրբաւեցի, սրտի ծանր մըռմաւով,  
Լացով աեսա ճեմից սարբված այն աթոռը մտերիմ,  
Որտեղ, անգի՞ն, նստում էիր ամառն կիզիչ տոթերին  
Լայնատերև սազարթաշատ սոսիների շուրի տակ:  
Իսկ աղբյո՞ւր՝ բյուրեղի պես ականակիտ ու հստակ:  
Դու հիշո՞ւմ ես լեռնալանջին իմ տնկած այն փակ այգին,  
Այն հովնոցը՝ շրջապատված շոր ուռենու ձողերով:  
Այնտեղ հրաշք է կատարվել, իմ Աքքն ու թռնկազին.  
Չոր ճյուղերը շիվ են տվել, գարձել ծառեր ահապին  
Եվ մեղմորեն սոսափում են իրենց ծագկած ճյուղերով:  
Նրանց տեսքից զարթնեց հույսը, որ մեռած էր տարիներ,  
Մեր երբեմնի երշանկության շունչը այրեց ինձ կրկին  
Այդ ծառերը համբուրելով, սեր իմ, իշտ ես ծնկի.  
«Օ՛, աստված իմ, — շնչացի, — հնարավոր թե լիներ  
Նորից կիտվա վերաբանու քեզ հետ մեկունք, իմ անգի՞ն,  
Նորից ապրել նույն հարկի տակ, նորից կոչել քեզ սիմ կիմ»...  
Ա՛խ, նոր կյանքով մենք կապրեինք, թե մեզ բախտը

վիճակեր,

Թե ուռենու շոր ձողի պես մեռած մեր հույսն էլ ծագկեր... Եւ  
Գնա՞նք, զնա՞նք, իմ Ալդո՞նա: Հրամանով իմ թեթի  
Կրացվեն այս գարբասները՝ շանցած նույնինկ մի վայրկյան  
Բայց ս՞ամ է պետք հրամանը: Այս փակ գաները եթե  
Եռապատիկ հաստ լինենին, իմ ձեռքերով սեփական  
Ես շարդելով բաց կանենի և սեղմելով իմ գրգին,  
Կարուտապին իմ թեերավ կթացնեի քեզ կրկին  
Գեպի հովիան այն հարազատ նրկնքի տակ լիտվական  
Կան անկյաններ, թաքստացներ՝ բեկովեժյան մայրուտում,  
Ուր չի հասնի ոչ ազմուկը, ոչ տագնապը ուսպմական,  
Ուր չի լսվի, թե ինչպես են գոռ զորքերը սրուառը,  
Ուր չի հասնի ոչ թշնամու ծաղոր ու ծանակը թունոտ,  
Ոչ մեանաղի հառաշանքը, անեծքի խսաքը քինատ...  
Այնտեղ, այդ սաւրը մենության մեջ, բնության ու քա պրկում  
Սոռանալով և՛ գտտեմարտ, և՛ արդարականք ահարիս,  
Ողջ աշխա՞րհը մոռանալով, քեզ հետ մեկունք, իմ անգի՞ն,  
Ես կողանեմ կյանքը նորից՝ առանց ցավ ու տանշանքի  
Վճռիք, խօսի՛ր, իմ Ալդո՞նա»:

Բայց Ազգունան շի խոսում  
Իսկ Կոնքագը իր սիրելուց պատասխան է սպասաւմ:  
Այգը արդեն ալ է ներկաւ կապաւու դեմքը երկնչիք:  
«Պատասխան տուք, ուշ է արդեն, շասուվ մարդիկ  
կարթնանան,  
Պահաները կապող են մեզ տեսնել այստեղ: Իմ անգի՞ն,  
Իմ Ալդո՞նա...: Նրա ձայնը թթառում է հուզմունքից,  
Նա լսում է շնչակառու: Լուս է նաև Ազգունան:  
Ա՛խ, մի՞թե նա իր Կոնքագի արաշանքը շի լսում, —  
Եվ Կոնքադը ծնկի գալով՝ կարեկցանք է աղերսում:

Միանձնուիի

Զէ՛, շատ է ուշ, ուշ է արդեն, — արառում ձայնավ, բայց  
Հանգիստ  
Պատասխանում է Ալդոնան: — Ինձ տեսքն ինքը ուժ կտա.  
Որ գիմանած զայթակցման այս մի վերջին փորձանքին:  
Այս մենավոր աշտարակի շեմքից հենց որ ներս մտա,

Ես ուխտեցի, որ այստեղից դուրս չեմ ելնի մինչև մահ։  
Ինքըս ինձ հետ քիչ չեմ կովել, քիչ չեմ տանջվել ես արդեն,  
Իսկ դու... իմ Ալֆ, իմ սիրելի, ի՞նչ, եկել ես դու հիմա,  
Որ ինձ օգնես ուխտըս դրժե՞լ, որ ինձ հանես աստծու դե՞մ:  
Եվ դու ո՞մ ես կյանքի կոշում — մի ստվերի՛, տեսիլքի՛:  
Ինքդ դատիր. ասենք թե ես քեզ լսելով՝ իմ խելքի  
Մնացուկից զրկվեմ հանկարծ կամքիս ուժը կորցրած՝  
Ասենք թե ես խախտեմ ուխտըս, այն, ինչ սիրով երդվեցի՝  
Ասենք թե ես իմ պաղ խուցից քո տաք գիրկը նետվեցի,  
Եվ դու հանկարծ ... չես ճանաշում Ալդոնային քո սիրած,  
Դու, վախեցած, հարց ես տալիս... «Դո՞ւ ես արդյոք,

Ալդոնա՛...

Ո՞ւր է արդյոք այն հայացքը — նա խամրած է ու մարած,  
Այն իրանը...» Ախ չէ՛, Կոնրա՛դ, քո մտքի մեջ թող մնա,  
Թող ըլեղծվի այս տեսիլքից քո երբեմնի Ալդոնա՛ն։

Ինքս եմ ահա խոստովանում, — ների՛ր դու ինձ, իմ  
անգի՛ն, —

Լիալուանի շողերի տակ երբ դու այստեղ ես գալիս,  
Ամեն անգամ քեզնից վախով իմ աշքերն են խուզ տալիս,  
Որ շտեսնեն ժամանակի ավերմունքը քո դեմքին։  
Դու մի գուցե այն չես արդեն՝ ճերմակել ես, ծերացել,  
Եսկ իմ մտքում, իմ հոգու մեջ անվթար է մնացել  
Քո առնական կերպարանքը, նո՞ւյն հագուստով ու զենքով,  
Երբ առաջին անգամ մտար իմ հայրական տան շեմքով, —  
Քեզ այդպես եմ հիշում հավետ, այդ պահը չեմ մոռանում։  
Այդպես անկեղծ և անվթար թիթեռնիկն է քարանում  
Դեղին սաթի շերտերի մեջ։ Ա՛լֆ, թող լինի մեզ համար  
Սեր առաջին հանդիպումի հիշողությունն այս անմար  
Նոր հանդիպման գրավական, բայց ո՛չ այստեղ, այս  
կյանքո՞ւմ,  
Այլ մեր շիրմի դռնից այն կողմ՝ երանավետ երկնքում...»

Հովհանները թող որ մնան հոգիներին երջանիկ,  
Եսկ ես այս պաղ պատերի հետ ընտելացել եմ արդեն,  
Գոհ եմ բախտից գեթ նրանով, որ աշխարհում կաս դու դեռ,

Որ կարող եմ երեկոյան լսել ձայնդ քաղցրալի՛:  
Այս քարակոփի խցում անգամ, պատերի մեջ մութ ու պաղ  
Տառապանքի ու ցավի դեմ ես գտել եմ բուժիչ դեղ.  
Մի՛ մտածիր սպանության, դավի մասին և հաճախ  
Այցելիր քո Ալդոնային, հաճա՛խ արի դու այստեղ:

Ա՛խ, եթե դու — լսո՞ւմ ես ինձ — բերել տայիր, տնկեիր  
Իմ մենավոր խուցի առաջ լիտվինական ուռիներ,  
Կովենական այն հովնոցը եթե այստեղ սարքեիր,  
Թե նույն ծաղկունքը ծաղկեին ու... նույն քարը թե լիներ...  
Մանուկները, հավաքվելով շրջապատի գյուղերից,  
Եվ պսակներ կհյուսեին, և զամբյուղներ՝ ճյուղերից,  
Ուռիների ստվերի տակ խաղ կանեին, կերգեին՝  
Իբրև ցավին իմ սփոփանք և բալասան՝ վերքերին։  
Հայրենական այդ երգերը ցավս հեռու են քշում,  
Այդ երգերը ես լսելիս միշտ իմ կիտվան եմ հիշում։  
Քանի գեռ կա քո Ալդոնան՝ այդ երգերը թող հնչեն,  
Իսկ երբ մեռնեմ՝ թող իմ Ալֆի գերեզմանին զողանցեն...»

Բայց Ալֆն արդեն էլ չէր լսում։ Սառցակալած լճափին  
Ծրջում էր նա աննպատակ, մտածելու անկարող,  
Կատաղորեն կտրում-անցնում իր խենթ քայլին խանգարող  
Ամեն արգելք։ Մի վազք էր դա, որ նման էր խումապի, —  
Նա հանգիստ է ուզում գտնել խենթ ու խելադ այդ վազքում։  
Նա նեղվում է, ձմռան բուքին նա քրտնում է ու շոգում,  
Զենք-զրահը դեն է նետում, զցում թիկնոցն իր հագից,  
Ամեն ինչ է նա շպրտում, բայցի անլուր տանջանքից։

Լուսադեմին, արդեն հասած պարիսպներին քաղաքի,  
Նա նկատեց ինչ-որ ստվեր, որ իրեն է հետևում,  
Բայց և շուտով անհետանում հողաթմբի հետևում։  
Լուսության մեջ լոկ հնչում է նրա ձայնը զայրադին,  
Եվ ահավոր «վայ»-ը հետո կրկնվում է եռակի։

Այս լսելով՝ Ալֆը մեկից սթափվում է և իսկույն  
Գլխի ընկնում, վայրկենապես շուռ է գալիս շեշտակի,

Շորցն է նայում՝ լուս գաշտերին, գեռ զգարթնած քակաքին,  
Սակայն՝ ոչ մի կենդանի շունչ — միայն քամին է սպում,  
Եվ անտառը ձմռան քամու մոլեգին ուժն է զգում:  
Ալիք հուզված կանգ է առնում, նայում սասած լճափին  
Եվ թողնելով քարձումքները, արգեն առանց խօսապի,  
Անհաստատ ու երեր քայլով դառնում դեպի աշտարակ՝  
Դապի սիրած իբ Ալդոնան:

Արշալույսն է ճառագում:  
Նա տեսնում է իբ սիրածին այգաբացի լուսի տակ:  
«Բարի օ՛ր քեզ, — կանջում է նա, — քանի՛ տարի մենք  
անվերջ  
Հանդիպել ենք (հանդիպել ենք) գիշերային մթան մեց:  
Այսինչ հիմա «բարի օր» է, ոչ թե «բարի երեկո»:  
Դե, կուահի՛ք, ինչո՞ւ այսօր ես եկել եմ ցերեկով»:

### Ալդոնա

Ես կուահել յեմ քանկանում: Ֆախություն: Ալիքին,  
Ծո՛ւտ հեռացի՛ր դու այստեղից: Աղաշում եմ ու լալիս,  
Գնա՛, թե չե... լույս է արգեն... կընկատեն քեզ այսահետ  
Կընկատեն, հասկանո՞ւմ ես:

### Աչք

Ուզ է, շա՞տ աւշ է արգեն:  
Թե իմանա՞ ի՞նչ եմ ասում, ի՞նչ է տենչանքը հոգում:  
Նետիր գոնե ծաղկի մի լինք. թոշնած լինի թող թեկուզ:  
Է՞հ, որտեղի՛ց քեզ մոտ ծաղկի... բայց գու կարող ես նետել  
Պատից ինչ-որ ծեփի կտոր, քո հագուստից գեթ մի թել:  
Հիշի՛ր, կյանքում հրաժեշտը երկու անգամ շի լինում:  
Հրաժեշտի այս վայրկյանին ես մի բան եմ կամենում,  
Մի բան, որին հպված լինես դու քո նրբին մատներով,  
Մի բան, որ ես, իբրև հավերժ գրավական քո սիրո,  
Հետքս տանեմ, կրծքիս սեղմեմ:  
Ու մահվան ցավը մեղմեմ:  
Կործանումն է ինձ սպասում, եկ կործանվենք միատին.  
Տե՛ս, այստեղից երկում է բերդի բուրգից մի պատառ,

Ես ալնուեղից, իմ Ալդոնա, նշան կտամ իմ մասին՝  
Առավոտյան բուրգի եղից ես կախ կտամ սև պատառ,  
Երեկոյան հրակնատից միշտ կթարթի լույսը վաս:  
Դու հետեւ իմ նշանին ու թե հանկարծ նկատես,  
Եթե տեսնես՝ առավոտյան արդեն չկա ու պատառ,  
Երեկոյան՝ հրակնատում չի առկայի լույսը վատ,  
Դու հասկացիր, որ ես չկամ... քեզ այլևս չեմ գտ տես...  
Մնամ բարե...

Ու նա շրջեց — ոտնաձայնը հեռացավ:  
Իսկ Ալդոնան, ստրուփահար, կանգնած տեղը քարացավ:  
Այդպիս նրա ողջ օրն անցավ. Ֆայրամուտի լույսի տակ,  
Նոյն երկաթի ցանցի առաջ, համբացածի նույն գիրքով,  
Կանգնած էր դեռ՝ տասն խաչված վհատության քար ձեռքով,  
Եվ խաղում էր քամին նրա հագուստի հետ սպիտակի:  
«Վե՛ր, — նայելով արեգակին, որ կորչում էր պաղ միգում,  
Դիմեց Ալֆը ծեր Հալրանին և հեռացավ դիտանցքից,  
Որտեղից նա ամբողջ օրը, առավոտից իրիկուն,  
Հետեւում էր Ալդոնային՝ կեղեցվելով տանջանքից:—  
Հալրա՛ն, ինձ տուր թիկնոց ու թուր, գնամ դեպի աշտարակ...  
Թող քո վերջը բարի լինի, իմը... հասնում է արագ:  
Դու՛, անբաժան իմ ուղեկից, լոի՛ր և մի՛ մոռացիր.  
Եթե հանկարծ ես ես չգամ, դու այստեղից հեռացիր:  
Եվ — մի վերջին խնդիրք նաև... ա՛խ, աստված իմ, ես  
կյանքում, —  
Ո՛չ այս անծիր երկնքի տակ, ո՛չ էլ անծիր երկնքում, —  
Անգամ հիմա, երբ ինձ արգեն մահն է նսկում դարանից,  
Ո՛չ ոք չունեմ, ո՛չ ոք բացի քեզանից ու նրանից...  
Աւրեմն այսպես. հրակնատից կախ է արված սև պատառ,  
Թե ետ չեկա՛ այդ պատառը դու ցած նետիր անպատճառ...  
Բայց լսո՞ւմ ես... դուռն են ջարդում...  
նրանք այստեղ են գալիս»:

«Ա՞վ է այնտեղ», — երեք անդամ դռնապանն է ձայն տալիս  
ի պատասխան՝ երեք անգամ խմբովին «վայ»-ն է հնչում:

Զենքի շառաշ, աղմուկ ու ձիչ,— պահակախումբն է ցրված,  
իսկ կատաղի հարվածներից դարրասները ճռնշում,  
Ընկնում են ցած: Ամբոխն արդեն, չար մոլուցը ով

մի տարված,  
Ներս է խուժում, վեր բարձրանում աստիճանով գալարուն  
Ու Կոնրադի ննջարանը ամեն կողմից բոլորում:  
Մոտենում են քայլերն անվերջ, հնչում մոտիկ ու մոտիկ:  
Ալֆը ներսից դուռն է կողպում երկաթակոփ հաստ նիգով,  
իր մի ձեռքով թուրը բռնած, նա մյուտով թույնով լիք  
Գավն է խմում, նորից լցնում, բայց այս անգամ թույլ ճիգով  
«Վե՞րջ, Սերունի՛, իմն ըմպեցի, հիմա հասավ հերթի քոյ:Դունաթափված խեղճ Հալբանը գավը խլել է ուզում,  
Զեռն է պարզում, բայց նույն պահին և թշնամուն է լսում  
Երկու-երեք քայլի վրա գենք են ճոճում մոլեգնած  
Եվ ուր որ է ներս կմտնեն: Եվ նա ձեռքը իր մեկնած  
Ետ է քաշում:

«Սերո՛ւկ, լսի՛ր, Հո չես փրկվի հրաշքով.  
Մի՞թե ծանոթ այս ձայները քեզ ամեն բան չեն ասում:  
Իմ բաժակը դատարկված է: Թոնը քեզ է սպասում»:

Հալբանը լուր և հուսահատ նայում է թաց հայացքով.  
«Ես դեռ կողբամ մահը, որդի՛ս, աշքերը ե՛ս կփակեմ:  
Զէ... Ես մեռնել դեռ չեմ ուզում, ես ապրել եմ կամենում:  
Որ դարեղար քո սխրանքը ես իմ երգով հոչակեմ,  
Որ տարածեմ հերոսության քո համբավը ամենուր:  
Թե ես հոգնեմ՝ իմ փոխարեն երգս կանցնի բերդից-բերդ:  
Նա կհնչի խրճիթներում, պալատներում լուսակերտ,  
Մայրը կերպի մանկան համար, իսկ գուսանը՝ ասպետի:  
Այդ երգը քեզ, իմ նահատա՛կ, անմահությամբ կպատի,  
Նույն այդ երգը ծնունդ կտա քեզ պես ուրիշ առյուծի,  
Ծր մեզ համար մեր փոխարեն ահեղ վրեժ կլուծի...»:

Պատուհանի գոգին ընկած՝ Ալֆը անթարթ հայացքով  
Նայում է փակ աշտարակին, որ Ալֆի սերն է գերել,  
Նայում այնպես, կարծես պիտի ինչ-որ անհայտ հրաշքալ  
Կարողանա անցած օրը կրկին անգամ ետ բերել:

Գրկում է նա ծեր Հալբանին, ու երկուսն էլ հեկեկում,  
Ու երկուսն էլ թափանցում են սրտի խորքը մեկ-մեկու  
Բայց մարդկային մոլի ուժը հաղթում է և մետաղին՝  
Դուռն է շարդկում և հնչում է նրանց ձայնը կատաղի.  
«Մոտ է արդեն օրհասը քո, ո՞վ դու ստոր գավաճան,  
Քո օրհա՛սը, որ խաչակիր մեր թրերը բերեցին:  
Դե՛, պատրաստվի՛ր մահղ ընդունել — խոստովանի՛ր  
Երեցին,

Խոստովանիր ծով մեղքերդ, մահից առաջ գեթ զղա»:

Ալֆը, պատրաստ սրամարտի, քաշում է թուրն ահագին,  
Սակայն հանկարծ գունատվում է, ոտքի վրա օրորվում,  
Հետո, ընդուն մի շարժումով, նետում թիկնոցն իր հագի,  
Մագիստրոսի սուրբ նշանը շպրտում է զայրագին

ու հոհուում.

«Տեսեք՝ ո՞նց են ոտքերիս տակ տրորվում  
Սուրբ նշանն ու թիկնոցը ձեր: Մա՛ է մեղքը իմ միակ,  
Որ կրել եմ իմ ուսերին ես տարիներ շարունակ:  
Թող այդ մեղքը տերն ինձ ների: Հիմա ինքս եմ մահ կանչում:  
Ուրիշ ի՞նչ եք ուզում լսել: Թե՞ հաշիվ եք պահանջում:  
Խնդրե՛մ, հաշվեք, քանի՛ շենքը դարձան տխուր փլատակ,  
Քանի հազար գերմանացի խոր քուն մտան հողի տակ:  
Դուք լսո՞ւմ եք, թե ինչպես է ոռնում բուքը ահարկու.  
Զեր զորքերի մնացուկի կործանումն է նա երգում:  
Դուք լսո՞ւմ եք, թե ինչպես են շներն իրար գգվառում,  
Ցրտահարված ձեր լեշերն են նրանք այնպես հոշուում:

Այս ամենը իմ քրտինքով ու ձեռքով եմ աշխատել,  
Բազմագլուխ ձեր հիդրային մի հարվածով զլխատել,  
Սամսոնի պես ձեր պալատը ես դարձել եմ փլատակ:—  
Զեր բյուրի հետ ես էլ, ոչի՞նչ, թող որ մնամ նրա տակ»:

Այս ասելով՝ նա տապալվեց բարդու նման սլացիկ  
Եվ ընկնելիս ներքե գցեց այն կանթեղը գեղեցիկ,  
Որ պտտվեց երեք անգամ, երեք անգամ շուր եկավ  
Եվ, կարծես թե դիտավորյալ, նրա գլխի մոտ ընկավ:

Թափոված յուղի լճակի մեջ հուրը հազիվ առկայում,  
Բարխում է թույլ, աղոտանում,— պատրույզն արդեն յուշ

շունի.

Սակայն հանկարծ, իբրև նշան վերջի՞ն-վերջի՞ն ողջույնի,  
Բռնկվում է նա նոր թափով. Ալֆի դեմքին լուս գցում  
եկ — վերջ. այստեղ՝ կյանք է կորչում,

այնտեղ՝ կրակն է հանգչում:  
Նույն վայրկյանին հնչեց մի ճիշ աշտարակից հեռավոր,  
Հնչեց մի ճիշ սարսուռ աղդող, սրտակեղե՞ք, ահավո՞ր...  
Թի ո՞վ այդպես աղաղակեց, ձեզ ավելորդ է ասել:  
Ոչ միայն դուք... այս ամենին անտեղյակն իսկ, թե լսեր  
Այդ ահավոր ճիշը հեռվից, նա պետք է որ հասկանար՝  
Նման ահեղ ճիշ արձակող կուրծքն ալլես շի՞ շնչի  
Եվ իր այդ սուր աղաղակով վերջին շունչը կփշի:  
Նման սուր ճիշ արձակում է ամեն բանդիո ու քնար,  
Երբ որ հանկարծ բիրտ հարվածից նրանց լարն է կտրրվում:  
Դրան, իբրև երգի սկիզբ, լավ երաշխիք է տրվում,  
Բայց ընդհատված երգի վերջը... մեզ անհայտ է նա արդեն:

Ես այսքանով Ալդոնայի երգը դեռ չեմ ավարտում:  
Հրեշտակները թող այդ երգը շարունակեն դրախտում,  
Իսկ զգայուն լսողները՝ իրենց սրտո՞ւմ ավարտեն...

## ՇՈՒՇԱՆՆԵՐԸ

Ո՞վ է սովոր նման բանի.  
Սպանում է մարդուն պանին,  
Գետակի մոտ, լայն բացատում  
Սպանվածին հողով պատում,  
Շուշաններ է շուրջը տնկում,  
Տնկում, հետն էլ կամաց երգում.  
Անձի՛ր, ծաղիկ, բա՛րձըր այնքան,  
Որքան պանը խորն է թաղված.  
Որքան պանը խորն է թաղված,  
Անձի՛ր, ծաղիկ, բա՛րձըր այնքանու

Եվ մարդասպան կինն անհոգի,  
Արյունոտված շորը հագին,  
Վազ է տալիս մոթ անտառովէ  
Ճամփան երկար, պատած քարով,  
Շուրջը՝ ոչ մի շունչ ու հոգի:  
Լոկ քամփին է քնկոտ փշում,  
Լոկ բվեճն է մեկ-մեկ ճշում,  
Եվ ագռավն է կռում կրկին:

Անտառեղբին, ուր հաճարին  
Միտք է անում թեքված ջրին,  
Ճգնավոր է ապրում խցում:  
Պանին նրա դուռն է ծեծում:  
Փութանցիկ է քունը ծերի,—  
Դուրս է եղնում՝ մարխը ձեռին:

Տեսիլքի պես կինը դժգույն  
Խուց է նետում իրեն իսկույն:

Աչքերն ահից սառած այնպես,  
Երթներն ինչպես զույգ ծանր քար,  
Դեմքն սպիտակ՝ կտավի պես,  
Նա խնդում է. «Մարդո... շկա»:

«Տերը քեզ հետ, նստիր պանի:  
Մեն ու մենակ, առանց բանի,  
Ի՞նչ ես փնտրում ու շես գտնում  
Այս անտառի մուժ ու մթնում»:

«Տունըս հրեն՝ կաղնուտից դեն:  
Բոլեսլավի կոչով՝ մարդըս  
Մի օր կապեց զենք ու զարդը,  
Կոիվ գնաց Կիևի դեմ:  
Եկավ տարին, տարին անցավ,  
Մարդս կովից տուն շդարձավ:  
Դըրկիցներն էլ — ջահել՝ ինձ պես,  
Դե հանցանքից ոնց խուսափես:  
Ու ես ընկա մեծ մեղքի մեջ:  
Զէր վերջանա բանը բարով,—  
Խիստ է պատժում արքան մեր մեծ,  
Մարդս էլ եկավ ողջ ու առողջ:

Թայց շիմացավ մարդըս ոշինչ:  
Տես դանակը, ինքըս՝ արնոտ:  
Ես գործեցի ծանր ոճիր,—  
Նա... թաղված է գետակի մոտ:  
Ես ասացի ինչ կար... Հիմա  
Իմ մեղավոր հոգու համար  
Ճամփա ցույց տուր: Ես ի՞նչ անեմ,  
Իմ հանցանքի քավման համար  
Ես ամեն բան լուռ կտանեմ,  
Թեկուկն ինձ խարույկ հանեն:

Լոկ մի բան եմ ես փափագում,  
Որ ամոթս մնա թաքու»:

Ճգնավորն է պատասխանում.  
«Դու քո մեղքից շես վախենում,  
Այլ մարդկային պատժից, պանի:  
Թայց քո մեղքը ո՞վ բաց կանի:  
Դու հուզմունքը մեղմիր, որդի,  
Կնճիռներից դեմքդ հարթիր:  
Բարձրյալի վերին կամւով  
Առմիշտ փակ է հանցանքը քո:  
Լոկ քո մարդն էր ի վիճակի...  
Թայց ո՞նց ելնի հողի տակից...»

Սրբի վճռից բավարարված՝  
Աշնանային մութ անտառով  
Պանին մենակ, մտքով տարված,  
Դառնում է տուն: Ճանապարհով  
Երեխեքը դեմ են վազում.  
«Հայրիկն ո՞ւր է», — մորն են ասում:  
Սարսափելի է այդ հարցը...  
«Ո՞ր հայրիկը, էն մեռածը, —  
Գժվարությամբ մայրն է ասում, —  
Գնաց ուրիշ արահետով,  
Նա տուն կզա մի քիշ հետո»:

Նրանք գիշերը շեն քնում,  
Սպասում են մի օր, երկու,  
Թայց երբ շաբաթն անց է կենում,  
Մոռանում են, խաղում, երգում...

Միայն պանին չի մոռանում  
Իր հանցանքը սարսափելի:  
Դեմքից ծիծաղն է հեռանում,  
Աշքերին քուն մոտ չի գալիս,  
Սիրտն է մարում ու թալկանում:

Դիւնքները թվում է թե  
Մէկն անկյունում ախ է քաշում,  
Կամ լսվում է ինչ-որ շշուկ.  
«Չեր հայրին եմ, եկա արդեն»:

Ախ, չէ՛, պանին չէր մոռացել  
Իր հանցանքը ծանր ու թաքուն.  
Դեմքից ծիծաղն էր հեռացել,  
Ինչ-որ քար էր իշել հոգուն:

«Սմբակներն են դոփում, Հանկա՛:  
Ծո՛ւտ, բակ իշիր: Այսպիս կանուխ  
Մեր կամուրջով ո՞վ է հանկարծ  
Զիով սուրում, շեմ հասկանում:  
Ի՞նչ ես կանգնել, բակ զուրս արի:  
Գուցե մեզ մոռ են հյուր պալիս»:

«Երիտ հեծելոր ահա թոշում,  
Մոտենում են մեր ողյութիւն:  
Սեռի ձիերն են վրնջում,  
Շողում նրանց զենքերն հաղի:  
Ախ, հիմա եմ ես ճանաշում՝  
Իմ տեղբերն են»:

Ցած են թոշում  
Եղբայրները թաղված պանի.  
«Բա՛րե, Հարտի՛ իւ— Թզջո՞ւն, պանի:  
Մէր եղբայրը ի՞նչ է անումու:  
«Պառկած է նա գերեզմանում»:

«Ե՞րբ է մեռել»: «Տարուց ավել,  
Կովի մեջ է նա սպանվել»:  
«Ո՞վ է խարել քեզ այս սուտով:  
Ողջ է զենքի ընկերը մեր:  
Ետ են դարձել զորդերը մեր:  
Հա՛րս, կտեսնես մարդու շուտով»:

Գունատվում է այստեղ պանին,  
Եփոթվում է, նեղվում, լոռմ,  
Հայացքն ինչ-որ կետի հառում:  
Տազնապն ինչպե՞ս սրտից վանի:  
«Զէ՛, մեռած ծ է», — ասում է նա,  
Հետո գանգաղ, ուզքի գալիու:  
Զի կարելի շքձևանալ, —  
Եվ հյուգերին հարց է առալիս.  
«Ո՞ւր է մարդը, մո՞տ է, հեռա՞ս  
Երբ կտեսնեմ իմ սիրելուն»:

«Մեկտեղ դաբճանք կովից, պամփօ  
Նա մեղանից ընկավ առաջ,  
Որ մեզ պատվով տանն ընդումի,  
Քեզ էլ զբկի վայրկյան առաջ  
Նա, երկի, շուտով կգա,  
Այս կողմերում է թափառում:  
Ավելի հեշտ այլ բան չկա,  
Քան մոլորվել խիտ անտառում,  
Մենք կսպասենք, չի խանգարում,  
Նա, երկի, շուտով կգա»:

Մառաներին ետ ուզարկում,  
Ապասում են մեկ օր, երկու,  
Բայց մնալը ի՞նչ միտք ունի:  
Եվ տեղբերը տիսուր-տրտում  
Ելնում են, որ ետ դառնան տուն:  
Բայց ճամփան է փակում պանին.  
«Օ՛յ, տեղբե՛ր իմ, ճամփան՝ հեռու,  
Ցուրտ աշունն էլ գուռն է հասել,  
Բուքն է ոռնում անտառներում,  
Ինչո՞ւ մի քիչ դեռ չսպասել»:

Ու մնում են: Զմեան անցավ,  
Խակ եղբայրը տուն չդարձավ:

Սպասում են և հավատում,  
թե գարնանը կդառնա տուն։  
Իսկ նա — վաղո՞ւց գերեզմանում,  
իսկ նրա շուրջ թերթ են բանում  
Շուշանները՝ այնքան բարձր,  
Որքան պանը խորն է թաղված։  
Եղբայրներն էլ հույսով տարված՝  
Միտ չեն բերում իրենց դարձը։

Տուն ու տեղը՝ հարուստ ու հին,  
Երիտասարդ՝ տանտիրուհին։  
Պնդում են, թե տուն են գնում,  
Սակայն մնում են ու մնում։  
Ամուսնն ապրում են միասին  
Ու չեն հիշում եղբոր մասին։

Տուն ու տեղը՝ հարուստ ու հին,  
Երիտասարդ՝ տանտիրուհին։  
Ինչպես մեկտեղ հյուր մնացին,  
Այդպես մեկտեղ էլ սիրեցին։  
Ամեն մեկը թաքոն հույսով  
Ու խանդով է լցոնում կյանքը.  
Առանց նրա — տառապանք է,  
Իսկ նրա հետ — ո՞նց երկուսով։  
Երկուսով են սիրում մեկին  
Ու նրա դեմ բացում հոգին։

«Հարս, — ասում են, — շբարկանաս։  
Դու մեր միտքը կհասկանաս։  
Սպասեցինք մենք ապարդյուն, —  
Մեր եղբայրը էլ չի գա տուն։  
Դու շահել ես, լի թովշանքով։  
Բայց թռչում են տարիքը քո։  
Քո կորուսող ծանր է, Հիմա  
Եղբորն ընտրիր եղբոր դիմաց»։

Ասում են ու լուր են կենում,  
Հետո, կիզված խանդի հրում,  
Մեկն ասում է մի խոսք կծու,  
Մեկը՝ մի ծուռ հայացք զցում,  
Եվ, անձնատուր մի շար հրի,  
Զեռք են մեկնում նրանք թրի։

Ո՞նց հաշտության խոսքեր ասել  
Եվ ի՞նչ անել ։ Նրանց պանին  
Աղաշում է քիչ սպասել  
Ու վազում է իսկույն տանից  
Գեպի անտառ, ուր հաճարին  
Միտք է անում՝ թեքված զրին —  
Ճգնավորի դուռն է ծեծում,  
Նրա առաջ սիրտը բացում։

«Ո՞նց հաշտեցնեմ նրանց, ասա՞ւ  
Նրանց սիրում եմ հավասար։  
Ո՞ւմ հետ գնամ ես պսակի,  
«Ներիր» ասեմ ես ո՞ր մեկին։  
Երեխաններ, տուն-տեղ ունեմ,  
Կարող եմ ես ապրել մենակ,  
Բայց, թե ճիշտը խոստովանեմ,  
Այն չէ, ինչ որ մի ժամանակ,  
Երբ կանգնած էր մարդը մեջքիս։

Չէ՛, ես էլ չե՞մ արժանանա  
Ալուսնական ուրախ կյանքի։  
Սարսափում եմ պատժից աստծու,  
Չեմ ազատվի ահից երթեք։  
Հազիվ, հողնած, աշքս եմ գոցում,  
Բաց են լինում փակ ու կողպեք,  
Սարսափահար վեր եմ թոշում,  
Լսում, թե նա ո՞նց է շնչում,  
Ո՞նց է շրջում, շրջում անվե՛րց, —  
Ես լսում եմ սպանվածի՛ն։

Նա կաղիս է, թերժում բարձին՝  
Արնառ դահակն աշ ձեռքի մեջ,  
Հոյր է թափվում նրա բերեից, —  
Անշոնչ գիտեն այրում է ինձ  
Ո՞նց աղոթքով հահղոտահա  
Սարսափահար իմ խեղճ հողին:  
Ախ, չէ՛, ես չե՞մ արժանահա  
Ամուսնութեն խաղաղ կյանքին»:

«Դա պատիժն է քո հանցանքի, —  
Ճզնագորն է առում: — Պանի,  
Ալպավինիր աստծու կամքին,  
Քո զղզումը նաև կընդունի:  
Ինձ հայտնի է կաժքը նրա.  
Սպանված է ժարդը թեպետ,  
Ես հարություն կտամ նրան,  
Եորից կապրես քո մարդու հետ»:

«Ախ, չէ՛, ախ, չէ՛, ի՞նչ ես առում:  
Ես դողում եմ... «Ո՞նց, նրա հե՞տ...  
Չէ՛, դանակն է մեզ բաժանում,  
Դու հարություն մի՛ տուր նրան:  
Մեծ հանցանք կա խղճիս վրա:  
Զղման համար ե քավության  
Ամեն տանջանք ես կտանեմ,  
Իմ կալվածքը կրածանեմ,  
Կարժանանամ ես ճգնավրյան՝  
Անտառ կերթամ, կաորեմ հյուղում:  
Մի տե՛ս, թե ո՞նց եմ ես դողում:  
Նրա՞ն... հրմա՞... Շնո՞րհ տրա.  
Եոյր դանակն է մեջտեղ շողում  
Ու բաժանում ինձ ու նրան»:

Արցունքն՝ աշքում, ցավը՝ սրառում,  
Եերլ տերում հառաշանքից,  
Դեմքը ժածկում տառապահքից

Ու մատներն է ցավով զարդում.  
«Դե ի՞նչ, ուրիշ բան չի մնում,  
Նոր սիրածիդ մարդու զնա:  
Իսկ իր անդուռ գերեզմանում  
Սպանվածը հար կմնա:  
Քանի նրան դու չես կանչել,  
Նա չի կարող գալ քեզ տանջել»:

«Ո՞ւմ հետ գնամ ես պսակի,  
Ճների՛ք առեմ՝ ես ո՞ր մեկին»:  
«Աստծու կամքին դու հավատու,  
Նա ճիշտ ճամփառ քեզ ցույց կտա:  
Արեգակը հնեց որ ժագի,  
Նրանց անտառ դու ուղարկիր.  
Այնտեղ ծալիկ թող հավաքեն,  
Թող քեզ համար պսակ ստրքին,  
Նշան թողենին նրա վրա,  
Հետո բերեն գիեն խորան:  
Ում պսակը ընտրես, պանի՛,  
Նա է սիրուն քո արժանի»:

Պանին անշափ սրախացավ,  
Կատարվում է՝ ինչ ցանկացավ.  
Գլխին պսակ պիտի կապի,  
Սպանվածից շուրսափի:  
Չէ՛, մեռուծին նա չի՛ կանչի;  
Որ գա նորից իրեն առնջի:

Սերի գնակց բավարպանած,  
Ինքն իրեն հնա, հուզառ տարված,  
Նա զազում է խիս անտառով,  
Անցնում ճահճով, անցնում ձորով  
Եվ լսում է իր հետեւում,  
Թր մեղն իրեն է հետեւում  
Ու շշնչում ինչ-որ մի բան:  
Խճճվում է, մթնում ճամփան...

Ու թնդում է անտառով մեկ.  
«Ես քո մարդն եմ, այստեղ եմ, ե'կ»:

Նա վազում է, ձեռքով անում...  
Փախչելու ուժ չի մնացել,  
Ահից ծնկներն են թուլանում,  
Ասես ոտքերն են քարացել,  
Նա ետ նայել սիրտ չի անում,  
Եվ թնդում է անտառով մեկ.  
«Ես քո մարդն եմ, այստեղ եմ, ե'կ»:

Կիրակի է: Եվ կալվածքում  
Արդեն պատրաստ են պսակի:  
Արեգակն է հենց որ ծագում,  
Եղբայրներն են գնում ծաղկի:  
Երջապատված իր գեղեցիկ  
Հարս ու աղջիկ ընկերներով՝  
Պանին մտնում եկեղեցի,  
Մոտենում է և իր ձեռք  
Վերցնում մեկը պսակներից,  
Ետ է դառնում տեղը նորից.  
«Շուշաններն եմ ընտրում, տեսե՛ք,  
Ամուսինս ո՞րն է, ասե՛ք»:

Մեծ եղբայրը առաջ գալիս,  
Խնդությունից այրվող դեմքով  
Ուրախ-ուրախ ծափ է տալիս.  
«Պատկն իմն է, ես՝ մարդը քո:  
Տե՛ս, կտորն այս ժապավենի  
Իմ ձեռքովն եմ կապել, պանի՛:  
Ես եմ կապել, ես եմ քանդում:  
Պատկն իմն է և իմն ես դու»:

«Ստում ես դու, Է՛յ, անամո՛թ,—  
Մոտենում է մյուսն արագ:—  
Տեսե՛ք, այնտեղ՝ գետակի մոտ

Կա մի շիրիմ: Այնտեղ ճերմակ  
Շուշաններն են արդեն ծաղկելու  
Ես եմ, պանի՛, կապել, սարքել  
Այս պսակը հարսանիքի:  
Պսակն իմն է, եղիր ինձ կին»:  
Բորբոքվում է մի թունդ կոփվու  
Մեկը՝ մի խոսք, մեկը՝ երկու,  
Եվ ձեռքերն են մեկնում թրի,  
Վրա վազում ու մեկմեկու  
Զեռքից խլում պսակը թարմ.  
«Իմն է»: «Իմն է, չո՞ւտ, ձեռքդ տարբա

Դուռն է բացում քամին հանկարծ,  
Ու հանգչում են մոմ ու կանթեղ:  
Ինչ-որ մեկը, ճերմակ հագած,  
Մոտենում է, կանգնում այնտեղ,  
Ուր սուր էին հենց նոր ճոճում:  
Իր չորս բոլոր աշք ածելով,  
Զեռքը մթնում տարածելով,  
Ճերմակ հագած մարդն է գոշում.  
«Այս պսակը իմն է, պանի՛,  
Քաղված է իմ գերեզմանից:  
Քսենձ, զուր ես այսօր քանդում  
Մեր պսակի երդումը դու:  
Խսկ զու հիշի՛ր, մի՛տ բեր, պանի՛,  
Օրը ահեղ դատաստանի:  
Ես քո այրն եմ,  
Զեր եղբայրն եմ:

Եղբոր վրա թե եղբայրը  
Սուր է քաշում՝ կորցրեց հոգին:  
Խսկ այս պսակն իմն է, տիկին:  
Ես քո այրն եմ,  
Զեր եղբայրն եմ:

Արնուտ կովին շուտ վերջ տվեք  
Եվ բոլորդ ինձ հետևեք:  
Հանկարծ կիսվեց եկեղեցին,  
Կամարները ցած թափվեցին,  
Սյուն ու գերան ներքեւ ընկան,—  
Փլատակվեց եկեղեցին:  
Իսկ նրա տեղ, բա՛րձըր այնքան,  
Որքան պանը խորն է թաղված,  
Ճերմա՛կ-ճերմա՛կ ու գեղեցիկ  
Շուշաններն են չորս կողմ շաղված:

### ՊԱՆԻ ՏՎԱՐԴՈՎԱԿԱՅԱ.

Քեֆ են անում ազմըկալի.  
Ուսում, խմում ու հրճվում,  
Չիրխին տալիս, պար են զալիս,—  
Ո՞նց է պանդոկը ճոճվում:

Տվարդովսկին, փաշայի պես  
Կանթած ձեռքերը կողքին,  
Հոհում է... «Ա՛յ ո՛վ եմ ես,  
Մի՛րտ, քե՛ֆ արա ու երգիր»:

Տե՛ս, մոտեցավ նա ճղճղան  
Մի զինվորի, համարձակ  
Խլեց թուրը, ու խեղճ տղան  
Փարձավ խկույն նապաստակ:

Իսկ հիմա էլ դատավորին  
Մի չերվոնեց սեցըրեց,  
Ու նրան էլ, ոնց զինվորին,  
Խոկույն շնիկ դարձըրեց

Մոտեցրեց նա շուստ կարողի  
Գլխին հսկա մի ձագար  
Եվ դանցիգյան մաքուր օղի  
Քաշեց ամբողջ մի տակառ:



Իսկ երբ օդին խմել ուզեց  
Հսկայական իր գավով,  
Հանկարծ գավում աղմուկ լսեց,  
Նայեց... Դեն է... «Վահ», քավո՞ր»:

Գավաթի մեջ դեր ճարպիկ՝  
Գերմանացի իսկական,  
Խոնարհ թեքեց մարմինն իր ձիգ,  
Գլուխ տվեց, դուրս եկավ:

Նախ՝ սեղանին, հետո՝ ներքեւ,—  
Ու բոյ քաշեց շար ոգին.  
Հավի ոտքեր, մեծ քիթը կեռ,  
Իսկ ձեռքերը՝ սուր մագիլ:

«Հը», պան եղբայր, բարի ողջույն:  
Պարտապան ես ախըր մեզ,  
Չինի՛ թե չես ճանաշում,  
Դև ծառադ եմ չէ՞ որ ես:

Ցլակաշվի մեր պայմանը  
Լերկսարը չի մոռացել,  
Բարեհածի՛ գուցե պանը  
Իր հին պարտքը հասուցել:

Դու երդվեցիր — չա՛րքը վկա —  
Երկրորդ տարվա վերշերքին  
Հոռմ անցնել հոժարակամ,  
Հոգիդ հանձնել դժոխիքին:

Բավական է: Ա՛յ բարեկամ,  
Երկուսի տեղ — յո՛թ տարի,  
Ողջ աշխարհը դու ման եկար,  
Հոռմ հիմա՛ գեթ արի:

Ստացվում է ինչպես պետք է՝  
«Հոռմ» պանդոկի մեջ ես գտա  
Հիմա ընկա՛ր դու մեր ձեռքը,  
Գնա՞նք, ձերըդ մեծություն»:

Հենց որ dictum acerbum-ը  
Պանը լսեց, ծլկվեց:  
«Իսկ քո nobile verbum-ը»՝ —  
Դեր ճամփա շտվեց:

Է՞հ, երևի դեկի ճանկից  
Պրծում չկա այս անգամ:  
Բայց փորձ արեց դուրս գալ տակից,  
Եվ ի՞նչ — գլխի՛ նա ընկավ:

«Է՞վ, իմ խելքից ծուղակն ընկա, —  
Ես պանդոկն է մեղավոր:  
Բայց սպայման»-ում մի կետ էլ կտ,  
Հապա հիշիր, բեղավո՞ր:

Ցլակաշվին կարդա՝ հրես.  
«Երեք պատվեր դու ինձ տուր»  
Թե երեք բան դու կատարես,  
Ես կլինեմ անձնատուր:

Տե՛ս, դռանը՝ ձիու նկար:  
Ես կուզեի՛ ինձ համար  
Մարմին առած ներքեւ նա գտը,  
Որ հեծնեի հենց հիմա:

Ինձ ավաղից մտրակ սարքիր,  
Որ նժույգին ես քշեմ,  
Եվ անտառում՝ մի տուն կարգին,  
Որտեղ նստեմ շունչ քաշեմ:

Տուն՝ ընկույզի միջուկներից,  
Բայց՝ Կարպատին հավասար,  
Իսկ կտուրն էլ ծածկիր վերից  
Մազկի սերմով։ Հասկացա՞ր։

Չորս դյայմանոց մեխ հավաքիր,  
Կակաչի սերմ բեր այստեղ,  
Մի սերմի մեջ խնդրեմ զարկիր  
Նման երեք հսկա մեխա։

Դեղ թռավ ու ծափ տվեց,—  
Փրթկաց բոց, ծուխ ու կրակ,  
Եկ ի՞նչ — վայրկյան իսկ շտեց։  
Պատրաստ են ձի, ապարանք։

Պանք հեծավ, ու ձին կրծեց  
Սանձք, դոփեց սմբակով։  
Քամքը փորձեց, վարզը փորձեց։  
Ու հեծյալը մնաց գոհ։

«Լատարեցիր, բան չեմ ասում,  
Խոսքը խոսք է, վեճը՝ վեճ։  
Օրհնած շուր է, ա՛յ, էն թասում,  
Պիտի մտնես նրա մեջ։»

Չուր է, սակայն ոչ հասարակ —  
Դեի համար մահացու,  
Բայց պանն ասաց, ուստի ծառան  
Պիտի մտնի նաև շուր։

Ինչպես քարը պարատիկից՝  
Դեղ թասից թռավ դորս.  
«Ազատվեցի կուպրի տիկից...  
Բայց հո իմն ես հիմա դու։»

«Շո՞ւտ է, ա՛յ դե, պայմանում դեռ  
Մի կարևոր կետ էլ կա։  
Իմ տիկինն է գալիս այստեղ,  
Մանոթացի՞ր, բարեկա՛մ։

Ես ծառայեմ քեզ մի տարի,  
Տրվեմ մթին քո ուժին,  
Նրա կամքն էլ դո՞ւ կատարիր,  
Եղիր նրան ամուսին։

Իմ տիկնոջը պիտի սիրես,  
Հլու պիտի լինես դու։  
Թե պայմանն այս չկատարես՝  
Մեր հին պայմանն ես քանդում։

Մի ականջով դմք լսում,  
Դուրս է նայում մի աշքով։  
Տիկնոջ քայլն է լսվում դրսում։  
Դեն է նետվում դռան կողմ։

Բայց — հո՞պ-պանը ձեռքն է գցում  
Պեի մազերն. «Ամբարի՛շտ,  
Էդ ո՞ւր...», Դեղ ճշում, գոշում,  
Ճեղքն է մտնում և... ընդմիշտ։

## ԴԵՎ

(Արևելյան գրույց)

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

### I

Տրտմագին՝ Դեր՝ արտաքսման ողին,  
Ճախրում էր մեղսոստ աշխարհի վրա,  
Եվ լավ օրերի վերհուշն էր կրկին  
Խմբվում նրա դեմ, պաշարում նրան,  
Այն լավ օրերի, երբ որ դրախտում  
Շողշողում էր նա՝ մի լույս քերովքե,  
Երբ որ զիսասադը՝ սուրալով օդում.  
Սիրալիրաբար նրան էր ժպտում  
Եվ ողջույն առնում ամեն մի րոպե,  
Երբ մուժի միջից հավիտենական,  
Շարավ ու պապակ գիտության ջրին՝  
Նա հետեւում էր տիեզերական  
Անցնող ու դարձող քարավաններին,  
Երբ նա սիրում էր, հավատում խորին,  
Նա՝ անդրանիկը սուրբ արարչության,  
Անգետ կասկածին, առանց շարության,  
Եվ շէր սպառնում դեռ նրա մտքին  
Վհատ դարերի շարանն անպտուդ...  
Շատ բան էր հիշում... Վերհիշում կրկին,  
Ողջը միտ բերել ուժը շէր պատում:

### II

Անապատ երկրում վաղուց էր շրջում  
Անապատարան և առանց մահի.

Դարի ետևից նոր դարն էր թոշում,  
Ինչպես որ պահն է հետեւում պահին՝  
Նույն միօրինակ հերթականությամբ:  
Առանց հաճույքի՝ սերմը շարության  
Սփռում էր Դեր աշխարհում շնչին,  
Ուր ինքն էր իշխում և ուր ոչնչից  
Զէր էլ սպասում դիմադրություն —  
— Ու նա ձանձրացավ շարության շնչից:

## III

Եվ սեգ Կովկասի լեռների վրա  
Դրախտից քշված այդ ոգին թռավ:  
Իր հավերժական սառուցով կապույտ  
Կազբեկն է շողում ադամանդի պես  
Եվ, ամենից ցած, մթին սանդի պես  
Սկին է տալիս ոլորապտույտ  
Դարյալը՝ լեցուն օձերով կույտ-կույտ,  
Եվ առյուծի պես՝ լեռնաշղթային  
Թավ բաշը փոռած՝ Թերեքն է թռչում,  
Մռնշում — և ի՞նչ. գազան ու թռչուն  
Խենթ պտտվելով պարում օդային՝  
Նրա զրերի բարբառն են լսում.  
Հեռու հարավի ամպն էլ հուրհրան  
Չվում է գալիս, ուղեկցում նրան,  
Որ ցատկուելով հյուսիս է հոսում.  
Եվ խուլ ժայռերը խիտ-խիտ շարքերով,  
Մի խորհրդավոր ու խոր նիրհի մեջ,  
Ներքն խոնարհած իրենց դեմքերով  
Ալիքներին են հետեւում անվերջ.  
Մշուշի միջից՝ ժայռերին թառած  
Բերդ ու բուրգերն են նայում ահարկու,  
Ասես Կովկասի դռների առաջ  
Հսկաների պես նրան են հսկում,—  
Ամեն ինչ այստեղ՝ աստծո աշխարհում,  
Զքնաղ է, վայրի, — բայց արհամարհում,

Բայց աստծո կերտամ աշխարհի վրա  
Նայում է սա լոկ քամահըրանքով,  
Եվ ասոն ու գոռող ճակատը նրա  
Զի ցոլում անպամ թեթև քերկրանքով:

#### IV

Վառ գեղեցկության գույներով հիմա  
Թւրիշ պատկեր է նրա դեմ փովում.  
Լայնորեն բացված գորգերի նման  
Պերճ Վրաստանի զաշտերն են հեռվում, —  
Երջանիկ ու ճոխ եղերը հողի:  
Վերծիգ բարդիներ՝ նման կոթողի,  
Ուրախ կարկաչող առվակ ու վտակ,  
Որ ունեն քարե կույնզգույն հաստակ.  
Թիւտաններ վարդի,  
Սոխակներ անթիվ,  
Որ գեղեցկուն գավերդ են անում,  
Սակայն սիրա դեմ սեր չեն ստանում.  
Փարթամ շինարի, որ շուքն է փոստ  
Բաղնդի կանաչ պատկը հագին.  
Անձավներ, որտեղ կեսօրվա շողին  
Ապաստանում է երկշուտ եղջերուն.  
Տերեկի խշշոց, փափսուկ ու փայլ,  
Հազար ձայների մի համարարրառ  
Եվ շնչառություն հազար բաւյսների.  
Եվ տռի հարավի առարկուու կեսօրի,  
Եվ տաղ բաւրագիտ, որ շած է գողին,  
Գիշերը շնչին մաքմություն տաղին,  
Եվ պարծառ աստղեր, պայծառ՝ աշքի պես,  
Սեզ վրացուն վառ հայացքի պես...  
Սակայն մի սարց նախանձից բացի,  
Բնաթյան փայլը բան չդր հարսւցում  
Դատարկ կրծքի տափ այն արտաքավածի —  
Ո՞չ նոր առ, նոր հույս, ո՞չ էլ պացում,  
Ինչ էլ աշխարհում նկատում էր նոր,  
Կամ արհամարհում, կամ առում էր նոր:

#### V

Մերուկ Գուգալը դպակ էր շինել՝  
Բարձրաբերձ մի տուն ընդարձակ բակով...  
Նրա տան վրա արյուն-արցունքով  
Հլու ճորտերը քիչ շեխն բանել:  
Հենց արեգակը պլոխը հաներ՝  
Դիմացի լանջին տան շուքն էր մնում:  
Ժայռին փորված են խոր աստիճաններ,  
Որ բուրգից դեպի գետակն են տանում:  
Թամարը՝ դուստըր Գուդալ իշխանի,  
Փաթաթված ճերմակ շադրայի քողում՝  
Այդ աստիճանի վրայով շողում,  
Գետափի էր իշնում, որ տուն շուր տանի:

#### VI

Մշտապես լոխն հովտին է նայում  
Մեծ ժայռին թառած այդ տռնը մասմ:  
Բայց այսօր այնանք խնջուց է շայլը —  
Հոսում է զինքն, զուռնան հմայում, —  
Գուդալն աղջիս նշանդրեքին  
Քեֆի է կանչել ողջ ընտանիքին,  
Գորգերով ծածկված տափակ տանիքին  
Նստել է հարսը աղջիկների մեջ.  
Երգ ու խաղով է անցկենում անվերջ  
Նրանց ժամանցը: Սարի պոռնեկն  
Թեքում է արգելն արեգակը պերճ.  
Երգում են նրանք ուրախ ու ցնծում՝  
Համաշափորեն հետը ծափ տալով.  
Իր դափն է վերցնում ջահել հարսնացուն:  
Ահա մի ձեռքի քնքուշ մատերով  
Նա իր գլխի շուրջ դափն պտտելով  
Մերթ թշունի պես սուրսոմ է, քայլում,  
Մերթ՝ կանգնում, նայում. և նրա հստակ  
Տամուկ աչքերը շորում են, փայլում

Իրենց նախանձկում թարթիշների տակ.  
 Մերթ հոնքն է խաղում, մերթ աշխն է փակվում,  
 Մերթ, հանկարծ, փոքր-ինչ առաջ է թեքվում,  
 Եվ աստվածային ոտիկը նրա  
 Սահում է, լողում գորգերի վրա.  
 Մանկական զվարթ խնդությամբ լեցուն՝  
 Ժպիտն է նրան լուսով իր օծում:  
 Բայց լուսնի շողը, որ մերթ խայտում է,  
 Վետվետում երեր զրերի վրա,  
 Դժվար թե հասնի ժպիտին նրա՝  
 Վառ, ինչպես կյանքը, չահելությունը:

## VII

Երդվում եմ աստղով կեսզիշերային,  
 Ե՛վ արշալուսով, և' մայրամուտով,  
 Որ չէր վիճակվել ո՛չ պարսից շահին,  
 Ո՛չ էլ աշխարհում մեկ այլ արքայի  
 Համրուրել աշքեր առավել ոյութող.  
 Հարեմի ո՛չ մի ցայտող շատրվան  
 Եվ ո՛չ մի անգամ ամառվա շոգին  
 Չէր լողացրել ցողով իր հակինթ  
 Այսպիսի բարակ ու ճկուն իրան:  
 Դեռևս աշխարհում հողածին մեկին  
 Բախտ չէր վիճակվել սիրածի դեմքին  
 Նման խոպոպիկ քանդել իր ձեռքով.  
 Ինչ հողը կորցրեց իր եղեմ այզին,  
 Երդվում եմ, նման գեղեցիկ այլ կին  
 Չէր ծաղկել երեք արեկ ներքո:

## VIII

Վերջին անգամ էր նա ապրում: Ավա՞ղ,  
 Իշխան Գուղակի ազատ ու անվախ  
 Ապրած ժառանգին առավոտը վաղ  
 Խեղճ ստրկուհու բախտ էր սպասում,

Մի բախտ տրտմագին և անմիխթար,  
 Հայրենիքն արդեն՝ այսուհետ օտար,  
 Եվ խորթ էր դառնում ընտանիքը սուրբ,  
 Ու նրա դեմքը լուսավոր ու նուրբ  
 Հաճախ էր մթնում թաքուն կասկածից,  
 Նրա շարժումներն այնքա՞ն սլացիկ  
 Ու լեցուն էին արտահայտությամբ,  
 Այնքան էին լի թովիշ պարզությամբ,  
 Որ եթե Դեղ այս կողմով թռչեր  
 Ու նայեր նրա դիմագծերին՝  
 Դեմքը կշրջեր ու կհառաչեր,  
 Հիշելով նախկին իր եղբայրներին...

## IX

Եվ Դեղ տեսավ... Ու նրա հոգին  
 Մի վայրկյան հանկարծ ինչ-որ անմեկին,  
 Անհասկանալի հուզով համակվեց:  
 Սին անապատը նրա լուռ հոգու  
 Լցվեց մի ձայնով ազնիվ ու մաքուր,—  
 Եվ նա վերստին սրբության հակվեց՝  
 Սիրո, բարության ու գեղեցկության...  
 Երկար հիացավ նա այդ պատկերով,  
 Եվ նրա նախկին բախտավորության  
 Երազանքները ձգված շարքերով,  
 Ինչպես աստղերի մի երկար շարան,  
 Հառնեցին նորից, պատեցին նրան:  
 Մի նոր տրտմության նա ծանոթացավ  
 Անտես մի ուժից շղթայված զոռով,  
 Ու նրա հոգում հանկարծ արթնացավ  
 Ու խոսեց մի հույզ՝ ծանոթ բարբառով  
 Ի՞նչ էր դա, նշան վերածնությա՞ն:  
 Եվ նա շգտավ ահեղ փորձության՝  
 Գայթակղության նենգմիտ խոսքերը...  
 Մոռացո՞ւմ, — բայց դա չէր տվել Տերը,  
 Համաձայն էլ չէր նա մոռացության...

Տանշելով իր լավ ու խեղճ նժույգին՝  
Դեռ մաթը ցընկած, հարսնախնջույքին  
Հաննել էր սւզում անհամբեր փեսան։  
Ահա և նրանք հաջողակ հասան  
Լույս Արագվայի կանաչ ափունքին։  
Թանկ նվերների ծանր բեռներով,  
Քայլելով հազրի, հոգնած ու անսած,  
Ուղտերի շարքն է ձգվում ղեռներով,  
Երկում կորչում ճանապարհներով,  
Եվ զանգակներն են զողանջում անուշ։  
Նա՝ Սինոդալի տերը պանծալի,  
Հենց ինքն է վարում ճոխ քարավանը։  
Գոտին է պրկում ճկուն իրանը.  
Արևի ներքո թուր ու խանշալի  
Պատյանն է փայլում. պերճ փորագրված  
Գոռ հրացանն է մեղքից կախ տրված։  
Խաղալով կայտառ, որախ երգելով՝  
Քամին է հրճվում շրջանկարված  
Նրա շուխայի երկար թեքերով։  
Սանձը զուգված է գունեզ ծոպքերով։  
Թամբը մետաքսն թելով է կարված։  
Եվ ամբողջովին փրփրակալված,  
Մեգ Ղարաբաղի ժնունդը կայտառ։  
Ուժիթույր իր ձին շի գագրում խայտալ —  
Նա ականջներն է վտանգ ու անով  
Խլշում, փնչում, խենթ նայում դիմից  
Ճերմակ փրփութին թաշող ալիքի։  
Նեղիկ է ճամփան ու վտանգավոր  
Զախից՝ տհարկու ժայռերն են ստոած,  
Իսկ աշխից՝ գետն է խենթ ու վարարած,  
Եվ ոչ է արդեն։ — Արևը մարեց  
Թյունոտ կատարին. մշուշը թառեց...  
Եվ քարավանն է շտապում առաջ։

Եվ ճանապարհին ահա մի մատուռ...  
Այժմ որբացած, կյանքում մեծատուն  
Մի մարդ՝ սպանված քինալից ձեռքով,  
Վաղուց է հանգչում այս ծածկի ներքո։  
Այն օրից, ուր էլ ճամփորդը զնու՝  
Որպախ խնջույքի թե արնուու կովի,  
Պիտի որ այնտեղ մի վայրկյան մնա,  
Ճերմեռանքորեն աղոթքի տրովի։  
Աղոթքը նրան փրկում է չարից  
Ու մուսուլմանի թուր ու խանջալից  
Բայց կտրիմ փեսան... նա արհամարդնեց  
Նախնաց աղաթը — նա աղոթք չարեց։  
Դեռ նենդամիտ երազանքներով  
Երիտասարդի միաթն էր պղտորում.  
Նա իր մտքի մեջ տաք շրթունքներով  
Հարսին էր մինում արդեն ճամբուրում։  
Հանկարծ... առջևում երկու կերպարանք,  
Հետո՝ կրակոք... այց քեզ բան... Արագ  
Թեքելով փափախն իր թուխ հոնքերին,  
Հենվելով զնուն ասպանդակներին՝  
Կտրիմ իշխանը բերան շբացեց.  
Թուրքական փողը շողշողաց նրա  
Զահել ձեռքերում, մտրակը շաշեց,  
Եվ արծվի նման նա առաջ թռավ։  
Նորից կրակոց... Հովհանով թևեց  
Վայրենի ձերց, հռնչը հառաշի, —  
Արյունոտ մարտոց ձրկար շանեց,  
Փախուսա տվեցին վախկուա վրացիք։

Ամեն ինչ լրեց. սեղմկելով իրոք,  
Ուղտերը՝ փոված դիերի մրա  
Սարսափով էին լուս մտիկ տալին։

Եվ լոռության մեջ, հովտում այդ մոայլ  
 Զանգակներն էին խլածայն լալիս,  
 Զարկված-տարված էր քարավանը շոայլ.  
 Եվ քրիստոնյա դիերի վրա  
 Գիշերահաւան էր լոկ պտույտ գալիս:  
 Նրանց դիերը շեն գտնի հանգիստ  
 Սալաբարերի տակ այն խաղաղ վանքի,  
 Որտեղ հայրերի աճյունն է թաղված.  
 Եվ այցի շեն գա արցունքով շաղված  
 Նրանց քույրերը, նրանց մայրերը՝  
 Կարուր խեղդած շադրայի ներքո,  
 Լացով, աղերսով, ողբածայն երգով՝  
 Թողած հեռավոր իրենց վայրերը:  
 Դրա փոխարեն շերմեռանդ ձեռքով  
 Այստեղ, ճամփեզրի քարածայի տակ,  
 Մի խաչ կտնկվի իրեն հիշատակ.  
 Բաղեղն էլ պիտի կանաչի կրկին  
 Ու գորովանքով այդ խաչը գրկի,  
 Այդ խաչը պատի զմրուխտի ցանցով.  
 Եվ այդ դժվարին ճամփեքով անցնող  
 Հոգնած ճամփորդն էլ շատ անգամ շոգին  
 Պիտի հանձնվի աստծո այս շուքին...

### XIII

Նժույգն է սուրում, ինչպես մի թոշուն,  
 Փնչում է, կարծեն կոսի է թոշում.  
 Մերթ սլանալիս ետ է ընկրկում,  
 Քամու ձայնին է ականջը տնկում  
 Իր շեղ ոռւնքերը լայնորեն փքած.  
 Մերթ էլ պայտերի դոփյունով մի կարճ  
 Քարացած հողին հորդ տարափ տալով,  
 Գոգգված բաշը ուժգին թափ տալով՝  
 Պոկվում է տեղից ու թոշում հանկարծ:  
 Նստած է ձիուն մի մարդ լուակյաց:  
 Նժոյգի բաշին գուխը թեքած՝

Երբեմն թամրին նա վեր է ցատկում:  
 Նա արդեն սանձը թողել է ձեռքից.  
 Շատ է ներս խրվել ոտն ասպանդակում,  
 Եվ լայն շիթերով նրա լայն վերքից  
 Արյունն է ծծվում թամրի շափրակում:  
 Քո տեր հեծյալին, ո'վ սուրող դու ձի,  
 Թոշով նետի պես կովից հանեցիր,  
 Բայց օսետինի շար գնդակը տաք  
 Անգամ մթան մեջ տիրոջդ դուավ:

### XIV

Հսկա ամբոխ է բակում հավաքված,  
 Գուղալի տանն էլ՝ լաց ու կոծ, հառաշ.  
 Այդ ո՞ւմ ձին սուրաց, ասես կրակված,  
 Ու փովեց քարին, դարպասի առաջ,  
 Եվ ո՞վ է անշուն հեծվորն այս շահել  
 Կովի տագնապի հետքերն է պահել  
 Իր կնճիռներում ճակատը նրաւ:  
 Արնաշաղախ են հագուստն ու զենքը,  
 Եվ վերշին անգամ սեղմված ձեռքը  
 Սառել է ձիու թավ բաշի վրա:  
 — Կարոտ հայացքով, հա՛րս, շատ էլ երկար  
 Գու շապասեցիր փեսային շահել:  
 Նա իշխանական իր խոսքն է պահել,—  
 Իր հարսանիքին թռավ ու եկավ...  
 Բայց հազա՞ր ափսոս. երկի նա էլ  
 Զի նստի իր ձին իշխանավայել...

### XV

Աստծո պատիճը շանթի պես փլվեց  
 Իշխան Գուղալի անհոգ տան վրա:  
 Թշվառ թամարը անկողնուն փովեց.  
 Իվ հեծկլտոցը լուս ցնցեց նրան.

Դա՞ռը արցունքներ — իրար ետեից,  
 Նա փարթամ կրծքով դժվար է շնչում,  
 Եվ մեկ էր... կարծես մի ձայն է հնչում,  
 Մի ձայն է հնչում զյութիչ ու թութիչ.  
 «Մի՛ լար, մանկիկո, մի՛ լար արդպես զուրտ  
 Չի իշնի որպես անմահական ջուր  
 Այս լուր գիակին ծով արցունքը քռ.  
 Դու միայն պայծառ աշքերդ ես տանջում  
 Եվ կույս այտերդ այրում արցունքով  
 Նա շատ է հեռու, իզուր ես կանչում,  
 Եվ գին էլ չի տա թախծիդ խոսքերին.  
 Երկնային լույսն է գղվում-ճաճանչում  
 Նրա անմարմին աշքերում խորին.  
 Նա դրախտային երդեր է լսում...  
 Ի՞նչ է այս կյանքի երազանքը սին.  
 Եվ հառաջանքը ու լացը կույսի  
 Եղեմլան այգու կենվորին ասում:  
 Օ, ո՛չ երկնալի՞ն իմ քուս հրեշտակ,  
 Երբեք վիճակը մահկանացուի  
 Չարծե քո թախծի վայրկյանին այս թանկ,  
 Մե՞ն մի վայրկյանին, հավատա՛ դու ինձ»:

«Օդային լայն օվկիանոսում,  
 Անառազամ և անդեկ,  
 Լող են տալիս, միզում հոսում  
 Լուսառուներ հրաշեկի:  
 Անծիր դաշտում՝ երկնում անքիժ,  
 Առանց հետքի, լուս ու մեղմ  
 Անորսալի թուխապ ու ամպի  
 Հոտն է շարժվում նրբագեղմ:  
 Հանդիպումից, բաժանումից  
 Ո՛չ խինդ, ո՛չ ցավ, ո՛չ հուզում.  
 Բան չեն ուզում գալիք ժամից,  
 Անցյալը չեն ափսոսում:  
 Դժբախտ օրը երբ քեզ նեղի՛  
 Թող երեան նրանք քեզ.

Երկրայինի հանդեպ եղիր  
 Անմաս, անփուլթ՝ նրանց պես»:  
 «Հենց որ Կովկասի գեպի վեր միտված  
 Լեռներին գիշերն իր քողը փռի,  
 Հենց որ Կախարդիշ խոսքերով գյութված  
 Աշխարհը գանդաղ վերստին լոի.  
 Հենց որ սառնաշուն զեփյուռը լեռան  
 Ճոճի ժայռերի խոտերը թառամ,  
 Ու վախկոտ ծիտը, պահված այդ խոտում,  
 Խնդագին ճախրի միզապաս օդում,  
 Հենց որ խազողի փարթամ վազի տակ  
 Կող տալով ցողի կաթիլը հստակ՝  
 Գիշերվա քնքուշ ժաղիկը բուսնի.  
 Հենց որ սակեգույն մահիկը լուսնի  
 Լեռան թիկունքից վլուխը հանի  
 Եվ գազտագողի քեզ մտիկ անի,—  
 Քեզ մոտ կթոշեմ առանց մի խոսքի.  
 Քեզ հյուր կմնամ մինչև լուսաղեմ,  
 Եվ թարթիշներին քո մետաքսաթիլ  
 Շաղ կտամ խոր քուն, երազներ ոսկի...»

## XVI

Խոսքերը մարում հեռավոր օդում,  
 Զայները մեկ-մեկ մեռնում են մոտիկ:  
 Նա շուրջն է նայում՝ թոշելով ոտի...  
 Ինչ-որ անպատճամ ահեղ խլրտում  
 Շարժվում է պրաւմ.— մի՛ համեմատիր  
 Գրան վիշտ կամ զախ, կամ ցնծության կայծէ  
 Բոլոր հույզերը եռացին հանկարծ.  
 Հոգին կարատեց կապերն իր բոլոր,  
 Հուր ու բոց լցվեց նրա արյան մեջ,  
 Եվ թվաց, թե այդ հիասքանչ ու նոր  
 Զայնը գեր հնչում, հնչում է անվերց  
 Երբ մռահնում էր բույսն առավատի,

Աշքին մոտ եկավ քունն էլ բաղձանքով.  
 Բայց միտքը հուզեց մի երազանքով  
 Մարդարեական և օտարոտի:  
 Համր ու լուս, պատված մշուշի քռով,  
 Փայլելով ինչ-որ երկնային գեղով՝  
 Մեկը թեքվել էր Թամարի բարձին,  
 Նայում էր նրան սիրով մի անծիր,  
 Տրտում էր նայում Թամարի վրա,  
 Այնպես, կարծես թե խղճում էր նրան:  
 Նա աստվածային մի պահպանի՛չ է:  
 Հրեշտակ չէ, երկնի հար բնակիչ չէ.  
 Նա գլխին դրած վառ պսակ չունի՝  
 Հյուսված գույներով վառ ծիածանի:  
 Նա և դժոխքի ոգի չէր անգութ,  
 Մի արատավոր մեղսուտ նահատակ:  
 Նա կարծես լիներ իրիկուն հստակ.  
 Ո՞չ օր, ո՞չ գիշեր, ո՞չ լուս էր, ո՞չ մութ...

### ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

#### 1

«Հայրի՛կ, թո՞ղ հայրի՛կ, էլ մի՛ սպառնա.  
 Քո խեղճ Թամարին էլ մի՛ հայշոյիր.  
 Նա քեզ աղաշում ու լալիս է նա,  
 Եվ նոր չի հոսում արցունքն այս, նայի՛ր:  
 Փեսացուների խմբերն ահագին  
 Զուր են հավաքվում ու գլուխ տանում...  
 Ի՞նչ, աղջիկ շկա՞ էլ Վրաստանում:  
 Ա՞խ, չէ՛, ոչ մեկին ես չեմ դառնա կին...  
 Հայր, մի՛ նախատիր, մի՛ լինիր դու շոր:  
 Ինքդ ես նկատել, որ ես օրեցօր  
 Չար թույնից մաշվում, ձեռքից եմ գնում:  
 Մի երեզանքով, որ անց չի կենում,  
 Սվատում է ինձ ոգին նենգ ու շար:  
 Ա՞խ, ես կորչում եմ, հայր իմ, ինձ խղճա՛:

Քո գիծ աղջկան, քո խենթ Թամարին  
 Տար սուրբ մենաստան, տար անխոս դու վանք.  
 Ինձ կպաշտպանի փրկիչը բարի,  
 Ես նրան դարդս կանեմ խոստովանք:  
 Իմ սիրտն աշխարհում էլ խնդում չունի...  
 Իբրև հովանի սրբության համար՝  
 Թող մոռայլ խուցը նախապես, հիմա  
 Դագաղի նման ինձ գիրկն ընդունի...»

#### II

Եվ ծնողները մի օր վերցրին  
 Ու տարան նրան մենաստան մի սուրբ,  
 Մազեղեն կոպիտ զգեստ հագցրին  
 Այն շահել մարմնին ու կրծքին այն նուզը:  
 Բայց և վանական հանդերձի ներքո,  
 Ինչպես ծաղկազարդ փափուկ դիպակում,  
 Առաջվա նման նույն սիրտն էր զարկում  
 Նույն ապօրինի հին երազանքով:  
 Խորանի առաջ, մոմի ցոլքի մեջ  
 Եվ հանդիսավոր սուրբ պատարագում,  
 Խորոնկ աղոթքի խոսքի արանքում  
 Նույն ծանոթ ձայնն էր նա լսում անվերջ  
 Կամարների տակ կիսամութ վանքի  
 Նույն ծանոթ դեմքը հաճախ մոտ թռչում,  
 Սահում էր անձայն և անհետ կորչում  
 Բարակ մուժի մեջ բուրավետ խունկի.  
 Նա աստղի նման մեղմիկ առկայծում,  
 Նա հմայում էր, կանչում էր... բայց ո՞ւ...

#### III

Երկու զովաշունչ բլրի արանքում  
 Պահվել էր վանքը՝ մի հին մենաստան:  
 Զինարի, բարդու շարքերն են փակում  
 Նրան շորս կողմից: Հաճախ, երբ մթան

Սև թեն էր թառում անհատակ ձորում,  
 Մառերի միշից  
 Անարս խցից  
 Զահեկ մեղմուանու կանթեզն էր ձյուրում:  
 Նշենիների շուքի տակ փարթամ,  
 Ուր որպես լոին պահակ շիրճատան  
 Տրտամ խաչերի շարքերն են հակում,  
 Թոշուններն են միշտ ուրախ խմբերգում:  
 Քարերի վրա ցատկում են, ճշում  
 Աղյուրները պաղ ու մաքրակոհակ  
 Ու, քարափի տակ հավերժ պիխահակ,  
 Բարեկամաքար միանում կիրճում  
 Եփ առաջ թոշում ուրախ քրքիչով  
 Եղյամոս ծաղկանց, թիերի միշով

## IV

Երեսում էին հյօւսիսում ասքեր:  
 Մագող լուսասովի փայլի տակ հրե,  
 Երբ կտապւյտ մուժը արկից առաջ  
 Հովիտի խորքում ծխում է հազիվ,  
 Եվ դեմքը դեպի արեկը արած՝  
 Մուեցիներն են կանչում նամազի,  
 Երբ զանգերն իրենց դողանջն են ցրում  
 Աւ քնած վանքը վազ արթնացնում.  
 Այն հանդիսավոր ու խաղագ պահին,  
 Երբ երիտասարդ սեդ վրացուհին  
 Երկար սափորը ուսին է զնում,  
 Սարից իշնելով շրի է զնում,—  
 Զյունոտ լեռների շարքերն անսահման  
 Բաց շուշանագույն պարսպի նման  
 Նկարվում էին հստակ երկնքին  
 Եփ ամեն անդամ ծածկում կրկին  
 Առի վերջալույսի քողով ոսկեման.  
 Եփ ամենից վեր, բարձր ու ահազին,

Ճեղքելով վերջին ամպերն էլ անդամ,  
 Փաթթոցը գլխին, շուրջառը հագին,  
 Կազբեկն էր կանգնում լեռների արքան:

## V

Սակայն հանցավոր մտքերով լեցուն՝  
 Մարուր բերկանքին դուռն իր չէր բացում  
 Թամարի հոգին: Թամարի համար  
 Մոայլ ստվեր է աշխարհին թառում,  
 Ամեն ինչ այնտեղ ցավ է պատճառում՝  
 Եվ այգը լուսե, և գիշերը մառ:  
 Երբ որ գիշերը իր քնաթաթախ  
 Զովությունով էր երկիրը պատում,  
 Թամարը իրեն խենթի պես հաճախ  
 Մրբապատկերի առաջ էր նետում  
 Ու լալի՛ս, լալի՛ս: Եվ լոին մթնում  
 Այդ հեծկլտանքը ծանր ու անհատնում  
 Ճամփորդի սիրտն էր տագնապի մատնում.  
 Նա միտք էր անում. «Դա լեռան ոգի՛ն,  
 Նա՛ է, շղթայված, տնքում քարայրում»:  
 Եվ լսելիքը ակամա լարում,  
 Ասպանդակում էր հոգնած նժույզին...

## VI

Հաճախ, կարոտը ու դողը սրտում,  
 Լեցուն մենավոր մտքերով տրտում,  
 Պատուհանի մոտ Թամարը նօտած  
 Նայում է հեռու հայացքով իր թաց  
 Եվ հառաշելով ողջ օրն սպասում...  
 Նա կզա, — նրան մի ձայն է ասում:  
 Զուր չէր երազը նրան փայփայում.  
 Թափիծով լեցուն իր ծով աշքերով  
 Զուր չէր նա գալիս, Թամարին նայում,  
 Իմում քնքալից հրաշք խոսքերով:

Տանջանքն աղջկան վաղուց էր պատել.  
 Ինքն էլ շգիտեր՝ ինչպես և ինչո՞ւ,  
 Նա սրբերին էր ուզում աղոթել,  
 Թայց սիրտն աղոթքով նրան էր կանչում.  
 Թե արդեն անզոր ծանր պայքարի՝  
 Հոգնած պառկում է, որ հանգստանա,  
 Այրում է բարձր, տոթ է, սոսկալի,  
 Եվ վեր ցատկելով՝ դողդողում է նա.  
 Մուժ է աշխերում, հազիվ է շնչում,  
 Վառվում են ուսերն ու կուրծքը նրա,  
 Գիրկն ագահորեն հանդիպման տենչում,  
 Համբուլըն է հալում շրթների վրա...  
 . . . . . . . . . .

## VII

Իրիկվա մեզի ծածկույթը խոնավ  
 Լեռներն է պատում սեղ Վրաստանի:  
 Իր սովորույթի հմայքին խոնարհ՝  
 Դեր մոտ թռավ սուրբ մենաստանին,  
 Բայց երկա՞ր-երկա՞ր սուրբ օթևանի  
 Հանգիստը խախտել Դեր սիրտ անել  
 Չեր համարձակվում:— Եղան վայրկյաններ,  
 Երբ թվաց, թե նա անդարձ կվանի  
 Միտումն իր դաժան: Եվ աննպատակ  
 Նա շրջեց բարձր պարիսպների տակ.  
 Եվ առանց քամու, լոկ նրա քայլից,  
 Ստվերի խորքում տերեն էր դողում:  
 Նա վերև նայեց. կանթեղի փայլից  
 Նեղ պատուհանն է մթան մեջ շողում.  
 Կույսը վաղուց է սպասում մեկին:  
 Եվ ահա խորունկ այդ լոռության մեջ  
 Չոնքուրն է հնչում, ուղեկցում երգին,  
 Որ հոսո՞ւմ, հոսո՞ւմ, հոսո՞ւմ է անվերջ,  
 Արցունքի նման իրար ետևից:

Այնպես քնքուշ էր այդ երգը լուսե,  
 Որ երկրի համար անմաքուր ու սև  
 Երկնքում էին կարծես թե հյուսել:  
 Վաղուց մոռացված եղբոր հետևից  
 Հրեշտակն է այդ ցած իշել երկիր,  
 Որ արտաքսվածին հանդիպի կրկին  
 Ու նրան պայծառ անցյալից երգի՝  
 Նրա տանջանքը մեղմելու համար...  
 Առաջին անդամ և միայն հիմա  
 Դեն զգաց խայտանքն ու ցավը սիրո.  
 Սարսափից ուզեց թողնել հեռանալ...  
 Զկարողացավ թևերը բանալ:  
 Եվ—այ քեզ հրաշք. նրա այտերով  
 Ռանր արցունքներ ցած գլորվեցին...  
 Մինչ այսօր էլ հենց այդ նույն խցի  
 Դռների առաջ կա մի քար ձգված՝  
 Մի անմարդկային արցունքով ծակված,  
 Արցունքով կիզիշ ու նման րոցի...

## VIII

Եվ ներս է մտնում՝ սրտում ծով մի սեր,  
 Բարության առաջ լայն բացվող հոգով,  
 Ու միտք է անում, որ ժամն է հասել  
 Ցանկալի ժամը՝ ապրել նոր կյանքով:  
 Ե՞վ սպասումի սարսուը անկամ,  
 Ե՞վ անհայտության սարսափն անլեզու  
 Կարծես հանդիպում առաջին անգամ  
 Եվ Դեմ գոռող հոգին են հուզում:  
 Դա ուրիշ բան չէր, քան չար գուշակում,  
 Մանում է նա ներս և տեսնում. այնտեղ  
 Չքնաղ մեղսուհու հսկիչը անքուն՝  
 Դրախտի դեսպան քերովքեն արդեն  
 Փայլուն ճակատով ու վառ ժպիտով  
 Կանգնած է Դեմի իր ոսոխի դեմ,

Եվ իր թևերով կույսին է ծածկում:  
Եվ աստվածային լույսի ճամանչում  
Փակվում են աշքերն անմաքուր Դեմ,  
Եվ ի՞նչ. փոխանակ քաղցր բարեի՝  
Քար նախատինքի խոսքերն են հնչում:

## IX

«Ողի՛ անհանգիստ, ողի՛ պղծագույն,  
Ո՞վ է քեզ կանչել դիշերվա միգում:  
Յայսօր շարն այստեղ չի շնչել բնավ,  
Եվ չունես այստեղ դու երկրպագու.  
Դեպի սրբությունն ու սերն իմ մաքուր  
Հանցավոր ճամփիա մի՛ ձգտիր բանալ:  
Ո՞վ է քեզ կանչելու:  
Զար ողու զեմքին  
Իրեն պատասխան նենգ ժպիտ ծագեց.  
Հայացքը խանդից սուր փայլատակեց,  
Եվ ատելության հին թույնը կրկին  
Արթնացավ սրտում ու վառեց հողին:  
«Նա ի՞մն է,— ասաց ահեղ ու մոայլ,—  
Թո՞ղ նրան, ի՞մն է, ի՞մն է, իմացի՛ր:  
Դու՝ պահապանդ, ուշ երևացիր,  
Դատավորն էլ չես ո՛չ իմ, ո՛չ նրա:  
Իմ ձեռքով դրված կնիքը ազդու  
Հպարտությամբ լի այս սիրտն է կրու.  
Ոչ մի սրբություն էլ չունես աստ դու,  
Աստ ե՛ս եմ տիրում  
Ու ե՛ս եմ սիրում»:  
Եվ հրեշտակը աշքերով տրտում  
Նայեց շար Դեմ խեղճ զոհի վրա  
Ու իր թևերը թափ տալով օդում՝  
Երկնքի կապույտ եթերում կորավ:  
• • • • • • • • • •

## Թաճար

Օ՛յ, ո՞վ ես: Խոսքերդ ինձ վախ են ազդում:  
Դժո՞խն է ճամփել, դրախտի՛ց հասար:  
Ի՞նչ ես կամ ենում...

## ԴԱ

Դեղեցիկ ես գուս

## Թաճար

Թայց պատասխանիր, ո՞վ ես գուս Ասա՛...

Ես նա եմ, որին գիշերվա լսին

Քար լսության մեջ ինքդ էիր լսում,  
Ում միտքը հոգուդ շատ բան էր ասում,  
Ում դեմքն ես տեսել հաճախ երազում  
Ու գուշակել ես թախիծը որի:

Նա, ում հայացքը հույսեր է մարում,  
Նա, ում չի սիրում ոչ ոք աշխարհում:  
Ես պատուհան եմ իմ մարդ-ճորտերի,  
Արքան զիտության և ազատության,

Ոսոխը երկնի, շարը բնության,  
Եվ տե՛ս. փարվում եմ ես քո ոտերին:  
Ես քեզ եմ բերել հուզմունքով անտակ  
Առաջին սիրո իմ աղոթքը շինչ  
Ե՛վ իմ առաջին արցունքները տաք,  
Ե՛վ իմ երկրային տանջանքն առաջին:  
Օ՛, գեթ խղճալուց լսի՛ր ինձ, գթա՛ւ  
Ինձ նորից բարուն, նորից երկնքին  
Կվերադարձնես քա կեհու մի խռաքով:  
Պճնված սիրուդ սուրբ հանդերձանքով  
Ես կերևայի երկնքում կրկին —

Մի նոր հրեշտակ՝ իր նոր ցոլանքով  
 Սինչև զե՞րշ լսիր, խնդրում եմ, սիրո՞ւմ,  
 ես ստրուկն եմ քո, ես քեզ եմ սիրում  
 Հենց որ քեզ տեսա, հենց նկատեցի՝  
 Ինձնից էլ թաքոն հանկարծ ատեցի  
 Անմահությունն իմ և ուժն աշխարհում:  
 Ու ես նախանձով հանկարծ հասկացա  
 Երկնային կիսատ խնդրության գինը.  
 Քեզ պես շապրելը թվաց հսկա ցավ.  
 Քեզ հետ շապրելը՝ դժոխք, անդի՞նու  
 Արնաքամ սրտում շսպասված մի շող  
 Նորից բռնկվեց մարող բոցի պես,  
 Եվ հին վերքիս մեջ իմ սիրտը հոշող  
 Թախիծը կրկին շարժվեց օձի պես  
 Առանց քեզ ի՞նձ ինչ հավերժությունը,  
 իմ իշխանության անեղբությունը,—  
 Դատարկահնչուն անարժեք մի բառ,  
 Առանց աստծո — վիթխարի տաճար:

### Թամար

Թո՛ղ ինձ, հեռացի՛ր, օ՛, խարդա՛խ ողիւ  
 Լոփիր, թշնամուն ես չե՞մ հավատում...  
 Տե՛ր աստված... Ավա՛ղ, ուժու չի պատռաւ  
 Աղոթել... իմ խեղճ թուլացող մտքին  
 Ինչոր սպանիչ սև թույն է կաթում:  
 Ինձ կկործանես, լսի՛ր ինձ, լսի՛ր.  
 Քո ամեն խոսքը կրակ է ու թույն...  
 Ինչո՞ւ ես սիրում, ասա՛ ինձ, խոսի՛ր:

### Դե

Ինչո՞ւ: Ավա՛ղ ինձ, իմ գեղեցկուհի,  
 ինքս էլ չգիտեմ: Նոր կյանքով լեցուն՝  
 Փշերից հյուսված պսակը իմ հին  
 իմ մեղսուտ գլխից ես դեն եմ զցում:  
 իմ ողջ անցյալը նետել եմ մի կողմ:

Դժոխք ու դրախտ աշքերումն են քո:  
 Սիրում եմ, բայց ո՛չ երկրային կրուվ.  
 Ինչպես չես կարող սիրել դու, անդի՞ն.  
 Ամբողջ զորությամբ ու զմայլանքով  
 իմ անմահ մտքի ու երազանքի:  
 Քո պատկերն եմ ես հոգուս մեջ կրում  
 Այս հին աշխարհի առաջին օրից,  
 Աչքերիս առաջ այդ դո՛ւ ես նորից  
 Եթերի հավերժ անապատներում:  
 Վաղուց էր հնչում քո անունն էլի  
 Եվ հուզում միտքս ու մտքիս հաղթում.  
 Անցած օրերում իմ երանելի  
 Պակասում էիր լոկ դո՛ւ դրախտում:  
 Օ՛, կարենայիր հանկարծ հասկանալ,  
 Թե ինչ տանշանք է իմ կյանքը համակ.  
 Առանց ընտրության, դարեր շարունակ  
 Անվերջ տառապել ու զվարճանալ,  
 Զարիքի դիմաց գովեստ շստանալ  
 Եվ ոչ էլ պարզն՝ բարու փոխանակ.  
 Ապրել ի՛ր համար, ձանձրանալ ումի՞ց,  
 Իրենի՛ց և հար մի մաքառումից:  
 Ուր ո՛չ հաշուվել կա, ո՛չ էլ հաղթանակ:  
 Ընդհմիշտ ափսոսել, բայց չկամենալ,  
 Ողջը հասկանալ, զգալ, նկատել,  
 Աշխատել սակայն ամեն ինչ ատել  
 Եվ արհամարհել ողջը իմանալ...  
 Հենց որ կատարվեց անեծքն աստծո,  
 Այս հեռու օրից և մինչև հիմա  
 Բնության գիրկը շերմությամբ իր ծով  
 Հավիտենապես սառեց ինձ համար.  
 Կապտին էր տալիս տարածությունը.  
 Ես տեսնում էի զուգվածությունը  
 Ինձ ծանոթ աստղի ու մոլորակի՝  
 Միշտ հարսանեկան ուկի պատկով...  
 Եվ ի՞նչ. չեր անցնում ոչ մեկի մտքով  
 Շանաշել իրենց եղբորը նախկին:

Ինձ պես արտաքսված այլոց իս այնժամ  
 Հուսահատորն ի տես կանչեցի.  
 Բայց դեմքը, խոսքերն, աշքերը դաժան  
 Ավաղ, ես ինքու էլ շճանաշեցի:  
 Ու ես սարտափով թես շարժեցի  
 Եզ թռավ—բայց ո՞ւր, և ինչո՞ւ, որ ի՞նչ,—  
 Ինքս էլ շղիտեմ... Թւ ես մերժվեցի  
 Իմ նախակին բոլոր բարեկամներից.  
 Ինչպես եղեմը՝ աշխարհն էլ համայն  
 Համր ու խող դարձավ մերժվածիս համար,  
 Վյապես մակույկը՝ զուրկ առաջաստից,  
 Տրված հոսանքին, անդեկ ու անկայմ  
 Ջրի քմայրով լողում է անկամ  
 Առանց ուղղության կամ դեմ հանդստի.  
 Այդպես շանթալից ամպի մի պառառ  
 Առաջոտ կանուխ երրեմն վազում,  
 Սկին է տալիս երկնքում լազուր՝  
 Առանց կանգառի, անվերջ-անդադար,  
 Եզ անեպատակ, և անհետ, և զուր,  
 Աստված իմանա՛ որտեղից և ո՞ւր:  
 Ես մարդկանց վրա շիշխեցի երկար  
 Եզ ձեղքի երկար շուսուցանեցի,  
 Փառազրկեցի՝ ինչ ազնիվ բան կար,  
 Ինչ գեղեցիկ էր՝ վատարանեցի.  
 Ո՛չ, նրանց հոգում հար շցանեցի  
 Մարուր հավատի բռցեր ու կրակ...  
 Իմ նեղությանն իսկ արժենին նրանք,  
 Որ տիմար են լոկ ու լոկ կեղծավոր:  
 Եզ թաքնվեցի լեռան կիրճերում,  
 Ստիրլած եղան որպես գիտավոր  
 Խորին գիշերվա մթնում շլցելու...  
 Եզ ուղերզը խեղճ ու մենավոր՝  
 Մոտիկ երակից խարժնելով՝ թոշում,  
 Անդունքի մնջ էր ձիու հետ կորչում,  
 Եզ զուր էր կանշում—զուր խարհութավոր  
 Արյունն չը ժայռի փողերը թրջում...

Մակայն շարության խաղերն այս մթին  
 Երկար դուր չեկան իմ սառած սրտին:  
 Գոռ փոթորկի հետ գոտեմարտերով,  
 Փաշի հաներավ, շաղ տալով աճյուն,  
 Մառախուղ հագած, զինված շանթերով՝  
 Ես հաճախ էի ամպերով թռչում,  
 Որ ատքերցի մեջ այս խոռվալի  
 Դիվային սկրտս տրտոնչից զրկեմ,  
 Անխռսափելի խոհից ինձ փրկեմ,  
 Մի կերպ մոռանամ անմոռանալին:  
 Ի՞նչ է մարդկային անցած ու գալիք  
 Հոժ ամբոխների ծանրո գրկանքը,  
 Բյուր ազետները և աշխատանքը  
 Չխռոտվանած ու տանշված սրտիս  
 Վայրկյանի հանդեպ: Եզ ի՞նչ են մարդիկ,  
 Ի՞նչ է տանշանքը, գործը մարդկային:  
 Վաղը չեն լինի, իսկ այսօր կային...  
 Կա հույս, կա արդար ատյան երկնային.  
 Դատապարտի էլ՝ կարող է ներել:  
 Բակ այտաեղ է միշտ թախիծն իմ հրե,  
 Եվ նա էլ, ինձ պես, վախճան չի զանի,  
 Հանգչելու հույսով շիրիմ չի մտնի:  
 Նա մերթ գգվում է, խայտում օձի պես,-  
 Նա մերթ այրում է, խայտում բոցի պես,  
 Մերթ քարի նման իշնում մտքերին՝  
 Իրրե անկործան նեղիշ զամբարան  
 Խորտակված հույսիս, մարած կրքերիս...

### Թամար

Իմ պատահական տանշված բարեկա՛մ,  
 Ով էլ որ լինեա՛ անհանգիստ-անքուն  
 Ես լուսում եմ քեզ ակամա անզամ,  
 Ես քեզ եմ լուսում իրինգով մի թաքուն:  
 Բայց թե խարերը նենդ են ու պատիր,  
 Թե խարուն եմ զու ու հանկարծ թե կա...  
 Օ՛, ինայի՛ր ինձ: Ի՞նչ փառը, ի՞նչ պատիի,-

Քեզ ինչո՞ւ հենց իմ հոգին պետք եկավէ  
 Մի՞թե երկնքին ես թանկ եմ, քան թե  
 Նրանք, որոնց գեռ դու չես նկատել:  
 Նրանք էլ, ավա՞ղ, սիրուն են նույնքան.  
 Եվ ինչպես իմին՝ ձեռք չի կպել գեռ  
 Նրանց մահճին էլ, նույնքան կուսական...  
 Չէ՞ երդվի՞ր, ինձ տուր այնպիսի՞ երդում...  
 Ասա՞ տեսնո՞ւմ ես՝ ոնց եմ կարոտում:  
 Հապա կանացի երազներն իմ տես:  
 Սարսափին ակամա փարում ես հոգուդ...  
 Բայց դու կխղճաս, չես լինի անգութ,—  
 Չէ՞ որ հասկացար, ամեն բան գիտես...  
 Երդվի՞ր ինձ... ուխտի՞ր, որ չար ուժերին  
 Այսուհետ երբեք չես դիմի էլ դու,  
 Ա՞խ, մի՞թե շկա էլ անդրժելի  
 Ոչ մի սրբազն խոստում ու երդում...

## ԴԱ

Երդվում եմ ես քեզ սուրբ արարչության  
 Առաջին օրով և վերջին օրով,  
 Կայտառակությամբ հանցագործության  
 Եվ հար ճշմարտի հաղթության հրով,  
 Երդվում եմ անկման ծանր տանջանքով  
 Եվ հաղթանակի կարճ անրջանքով,  
 Երդվում եմ քեզ հետ իմ հանդիպումով  
 Եվ սպառնացող մեր անջատումով.  
 Ինձ հար ենթակա իմ շարք—եղբորով  
 Թյուր ոգիների բախտով եմ երդվում,  
 Իմ ոսոխների՝ անահ ու արթուն  
 Հրեշտակների թրի շեղբերով.  
 Երդվում դժոխքով, երկնքով վճիտ,  
 Երկրի սրբությամբ և քեզնով և քո  
 Առաջին զուլալ ու զինջ արցունքով  
 Ու քո հայացքով ամենավերջին,  
 Քո անշար բերնի տաք շնչառությամբ,

Մետաքս մազերիդ ալիքով գանգուր.  
 Երդվում եմ ցավով ու երանությամբ,  
 Երդվում եմ նաև սիրով իմ մաքուր,—  
 Հրաժարվել եմ իմ հին մութ քենից,  
 Հրաժարվել եմ գոռող մտքերից.  
 Շողոքորթության թույնն այնուհետև  
 Ոչ մեկի միտքը չի հուզի թեթև.  
 Ես երկնքի հետ հաշտվել եմ ուզում,  
 Սիրել, աղոթել, պաշտվել եմ ուզում,  
 Ուզում եմ բարու հավատքին տիրել:  
 Ես քեզ արժանի ճակատից իմ այս  
 Զղջման արցունքով կզնչեմ հիմա  
 Երկնային պատժի հետքերը հրե.  
 Աշխարհն այսուհետ թող երկնքի տակ  
 Մաղկի առանց ինձ՝ հանգի՛ստ, անգիտա՛կ:  
 Օ՛, հավատա՛ ինձ. լոկ ես եմ ցայսօր,  
 Որ քեզ հասկացա, գնահատեցի.  
 Ես իշխանությունն իմ շար ու հզոր  
 Քո ոտքերի տակ սիրով նետեցի  
 Քեզ համարելով իմ սրբությունը:  
 Քո սերն եմ տենչում իբրև բարիքի,  
 Եվ կտամ ես քեզ հավերժությունը  
 Վայրկյանի՛ համար: Հավատա՛, Թամա՛ր,  
 Ես սիրո մեջ էլ, ինչպես շարիքի,  
 Հավատարիմ եմ, մեծ եմ ու համառ:  
 Ազատ եթերի զավակս՝ արդեն  
 Քեզ տանելու եմ աստղերից էլ դեն,  
 Եվ դու՝ առաջին իմ ընկերուհի,  
 Կդառնաս այնտեղ նաև թագուհի.  
 Դու անափսոսանք, անմաս ու թեթև  
 Կնայես կյանքին, ուր իրոք շկան  
 Ո՛չ գեղեցկություն մի երկարատեև,  
 Ո՛չ երջանկություն ու բախտ իսկական,  
 Ուր լոկ հանցանքն ու պատիծն են մնում,  
 Ուր մարդկանց շնչին կրքերն են տիրել,

Ուր առանց վախի չեն կարողանում  
 Ո՞չ կարգին ատել, ո՞չ կարգին սիրել:  
 Թե՛ դու շգիտես՝ ինչ է մարգկային  
 Քեզ ծանօթ սերը ակնթարթային.  
 Սոսկ ջահել արյան խայտանք ու եռո՛ւմ,—  
 Բայց օրն է թոշում—արյունն է սառում:  
 Ո՞վ է դիմանում բաժանությանը,  
 Նոր գեղեցկության գերող հմայքին,  
 Ահեղ ձանձրութին ու հոգնությանը  
 Ու երազների անծիր քմայքին:  
 Օ ո՞չ, իմացի՛ր. բախտով մի վերին,  
 Իմ ընկերուհի՛, քեզ չի վիճակված  
 Իրեւ նախանձու շարության գերի  
 Թառամել այս գաղջ անձուկում փակված —  
 Կեղծ բարեկամի և սոսխների,  
 Սառն ու խեղճ մարդկանց խմբով օղակված,  
 Անպտուղ վախի, անպտուղ հույսի  
 Եվ գործերի մեջ կեղեքող ու սին:  
 Առանց կրքերի և տրտում այսպես  
 Զէ՛, դու չե՞ս մարի այս պարիսպներում,  
 Լոկ աղոթքի մեջ՝ հավասարապես  
 Հեռու աստծուց և մարդուց հեռու:  
 Օ ո՞չ, դու շքնա՞ղ, գեղեցի՛կ էակ,  
 Քեզ վիճակված է ուրիշ դրություն.  
 Քեզ սպասում է այլ ցավ ու կրակ  
 Եվ ծով բերկրանքի ուրիշ խորություն:  
 Եվ թող երրեմնի քո բաղձանքները  
 Ու խեղճ աշխարհն այս իր բախտին մնան.  
 Ես իմացության գոռ հորձանքները  
 Դրա փոխարեն քո դեմ կրանամ:  
 Քո ոտքերի տակ իրենց կնետեն  
 Իմ սպասարկու ոգիները միշտ.  
 Քեզ՝ գեղեցկուհի, կշրջապատեն  
 Թեթև ու թովիչ հազար մի նաժիշտ.  
 Թամա՛ք, քեզ համար ես սրտի դողով

Կառնեմ լուսաստղի պսակը բացե  
 Ու ծաղիկների գիշերվա ցողով  
 Այդ ոսկեճաճանշ պսակը կօծեմ.  
 Ես բուրամնալից ու մաքուր օդով  
 Քեզ ամեն կողմից կշրջապատեն.  
 Ես սքանչելի նվագով անվերջ  
 Քո լսելիքը կշոյեմ, Թամա՛ր.  
 Սաթ ու փիրուզից գեղեցիկ ու պերճ  
 Պալատ կշինեմ՝ նորից քեզ համար.  
 Կսուզկեմ ծովի հատակը մթար,  
 Կսուրամ-կանցնեմ ամպերի ետև,  
 Ողջ երկրայինը, ամեն ինչ կտամ,  
 Միայն թե սիրիր...

## XI

Եվ նա շա՞տ թեթև  
 Իր այրող բերնով մեղմորեն դիպակ  
 Նրա շրթներին դողացող ու պաղ.  
 Թովիչ խոսքերով հրապուրանքի  
 Պատասխան տվեց ծով աղերսանքին:  
 Նա իր հայացքը հզոր ու անհագ  
 Աշքերին հառեց — թամարին այրեց,  
 Ու նրա վրա մթան մեջ փայլեց  
 Ինչ-որ մի անթեկ-անխուսափ դանակ:  
 Ավա՞ղ, շար ոփին տարավ հաղթանակ:  
 Նրա համբույրի թույնը մահացու  
 Ծծկում է իսկույն կրծքի մեջ շահել,  
 Եվ տառապալից կույսի ճիշն ահեղ  
 Խոր լոռությունն է հանկարծ սղոցում:  
 Ամեն ինչով էր այդ ճիշը լեցուն.  
 Դա ճիշ էր սիրո և տառապանքի,  
 Կերչին աղերսի ու կշտամբանքի, —  
 Անհույս հրաժեշտ մի ջահել կյանքի:

## XII

Գիշերվա պահակն այդ նույն ժամանակ  
ինչպես միշտ՝ թուզե տախտակը ձեռքին,  
իր սովոր ճամփով, անխոս ու մենակ  
Սեպ պարսպի տակ շրջում էր կրկին:  
Հասնելով շահել ճգնուհու խուցին՝  
Համաշափ քայլն իր դանդաղեցրեց,  
ինչ-որ մի խոռվք հոգին լցրեց,  
Եվ ձեռքը սառեց ու մնաց թուզին:  
Կեսպիշերային լոռության միշից  
Թվաց, թե լսեց իր ականջներով,  
Որ երկու բերան միացան սիրով,—  
Հնչեց սուր հառաշ, կարճատե մի ճիշ:  
Եվ ինչ-որ մի պիղծ ու մթին կասկած  
Ներս սողաց ծերի սրտի մեջ հանկարծ...  
Թայց ամեն ինչ է քիչ հետո լոռում,  
Լոկ քամին հեռվից տրտունջն է բերում  
Փարթամ սաղարթի, և ափի հետ է  
Վհատ շշնջում լեռնային գետը:  
Մերն շտապում է երկյուղը հոգում  
Աստվածահաճո սուրբ աղոթքը անել  
Եվ փորձությունը շարամիտ ոգու  
Մեղավոր մտքից ընդմիշտ դուրս անել.  
Մթին կասկածից ալեկոծ կրծքին  
Դողդոց մատներով նա խաշ է հանում,  
Եվ ոտքերն շտապ քայլում են կրկին  
Ու սովորական լուր ճամփով տանում:  
\* \* \* \* \*

## XIII

Քնած փերու պես սիրուն ու թովիչ՝  
Ահա պառկած է նա իր դագաղում,  
Նրա ճակատի գույնը նվազուն  
Ճերմակ էր անգամ երեսի քողից:  
Փակվել են հավետ կոպերը կույսի...

Օ՛ երկինք, բայց ո՞վ, այդ ո՞վ չէր ասի,  
Որ հայացքն այնտեղ ննջում է միայն  
Եվ — հրաշալի՝ տենչում է միայն  
Կա'մ տաք համբուլորի, կա'մ արշալուլորի,  
Սակայն շողերը ոսկե ծոպերով  
Անօդուտ անցան նրա կոպերով,  
Հարազատները վշտի տակ կքված,  
Զուր համբուրեցին աշքերն այդ փակված.«  
Ո՛չ, մահվան զրած կնիքը արդեն  
Այլևս ոչ ոք չէր կարող քանդել...

## XIV

Իր ուրախության ոսկե օրերին  
Չէր եղել երեք հագուստը նրա  
Այսքան բազմագույն և այսքան շռայլէ  
Առատ ծաղկունքը ծանոթ ձորերի  
(Ըստ սովորության հին-հին դարերի)  
Իր բույրն էր փոել թամարի վրա  
Եվ սեղմակեռվ ձեռքում մեռնողի՝  
Տալիս էր կարծես հրաժեշտ հողին:  
Ոչի՞նչ, ո՞չ մի բան նրա երեսին  
Բնավ չէր խոսում այն վերջի մասին,  
Որ եղել էր կիրք, հրայրք կախարդել.  
Եվ նրա դեմքի գծերը դեռ թարմ  
Հագեցած էին մի գեղեցկությամբ,  
Որ մարմարն ունի՝ անարտահայտիլ —  
Զուրկ զգացմունքից, մտքին անսովոր,  
Ինչպես մահն ինքը՝ հար խորհրդավոր  
Մի տարօրինակ ժպիտ էր սառել  
Հազիվ առկայծած շրթերին նրա:  
Ուշադիր աշքին ժպիտն արդարն  
Շատ բան էր պատմում տիխուր ու մոայլէ  
Կար այդ ժպիտում և՛ արհամարհանք  
Մի ծաղկած հոգու, որ թոշնում է հեշտ,  
Եվ վերջին մտքի առկայծում արագ,

Ե՞կ երկրին տված անխռու հրաժեշտ:  
 Խախչին կյանքի ցաղքն իզուր էր և սին,—  
 Դեռ ամէջի էր ժարիտն այդ ժեռած  
 Աւ արտի համար առանց թուշլ հուշտի,  
 Թան թի աշքերը հավիտյան մարտած:  
 Այսպես զնէ պահին և վերշալույսի,  
 Երբ ասին ճռվում իրեն հարելավ՝  
 Ճնշեկցա կառաջ կորչում է հպարտ,  
 Սերում Կովկասի ձյաները մի պահ:  
 Օրվա կարմրավառ ցազը պահելով՝  
 Դեռ պլալում են հեռվում միգապատ,  
 Բայց կիսակենդան այդ շողը նորից  
 Ցուլք չի հանդիպի էլ անապատում.  
 Եվ այն կատարից, որ ձյունն է պատում,  
 Ու ոքի ճամփա չի լուսավորի...

## XV

Խմբերով եկան դրկից-բարեկամ,  
 Որ ճամփու դեեն մեռածին ջահել,  
 Փետելով գլուխն սպիտակահեր,  
 Կուրծքը ճեճելով՝ մի վերջին անգամ  
 Իշխան Գուղալը հեծնում է իր ձին:  
 Թափորին է շարժվում: — Ամբողջ երեք օր  
 Ու երեք դիշեր նրանք գլխիկոր  
 Իրենց զնացքը շարունակեցին,  
 Որ պատենական գերեզմանոցում  
 Պահ տան մեռածին ցուրտ հողի ծոցում:  
 Պապերից մեկը Գուրու իշխանի,  
 Որ թարանում էր ճամփորդներ, շնչեր,  
 Երբ մահճին գամվեց, և գործան բարի  
 Ժամերը հառան՝ խռուացավ շինձել  
 Իր հին մեղքերի թողության համար  
 Մի եկեղեցի՝ լեռան կատարին,  
 Ուր երգում է լոկ քամին կատաղի  
 Եվ ուր ճամփորամ են ցիներն անհամար:

Ու առայցի մեջ ճերմակ Կազբեկի  
 Եռառով վեր հառնեց մի մենակ տաճար,  
 Եվ շարապործի աճյունն անհոգի  
 Այնուղի թաղվելով լոկ հանդատացավ,  
 Ճիրմառուն գարձավ մի ժայռ, որ ուներ  
 Ամոց ու թափսպի հետ հար մտերմություն:—  
 Մատիկ երկեքից կարծես շերմություն  
 Ցուրտ զերեզմանը պիտի ընդուներ...  
 Կարծես մարդկանցից այսքան հեռացած:  
 Մեռածի քունը չի վրդովվելու...  
 Իզոր է. նրան էլ չի թողելու  
 Մշ անցած խինդը, ո՛չ թախիծն անցած...

## XVI

Անծիր եթերի բիլ հեռաստանում  
 Ոսկե թեկով մի սուրբ հրեշտակ  
 Թռչում էր երկրից և գրկում իր տաք  
 Մի նոր մեղավոր հոգի էր տառեւմ:  
 Նա հուսագրման քաղցրանուշ խորով  
 Ցրում կասկածներ, պարզեւմ հանգիստ  
 Ու լվանում էր արցունքի հոսքով  
 Հետքը զանցանքի ու տառապանքի:  
 Ահա և նրանց ականջին հասան  
 Դրախտից ձայներ, — և հանկարծ կողքից  
 Կտրելով նրանց ճանապարհն ազտու՝  
 Վիհից վեր թռավ ոգին դժոխքի:  
 Նա դռ մբրիկի պես հզոր էր, հուծելու  
 Ու փայլատակեց կայծակի նման,  
 Եվ հանդիսությամբ խելագար հոգու  
 Հոպարտ բարբառեց. «Նա իմն է հիմա»:  
 Թշվառ Թամարի հոգին ապական  
 Կլացնելով սարսափն աղոթքով  
 Իր պահապանին հպվեց հավատքով:  
 Լուծվում էր նրա բախտի ապագան,

Նրա դեմ նորից ՚Ի՞ն էր ծառացել,  
Բայց, տե՛ր իմ, նրան ո՞վ կճանաշեր.  
Նայում է հիմա ի՞նչ շարությունով,  
Հայացքն է լեցուն մահացու թուղնով  
Մի թշնամության, որ վախճան չունի,  
Խսկ անշարժ դեմքը՝ մի սառությունով,  
Որ միշտ փշում է միայն աճյունից:

«Զքվի՛ր, կասկածի մոայլ դու ոգի՛,—  
Երկնի դեսպանը պատասխան տվեց,—  
Քո հաղթանակը բավական տևեց.  
Բայց դատաստանի ժամը մոտ թևեց,  
Եվ վճիռն աստծո բարի է կրկին:  
Փորձության օրերն անցան առհավետ.  
Անցողիկ կյանքի հանդերձանքի հետ  
Չարի կապանքն էլ նրանից ընկավ:  
Սպասում էինք, և արդ նա եկավ:  
Սա, զիտցի՛ր, ուներ այնպիսի հոգի,  
Ում համար կյանքը այլ բան չէ, քան պահ  
Մի անտանելի ծանր տանջանքի  
Եվ զվարճության անհաս մի ճամփա.  
Այդ հոգիները հյուսել է աստված  
Մաքուր եթերի կենդանի լարից,  
Նրանց համար չէ աշխարհն ստեղծված,  
Եվ ոչ էլ նրանք՝ մեղսուտ աշխարհի:  
Այն կասկածները, որ կրում էր նա,  
Մանր ու թանկ գնով նաև հատուցվեց...  
Նա տառապում էր ու սիրում էր նա —  
Եվ սիրո համար դրախտը բացվեց»:

Ու հրեշտակը աղդու հայացքով  
Խստորեն նայեց գայթակղիշին  
Եվ իր թևերի զվարիթ սլացքով  
Սուզվեց երկնքի ցոլքում պաղ ու ջինջ:  
Ու պարտված Դեր հրե խոսքերով  
Երազներն իր խենթ անիծեց հոգում

Եվ առաջվա պես մնաց ողջ կյանքում  
Առանց խնդության և առանց սիրո...»



Քարքարոտ լեռան սարավանդակին,  
Կոյշառուր հովտի գլխավերեռում,  
Մինչև հիմա էլ հին ավերակի  
Սուր ատամներն են հեռվից երևոս:  
Երեխաներին սարսափ պատճառող  
Շատ բան են պատմում այս բերդի մասին.«  
Որպես ուրվական, հուշարձանն այս սին՝  
Կախարդ օրերի այս վկան լոռող,  
Սևին է տալիս խիտ ծառերի մեջ:  
Առվն է ցածում փոված անրջում,  
Հողն է կանաչում ու ծաղկում անվերջ,  
Անկարգ ձայների աղմուկն է կորչում,  
Քարավանները օր ու գիշերով  
Անուշ զնգոցով գնում են-դալիս,  
Ու մուժի միշից գահավիժելով՝  
Գետն է փրփրում ու հորձանք տալիս:  
Եվ հավերժ ջահել — անանց մի կյանքը,  
Զովով, գարունով, վառ արեգակով  
Բնությունն ինքը հրճվում է այնպես՝  
Կատակ անելով անհոգ մանկան պես

Բայց բերդի դեմքին թախիծն է պաղել,  
Անցել են և՛ կյանք, և՛ ջահել տարիք  
Այն ծերուկի պես, որ ինքն է թաղել  
Ընկեր-բարեկամ, սիրած ընտանիք.  
Եվ հին դղյակի կենվորներն անտես  
Լուսնի լույսին են միայն սպասում,  
Այնժամ է կյանքը ազատ մի հանդես,  
Ու նրանք բզզում, չորս կողմ են վազում:  
Մերունի սարդը՝ ճգնավոր մի նոր,  
Իր ցանցն է հիմնում՝ ինչպես ամեն օր՝  
Կանաչ մողեսը մեծ ընտանիքով

Խազում է ուրախ, վազում տանիքով.  
 Եվ զգուշավոր օձն է զուրս գալիս  
 Իր մթին ճեղքից ու կամաց սողում  
 Հինավորց վանքի մեծ սալաքարին.  
 Մերթ՝ եռապատիկ օգաֆվում տեղում,  
 Մերթ երկարում է, փայլիլում է շինչ,  
 Ինչպես մի երկար պողպատե հաստ թուր,  
 Որ մսուցվել է հին մարտադաշտում  
 Եվ պետք չէ արդեն էլ զահված քաշին...  
 Վայրի է ողջը. անցած օրերի  
 Ո՛չ մի հետք չկա. ձեռքը դարերի  
 Ավել է երկար ու սրբել ինչ կար,  
 Եվ արդեն ոչի՞նչ հիշել չի աալիս  
 Պանժալի անունն իշխան Գուգարի,  
 Նրա սիրելի շքնաղ աղջկան:

Բայց եկեղեցին լեռնադադաթի,  
 Ուր հողում նրանց աճյունն է պահված,  
 Սուրբ իշխանության ուժով պահպանված՝  
 Դեռ երկում է ամպերում մթին.  
 Դարպասի առաջ հին պահակներին  
 Փոխարինում են սև գրանիտե  
 Շիրմաքարերը, և գրահի տեղ  
 Մառույցն է վառվում նրանց հագներին,  
 Աւ ձյան թիկնոցն է կրծքները պատել:  
 Հակա կույտերը նիբհազ շեղշերի՝  
 Ասես շրմիժներ, որ ցրոի ձնոից  
 Մառույց են կտրել՝ ծերպերից ամա,  
 Հոնքերը կիտած կախվել են հիմաւ  
 Փշելով փոշին պատերից այս հին՝  
 Պահնարդի նման բուքն է ման գալիս  
 Եվ կանչում է նա մերթ ժամապահին,  
 Մերթ էլ մի երկար երգ է ձիգ տալիս.  
 Հեռվամ, որտեղից արեն է ժագում,  
 Այս հրաշացի տաճարի մասին  
 Լուրեր լսելով՝ շուատ միտախն

Յմպերն ին գալիս և երկրպագում.  
 Բայց վաղուց ոչ ոք չի թախծում անգամ  
 Շիրմաքարերին այս ընտանեկան:  
 Կովկասի ժայռը մոայլ ու արթուն  
 Իր թանկ ավարն է հսկում միշտ ագահ,  
 Եվ էլ մշտական տրտունջը մարդու  
 Չի հուզի նրանց քունը մշտական:

ՎԱՐՏԻՔԱՎՈՐ ԱՄՊՐ

(Պոեմ)

Զեր միտքը,  
որ ձեր կակղած ուղեղում երազում է ծույլ,  
ինչպես զիրացած սպասավորը՝ թախտին ճարպուած,  
ես կուշտ կծաղրեմ, կծանակեմ ես՝ լայրը ու կծու,  
և կզրդում սրտի պատառով իմ արյունոտած:

Մի սպիտակած-ճերմակ մազ անգամ չկա իմ հոգում,  
և ծերունական քնքանք էլ այնտեղ ես չպեղեցի:  
Համայն աշխարհը խլացընելով ճայնովս ահարկու՝  
քայլում եմ ահա—քսաներկամյա,  
ինքս էլ գեղեցիկ:

Քընքուշներ,  
սերը դուք սազեցնում եք ջութակի համար:  
Կոպիտը սերը հարմարեցնում է միայն ծնծղային:  
Իսկ դուք չե՞ք կարող ճեզ շուռ տալ այնպես, ինչպես ես հիմա.  
այնպե՞ս, որ դառնաս մի համատարած շրթունք մարդկային:

Եկեք ուսանե՞ք.  
կերպասով պատված հյուրանցներից նախ արի դեռ դո՞ւ,  
ո՞վ ըրեշտակաց լիկայի շնչին շինովնիկուհի:

Եվ դո՞ւ, որ հանգիստ շրթերդ ես թերթում,  
ինչպես թերթում է խոհարարուհին ճաշագիրքը հին,  
Բուզո՞ւմ եք՝  
լինեմ կատաղի՝ մոից  
— և երկընքի պես փոխելով գույներ—  
ի՞նչ է հարկավոր.

ուկո՞ւմ եք՝  
դառնամ քնքանք անբասիր,  
ո՞չ թե տղամարդ — ամպ վարտիքավոր:

Ես չեմ հավատում, թե կան նիցցաներ՝ համակ ժաղկանոց,  
Փառարանվում են իմ կողմից հիմա  
մարդիկ՝ պառկոտած, ոնց հիվանդանոց,  
և կանայք՝ մաշված, առածի նման:

1.

Ի՞նչ է, կարծում եք, թե զառանցում է ինքը մալա՛րիան?  
Այս կատարվել է  
և—օդեսայում:

«Գալու եմ չորսին», — ասաց ինձ Մա՛րիան:

Ութն է:  
Եվ իննը:  
Տասն էլ է սահում:

Եվ հեռանալով լուսամուտներից՝  
գիշերվա ահ ու զարդանդի մեջ է երեկոն մտնում,  
ցուրտ գեկտեմբերյան  
երեկոն խոժոռ:

Եվ քըրքըշում են նրա ետևից  
ու խրխընջում են գիշերվա մինում  
աշտանակները մանրիկ ու խոշոր:  
Զէի՛ն ճանաշի ինձ՝ այստեղ տնկված:

Զզուտ զանգվածը  
շզածգվում է,  
տնքում է,  
հազում:  
Ի՞նչ էցանկանար նման մի զանդված:  
Իսկ այդ զանգվածը շա՞տ բան է ուզում:

Զէ՞ որ քեզ համար փույթ չէ այն, թե պաղ  
բրոնզ ես ինքող:  
ու սիրող էլ՝ գրիտի-ճպրագակալած չի՛:  
Գիշերն ուզում ես զողանցըդ տալ պահ  
ֆնշ-որ փափկության,  
այն էլ կանացի:

Եվ ահա հսկաս  
գիշերվա կեսին  
ապակին հալում ճակատիս հրով՝  
լուռ սապատվում եմ լուսամուտի մեջ:

Արևի հրաժա՞ռ է սեղու  
Սրդյուք ինչպիսի՞—  
պուճուրի՞կ մի սեր, թե՞ գուցե և մեծ  
Նման մարմնի մեջ  
ինչպե՞ս ես ախար դու մեծ սեր գտնում:  
Փոքրի՞կ եղինք, Համե՞տու մի սերիկ:  
Նա ավտոների շշակից խրտնում,  
բոժոժիկներն է սիրում ձիերի:

Կրկի՞ն ու կրկի՞ն,  
դեմքըս՝ անձրևի ծաղկատար դեմքին,  
խրված ցանցի մեջ նրա թացության,  
սպառում Գմ Եմ՝  
թրշված ցայտքերով  
քաղաքի հսկա մակընթացության:

Եվ կեսգիշերը, դանակ Շռնելով,  
վազում-հասնում է,  
«Տարե՞ք» գոշելով՝  
խփում դարանից:

Ժամը տասներկուսն ընկնում է՝  
ինչպիս  
մահապարտյալի պլուման է ընկնում կառափնտրանից:  
Ապակու վրա իրենց ոտնացով կաթիկներն են գորչ

Ճեն-Ճենի տալիս՝  
անվերջ դիզելով ծամածումին նոր ծամածում,  
ասես պայիկներն ու ճիվաղներն են ոռնում անափարք  
Փարիկ քաղաքի սուրբ Աստվածամոր հայտնի տաճարում:

Ա՞ի, դու անիծվա՛ծ:  
Ի՞նչ է, մի՞թե քեզ այսքանը բավ չի:  
Շուտով, ա՛յ, ճիշից կպատառութիւ բերանս բացված:

Լսում եմ.  
կամաց,  
ինչպիս հիվանդը՝ բարձունքից մահճի,  
մի նյարդ է ցատկում:  
Եվ նախ կարկամած  
մի կերպ ման գալիս,  
հետո վազում է պարզորոշ  
հոգված:  
Եվրու երկուսը  
մոլեգին զոփում, տեղում են տալիս՝  
նրա հետ մեկտեղ մի եռյակ կազմած:

Ներքեսի հարկում սվաղն է պոկվում:

Նյարդեր՝  
պուճուրիկ  
ու մեծ—  
բազմաթիվ,  
ցատկում են, ոստնում, թոշում մոլեգնած—  
և ահա արդեն ծալվում են, թեքլամ  
ծնկները հոգնած:

Իսկ սենյակիս մեջ գիշերն է անվերջ իր տիզմը թափում,—  
ծանրացած աշքըս չի կարողանում իրեն գորս քաշել  
տղմից վատամիտ:

Դռներն են հանկարք այնպիս կափկափում,  
ասես չի բռնում խեղճ հյուրանոցի ատամն ատամին:

Եվ դու ներս մտար  
 Խիստ, ինչպես «մտեք»՝  
 Ակելով զամշե ձեռնոցըդ:  
 Եվ դու  
 ասացիր.  
 «Դիտե՞ք,  
 գնում եմ մարդու»:  
 Է՛հ, դե ի՞նչ արած, գնացե՞ք:  
 Ոչի՞նչ:  
 Ուժ կառնեմ արագ:  
 Տեսե՞ք՝  
 Հանգիստ եմ,  
 Հանգիստ եմ... ինչպես մեռածի երակ:

Հիշո՞ւմ եք արդյոք:  
 Դուք ասում էիք.  
 «Դրա՞մ,  
 Զե՞կ կոնդոն,  
 սե՞ր,  
 Կի՞րք, գոհանա՞լ»:  
 Իսկ ես գիտեի.  
 Դուք՝ Զիակոնդա—  
 այն նկարն եք, որ պիտի գողանալ:

Եվ գողացա՞ն էլ:

Նորի՞ց սիրահար՝  
 Հոնքերիս ծալքում ցոլանք ու կրակ,  
 Ես ինձ կնետեմ խաղի մեջ մոլի:  
 Ի՞նչ արած.  
 Հէ՞ որ նաև այն տան մեջ,  
 որը դարձել է հրդեհի ճարակ,  
 Երբեմն ապրում է անտուն շըրջմոլիկ:  
 Դրզում եք ինձ.  
 «Ձեր խելառության թանկ զմրուխտները քիչ են ավելի,  
 քան կոպեկները խեղճ մուրացկանի դատարկ բռանը»:

Հիշե՞ք.  
 Մատնըվեց Պոմպեյն ավերի,  
 Երբ գրգռեցին Վեզուվ լեռանը,  
 Է՛հե՞յ,  
 պարոննե՞ր,  
 Գուք սիրահարներ  
 սրբապղծությա՞ն,  
 սպանդանոցի՞,  
 ծանր հանցանքի՞:  
 Տեսե՞լ եք արդյոք  
 ահավորներից մեծ ահավորը,  
 և գիտեք ո՞րը.  
 Իմ դեմքը,  
 Երբ նա  
 բացարձակապես լինում է հանդիստ:

Սրտիցս ինչ-որ բան—  
 և համառաբար—  
 դուրս գալ է ուզում՝  
 շատ լավ զգալով,  
 որ իմ իսկ «ես»-ը քիչ է ինձ համար:

Այդ ո՞վ է խոսում:  
 Այդ ո՞վ է:  
 Allo!  
 Դո՞ւ, մամա',  
 մամա':

Մամա',  
 Ճեր տղան շքնաղ հիվանդ է:  
 Հիվանդությո՞ւնը:  
 Կարծեմ սրտային... սրտային հրդեհ,  
 Ասեք քույրերիս՝  
 Օլյա-Լյուդային,  
 որ ինչ անելն իսկ շգիտի արդեն,  
 Ամե՞ն մի բառը,

և մինչև անգամ իր հանաքները,  
որ նա որձկում է բերան. Հնացից,  
ճողոպրում են դուրս,  
ինչպես մերկանդամ անառակները՝  
կրակի տրված պոռնկանոցից:

Երթևեկները իրենց մոռթներով  
հոտոտում են և—  
առնում են հոտը ճենճերող մսի:  
Ու հավաքում են պսպղուն մարգկանց՝  
սաղավարտներով:  
Այս հրշեներին ասեք ա՛յն մասին,  
թե քընքշա՞նք է պետք—  
Հո չի կարելի վառվող սրտի մեջ՝  
սապոզներ հագած կոպիտ ոտներով:  
Ես ի՞նքըս, ի՞նքըս  
իմ արտավալից աշքերի խորքից  
ջուր կքաշեմ դուրս տակառ առ տակառ  
և վառվող սիրտս ինքս կթրշեմ:  
Միայն թե թողեք մարդ իր կողերին կաթնի ու կառչի:  
Ես դո՛ւրս կթոշեմ: Ես դո՛ւրս կթոշեմ: Ես դո՛ւրս կթոշեմ:  
Նրանք փուլ եկան:  
Սեփական սրտից, չէ՛, դուրս չե՛ս թռչի:

Եուրջ բոլոր այրվող իմ դեմքի վրա  
Ճեղքը շրթերիս  
խանձված-ածխացած մի համբույրիկ է քոտապ առաքում:

Մամա',  
չեմ կարող ես երգել հիմա.  
սրտիս ժամատան երգչագասին էլ հուրն է հարակում:

Ինչպես որ վառվող տնից են փախչում խեզն բալիկները,  
այդպես թուզում են հիմա իմ գանգից  
բոլորշի այրված խոսք ու թվերի պատկերիկները:  
Հենց այսպիս ահա սարսափն ստիպեց,

որ «Հուզիտանիա»-ն\* վառվող ձեռքերով  
կառչի երկնքից:

Դողահար մարդկանց,  
նրանց մշտանդորր կացարան-որչին  
նավամատուցից հազար գլխանի մի հրացոլք է  
նետվում ընդառաջ:  
Այն մասին, որ ես  
այրվում եմ այսպես,  
գոնե դարերին արտահառաշիր  
դու՛ ճի՛ իմ վերջին,  
իմ վերջին հառաչ:

## II

Փառաբանե՛ք ինձ,  
թեպես մեծերին բնակ չեմ սազում:  
Ես ամե՞ն բանի, ինչ որ արված է,  
դնում եմ «ուիհի»:

Երբեք ո՞չ մի բան կարդալ չեմ ուզում:  
Գըրքե՞ր:  
Ո՞ւմ են պետք—  
նոր լինեն թե հին:

Կար մի ժամանակ, երբ կարծում էի՛  
թե զորերն ահա այսպես են սարքում,  
պսետը զալիս,  
բերանն է բանում և—ի՞նչ բառ փընտրել.  
միանգամից է այդ ոգեշընչված ցանցառը երգում—  
համեցե՛ք, խընդրեմ:  
Բանից պարզվում է՝  
երգելու համար կա ուրիշ պայման.  
քայլում են երկար՝

\* Սարդարար շողինավ, որ տկանաւարվեց գերմանական ռուսական-վից և այրվեց ծովում 1915 թ. գարնանը:

Մինչև եփ գալուց կոշտուկապատվեն,  
 և թիւրալով ներս է ընկըզմում  
 հիմար տառեխը երեակայման,  
 ներս է ընկըզմում  
 սրտի մութ տիղմում:  
 Քանի հանգերն են անվերջ ճզվղում՝  
 ապուր եփելով սիրուց և սոխակ կոշված թըռչունից,  
 շղաձրզվում է փողոցն անլեզու.  
 ո՞չ մի ճշալիք, ասելիք շունիր

Մեր գոռողացած ձեռքով, վերըստին,  
 սև քաղաքների նոր բարելոնյան  
 աշտարակներ են հառնում ու հառնում,  
 իսկ աստված  
 կրկին այդ քաղաքներն է վերածում արտի,  
 բարբառը խառնում:

Փողոցն իր ցավն է հագիվ քարշ տալիս:  
 Նրա կոկորդից ճիչն է դուրս ցըցվում:  
 Թըմֆլիկ լաքս-ներ ու կառքեր լղար  
 փքելով գալիս ու բուկն են խցվում:  
 Ոտնահետքեր են կարծես փողոցի կուրծքը բովանդակ,  
 որ և տափակ է անգամ թոքախտից:

Քաղաքը ճամփան մթով է փակել:

Եվ այսուհանդերձ,  
 երբ ազատվելով կոկորդի վրա հարձակվող գաղթից՝  
 նա հաջողում է ողջ հրմըշտոցը հրապարակ թքել,  
 թվում է, թե ա՞յ,  
 հրեշտակապետաց երգվող խորալով  
 աստված,  
 կողոպտված,  
 գալիս է ահա պատիծ թափելու:  
 Մինչես փողոցն է պազել՝ զոռալով.  
 «Գնանք լափելու»:

Կըրուցիկները ու կըրուաները  
 քաղաքի դևմքին զրիմ են զնում՝  
 ահեղ հոնքերի կնճիռներ դաժան,  
 իսկ զիակները մեռած բառերի  
 նեխում են ահա նրա բերանում,  
 միայն երկուսն են ապրում-զիրանում՝  
 «բորշչ»,  
 մեկ էլ կարծես  
 ինչ-որ մի «խուժան»:

**Պոետներ՝**  
 թրջված դառըն փղձուկից ու լացից կերկեր,  
 փողոցն են իսկույն լքում՝ վազելով,  
 խոփվ մազերով.  
 «Այդ երկու բառով ախար ո՞նց երգել  
 և սեր,  
 և օրիորդ,  
 և ծաղիկ՝  
 վրան անապակ շաղիկ»:

Իսկ նրա պոչից—  
 հազարներ՝ քուշից.  
 կապալառուներ,  
 ուսանող տղե՛րք,  
 անառակ կանա՛յք:

Սպասե՛ք մի պահ.  
 դուք մուրացկան շեք,  
 ինչո՞ւ եք հապա  
 մուրալ հանդինում,  
 է-հե՛յ, պարոնա՛յք:

**Մենք՝**  
 առողջներըս,  
 որ սաժենանոց քայլեր ենք զցում,  
 պիտի շսե՛նք, այլ պոկե՛նք նրանց,

որ երկտեղանի մահճակալների արյունն են ժծում՝  
կպշելով իրու ձրի հավելված:

Մե՞նք նրանց հայցենք.

«Մեզ ողորմացեք»,—

հենց այդ էր պահառ:

Մե՞նք խնդրենք օրհներգ կամ օրատո՛րիա:

Ո՞չ, մենք ենք կերտում հիմնը ապագա՝

այն ժխորի մեջ,

ուր հոնդում են հազար ֆարրիկա, լաբորատո՛րիա:

Եվ ի՞նչ գործ ունեմ ես ֆառատի հետ,

որ շլացուցիլ իր հրթիռներով

Մեֆիստոֆելի առաջնորդությամբ սահում է անվերջ

պարկետի վրա երկնաօդային:

Ես գիտեմ՝

մեխը իմ կոշիկի մեջ

շատ ավելի է մղձավանջային,

քան թե ֆանտազիան իրեն Պյոթեր:

Ես՝

ամենամեծ ոսկեբերանը,

ում ամեն բառը

նորածնում հոգի,

հետն էլ մարմին է անվանակոչում,

ես ձեզ եմ գոշում.

ամենամանրիկ փաշին կենդանի՝

ավելի թանկ է,

քան թե այն, որ այդ ոսկեբերանը

արել է արդեն և պիտի անի:

Լսե՞ք:

Ինքն իրեն գցելով դես-դեն, անելով ախ-վախ՝

արդի ծուռքերան Ձըրադաշտըն է քարոզում հրես:

Մե՞նք,

որ շուրթ ունենք ջահի պես կախված

և սավանի պես ճմրթված երես,

մե՞նք՝

բանտվածներըս այս քաղաք կոշված բորոտանցում,

ուր փողն ու փոշին բորախտ են ցրել,

մենք շա՞տ ավելի մաքուր ենք,

քան թե այն վենետիկյան լազուրը զօծուն,

որին ծովերն ու արևն են մեկեն լա՞վ լվացըրել:

Թքա՛ծ, եթե մենք

հոմերների մոտ ու նազոնների

շենք կարող համրել

մեզ նման մարդկանց՝ ժաղկատար մրից:

Ես գիտե՛մ.

պիտի արեց խամրեր՝

մեր հոգում պահված ոսկեավազ ցոլուն կարմըրից:

Զիդ-մկաններին ես աղոթքներից շատ եմ վստահում։  
Ի՞նչ է.

Մե՞զ մնաց ժամանակներից շնորհ պոկելլւ:

Մենք—

ամե՞ն մեկըս—

մեր հնգմատնանի թաթում ենք պահում

բյուր աշխարհների շարժափոկերը։

Հենց այդ էր, որ ինձ

Պետրոգրադում և Օդեսայում, Մոսկվա—Կիևում՝

բռնեց ու դրեց նոր Գողգոթայի՝

ամրիոնի վրա,

և չէին ճարվի գոնե երկուար,

որ ձայն շրտային։

«Ի խա՞չ հան սրան»։

Թայց ինձ ավելի թանկ եք ու մոտիկ

դուք, մարդիկ։

\* Խոսքը հիշյալ քաղաքներում Մայակովսկու ունեցած ելույթներին  
է վերաբերում։

Ե դուք, ումից հասել է  
ինձ յավն ու վերքը:

Տեսել եք՝  
շունը ինչպես է լիզում  
իրեն հարվածող ու շարդող ձեռքը:

Ես՝

ծաղրվածը արդի սերնդից,  
ծաղրված՝  
իրեն մի անվայելուզ անեկդոտ երկար,  
ժամանակների լեռներից անդին  
տեսնում եմ նրան, որին չեն տեսնում,  
և որ զալիս է ու պիտի որ գար:

Այնտեղ, ուր մարդկանց պոշտատ աշքերի հայացքն է հատվում,  
հեղափոխության փշե պսակով,  
քաղցած հորդայի զլխով անհատնում  
տասնըլեց թիվն է բարձրանում ահա ամբողջ հասակով:

Ու ես եմ ձեր մեջ մարդարեն նրա.  
Ես կամ՝ ուր կա ցավ—ամեն տեղ, ամե՞ն՝  
արցունքի ամեն կաթիլի վրա  
իսչել եմ ես ինձ, ես ինձ եմ գամել:  
Ներել ո՛չ մի բան էլ չի՝ կարելի:  
Այրել եմ հոգիս,  
ուր քընքշանք էին դիտմամբ բուսցըրել:  
Եվ սա դժվար է, քան թե ահռելի  
հազար ու հազար թաստիլի տիրել.

Ու երբ,  
կանգնելով մորկիլի առաջ՝  
հեղափոխության զալուստի մասին  
դուք խոռվությամբ նրան փողհարեք,  
ինքըս  
անհառաջ  
կպոկեմ հոգիս ու կկոխերաեմ

328

և—տափա'կ արդեն,  
արդեն մե՛ծ դառած՝  
կըհանձընեմ ձեզ, որպես արյունոտ մի գըրոշ—  
առե՛ք:

III

Ա'խ, այդ որտեղի՞ց  
և ախար ինչո՞ւ  
կեղտոտ ու կոպիտ այս բռունցքների թափ տալն այս  
ահա՝  
պայծառ ու լուսե խնդության կեսին:

Եկավ,  
գլուխն իր կախեց հուսահատ  
այս մթին միտքը՝ գժատան մասին:  
Եվ ինչպես Հսկա դրեղնոուտի խորտակման պահին  
հուր ու հեղձուկից ջղածդվելով՝  
նավախցերից, նավամիշանցքից  
նետվում են դեպի դռնանքցն ու լուկը,  
այդպես էլ ահա  
իր իսկ սեփական և ճշաշու շափ բզկտված աշքից,  
ասես խենթացած՝ սողաց թուոլյուկը\*:

Եվ համարյա թե այրելով կոպերն իր արցունքալի՝  
դանդաղ սողաց դուրս  
ու ոտքի ելավ.  
և մի քընքշությամբ,  
որ գիրուկ մարդուց չես ակընկալի,  
ետ-առաջ քայլեց,  
ասաց.  
«Լավ է, լավ»:  
Լավ է, երբ հոգիդ աշքերից օտար  
Լավ թաքնըված է բաճկոնում դեղին:  
Լավ է, երբ զցված կառափնատեղի՝

\* Բօւլյուկ — ուռւս ֆուտորիզմի պարագլուխներից մեկը: Նրա մի աշքը կույր էր:

նրա կատաղի ատամների տակ  
հանկարծ գոլում ես ամբողջ ձայնավ մեկ.  
«Է՞կ վան Գուտենի կակառն խմեք»։

Եվ այդ վայրկյանը—բենգելյա՞ն, զնդո՞ւն—  
ես չէի փոխի ո՞շ մի բանի հետ,  
և այն բանին էլ...

Խսկ սիգարեթի ծխից թանձրացած,  
լիկյորի գաղից,  
խմիչքից մաշված՝  
անգույն ու անքուն  
իր դեմքն է տնկում  
Սեվերյանինը։

Ո՞նց եք հանդգնում դուք պոետ կոչվել  
և—գո՞րշ-լորի պես ծվծվալ:  
Հետո՞ւ,  
Զէ՛, գանգն աշխարհի արդ ձևել է պետք  
միայն կաստեռով։

Դո՞ւք,  
որ հուզվում եք միայն մի մտքից՝  
«Նո՞ւրբ է ստացվում արդյոք պարածը»,—  
տեսե՞ք, թե ո՞նց եմ ես զվարճանում,  
ե՞ս  
փողոցային խաղախարդախըս ու բողարածըս։  
Զեղանից,  
ովքեր թացվել-թրչվել են սիրաբանելով,  
ձեզանից,

\* «Է՞կ վան Գուտենի կակառն խմեց»։ Մայակովսկին նկատի ունի այն փաստը, ինչի մասին դրում էրն այն ժամանակվա լրագրեց. մահվան դատապարտված մեկը համաձայնում է մահապատճի պահին գոշել և մեր վան Գուտենի կակառն։ Այդ ինքնատիպ ովկամի դիմաց վան Գուտենի ֆիլման զիկավածի ընտանիքին մեծ դրամագումար էր խոստացել։

որոնց արցունքն է հոսում ծիգ դարերի մեջ

վտակ առ վտակ,  
ես կհեռանամ՝  
լայնորեն շուկած աջքիս դնելով  
արեց, որպես միավող դիտակ։

Սաստիկ դուր գալու, կիզելու համար  
անհավատալի ինձ զարդարելով՝  
կելնեմ ման զալու աշխարհում համայն,  
հենց նապոլեոնին առզերս զցած հանգիստ տանելով՝  
շղթայված փոքրիկ շնիկի շնման։

Կպառկի երկիրն իմ դեմ, որպես կին,  
և խաղացնելով մսերն իր բոլոր՝  
տրվել կցանկա.  
Կկենդանանա ամեն առարկա,  
առարկաների շրթներն ահագին  
կսրվարվացնեն,  
«Կակա՞... ա՛ռ, ա՛ռ, կա՞».

Հանկարծ ե՛ ամպեր,  
ե՛ տմպոթովարդյան ողջ ո՞ն այլ»-երը  
երկնում զցեցին մի շտեսնված ճոճք ու ճարճատում,  
ասես թե ճերմակ բանվորներն են այդ  
տարբեր կողմ ուղղում իրենց քայլերը՝  
գոռող երկնքին հայտարարելով ցասկոտ գործադուզ։

Ամպերի ճեղքից, գազանանալով. շանթը դուրս փուլեց՝  
չովա ուռնիքերից կովարարորեն խնչելով կարգին,  
ու երկնի դեմքը մի պահ ծուխվեց  
ծամածըռությամբ ահեղ թիսմարկի։  
Եվ ինչ-որ մեկը՝  
ամպե ճամփեքում մոլորված նորեն,  
սրճարան պարզեց ձեռքերն անոթի՝  
և կարծես քնքուշ,  
և կանացորեն,  
և կարծես իրեն սայլ հրանոթի։

Ի՞նչ է, կարծում եք,  
թե արեգակն է այդպիս քնքշալի  
սրճարանների այտը քաշքրշում:  
Օ, ո՛չ, գեներալ Գալիքին\* է դա սրճարշավ զալիս,  
ապսամբներին սպանդի քցում:

Է՞յ, զրունողնե՞ր.  
Ճեռքներդ հանեք դուք ճեր գրպանից  
ու վերցըրեք արկ, դանակ և կամ քար,  
իսկ ով զրկված է ճեռք ասված բանից՝  
թող կա ու խիվի ճակատով անգամ,

*Եկեղեց, սովածները,  
Հնագանդ-Հեղիկ ու քրտնքապատ,  
դուրս,  
որ լվառատ աղբերի մեջ եք թթվելով կոխմել;*

Հավաքվե՞ք եկեք.  
արյունով ներկենք ուրբաթ ու շաբաթ,  
որ... տոնի փոխվեն:

**Թող երկրագունդը—դանակների տակ—իր միտը պահի,  
թե ում էք այսպես գռեհկացրեց:  
Երկրագունդը,  
որ ճարպակալել է, ինչպես սիրուհի  
մի Ռոտշիդի, որ նրան անվերջ քամելով սիրեց:**

**Որպեսզի ծփան գրոշակները հրաձգության խելագար  
տենդում  
ինչպես վայել է ամեն մի կարգին տոն ու հանդեսի,  
էլ ավելի վեր խոյացեք օդում  
լապտերասյուներ, ալրավաճառներ զմփորատեսի:**

Հայոց եցի՛ կուշտ,  
կուշտ պաղատեսի՛.

\* Ταχιθή - φρωνησικάκιαν τελέντερωτα, πρώτων απορρήτων ταυτωματικής από τη φωρεψίαν ληπτούσαν ρωμαϊκής εποχής 1871 μεγάλην.

342

**Թափով հատեցի,**  
և ինչ-որ մեկի ետևից ընկած՝  
կողը կոծեցի՝ ատամ մարզելով:  
  
Կապույտ երկնքում, ուժգին սարսելով,  
փայտացավ հանկարծ  
վերջալույսը՝ բորբ, ինչպես մարսելով  
  
Նման է արդեն խելագարության:  
Ոչինչ դուրս չի գա:

Գիշերը կգա՞  
կըսծի՞՝  
կուսի՞:

**Տեսնում եք՝  
նորից հուդայություն է երկինքը անում  
դավաճանությամբ  
մի բուռ աստղային շաղված արծաթի:**

**Եկավ գիշերը:**  
**Քաղաքի վրա դրած նստուկը՝**  
**Խնջույք է սարքել, որպես նոր Մամայ\*;**  
**Գիշերը այս սև,**  
**Սկ՝ ինչպես Ազեֆ\*\*,**  
**Այքերով արդեն շե՞ս ծակի հիմա:**

ԵՎ ՉԱՐՏՎԵԼՈՎ պանդոկի անկյուն  
Ահա կուզ գալիս,  
Սփռոց ու հոգի գինով եմ թրջում

\* Ներույն է սարցել, ուշին նոր Մամայ—խոսքն այն ասպատակիչ-ների Ժաման է, որոնք Հաղթելով՝ խրախճանք էին սարբում պարտվածների ժամանքին դրվագ տախտակների վրա: Իրականում այսպես կերտում է արել ոչ թե Ոսկե Հորդայի խան Մամայը, այլ Զինդիկ-խանի այն զորավարները, որոնք Հաղթեցին ոռուներին 1223 թվականի Կալիկայի ճակատամարտմ:

\*\* Ազեֆ — Էսէսական, ընդհատակում գ  
նր դարձավ դավաճանության հոմանիշ:

Եվ տեսնում հանկարծ՝

Անկյունում տնկված մի աստվածամացը  
կլոր աշքերն է սիրտս միւրճում:

Ինչո՞ւ պարզել այս պանդոկային ամբոխին գծուծ  
Տափակ շարլոնով քսմսված փայլդ:  
Չարաբար, ավա՛ղ,  
Նայի՛ր, թքուված քո գողոթացուց  
դերադասվում է նորից թարավան»:

Մարդկային խառնակ շիլա-շփոթուժ  
իմ կերպարանքը դիտմամբ է գուցե, որ նոր չէ այնքան:  
Մակայն.

թերևս,  
քո զավակների ողջ շրջապատում  
գեղեցկադույնը հենց ես եմ որ կամ:

Ուրախության մեջ բորբոսնածներին  
դու քո վաղածամ վախճանը հղիր,  
որ մեծանալիք երեխեքն աճեն  
ու դառնան այրեր,  
տղերքը՝ հայրեր,  
իսկ աղջկերքը՝ տիկիններ հղի:

Նորածիններին թույլ տուր թող պատվեն  
Ճերմակ հարցասեր Շերքով մոգերին,  
որոնք պիտի գան և որոնց ձեռքով  
երեխանները պիտի մշղկառվեն.  
Հենց անուններով իմ այս երգերի:

Ես, որ Անգլիա ու մեքենա եմ գովում երգերով,  
Ես—չարսափե՞ս—  
գուցե պարզապես

\* Բարօվա—ըստ ավետարանական ավանդության՝ այն աժազակը, որին դատապարտեցին Քրիստոսի հետ մեկտեղ, նույն օրը: Ամբովուր պատավորներից պահանջեց Բարավային ներում շնորհել, իսկ Քրիստոսին խաչել:

ամենքին ծանոթ ավետարանի  
մի առաքյալ եմ՝ առաներեցրող:

Ու երբ որ ձայնս,  
Ժամ-ժամի հետքից,  
ողջ գիշերները ու ցերեկները  
անպատկառաբար զժժում է օդում:  
իմ շահել հոգու անմոռուկները  
ինքը Հիսուսն է գուցե համառաւմ:

#### IV

Մա՛րիա, օ, Մա՛րիա,  
նե՛րս թող ինձ, Մա՛րիա:  
Դրսում շեմ՝ կարող:  
Դու շե՞ս ցանկանում գուռդ բաց անելու  
Դու ապասում ես, որ իմ այտերը փոս ընկնեն  
ու մե՞ն  
ամենքի կողմից արդեն ճաշակված,  
անհամ-անալի,  
գամ  
և անատամ սվավացընեմ,  
թե արդ  
«ազնիվ եմ ես զարմանալի»:

Մա՛րիա,  
տեսնո՞ւմ ես,  
իմ մեջքի վրա մինչև իսկ կուզ է սկսում ծագել:

Եվ փողոցներամ ճազդին կծանրին:  
Վզուսուցքների եռա-քառահարկ հաստլիկ ճրագուն  
ու քառասնամյա մի քաշքուկով ճմրթված անքան  
աշիկներն իրենց ներքեւ կհակենւ  
ու կըհոհուն կրկի'ն ու կրկի'ն,  
թե ատամներիս արանքում  
— կրկի'ն —  
մնում է միայն անցած գրիւնքի շորացած բռկին»

Մայթերն անձրւն է լացել ու կոծել,  
այդ ավազակը՝ ամուր սեղմբված ջրափոսերով,  
թաց՝ լափլիզում է փողոցների դին սալարկով փակված:  
իսկ թարթիչներից ճերմակած—  
այո՞—  
սառցալուզայի պաղ թարթիչներից  
արցունք են անվերջ կաթկում—  
այո՞—  
ջրհորդանների աշքերը հակված:

Անձրւի դունչը բոլոր կողմերից ծեծում է քայլող  
հետիոտներին.  
իսկ կառքերի մեջ՝ ըմբիշ ու ըմբիշ, գեր ու կրակուն.  
անհոգ լափելուց մարդիկ են ահա ասես տրաքում,  
ճեղից շռում է ճարպ ու ճրագուն,  
և նույն կառքերից հոսում է անհագ ու անհատնելի,  
պղտոր գետի պես հոսում է անվերջ ու չի բարակում  
մինչն վերջ ծծված բուկու հետ մեկտեղ  
հսկա ծամվածքը հին կոտլետների:

Մա'րիա,  
այդ ինչպես ճարպից կիսափակ նրանց ականջում  
մեղմիկ խոսք խոթես:  
Օրվա ապրուստը երգով է մուրում ամեն մի թռչուն,  
երգում է քաղցրը ու բարձրահնչուն,  
մինչդեռ ես, Մա'րիա, մարդ եմ հասարակ,  
մի մարդ, որին—տե՛ս—  
գորշ Պրեսնյայի\* կեղտառատ ձեռքին  
այս թռքախտավոր գիշերն է ահա թքել աննկատ:

Մա'րիա,  
ուզո՞ւմ ես այսպիսի մեկին:  
նե՛րս թող ինձ, անգի՞ն,

\* Պրեսնյա—Մոսկվայի քաղաքամասերից մեկը.

մատներս ուժգին ջղաձգումով սեղմում են զանգի  
կոկորդը երկաթ:

Ա՛խ, Մա'րիա, Մա'րիա:

Լայն փողոցների գորշ արոտներն են, տե՛ս, գազանացելք  
իրենց մատներով վիզ են ճանկուել հրմրոցները:

Բա՛ց արա դուռդ:

Ցավում է:

Նայի՛ր,  
իմ աշքերի մեջ ծակեր են բացել  
կանանց գլխարկի սուր քորոցները:

Ներս թողեց:

Բալի՛կ, դու մի՛ վախենա,  
որ ես իմ  
եղի  
վզին

կրում եմ թաց սարի նման բազում կնիկներ՝  
փորով քրտնառատ:  
Դա... կյանքի միջով ես քարշ եմ տալիս  
միլիոն ու միլիոն կեղտուտ սերիկներ  
և միլիոն հսկա սերեր անարատ:

Դու մի՛ վախենա, թե ես վերստին  
կփարվեմ հազար սիրունիկների՝  
նոր ու հների,  
դավաճանության վատ եղանակը հենց որ դարձյալ զա,—  
«Մայակովսկուն սիրողնե՞ր»—  
ախար զա դիմաստիա է թագուհիների,  
որ խելագարի սիրտն են դարձրել իրենց համար գահ:

Արդյոք մերկացած անամոթությա՞մբ,  
թե՞ երկյուղաղին սարսուսով անկամ՝  
մե՛կ է—անթառամ քո շրթունքների

ծով հրապուցը շրթներիս սփռիր:  
Ես և իմ սիրում մայիս չենք հասել դեռ ոչ մի անգամ,  
իսկ ապրած կյանքում՝ լոկ հարյուր ապրիլ:

Մարիա,  
պոետը սանեա է երգում իր Տիանային\*,  
իսկ ե՞ս  
համակ մի՛ս, ամբողջովին մա՛րդ,  
ես միայն, նայի՛ր,  
միա՛յն մարմինդ է, որ խնդրում եմ արդ,  
ինչպես խնդրում է խաչապաշտը միշտ,  
«Մեր հանապաղօր  
հացը տուր այսօր»:

Մարիա, տո՞ւր:

Մարիա,  
ես վախենում եմ հանկարծ անունդ այնպես մոռանալ,  
ինչպես պոետն է վախենում հանկարծ միտը շողահել  
ձիգ գիշերների տանջանքով ծնված  
ինչ-որ բառ կամ խոսք,  
որ հավասար է աստծուն՝ մեծությամբ:

Ես քո մարմինը սիրով կպահեմ  
ու կփայփայիմ,  
ինչպես մարտերում անխիզճ բգկաված՝  
այլևս անտեր  
և անպետք արդեն  
իր միակ ոտքն է զինվարը պահում՝  
երկյուղածությամբ:

Մարիա,  
չե՞ս ուզում:

\* Տիանա-իգար Սելիբրանինի բանաստեղծություններից մեկում գրատակվող կանացի անուն:

Չե՞ս ուզում:  
Հա՛-հա՛:

Այդ ասել է թե ես նորից ահա,  
մթնած ու վհատ,  
կվերցնեմ սիրաս՝  
արցունքներիս մեջ նրան թաղելով,  
այնպե՞ս կտանեմ,  
ինչպես որ շունը  
գնացքի տակից իր թաթը հանել  
տանում է բույնը:

Սրտիս արյունով կզվարթացնեմ իմ ճանապարհը՝  
բաժկոնիք փաշան ալ ծաղիկների փունչը կետովից  
Եվ հազար անգամ նորից կպարի արևն իր պարը,  
ինչպես Հերովդան\*  
հատված զլիսի շուրջ արդար Մկըրտչի:

Եվ տարեցտարի,  
երբ կյանքս հատվի  
պարող արեմ կիզիւ ոտերով,  
իմ հոր տուն տանող հետքը կպատվի  
արյան պուտերով:

Դուրս կելնեմ՝  
կեղտու (շրանցքների մեջ քնելուց՝ հար սկ),  
իմ կողով նրա հասու կողին քսված՝  
նրա ականջին կթեքվեմ, կասեմ.

— Է՛յ, պարոն աստված.  
ո՞նց չեք ձանձրանում  
ամեն օր թրջել աշքներդ բարի  
այն շփոթի մեջ,  
որ եփվում է միշտ ամպերից լուսեւ,  
Գիտե՞ք ինչ... եկեք

\* Հերովդա-ըստ Ավետարանի՝ զլիսատված Հովհաննես Մկըրտչ ունից պարեւ է ոչ թի Հերովդան, այլ նրա դուստրը՝ Սալոմեան:

բարու և չարի ճանաշման ժառին  
սարքենք կարուսել:

Որտեղ պահարան՝  
այնտեղ կլինես դու, Ամենակա՛լ,  
և մեր սեղանին պետք է այնպիսի՛ գինիներ շարել,  
որ մույլ Պետրոս Առաքյալն անդամ  
խենթորեն ցանկա  
Կու-կա-պու\* պարել:  
Իսկ քո դրախտում կրնակեցնենք Եվայիկների.  
Հրամա՛ն տուր ինձ,  
և հենց ա՛յս գիշեր անթիվ-անհամար  
բուզարների և բուլզարիկների  
սիրունիկներին հավաքեմ իսկույն, բերեմ քեզ համար,  
Կուզե՞ս:

Չե՞ս ուզում:

Փոշոտ գլուխդ ես թափ տալիս իզուր,  
Ճերմակ հոնքերդ ես կիտում: Մի՛ կիտիր:  
Քո մեջքին կանգնած այդ թևավորն էլ,  
մի՞թե կարծում ես, որ գեթ նա զիտի,  
թե ինչ է սերը, թե սերը որն է:

Ես էլ եմ հրեշտակ, մի օր եղել եմ.  
Չաքարից շինված գառան աչքերով հայացք հեղել եմ,  
բայց ես չեմ ուզում մատակ ձիերին նվեր բաժանել  
սեվորյան ցավից և ոչ թե կավից կերտված վազաներ\*\*:  
Ամենակարո՞ղ, մի զույգ ոտք ու ձեռք դո՞ւ հնարեցիր,  
այնպես արեցիր,  
որ ամեն մեկը գլուխ ունենար,  
բայց ինչո՞ւ եղար մի հարցում անփուլթ,

ինչո՞ւ շգտար Ա՛ըս մի հնար՝  
անտանջանք համբույր, համբույր ու համբույր:

Մի ամենազոր մեծ աստված էի ես քեզ իմանում,  
իսկ դու աստված ես թերուս ու պստիկ:  
Տե՛ս, կունում եմ,  
կոչիկիս ճիտքից կոշկակարային դանակս եմ հանում,  
որ սուր է սաստիկ:

Դո՞ւք, ստահակնե՛ր, որ ունեք թևեր,  
ձեր սին դրախտում կո՞ւ եկեք, ցցե՞ք փետուրիկներդ  
սարսափից հսկա:  
Քե՞զ խունկի հոտով պինդ ներծծվածիդ, հիմա կձեւեմ  
այստեղից մինչև... մինչև Ալյասկա':

Թողե՞ք:

Մի՛ բռնեք:  
Այլկըս մեկ է, իրա՞վ եմ արդյոք,  
ստո՞մ եմ կարգին,—  
արդեն շեմ կարող ես հանգիստ լինել:  
Տեսե՞ք,  
աստղերն են գլխատել կրկին  
ու երկինքն էլի սպանդ են շինել:

Հե՞յ դուք,  
Է՞յ երկինք:  
Այդ ես եմ գալիս:  
Հանիր գլխարկըդ ու տուր ինձ պատիվ:

Խորի՛ն լոռովիուն. զուր է իմ կանչը:

Ողջ տիեզերքը մտել է խոր քոն՝  
դրած իր թաթին  
շնաձանճերի աստղարույլերով պատված ականջը:

\* Կու-կա-պու—այն ժամանակվա էստրադային մոդայական պարեւ րից մեկը.

\*\* Սեվորյան... վազաներ — ֆրանսիական Սեվը քաղաքի հենապետութակավոր գործարանի սկահակների մասին է խոսքը.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊՈԵՄՆԵՐ

|                            |     |
|----------------------------|-----|
| <b>Անհաշտ մտերմություն</b> | 5   |
| <b>Ուղացած իմ սեր</b>      | 115 |
| <b>Երգ երգոց</b>           | 141 |
| <b>Նահանջ երգով</b>        | 159 |

### ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### **Ա. ՄԻՑԿԵՎԻԶ**

|                          |     |
|--------------------------|-----|
| <b>Կոնրադ Վալենբուդ</b>  | 201 |
| <b>Շուշանները</b>        | 263 |
| <b>Պանի Տվարդովսկայա</b> | 275 |

#### **Մ. ԼԵՐՄՈՆՏՈՎ**

|            |     |
|------------|-----|
| <b>Դեք</b> | 280 |
|------------|-----|

#### **Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ**

|                        |     |
|------------------------|-----|
| <b>Վարտիքավոր ամպը</b> | 316 |
|------------------------|-----|

### **ՊԱՐՈՒՅՐ ՌԱՖԱՅԵԼԻ ՍԵՎԱԿ**

**Երկերի ժողովածու վեց հատորով  
Բատոր III**

Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. Քիշոյան  
Նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան  
Գեղ. խմբագիր՝ Մ. Ռ. Սոսոյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան  
Վերատուգող սրբագրիչ՝ Ա. Ա. Միքոյան

Հանձնված է արտադրության 14/IX 1972 թ.: Ստորագրված  
է տպագրության 5/VI 1973 թ.: Թուղթ № 1,  $84 \times 108^{1/32}$ ,  
տպ. 10,75 մամ. = 18,06 պայմ. մամ., հրատ. 14,6 մամ + 1  
Աերդիր: Պատվեր 1903: Տպաքանակ 50.000: Գինը՝ 1 լ. 76 կ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տեղյան 91:



ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պո-  
լիտրաֆիայի և գրքի առևտուրի գործերի պետական կոմիտեի  
Հակոբ Մելապարտի անվան պոլիգրաֆկոմինատ, Երև-  
ան—9, Տեղյան 91: